Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

www.ichd.org

Համայնքի բյուջեի և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքները ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում

Համահամայնքային քննարկումներ
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի խոշորացված համայնքներում

Քննարկումների արդյունքների վերլուծություն

Վերլուծությունը մշակվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում՝ «Բյուջե բոլորի համար» ենթադրամաշնորհային ծրագրի հետ համագործակցությամբ:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Ստորև քաղաքացիների արտահայտած տեսակետներն ու կարծիքները հնչեցվել են քննարկումների մասնակիցների կողմից և միշտ չէ, որ արտահայտում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի տեսակետներն ու կարծիքները:

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2018

Երևան 2018թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտագիտության խոսք 4
Ներածություն 5
Մեթոդաբանություն 6
Համահամայնքային քննարկումների ձևաչափը 6
Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը 8
Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 11
Խոշորացման գործընթացի ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա 11
Վստահության խնդիրները համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի առնչությամբ 12
Համայնքի տնտեսության, եկամուտների, ձեռնարկատիրության, աղքատության խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա 13
Ծախսերի գերակայությունների, սուբսիդավորման և համաֆինանսավորման ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա 14
Սոցիալական զարգացման, մշակույթի, սպորտի խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա 15
Համայնքային ենթակառուցվածքների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա 18
Գենդերային խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա 21
Երեխաների, դեռահասների և երիտասարդների խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա 21
Տարեցների խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա 23
Բնապահպանության, էներգախնայողության, այլընտրանքային էներգետիկայի խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա 23
Ժողովրդագրական խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա . 23
Շահեր, դիրքորոշում, մտադրություններ, զգացմունքներ, վախեր, մտահոգություններ, արժեքներ, կարծրատիպեր, համոզմունք 24
Ա. ԽՈՇՈՐԱՑՈՒՄ 24
Բ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 28
Գ. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ 30
Դ. ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ 32
Ե. ԾԱԽՍԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 39
Զ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՏՈՒՐԻԶՄ, ՍՊՈՐՏ 42
Է. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 51
Ը. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ 57
Թ. ԵՐԵԽԱՆԵՐԻ, ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ 58
Ժ. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ 62
Ի. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ 62
Լ. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ 64

4. Սոցիալական երկխոսություն 65
Ա. ԽՈՇՈՐԱՑՈՒՄ 65
Բ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 70
Գ. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ 72
Դ. ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ 75
Ե. ԾԱԽՍԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 82
Զ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՏՈՒՐԻԶՄ, ՍՊՈՐՏ 86
Է. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 98
Ը. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ 105
Թ. ԵՐԵԽԱՆԵՐԻ, ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ 105
Ժ. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ 112
Ի. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ 112
Լ. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ 114
Հավելված 1. Գունային կոդավորում 116
Հավելված 2. Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքների քննարկման սցենարները 116
Մեղրի, Սցենար 1. Ագարակ քաղաքի Չարենցի 27/15 հասցեում զբոսայգու կառուցում 116
Մեղրի, Սցենար 2. Գյուղատնտեսական շուկայի հիմնում Մեղրի համայնքում 117
Մեղրի, Սցենար 3. Վառելափայտի և լուսամուտների տրամադրում խոցելի խմբերին 118
Մեղրի, Սցենար 4. Շվանիձորում և Վարդանիձորում մանկապարտեզի կառուցում 119
Մեղրի, Սցենար 5. Մեղրիի Երկրագիտական թանգարանի կառուցում 120
Մեղրի, Սցենար 6. Հանգստի գոտիների ստեղծում Մեղրի համայնքում 121
Գորիս, Հակիրճ տեղեկանք 122
Գորիս, Սցենար 1. Ֆիզիկական ակտիվությունը՝ բնակչության առողջության գրավական 123
Գորիս, Սցենար 2. Դիտակետի և հարակից ճանապարհի վերակառուցում 124
Գորիս, Սցենար 3. Մշակույթի տան հարակից ճեմուղու բարեկարգում 125
Գորիս, Սցենար 4. Քարանձավային քաղաքի վերկանգնում 126
Հավելված 3. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը 127
Հավելված 4. Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքների վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով 128
Հավելված 5. Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքային տարբերակներում ներառված հիմնախնդիրները, հիմնական առանցքները 129
Հավելված 6. Համահամայնքային քննարկումների արդյունքների համադրություն-հակադրություն սանդղակը 129

Երախտագիտության խոսք

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր աջակցել են Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսություն» ծրագրի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքների վերաբերյալ համահամայնքային քննարկումների կազմակերպմանը: Շնորհակալ ենք նրանց մասնակցության, կառուցողական քննադատության և ընկերական խորհուրդների համար:

Ցանկանում ենք մեր խորին երախտագիտությունը հայտնել Եվրոպական հանձնաժողովին, որը մեզ ընձեռել է քննարկումներն ու սույն ամփոփումն իրականացնելու հնարավորությունը: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պրն. Պյոտր Սվիտալսկուն: Արդյունավետ կառավարման, քաղաքացիական մասնակցության և երկխոսության, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Հայաստանի կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը նրա անմիջական և եռանդուն աջակցությունը նպաստել է ծրագրի և մասնավորապես՝ քննարկումների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և այս խնդիրները որպես գերակայություն ճանաչելու գործին:

Քննարկումների նախապատրաստման և իրականացման համար ոգեշնչման աղբյուր են դարձել խոշորացված համայնքների բյուջեները և զարգացման հանրային ծրագրերը համայնքի բնակիչներին հնարավորինս պարզ ու հասանելի ներկայացնելու, դրանց վերաբերյալ բնակիչների կարծիքները արդյունավետ կերպով լսելի դարձնելու գործում հայաստանյան քաղաքացիական հասարակության մի շարք կառույցների և գործիչների եռանդուն ջանքերը: Անցած տարիներին նրանց հետևողական և նվիրված աշխատանքի արդյունքում ձևավորված տեղական ինքնակառավարման բարեփոխման օրակարգը հնարավոր դարձավ ամբողջականացնել և ներկայացնել խոշորացված համայնքների բնակիչների, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ֆինանսական աջակցություն տրամադրողների շահագրգիռ քննարկմանը, լսելի դարձնել նրանց ձայնը և ամփոփել նրանց բարձրաձայնած կարծիքները, մտահոգություններն ու առաջարկները սույն փաստաթղթում:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում «Բյուջե բոլորի համար» ենթադրամաշնորհային ծրագրի նախաձեռնությունն ու իրականացման պատասխանատվությունը ստանձնած Վիններթ Հայաստան կանանց ռեսուրս կենտրոնների ցանցին և դրա անդամ կառույցներին՝ Գորիսի Կանանց Զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամին, Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն ՀԿ-ին, Կապանի կանանց ռեսուրս կենտրոն ՀԿ-ին, Սիսիանի կանանց Ռեսուրս կենտրոն հիմնադրամին, Եղեգնաձորի կանանց Ռեսուրս կենտրոն հիմնադրամին, Իջևանի կանանց Ռեսուրս կենտրոն հիմնադրամին, մեր գործընկերներին, ում շահագրգիռ և արդյունավետ մասնակցությամբ մշակվել են համահամայնքային քննարկումների սցենարները: ՀՀ Սյունիքի մարզի երկու խոշորացված համայնքներում ապահովել 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքների ու հարակից խնդիրների վերաբերյալ շահագրգիռ հարյուրավոր քաղաքացիների մասնակցությունը քննարկումներին: Քննարկումները նախապատրաստելու և արդյունքներն ամփոփելու ընթացքում ՄԶՄԿ աշխատակազմը բովանդակալից քննարկումներ է ունեցել ցանցի անդամների հետ: Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել համագործակցության և սույն ամփոփման մշակման գործում մեծ ներդրում ունենալու համար:

Խորին շնորհակալություն ենք հայտնում ցանցը համակարգող խմբին և անձամբ Ռուզաննա Տոռոզյանին, Աննա Ալեքսանյանին, Նվարդ Խաչատրյանին, Իրինա Յոլյանին, Արմինե Հովակիմյանին, Ժասմեն Խաչատրյանին, Նունե Աղաթելյանին, Սաթիկ Հարությունյանին մասնագիտական մոտեցման և քննարկումները նախապատրաստելու և կազմակերպելու գործում մեծ ներդրում ունենալու, քննարկումներին մասնակցելու, անգնահատելի գաղափարների և ողջամիտ դիտողությունների համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև «Կառուցողական երկխոսություն» ծրագրի մեր գործընկերներին՝ Իրավաբանների հայկական ասոցիացիային, Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոնին (ՍԻՎԻՏԱՍ), ՓՄՁ համագործակցության ասոցիացիային, Հայաստանի համայնքների միությանը և «Ագորա Սենթրլ Յուրոփ» հասարակական կազմակերպությանը (Չեխիա) իրենց ներդրման և համագործակցության համար:

Ներածություն

Խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքների վերաբերյալ ՀՀ քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու և հասարակությանը հուզող խնդրի քննարկումներին ակտիվորեն ներգրավելու նպատակով, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» (ՄԶՄԿ) հասարակական կազմակերպությունը, ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսություն» ծրագրի և դրա «Բյուջե բոլորի համար» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում, ՀՀ Սյունիքի մարզի երկու խոշորացված համայնքներում 2018թ. հոկտեմբերին նախաձեռնեց համահամայնքային քննարկումների շարք:

Համահամայնքային քննարկումների ձևաչափով ՄԶՄԿ-ն նախկինում քննարկման է դրել հասարակությանը հուզող բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման, ՀՀ պաշտպանության ոլորտում քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ հարցերը: Այս ձևաչափը հասարակության տարբեր խմբերը ներկայացնող մեր համաքաղաքացիներին հնարավորություն է ընձեռում անմիջականորեն և արդյունավետ կերպով մասնակցել քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքն ու մոտեցումները և բարձրաձայնել իրենց մտահոգող խնդիրները:

Քննարկումները, որոնց մասնակցել են հանրապետության ավելի քան 180 քաղաքացի, իրականացվել են ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում:

Քննարկումներն իրականացվել են համայնքների 2019թ. բյուջեի նախագծերի, ընթացիկ ծրագրերի և նախագծերի, մասնագետների, այդ թվում՝ ԵՄ աջակցությամբ իրականցվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում Վիննեթ Հայաստան կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի և անդամ կազմակերպությունների հետ քննարկումների, մամուլում հրապարակումների, կարծիքների և վերլուծականների հիման վրա ՄԶՄԿ փորձագետների կողմից մշակված խոշորացված համայնքների 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի համապատասխանաբար վեց և չորս հնարավոր տարբերակների շուրջ, որոնք ներկայացված են Հավելված 2-ում:

Համահամայնքային քննարկումների ՄԶՄԿ ձևաչափը հնարավորություն է ընձեռում արձանագրել քննարկման ընթացքում հնչած յուրաքանչյուր ամփոփ միտք և առաջարկություն, ամփոփել ու վերլուծել դրանք և դնել հանրության ու որոշում կայացնողների առջև: Քննարկման ընթացքում արտահայտված բոլոր մտքերը ներկայացված են ՄԶՄԿ պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ http://www.ichd.org հասցեում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցության՝ երկխոսության և բանավեճի արդյունքներն ամփոփված են սույն փաստաթղթում և վստահելի տեղեկությունների աղբյուր են համայնքների զարգացմանը, համայնքային ծրագրերում և բյուջեներում երեխաների և երիտասարդների, կանանց և տղամարդկանց, տարեցների հիմնախնդիրների արծարծմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և աղքատության հաղթահարմանն ուղղված հանրային քաղաքականության բարեփոխումների մշակման պատասխանատուների և շահագրգիռ պետական, համայնքային, հասարակական, մասնավոր հատվածի կազմակերպությունների և միջազգային զարգացման գործընկերների համար:

Մեթոդաբանություն

Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքների շուրջ հանրային քննարկումների իրականացման և դրա արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը բաղկացած է երկու մասից: Մեթոդաբանական առաջին մասը ներկայացնում է համահամայնքային քննարկումների ձևաչափը, իսկ երկրորդը՝ քննարկումների արդյունքների վերլուծական գործիքները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը

Համահամայնքային քննարկման (Town Hall Meeting) ձևաչափը մշակվել և ներդրվել է ՄԶՄԿ կողմից 2005 թվականին, հանրային որոշումների կայացմանը քաղաքացիների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով: Իր տեսակի մեջ եզակի մասնակցային ժողովրդավարության այս ձևաչափը մշակվել է «Ամերիկան խոսում է» (America Speaks) կազմակերպության փորձի հիման վրա, որը մշակել է այս ձևաչափի մեթոդաբանական սկզբունքները և դրանք առ այսօր հաջողությամբ կիրառում է ԱՄՆ-ում:

Որոշում կայացնողները հաճախ դժվարանում են գնահատել հանրային շահերի կենտրոնում գտնվող այս կամ այն խնդրի վերաբերյալ հասարակ քաղաքացիների մեծամասնության կարծիքներն ու ընկալումները: Ավելին, նման իրավիճակում քաղաքացիները ևս օտարվում են հանրային կառավարման գործընթացից և հակված չեն մասնակցել հանրային կյանքին: Արդյունքում, արատավոր շղթան փակվում է մարտահրավեր նետելով ժողովրդավարությանը երկրում:

Համահամայնքային քննարկումների գործընթացը հնչեցնում է քաղաքացիների ձայնը, լսելի դարձնում նրանց կարծիքներն ու մոտեցումները հանրային որոշումների կայացման գործում՝ հանրային կարևորագույն խնդիրների վերաբերյալ հասարակության անդամների կամքն ու դիրքորոշումը կառավարման ղեկը ստանձնած գործիչներին անմիջականորեն հայտնելու հնարավորություն ընձեռելու միջոցով:

Յուրաքանչյուր քննարկում ապահովում է բազմակարծությունն ու քաղաքական դաշտում հավասարակշռությունը՝ գործընթացում հարյուրավոր հասարակ քաղաքացիների միաժամանակյա ընդգրկման, քաղաքացիների արտահայտած կարծիքների անհապաղ և արդյունավետ ամփոփման, ինչպես նաև արդյունքների լայնածավալ տարածման ու տեղեկատվության սփռման շնորհիվ:

Ձևաչափի համեմատական առավելություններն են, մասնավորապես. հիմնախնդրի վերաբերյալ կարծիքների վերուղղումը, արդյունավետ մասնակցությունը՝ հնչած որևէ միտք չի անտեսվում, քննարկումների շարունակականությունը, գերակայությունների հստակ առանձնացումը: Ձևաչափի հաջող կիրառման հիմնական գրավականներն են, մասնավորապես. Բազմակարծության ապահովումը յուրաքանչյուր սեղանի շուրջ, որոշում կայացնողների ներգրավումը գործընթացի յուրաքանչյուր փուլում, բարձրորակ բովանդակության, կառուցվածքի և ընթացքի ապահովումը, գործընթացի ազդեցությամբ կատարվող իրական փոփոխությունները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը խարսխված է քաղաքացիների միջև երկխոսության և կարծիքների փոխանակման վրա, ի հակադրություն՝ երկարաշունչ ելույթների, հարցուպատասխանի կամ զեկուցումների: Քննարկումներին կլոր սեղանի շուրջ ձայնի հավասար իրավունքով մասնակցում են հասարակության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներ՝ 10-15 հոգի յուրաքանչյուր սեղանի շուրջ, ովքեր իրենց կարծիքն են արտահայտում քաղաքականության, միջոցների տրամադրման, պլանավորման կամ այլ կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Եթե առանձին քննարկումը մասնակիցների թիրախ խմբին չի ներկայացնում սեռային կամ տարիքային հատուկ պահանջներ, ապա յուրաքանչյուր սեղանի շուրջ, ինչպես նաև դահլիճում, ապահովվում է կանանց, տղամարդկանց, երիտասարդների հնարավորինս հավասար կազմ: Յուրաքանչյուր սեղանի շուրջ քննարկումը վարում է բարձր որակավորում ունեցող սեղանավարը (facilitator), ինչն ապահովում է մասնակիցների հետևողականությունը քննարկվող խնդրի շրջանակներում, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքների պահպանումը քննարկման ընթացքում: Քննարկվող խնդրի վերաբերյալ մասնակիցների իրազեկման պատշաճ մակարդակն ապահովելու նպատակով, նրանց տրամադրվում են հնարավորինս մանրամասն և հավասարակշռված տեղեկություններ խնդրի վերաբերյալ:

Ձևաչափի շրջանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում առանձին սեղանների շուրջ ընթացող քննարկումները վերածել ընդհանուր խմբային քննարկման ողջ դահլիճում: Յուրաքանչյուր սեղանի շուրջ արտահայտված մտքերն ու կածիքները գրանցվում և կենտրոնացվում են անլար համակարգչային ցանցի միջոցով: Յուրաքանչյուր սեղանին ներկա է գրառող, ում պարտականությունն է գրանցել քննարկման մասնակիցների հնչեցրած յուրաքանչյուր միտք և ուղարկել այն գլխավոր օպերատորին, ով ապահովում է ժամանած ուղերձների ցուցադրումը քննարկման բոլոր մասնակիցների համար տեսանելի դիրքերում տեղակայված էկրաններին: Քննարկման ավարտին համակարգչային ծրագրի միջոցով յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է ընձեռվում քվեարկել ի օգուտ հստակ ձևակերպված հարցերի շուրջ սեփական դիրքորոշման: Հատկանշական է, որ ողջ խումբը հնարավորություն ունի անդրադառնալ ցանկացած առանձին սեղանի շուրջ հնչեցված մտքերին, ինչպես նաև քվեարկության միջոցով որոշում կայացնողների հասցնել իրենց դիրքորոշումը խնդրի վերաբերյալ: Քննարկման ավարտին ամփոփվում և հնչեցվում է քվեարկության միջոցով ներկաների արտահայտած ընդհանրական դիրքորոշումը: Որոշում կայացնողներն ակտիվորեն ներգրավվում են քննարկմանը՝ մասնակցելով քննարկմանը, դիտելով գործընթացը, ինչպես նաև քննարկման ավարտին արձագանքելով քաղաքացիների հարցադրումներին ու կամարտահայտությանը:

Միով բանիվ, համահամայնքային քննարկման կազմակերպումը պահանջում է. (ա) քննարկման խնդրի հստակեցում և ձևակերպում, (բ) քննարկման համար անհրաժեշտ փորձագիտական տեղեկությունների ապահովում, այլընտրանքային տարբերակների տեսքով, (գ) անհրաժեշտ ծրագրային ապահովում, (դ) անհրաժեշտ համակարգչային սարքավորում, (ե) քննարկումների վայրի, պայմանների ու կահավորման ապահովում, (զ) համակարգչային ցանցի կազմակերպում, (է) պատշաճ որակավորում ունեցող սեղանավարների և գրառողների առկայություն, անհրաժեշտության դեպքում՝ նրանց վերապատրաստման միջոցով, (ը) քննարկման մասին քաղաքացիների իրազեկում և մասնակիցների կազմի ապահովում, (թ) քննարկման ընթացքում սպասարկող և տեխնիկական անձնակազմի առկայություն, (ժ) քննարկման արդյունքների ամփոփում, (ի) արդյունքների վերաբերյալ իրազեկում բոլոր շահագրգիռ անձանց: Հավելված 3-ում ներկայացված է համահամայնքային քննարկման տիպական տարածական նկարագիրը:

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծության մեթոդաբանությունն անուղղակի սոցիալական երկխոսություն է ապահովում քննարկվող խնդրի՝ Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքների վերաբերյալ ՀՀ երեք մարզերի քաղաքացիների վերաբերմունքն ու դիրքորոշումն արտահայտող փաստարկների համադրման և այդպիսով՝ միջնորդավորված զուգահեռ «երկխոսություն» ծավալելու միջոցով (Հավելված 4):

Համեմատական վերլուծության մեթոդաբանությունը հենվում է երկու բաղադրիչների. (ա) համահամայնքային քննարկումների արդյունքների (ուղերձների) վերլուծություն՝ արծարծված հիմնախնդիրների (Հավելված 5) և երեք հիմնական՝ գիտելիք[1], վերաբերմունք[2] և ընկալում հարթությունների (dimensions) առումով, և (բ) քննարկման դրված սցենարների վերաբերյալ կամ հիմնախնդիրների շուրջ արտահայտված կողմ և դեմ կարծիքների՝ ուղերձների ամփոփում:

Նման մոտեցումն ապահովում է քաղաքացիների միջև միջնորդավորված բանավեճն ու երկխոսությունը՝ նրանց հնչեցրած կարծիքների՝ ուղերձների, ամփոփման միջոցով: Որոշ դեպքերում բանավեճը կամ բողոքը միակ հնարավոր ձևաչափն են: Այն դեպքերում, երբ մարդիկ ներգրավվում են բանավեճի կամ ընդդիմախոսության մեջ, կողմերը փորձում են անհրաժեշտ ճնշում գործադրել կամ քաղաքական աջակցություն ձեռք բերել իրենց պահանջներն ու պատկերացումները տեղ հասցնելու նպատակով: Քանզի բանավեճի ու երկխոսության նպատակները տարբեր են, ուստի երկուսն էլ հաղորդակցության դաշտի կարևորագույն տարրեր են: Ցավո՛ք, հաճախ երկխոսության և բանավեճի միջև հավասարակշռությունը զգալիորեն շեղված է երկրորդի կողմը:

Հանրային քննարկումներում բանավեճային ձևաչափը գերակշռում է բազում պատճառներով, այդ թվում. (ա) ոմանք համոզված են, որ բանավեճն ու ընդդիմախոսությունը լսելի դառնալու միակ ուղին են, (բ) երկխոսության մոդելը շատերի ընկալմամբ նպաստում են վիճակի պահպանմանը կամ դանդաղ փոփոխություններին, (գ) համայնքային կամ հասարակական մակարդակներում իրական և արդյունավետ երկխոսության դրական օրինակների եզակի են, (դ) բանավեճից բացի այլ մեթոդների համար հաստատված կանոնների բացակայությունը, (ե) անձանց տարբեր խմբերի միջև առկա թշնամական մթնոլորտը ենթադրում է, որ հաղորդակցությունը ևս պիտի լինի թշնամական, (զ) բանավիճելն ավելի հրապուրիչ ու հետաքրքիր է, քան երկխոսելը, և բանավիճողին նկատելի է դարձնում, (է) բանավեճն ու ընդդիմախոսությունը «խոսել-դատարկվելու» գործառույթ ունի, (ը) բանավեճի պարագայում մարդիկ կարող են լսելու չտալ ու չսովորել բաներ, որոնք չեն սիրում, (թ) բանավիճելն ավելի հեշտ է. ռիսկերը քիչ են, բանավիճողը նվազ խոցելի է, (ժ) մարդիկ սիրում են հանդես գալ խմբերի, այլ ոչ սեփական անձի անունից, (ի) երկխոսությունը ընկալվում է որպես «հալելու ու հալվելու» միջոց, (լ) վախը, որ երկխոսությունը զիջումներ է պահանջում, (խ) վախը, որ երկխոսելու պարագայում խնդրելու են «ձուլվել-միակարծիք դառնալ», (ծ) վախը, որ շփոթմունքը, խոցելիության զգացումը կամ հակառակ կողմից

[1] Գիտելիքը ներառում է. (ա) կյանքի փորձի և կրթության միջոցով անձի ձեռք բերած փորձառությունն ու հմտությունները, խնդրո առարկայի տեսական կամ գործնական ըմբռնումը, (բ) առանձին ոլորտում կամ ընդհանուր առմամբ հայտնի տեղեկություններն ու փաստերը, և (դ) դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ իրազեկությունը: Գիտելիքի վերաբերյալ փիլիսոփայական քննարկումները հաճախ սկսվում են գիտելիքի պլատոնական սահմանմանը հղումով՝ «գիտելիքը հիմնավորված ճշմարիտ հավատն է»: Այդուհանդերձ, գիտելիքի համընդհանուր ճանաչման և ընդունման արժանացած սահմանումը կամ նման սահմանման հեռանկարը բացակայում է, իսկ միմյանց հետ մրցող տեսությունները բազում են: Անգլերենի օքսֆորդյան բառարան. http://www.oed.com:

[2] Վերաբերմունքը ենթադրական կառուցվածք է, որն արտահայտում է առարկայի հանդեպ անձի համակրանքի կամ հակակրանքի աստիճանը: Վերաբերմունքը, ընդհանուր առմամբ, բացասական կամ դրական պատկերացումներն են անձի, վայրի, առարկայի կամ դեպքի հանդեպ, որոնք հաճախ կոչվում են վերաբերմունքի առարկա: Մարդիկ կարող են նաև հակասական կամ տարակուսելի վերաբերվել առարկային, ինչը նշանակում է, որ նրանք միաժամանակ թե՛ դրական, թե՛ բացասական վերաբերմունք ունեն խնդրո առարկայի հանդեպ: Վերաբերմունքը գնահատական է: Այն ձևավորվում է ԱՎԳ մոդելով (ազդեցություն, վարքագիծ և գիտակցում): Զգայական արձագանքը հուզական արձագանք է, որն արտահայտում է առարկային անձի կողմից տրված նախապատվության աստիճանը: Վարքագծային մտադրությունն արտահայտվում է անձի խոսքի կամ տիպական վարքագծային միտումների միջոցով: Գիտակցական արձագանքն առարկայի գիտակցական գնահատումն է, որը ներառում է առարկայի վերաբերյալ անձի պատկերացումներն ու համոզմունքները: Վերաբերմունքը հաճախ անձնական փորձի կամ դիտարկման ճանապարհով միջավայրից քաղած դասերի արդյունք է: Breckler, S. J., & Wiggins, E. C. (1992). On defining attitude and attitude theory: Once more with feeling. In A. R. Pretrains, S. J. Becker, & A. C. Greenwald (Eds.), Attitude structure and function. Hillsdale, NJ: Erlbaum: էջեր՝ 407-427:

կարծիքն ըմբռնելը երկխոսողին դարձնում է նվազ համոզիչ, (կ) վախը, որ երկխոսության մեջ մտնելու պարագայում, եթե դիմացինը մնում է բանավեճի շրջանակներում, ապա երկխոսություն սկսողը կարող է տանուլ տալ երկխոսությունը, (հ) շատերը տեղյակ չեն երկխոսության առանձնահատկություններին և չգիտեն, թե ինչու է այն շահեկան: Այսպե՛ս, շատերը տեղյակ չեն, օրինակ, որ իրենց համոզչությունը միայն շահում է, երբ հակառակ կողմին հասկանալ են տալիս, որ լսել են նրան:

Իհարկե՛, երկխոսության ծավալումն ինքնին ամենաբուժիչ չէ, սակայն բանավեճ-երկխոսություն խառնուրդի հավասարակշռումը օգտակար է այն հաղորդակցության և խնդիրների լուծման բազմաթիվ խոչընդոտների հաղթահարելու գործում, որոնք ստեղծվում են բացառապես բանավեճի ձևաչափի պարագայում: Երկխոսության առավել բարձր մակարդակը կարող է խթանել քննարկումներում առավել մեծ թվով անձանց ներգրավումը: Երկխոսությունը հնարավորություն է ընձեռում հարստացնել քննարկումը սեփական փորձի օրինակներով, փոխանակել տարակուսանքը, մտավախություններն ու շփոթմունքը: Այս պարագայում ավելի շատ տեղեկություններ են փոխանակվում և ըմբռնումը խորանում է: Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքների քննարկումը հաճախ հիմնվում է մյուսների կողմից խնդրի ընկալման, ցանկությունների և գերակայությունների թյուր ընկալման վրա: Արդյունքում՝ հնարավորությունների զարգացման նախաձեռնությունները կարող են դուրս գալ ուղեգծերից[3]:

Վերլուծությունը ենթադրում է նաև դասակարգված և խմբավորված ուղերձների համեմատական վերլուծությունը հակադրություն- համադրություն (Contrast-Coherence) սանդղակով (Հավելված 6): Վերլուծության փուլերն են.

Փուլ 1-ին. Նախնական մշակման փուլում հեռացվել են կրկնվող կամ տեխնիկական ուղերձները, քերականորեն սրբագրվում է ողջ տեքստը:

Փուլ 2-րդ. Տեսակավորման փուլում հեռացվել են անձնական կամ ազգային վիրավորանք[4] կրող ուղերձները, որոնք կարող են տրամադրվել կամ վերլուծվել առանձին հետազոտության շրջանակներում, մասնավորապես, ի հայտ բերելու համար առանձնապես բացասական վերաբերմունքն ու ընկալումը, որոնք, օրինակ, խոչընդոտում են հարաբերությունների կարգավորմանը:

Փուլ 3-րդ. Ըստ հիմնախնդիրների դասակարգման փուլում հնչած ուղերձները դասակարգվել են ըստ Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի հիմնախնդիրների (Հավելված 5) և ապա ամփոփվել Սոցիալական երկխոսության վերլուծական աղյուսակում: Այս փուլում յուրաքանչյուր ուղերձ տեղադրվել է համակարծիք ուղերձների վանդակում, ներառելով թե՛ ռացիոնալ, թե՛ իռացիոնալ թե՛ հուզական փաստարկները: Հակառակ վանդակում տեղադրվել են ընդդիմախոս փաստարկներ պարունակող ուղերձները: Որոշ դեպքերում ընդդիմախոս վանդակներում ուղերձներ չկան:

Փուլ 4-րդ. Սինթեզի փուլում դասակարգված ուղերձներն ու փաստարկները վերլուծվել են համադրություն-հակադրություն սանդղակի միջոցով: Այս փուլում հիմնախնդիրները դիտարկվել են երկու առանցքներով՝ (ա) ինչպիսի ազդեցություն կունենան Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերն այս կամ այն առանձին հիմնախնդրի վրա, և (բ) ինչպիսի ազդեցություն կունենա առանձին հիմնախնդիրն այլընտրանքների վրա: Դիտարկվող հիմնախնդրի վերաբերյալ առանձին վերաբերմունքի կշիռն ու ընկալման սրությունը պայմանավորվել են ոչ թե այդ վերաբերմունքն արտահայտող արտահայտությունների, այդ թվում՝ ռացիոնալ, իռացիոնալ, հուզական և այլ, հաճախականությամբ կամ քանակով, այլ նման արտահայտությունների բազմազանությամբ ու բազմակողմանիությամբ: Այսինքն առանձին վերաբերմունքը կարևորվել է այնքանով, որքանով ավելի բազմազան են այն հիմնավորող կամ արտահայտող ձևակերպումները: Ձևակերպումների մեխանիկական կրկնությունը չի փաստում առանձին վերաբերմունքի միանշանակ

[3] Doug Stone, Robert Ricigliano and Eric Collins. Conflict Management Group. 1993:

[4] Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանքը սահմանվում է որպես արտահայտություն կամ գործողություն, որը որևէ մեկին կարող է պատճառել հուզական ցավ կամ որևէ այլ կերպով կարող է բորբոքել անհատին: Վիրավորանքը հարաբերական հասկացություն է, քանզի վիրավորանքի զգացումը հաճախ պայմանավորված է առանձին անհատի անձնական արժեքներով: Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանք չեն համարվել այն արտահայտությունները, որոնք ազատորեն շրջանառվել են հայաստանյան կամ միջազգային լրատվամիջոցներում:

կարևորության մասին, այլ կարող է արտահայտել, օրինակ, հիմնախնդրի վերաբերյալ առկա կարծրատիպերի տարածվածությունը:

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ

Խոշորացման գործընթացի ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա

Քննարկումների մասնակիցները գտնում են, որ պետք է հավասար ուշադրություն դարձնելով խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերին, հակառակ դեպքում համայնքի ծայրամասային բնակավայրերի բնակիչները կարծում են, որ իրենք գտնվում են «բանտարկյալի» կարգավիճակում, ամեն ինչ կենտրոնացված է միայն համայնքի կենտրոնում:

Քաղաքացիների կարծիքով խոշորացված համայնքներում պետք է մեծ ուշադրություն դարձնել հատկապես ռեսուրսների ճիշտ և արդյունավետ բաշխմանը: Ըստ քննարկումների մասնակիցների՝ խոշորացված համայնքներում հիմնական ուշադրությունը սևեռված է համայնքի կենտրոնին՝ Մեղրի, Գորիս, իսկ համայնքի մյուս բնակավայրերի՝ առավել հրատապ լուծում պահանջող խնդիրներն անտեսվում են. «Կենտրոնին տրվելու է ամեն ինչ, մեր երեխաները մնալու են դպրոցի դասարաններում շաշկի-շախմատ խաղալով»,- նշում են քննարկումներին մասնակցած քաղաքացիները: Բնակիչների կարծիքով խոշորացված համայնքներին տրամադրվող պետական հատկացումները նվազել են և նույնիսկ մի բնակավայրի կարիքները հոգալու համար բավարար չեն, մինչդեռ մինչ խոշորացումը, յուրաքանչյուր համայնք ուներ իր բյուջեն, որն ուղղվում էր համայնքի առաջնահերթ խնդիրների լուծմանը: Ինչպես նշում են քաղաքացիները, համայնքի բնակավայրերում խնդիրները տարբեր են, բայց անհատական մոտեցում չի ցուցաբերվում: Միևնույն ժամանակ, նրանք չեն տեսնում, թե ինչպես խոշորացված համայնքի բնակավայրերից մեկին հատուկ խնդրի լուծումը կարող է որևէ նշանակություն կամ ազդեցություն ունենալ ամբողջ համայնքի կամ նույն համայնքի մյուս բնակավայրերի վրա: Հաճախ խոշորացված համայնքի բնակավայրերից մեկում կատարված փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենում նույն համայնքի մյուս բնակավայրերի վրա, կարծում են բնակիչները. «Ագարակցիների համար Մեղրիում շուկան եղած-չեղած: Լոկալ հարց է լուծելու այդ շուկան», նշում են համայնքների բնակիչները:

Խոշորացված համայնքների բնակիչների կարծիքով խոշորացման բացասական հետևանքներից մեկը արտագաղթն է. «Համայնքների խոշորացումից հետ դրանք դատարկվել են, ծրագրերը տանում ենք առանց մարդ համայնքներում ի՞նչ անենք», նշում են քննարկումների առանձին մասնակիցներ: Քանի որ գրեթե բոլոր ծրագրերն ուղղված են միայն համայնքի կենտրոնի զարգացմանը, իսկ գյուղական համայնքներում պայմաններ չկան, այդ համայնքների բնակիչները, հատկապես երիտասարդները թողնում-հեռանում են, ինչը սահմանամերձ համայնքների համար կարող է աղետալի հետևանքներ ունենալ, նշում են քննարկումների մասնակիցները: Ըստ քաղաքացիների՝ հաշվի առնելով սահմանամերձ համայնքների ռազմավարական նշանակությունը, պետք է այդ համայնքներին ավելի մեծ ուշադրություն դարձնել, ընդհուպ մինչև, հարկային արտոնություններ տալով բնակիչներին, ինչպես Տավուշի մարզում:

Քննարկումների մասնակիցների մի խումբ էլ առաջարկում է այնպիսի ծրագրեր քննարկել, որոնք կընդգրկեն բնակչության կարիքները: Օրինակ՝ խոշորացված համայնքի կենտրոնում մեծ զբոսայգի կառուցելու փոխարեն, բնակիչներն առաջարկում են մի քանի փոքր զբոսայգի կառուցել համայնքի տարբեր բնակավայրերում. սա հնարավորություն կտա ավելի մեծ թվով շահառուների սպասարկել: Համայնքը կարելի է ընտրել՝ հաշվի առնելով հարևան բնակավայրերի բնակիչներին հասանելի լինելու հանգամանքը, կարծում են քննարկումների մասնակիցները:

Քաղաքացիները գտնում են, որ համայնքների համաչափ զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է զարգացման կամ ոլորտային ծրագրերը մշակել համայնքի բոլոր բնակավայրերի կարիքներն ու առանձնահատկությունները հաշվի առնելով: Այսպես, Գորիս խոշորացված համայնքի զարգացման ծրագրում հարկ է անդրադառնալ յուրաքանչյուր բնակավայրերի զարգացման վրա զբոսաշրջության զարգացման ազդեցությանը: Ոմանց կարծիքով համայնքի բնակավայրերի մեծ մասն ընդգրկող տուրիստական քարտեզի մշակումը կնպաստի խոշորացված համայնքի բնակավայրերի համաչափ զարգացմանը: Գորիս խոշորացված համայնքում կան բազմաթիվ տեսարժան վայրեր, որոնք հիմնականում դուրս են մնում տուրիստների ուշադրության կենտրոնից գովազդի բացակայության պատճառով, կարծում են քաղաքացիները, իսկ եթե ամբողջ համայնքի տեսարժան վայրերի քարտեզ մշակվի և ներկայացվի տուրիստական գործակալություններին, ավելի մեծ թվով զբոսաշրջիկներ կկսեն այցելել այդ բնակավայրերը, ինչը կնպաստի Գորիսի բնակավայրերի զարգացմանը և աշխուժացմանը, նշում են քննարկման մասնակիցները:

Քննարկումների մասնակից քաղաքացիների առանձին խմբեր նշում են, որ խոշորացված համայնքների բնակավայրերը կտրված են կենտրոնից: Բացի այն, որ բոլոր կարևոր և հիմնական ծրագրերը ուղղված են համայնքի կենտրոնի զարգացմանը, ծայրամասային բնակավայրերի բնակիչները զրկված են իրենց բնակավայրը համայնքի կենտրոնին կապող հանրային տրանսպորտից: Երբ համայնքի կենտրոնում կառուցվում է շուկա, մարզադպրոց կամ մանկապարտեզ, բնակիչները համարում են, որ դա միայն կենտրոնի համար է, նշում են քննարկումների մասնակիցները, և եթե ուզում ենք, որ այդ ծրագրերում ներառվեն նաև համայնքի մնացած բնակավայրերը, պետք է առնվազն լուծվի ներհամայնքային տրանսպորտի հարցը: Մինչդեռ, քննարկումների մասնակիցների մի խումբ էլ կարծում է, որ համայնքի զարգացման համար առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել խոշորացված համայնքի կենտրոնին, որը զարգանալով, իր հետևից կտանի նաև մյուս բնակավայրերին:

Վստահության խնդիրները համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի առնչությամբ

Քննարկումների ընթացքում քաղաքացիների կողմից կարևորվում էր համայնքային ծրագրերի և բյուջեի վերահսկողության հարցը: Քննարկումների մասնակիցները մտահոգություն էին հայտնում հատկապես բյուջեի բաշխման օրինաչափությունների և դրանց կատարողականի վերահսկողության վերաբերյալ. «Երբ իմանում ենք, թե ինչպես են բյուջեն բաժանել, միշտ հարց է առաջանում ՝ ինչու՞ հենց այդպես: Շատ դեպքերում մենք չենք հասկանում բյուջեի բաժանման օրինաչափությունները»,- նշում են բնակիչները:

Քննարկումների մասնակիցներին մտահոգում է համայնքի բյուջեով նախատեսված ռեսուրսների արդարացի բաշխման հարցը, օրինակ՝ անապահով ընտանիքներին օգնություն տրամադրելու կարգը. «Ո՞վ է խոցելի խումբը. խնդիրը նրանում է, որ միշտ չի որ խոցելի խմբին է հասնում փայտը»,- նկատում են քաղաքացիները: Վերոնշյալ խնդրից խուսափելու համար քննարկման մասնակիցներն առաջարկում են հստակ սահմանել, թե ովքեր են համարվում «խոցելի խումբ», որպեսզի հետագայում տարընթերցումների և շահարկումների առիթ չլինի: Ինչպես նշում են քաղաքացիները, համայնքային իշխանությունների նկատմամբ վստահությունը կնպաստի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, իսկ վստահություն կարելի է ձեռք բերել համայնքապետարանի կողմից իրականացվող աշխատանքները բնակիչների կողմից վերահսկելու միջոցով: «Համայնքի բնակիչները պետք է հնարավորություն ունենան մասնակցելու ծրագրերի իրականացման վերահսկողությանը»,- նշում են քննարկմանը մասնակցած քաղաքացիները:

«Համայնքների խոշորացումից հետո բնակիչների վստահությունը նվազել է համայնքի ղեկավարի հանդեպ», ընդգծում են քննարկումների մասնակիցները: Ինչպես նշում են քաղաքացիները, համայնքի ղեկավարը մտածում է միայն իր բնակավայրի մասին, հետևաբար բյուջեի մեծ մասը ուղղում է հենց այդ համայնքի խնդիրների լուծմանը՝ անտեսելով մյուս բնակավայրերը: քննարկումների մասնակիցները նշում են, որ համայնքները պետք է ղեկավարեն պարկեշտ, իրենց պարտականություններից քաջատեղյակ մարդիկ, որոնք մտածում են համայնքի բարեկեցության մասին, իսկ ավագանին պետք է ավելի արդյունավետ ներգրավվի համայնքի առօրյա խնդիրների բացահայտմանը և դրանց լուծման ընթացքին: Քննարկումների ընթացքում կարևորվեց մարզային և հանրապետական իշխանությունների ուշադրությունտ հատկապես գյուղական համայնքներին. «Մարզպետը Ակներ համայնք մի անգամ է մտել, տեղն էլ չգիտի»,- նշում են քննարկման մասնակիցներ:

Խոշորացված համայնքի բնակիչները կասկածանքով են վերաբերվում առաջարկված ծրագրերի իրականացման արդյունավետությանը. «Մեր երեխաները ոչ մի օգուտ չեն ստանալու այս ծրագրերից: Մենակ համայնքապետարանի համար են սրանք»,- նշում են քաղաքացիները: Ըստ մի խումբ բնակիչների՝ առաջարկված ծրագրերն անիրատեսական են, բավականին ծախսատար և վերջնական արդյունքում չեն համապատասխանում համայնքի իրական կարիքներին. «Գյուղացին պետք է ոչ թե հավատա իր ապագային, այլ տեսնի այդ ապագան: Քո առաջարկած ծրագիրն անկախ նրանից, թե ինչքան լավն է, պետք է գյուղերում ընկալվի որպես այդպիսին»,- նշում են բնակիչները: Միաժամանակ, քննարկումների մասնակիցների մի խումբ էլ կարծում է, որ պետք է դրական տրամադրվածություն ունենալ և համայնքային իշխանությունների հետ համատեղ աշխատելով՝ նպաստել համայնքի զարգացմանը:

Համայնքի տնտեսության, եկամուտների, ձեռնարկատիրության, աղքատության խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա

Համայնքի տնտեսության զարգացման տեսանկյունից քննարկումների մասնակիցները կարևորում են տուրիզմի զարգացումը համայնքերում, որի հետ անմիջականորեն կապված է նաև հյուրատների և հյուրանոցների բացումը, որը կնպաստի ինչպես առանձին անհատների, այնպես էլ ամբողջ համայնքի բյուջեի ավելացմանը, միաժամանակ, Մեղրի խոշորացված համայնքում բնակիչները գտնում են, որ շուկան կնպաստի համայնքի բնակիչների բիզնեսի զարգացմանը, նաև աշխատետղեր կստեղծվեն, Ագարակի զբոսայգին հնարավորություն կտա այգու տարածքում խանութների և սրճարանների բացվելուն:

Չնայած քննարկման մասնակիցները նշում են, որ Մեղրի խոշորացված համայնքում չեն կարող լինել ծայրահեղ աղքատ բնակիչներ, այնուամենայնիվ, հասարակության «խոցելի խավին» տրամադրվող օգնությունը համարում են համայնքի սոցիալական ծրագրերի կարևոր բաղադրիչ:

Քննարկման մասնակիցների կարծիքով Մեղրիում շուկայի գոյությունն անիմաստ է, քանի որ տեղի բնակիչներն ապրանքի իրացման խնդիր գրեթե չունեն: Բնակիչների կարծիքով գնորդները, գալով համայնք, նախապես գիտեն, թե ում տնից ինչ կարող են գնել: Բնակիչները նշում են, որ եթե չի ստացվում ապրանքը տեղում իրացնել, Երևանում կրկնակի թանկ գնով այն կարողանում են վաճառել: Ինչպես նշում են բնակիչները, շուկան լրացուցիչ հոգսեր կպատճառի բնակիչներին, օրինակ՝ ժամանակ կորցնել և գնալ շուկա՝ ապրանք վաճառելու կամ աշխատող գտնելու, ով կվաճառի բերքը, սա էլ իր հերթին լրացուցիչ ծախս է, իսկ ծրագրով առաջարկվող 15 տաղավարը քիչ է ամբողջ համայնքի համար: Բնակիչները նշում են, որ մի քանի տարի առաջ Մեղրիում բացվել է միջսահմանային շուկա, որը չաշխատելու պատճառով փակվել է: Մեղրեցիները մտահոգություն են հայտնում, որ վերավաճառողները կարող են գրավել շուկան, որի արդյունքում արհեստականորեն միրգն ու բանջարեղենը կթանկանան:

Միաժամանակ, քննարկման մասնակիցների մի խումբ էլ կարծում է, որ շուկայի անհրաժեշտությունը վաղուց կար, այն հնարավորություն կտա ստեղծել հավասար մրցակցային հնարավորություններ, օրինակ սահմանելով մեկ միասնական գին, այս դեպքում արդեն գյուղացին կլինի գին թելադրողը, ոչ թե գնորդը: Շատ կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ Մեղրին բավական հեռու է գտնվում Երևանից, և ի տարբերություն, օրինակ, Արարատյան դաշտավայրի, հատկապես շոգ եղանակին միրգը Երևան հասցնելը բավական դժվարություններ է առաջացնում: Բացի այդ, շատ գյուղացիներ իրենց ապրանքը Երևան հասցնելու հնարավորություն չունեն: Շուկան հնարավորություն կտա վաճառողներին կազմակերպել ցուցադրական միջոցառումներ, օրինակ՝ չրի պատրաստում, որն ավելի շատ հաճախորդներ կգրավի: Շուկան կնպաստի նաև աշխատատեղերի բացմանը, կարծում են բնակիչները:

Որպես շուկային այլընտրանք՝ համայնքի բնակիչներն առաջարկում են ստեղծել վիրտուալ շուկա, որն անհամեմատ կխնայի ֆինանսական ռեսուրսները: Միաժամանակ համայնքի բնակիչներն առաջարկում են շուկայի փոխարեն ստեղծել մթերող կազմակերպություն, որը կիրականացնի նաև արտադրվող գյուղմթերքի որակի հսկողություն: Մեղրեցիները նշում են, որ ամենահամեղ միրգը աճում է Մեղրիում, բայց այստեղ որևէ միջոցառում չկազմակերպելու պատճառով, շատ քչերը գիտեն այդ մասին: Մրգի սեզոնին փառատոնների կազմակերպումը կնպաստի, որպեսզի ավելի մեծ թվով մարդիկ այցելեն Մեղրու տարածաշրջան, նշում են բնակիչները: Քննարկման ընթացքում մասնակիցների մի խումբ էլ առաջարկեց Մեղրիում չարտադրվող ապրանքների շուկա ստեղծել:

Քննարկման մասնակիցները նշում են, որ Ագարակում զբոսայգու բացման գաղափարը շատ հաջող է, բայց ֆինանսական խնդիրների պատճառով այգին շատերին հասանելի չի լինի: Քաղաքացիները քննարկման ընթացքում բարձրացրին նաև խոշորացված համայնքի բոլոր բնակիչների համար զբոսայգիների հասանելիության խնդիրը, ինչը մեծ հաշվով պայմանավորված է մշտական և կանոնավոր տրանսպորտի առկայությամբ: Միևնույն ժամանակ, քննարկման մասնակիցները կարծում են, թե զբոսայգու բացումը կնպաստի այգու տարածքում սրճարաններ և խանութներ բացելուն, ինչը եկամտաբեր բիզնես է: Իսկ հանգստյան գոտիների ստեղծումը ոչ միայն հնարավորություն կտա համայնքի բնակիչների՝ հանգստի համար նախատեսված գումարը պահել մարզում, այլև, մեծ թվով զբոսաշրջիկներ գրավել: Օրինակ՝ իրանցի զբոսաշրջիկները, որոնք գալիս են Մեղրի միայն Երևան մեկնելու համար, կարող են այս հանգստյան գոտիների շնորհիվ մի օր մնալ տարածաշրջանում, որի կնպաստի համայնքի զարգացմանը:

Քննարկումների մասնակիցների կարծիքով եկամտաբերության առումով տուրիզմը հեռանկարային ոլորտ է, սակայն այս ոլորտում ներդրումները պետք է թիրախավորված լինեն, ինչպես Տաթևի ճոպանուղին: Այս առումով որպես բացասական օրինակ բերվում է Խնձորեսկի ճոճվող կամուրջը, որը գրավում է մեծ թվով զբոսաշրջիկների, բայց, քանի որ կամուրջը գտնվում է համայնքից դուրս, այն էական նշանակություն չունի համայնքի բյուջեի համար: Բնակիչները կարծում են, որ Գորիսի դիտակետի վերանորոգումը համայնքի բյուջեի տեսանկյունից բավականին արդյունավետ ներդրում կլինի, քանի որ դա կնպաստի տարածքում սրճարանների և խանութների բացմանը, սա էլ իր հերթին կավելացնի համայնքի բյուջեն, որը կուղղվի այլ խնդիրների լուծմանը, օրինակ՝ մարզասրահի բացմանը:

Քննարկումների մասնակիցների կարծիքով տուրիզմի զարգացումը կնպաստի հյուրատների և հյուրանոցների բացմանը, ինչն էլ կնպաստի համայնքի բնակիչների եկամտի ավելացմանը: Քաղաքացիների կարծիքով Գորիսի հյուրանոցներն աշխատատեղ են ապահովում ոչ միայն Գորիսի, այլև հարևան բնակավայրերի բնակիչների համար: Միաժամանակ, ինչպես նշում են քննարկումների մասնակիցները, ամբողջ աշխարհում զբոսաշրջիկները սկսել են նախապատվություն տալ հյուրատներին, մասնավորապես, այսօր էթնիկ հյուրատներն ավելի գրավիչ են զբոսաշրջիկների համար: Հյուրատների զարգացումը հնարավորություն կտա բնակիչներին ինքնուրույն կազմակերպել իրենց բիզնեսը, որը տուրիզմի զարգացմանը զուգահեռ բավականին մեծ տեմպերով աճում է, կարծում են բնակիչները:

«Ամեն մի մեղրեցու այգին մի շուկա է», նշում են քննարկման մասնակիցները և ավելացնում, որ Մեղրիում չի կարող ծայրահեղ աղքատ մարդ լինել, բայց այնուամենայնիվ քաղաքացիների կարծիքով սոցիալապես խոցելի խավին օգնություն տրամադրելը խնդրի ժամանակավոր լուծում է. «Ավելի լավ է մարդկանց կարթ տալ, ոչ թե ձուկ», նշում են քննարկման մասնակիցները: Բնակիչները նախընտրում են ինքնուրույն վաստակել իրենց հացը, դրա համար համայնքային իշխանությունները պետք է մտածեն աշխատատեղեր ստեղծելու մասին, կամ այդ օգնության համար նախատեսված գումարով ոչ թե լուսամուտ փոխեն, այլ մշակաբույսեր և ընտանի կենդանիներ տրամադրեն բնակիչներին: Երբ ընտանիքը կարողանում է իր կեցությունը բարելավել, ամբողջ համայնքն է սկսում զարգանալ, նշում են քննարկումների մասնակիցները: Հատկապես առաջնահերթ է երիտասարդներին աշխատանքով ապահովելու հարցը, կարծում են քննարկումների մասնակիցները: Մյուս կողմից, քաղաքացիները մտահոգություն են հայտնում, որ մարդը շատ արագ սովորում է հեշտ ապրելուն, և մի անգամ օգնություն ստանալուց հետո, սպասելու է, որ միշտ իրեն տրամադրեն այդ օգնությունը:

Ծախսերի գերակայությունների, սուբսիդավորման և համաֆինանսավորման ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա

Քննարկումների մասնակիցների կարծիքով միջպետական նշանակություն ունեցող ծրագրերը պետք է իրականացվեն պետբյուջեի ֆինանսավորմամբ, այդ դեպքում համայնքային խնդիրները հնարավոր կլինի լուծել համայնքային բյուջեից: Քաղաքացիների մի խումբ էլ կարծում է, որ բնակիչները ևս իրենց ներդրումը պետք է ունենան համայնքի զարգացման համար. «Խնձորեսկն ամենահարուստ գյուղն է. բոլորն ունեն հսկայական տարածքներ, բայց իրենց գյուղի փողոցները, դպրոցը չեն նորոգում»,- նշում են մասնակիցները:

Քաղաքացիները բարձրաձայնում են նաև սահմանամերձ համայնքերի խնդիրները՝ նշելով, որ սահմանամերձ համայնքները չունեն հարկային արտոնություններ, սակայն այս տարածաշրջանի բնակչությունը, ինչպես Տավուշի մարզի սահմանային գյուղերի բնակիչները, ապրում են սահմանամերձ գոտում և նույնպես պետք է հարկային արտոնություններ ստանան, կամ ավել վճարվեն իրենց աշխատանքի դիմաց: Քննարկման ընթացքում հնչեց կարծիք, որ ինչպես Խորհրդային Միության տարիներին, մարդիկ բանակում ծառայելու փոխարեն կարող են գալ և մի քանի տարի աշխատել այդ սահմանամերձ բնակավայրերում. դա մեծ օգնություն կլինի համայնքին:

Քննարկումների մասնակիցների կարծիքով համայնքային բյուջեի ծախսման առաջնահերթություններ պետք է սահմանվեն. օրինակ՝ համայնքում սոցիալական ծրագրերի իրականացում, Մեղրի համայքնում Մեղրիում ջրամբարի կառուցում և այլն: Ճիշտ է, համայնքի զբոսայգու, ճեմուղու, թանգարանի կամ դիտակետի կառուցումը շատ ցանկալի է, բայց դրանց պետք է անդրադառնալ միայն համայնքի համար կենսական նշանակություն ունեցող սոցիալական խնդիրները լուծելուց հետո, կարծում են համայնքի բնակիչները: Քաղաքացիների կարծիքով, ավելի նպատակահարմար կլինի այդ խնդիրները կարգավորել ոչ համայնքային բյուջեի հաշվին, օրինակ՝ մասնավոր ներդրումների կամ պետական

համաֆինանսավորման միջոցով: Մասնակիցների մի խումբ էլ առաջարկեց հեռուսատամարաթոն կազմակերպել, որի ընթացքում արտերկրում բնակվող սյունեցիները գումար կտրամադրեն մարզի զարգացման ծրագրերի իրականացման համար: Միաժամանակ, քաղաքացիների մի խումբ էլ կարծում է, որ համայնքային բյուջեից ներդրումներ պետք է կատարել այնպիսի ոլորտներում, որոնք հետագայում «փող կբերեն» բյուջե, օրինակ՝ ըստ քաղաքացիների, տուրիզմն այդ ոլորտներից մեկն է: Ինչպես նշում են բնակիչները, Գորիսն ունի մեծ պոտենցիալ գեղեցիկ հանգստյան գոտի դառնալու համար, և ճիշտ ու թիրախային ներդրումների շնորհիվ կարող է դառնալ լուրջ տուրիստական կենտրոն:

Անդրադառնալով Մեղրի համայնքի սոցիալապես խոցելի խավին՝ քաղաքացիները նշում են, որ հատկապես ձմռան ամիսներին է կարևոր օգնության տրամադրումը, միայն թե պետք է հստակ սահմանել, թե ովքեր են մտնում այդ «խոցելի խավի» մեջ: Ինչպես նշում են մասնակիցները, Մեղրի համայնքում կա սոցիալական հիմնադրամ, որի միջոցով փորձում են սոցիալապես խոցելի բնակչությանն օգնություն տրամադրել: Միաժամանակ, քննարկման մասնակիցների մի խմբի կարծիքով երբ մարդկանց որոշակի օգնություն ես տրամադրում, նրանք սպասում են, որ այդ օգնությունը պետք է պարբերական բնույթ կրի, և իրենք ոչինչ չեն անում իրավիճակը շտկելու համար:

Սոցիալական զարգացման, մշակույթի, սպորտի խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա

Քննարկումների ընթացքում քաղաքացիները բարձրաձայնեցին այն հիմնական ուղղությունները, որոնք կարող են մեծ ազդեցություն ունենալ համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա: Մասնավորապես, քննարկումների մասնակիցները կարևորեցին Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում տուրիզմի զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացումը. Մեղրի համայնքում բնակիչներն առանձնացրին Ագարակի զբոսայգու կառուցումը, խոշորացված համայքնի տարբեր բնակավայրերում հանգստյան գոտիների ստեղծումը՝ որպես զբոսաշրջությանը նպաստող գործոններ, իսկ Գորիս խոշորացված համայնքում՝ Գորիս քաղաքի դիտակետի և համայնքի տարբեր բնակավայրերի քարանձավների վերականգնումը: Բնակիչներն առանձնացրին նաև համայնքային ենթակառուցվածքների պատշաճ ապահովումը՝ որպես տուրիզմի զարգացման կանոր նախապայման:

Քննարկումների ընթացքում կարևորվեց նաև բնակիչների առողջության պահպանման հարցը: Գորիս խոշորացված համայնքում մարզահրապարակների կառուցումը կնպաստի որոշակի հիվանդությունների նվազեցմանը, նշում էին քաղաքացիները:

Քննարկման մասնակից քաղաքացիների համար Ագարակում զբոսայգու կառուցումը մեծ նշանակություն ունի, քանի որ, ըստ մասնակիցների, բնակավայրը բավականին երիտասարդ է, իսկ բնակիչները զբոսնելու, իրենց ժամանցը կազմակերպելու հնարավորություն չունեն: Ինչպես նշում են քննարկման մասնակիցները, Ագարակի զբոսայգին կնպաստի նաև տուրիզմի զարգացմանը: Այնուամենայնիվ, քննարկման մասնակիցների մի խումբ կարծում է, որ Ագարակում եկեղեցի չկա, և ավելի նպատակահարմար է գոնե մի փոքր մատուռ կառուցել, քան արդեն զբոսայգի ունեցող համայնքում՝ զբոսայգի: Քաղաքացիների մի խումբ էլ կարծում է, որ ավելի լավ կլինի հանգստյան գոտի ստեղծել, որից կօգտվեն և՛ տեղացիները, և՛ տուրիստները. «Տուրիստը գալիս է փող ծախսելու նպատակով, ինչու՞ չօգտագործենք այս հնարավորությունը»,- նշում են քննարկման մասնակիցները: Հայաստանի հյուսիսային շրջաններից մարդիկ Իրան մեկնելու ճանապարհին հանգստանում են Մեղրիում: Եթե նման հանգստյան գոտիներ լինեն, մարդիկ մեծ հաճույքով դրանից կօգտվեն, համայնքային բյուջեն էլ կավելանա, նշում են քննարկումների մասնակիցները:

Քաղաքացիների կարծիքով, համայնքային բյուջեի ավելացման տեսանկյունից շուկան կարող է բավականին արդյունավետ լինել, մասնավորապես քննարկման մասնակիցների կարծիքով նախատեսվող շուկան կարելի է կառուցել «Վերնիսաժի» նմանությամբ, որտեղ, բնակիչները հնարավորություն ունենան վաճառել ոչ միայն միրգ ու բանջարեղեն, այլև օրինակ՝ իրենց ձեռագործ իրերը: Շուկային որպես այլընտրանք, քաղաքացիներն առաջարկում են Մեղրի խոշորացված համայնքի կյանքն աշխուժացնելու և մեծ թվով զբոսաշրջիկների ուշադրությունը գրավելու համար մրգի սեզոնին կազմակերպել տարբեր փառատոններ, օրինակ՝ նռան փառատոն: Ինչպես նշում են բնակիչները, հարևան իրանցիները շատ են սիրում Արենիի «Գինու» փառատոնը, մեծ հաճույքով նռան փառատոնին էլ կմասնակցեն: Սակայն, քննարկման մասնակիցների մի խումբ էլ գտնում է, որ շուկան ոչ մի կերպ չի նպաստի համայնքում տուրիզմի զարգացմանը, քանի որ գյուղ եկողն արդեն գիտի, թե որ տնից ինչ պետք է գնի:

Քննարկումների մասնակիցների կարծիքով պետք է քայլեր ձեռնարկվեն, որ Մեղրին ընկալվի ոչ թե արդյունաբերական, այլ՝ զբոսաշրջային կենտրոն: Համայնքի մշակութային կյանքը զարգացնելու տեսակետից բնակիչները կարևորում են թանգարանի կառուցումը, քանի որ, ըստ նրանց, համայնքում կան բազմաթիվ հազվագյուտ գտածոներ, որոնք աշխարհին ցուցադրելու հնարավորություն չունեն: Բերելով Արենիի կոշկի օրինակը՝ բնակիչները նշում են, որ այդ մի «կոշիկով» Արենին կարողանում է բազմաթիվ տուրիստներ գրավել: Բնակիչները նշում են, որ պարսկական մզկիթների վերանորոգումը կմեծացնի տուրիստների հետաքրքրությունը տարածաշրջանի հանդեպ. «Իրանցի տուրիստներին հետաքրքրում են Մեղրու տարածքում գտնվող մուսուլմանական մզկիթները, դրանք կարելի է վերականգնել»,- գտնում են քաղաքացիները: Տուրիզմի զարգացումից բացի, թանգարանը կնպաստի նաև երեխաների հոգևոր և մշակութային զարգացմանը, ինչը քննարկման մասնակիցների կարծիքով բավականին մեծ խնդիր է տարածաշրջանի երեխաների համար. «Տարածաշրջանի երեխաները պատկերացում չունեն թանգարանի մասին»,- նշում են բնակիչները: Ըստ քաղաքացիների՝ թանգարանը պետք է գործի վճարովի հիմունքներով, որպեսզի կարողանա պահպանման և աշխատակիցների վճարման խնդիրները լուծել:

Միաժամանակ, բնակիչները նշում են, որ Մեղրիում կա Գեղագիտության կենտրոն, Մշակույթի տուն, որտեղ հնարավոր կլինի սենյակ առանձնացնել և թանգարանային նմուշները ցուցադրել: Քաղաքացիներն աջակցություն են առաջարկում սենյակը մաքրելու և վերանորոգելու հարցում: Մյուս կողմից, համայնքի բնակիչների մի խումբ էլ նշում է, որ թանգարանի կառուցումը էապես չի նպաստի տարածաշրջանում զբոսաշրջության զարգացմանը, քանի որ հիմնական թիրախն Իրանի քաղաքացիներն են: Վերջիններիս հետաքրքրում են միայն Հայաստանի ազատությունները՝ ալկոհոլ, խաղատներ, որոնք չկան տարածաշրջանում, իսկ խոշորացված համայնքում, որտեղ բազմաթիվ են սոցիալական խնդիրները, թանգարանն առաջնային չէ:

Համայնքի բնակիչները նշում են, որ Մեղրու տարածաշրջանը մեծ պոտենցիալ ունի հարավային տուրիստական կենտրոն դառնալու համար: Օրինակ՝ Մեղրու տարածաշրջանում կան 12-րդ դարի բուրգեր, 16-րդ դարի ջրանցիկ կամուրջներ: Դեռևս 17-րդ դարում կառուցված առաջին հայկական գերեզմանաքարը ևս գտնվում է այս տարածաշրջանում՝ Շվանիձոր բնակավայրում, որի մասին, սակայն, քչերը գիտեն: Զբոսաշրջիկներին գրավում են Մեղրու որմնանկարներով եկեղեցիները, իսկ նմանատիպ այլ եկեղեցիներ չկան ամբողջ Հայաստանում:

Քաղաքացիները կարծում են, որ ագրարային տուրիզմը կարող է զարգանալ Մեղրիում, միաժամանակ նշելով, որ գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են և հնարավոր չի լինի զարգացնել տուրիզմն առանց գյուղատնտեսությանը պատշաճ ուշադրություն դարձնելու. «Կարճևանում գեղատեսիլ մի վայր ունենք, որտեղ թե՛ տեղացիներն են գնում հանգստանալու, թե՛ զբոսաշրջիկները: Շատ լավ կլիներ, որ այստեղ մի տեղ լիներ, որտեղ հնարավոր կլիներ Մեղրուն հատուկ ուտեստներ հյուրասիրել, տեղի միրգն ու չիրը վաճառել, հնարավորություն տալ հանգստացողներին հարմարավետ անցկացնել իրենց հանգիստը: Սա կնպաստի զբոսաշրջությանը և նոր աշխատեղեր կբացվեն»:

Համայնքը մեծ հնարավորություն ունի զարգացնել նաև լեռնագնացությունը, լեռնային հեծանվավարությունը, վրանային, էքստրեմալ տուրիզմը, օրինակ՝ զիփլայնի կառուցումը հնարավորություն կտա գրավել էքստրեմալ տուրիզմի սիրահարների ուշադրությունը և հրավիրել Մեղրի: Միաժամանակ, քննարկման մասնակիցները նշում են, որ տուրիզմի զարգացման համար կարևոր է նաև հյուրանոցների և հյուրատների առկայությունը, որը սակայն բացակայում է: Ըստ բնակիչների՝ տուրիստները մնալու տեղ չունեն, և գուցե դա է պատճառներից մեկը, որ Մեղրիում մեկ օրից ավել չեն մնում: Սակայն, ինչպես նշում են քաղաքացիները, եթե նույնիսկ հյուրատներ բացվեն, ամեն դեպքում պետական լուրջ օժանդակություն է պետք: Մեղրու տարածաշրջանի բնակիչները կարծում են, որ եթե վարչապետը Տաթևի օրինակով Մեղրին հայտարարի տուրիստական գոտի, ներդրումները այս ոլորտում կավելանան:

Ըստ քննարկման մասնակիցների՝ տուրիզմը Հայաստանի զարգացման կարևոր ուղղություններից մեկն է, իսկ Գորիսը տարածաշրջանի զբոսաշրջային կենտրոններից մեկը դառնալու մեծ պոտենցիալ ունի: Տուրիզմի ոլորտում աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար քաղաքացիներն առաջարկում են ստեղծել այսպես կոչված «խորհրդատվական» մարմին, որը իրականացնելով ոլորտի ուսումնասիրություններ, կտրամադրի խորհրդատվություն, թե որ ուղղությունն է ավելի նպատակահարմար զարգացնել: Օրինակ՝ ինչպես նշում են քաղաքացիները, Խնձորեսկի ճոճվող

կամուրջը բավականին գրավիչ է զբոսաշրջիկների համար, բայց ոչ մի օգուտ չի տալիս համայնքին, քանի որ գտնվում է բնակավայրից հեռու:

Գորիսեցիները գտնում են, որ տուրիզմի զարգացման հիմնական նպատակը պետք է լինի այնպիսի ենթակառուցվածքների ստեղծումը, որը տուրիստին «կստիպի» առնվազն մեկ օր մնալ քաղաքում: Հակառակ դեպքում, զբոսաշրջիկները, գալով Սյունիքի մարզ, այցելում են Տաթևի վանական համալիր, Խնձորեսկի ճոճվող կամուրջ ու վերադառնում, իսկ համապատասխան ենթակառուցվածքների առկայության դեպքում գոնե մեկ օր կմնան տարածաշրջանում, ինչը մեծապես կնպաստի տեղի բնակավայրերի աշխուժացմանը, նշում են քաղաքացիները: Գորիս քաղաքի դիտակետի վերանորոգումը կարող է զբոսաշրջիկներին գրավելու տարբերակներից մեկը դառնալ. այդտեղից հիանալի տեսարան է բացվում դեպի քարանձավային քաղաք:

Քննարկման ընթացքում հնչեց տուրիստական երթուղի մշակելու առաջարկ, համաձայն որի, զբոսաշրջիկը նախապես տեղեկացված կլինի համայնքի տեսարժան վայրերի մասին: Ըստ տեղացիների՝ Գորիս համայնքում կան բազմաթիվ չբացահայտված տեսարժան վայրեր, որոնք հասանելի չեն զբոսաշրջիկներին. «Շատ գյուղական համայնքներ կան, որ տեսարժան վայրեր ունեն, ինչո՞ւ տուրիստին չտանենք այդ գյուղեր»: Քննարկման մասնակիցներն առաջարկում են Գորիս խոշորացված համայնքում զբոսաշրջություն ավելի գրավիչ դարձնելու համար մշակել զարգացման համալիր ծրագիր. «Գորիսը պետք է ունենա տուրիզմի կոմպլեքս զարգացման ծրագրեր, որ բոլոր համայնքներով տուրեր կազմակերպեն, ամեն համայնք ունենա իր բրենդը»,- նշում են քննարկման մասնակիցները

Քաղաքացիների համար Գորիս քաղաքի դիտակետի վերանորոգումը կարող է մի քանի հարց լուծել. բացի այն, որ դիտակետը կարող է դառնալ գրավիչ տուրիստական կետ քաղաքում, այն հնարավորություն կտա զարգացնել, օրինակ, սրճարանային բիզնեսը. «Տասը տարվա սեփականատերը սրճարան չի կառուցել, բայց երբ դիտակետը նորոգվում է, տեսնում է ու սկսում է իր սրճարանն էլ նորոգել», նշում են բնակիչները: Այժմ դիտակետի տարածքը համարվում է քաղաքի ամենավտանգավոր կետերից մեկը. «Դիտակետից շատ ինքնասպանություններ են լինում», նշում են քաղաքացիները, հույս հայտնելով, որ դիտակետի վերանորոգումից հետո, այն կդառնա մարդաշատ վայր, ինչն էլ կնվազեցնի ինքնասպանությունների թիվը: Ներկաները նշում են, որ դիտակետի վերականգնումը կլուծի նաև բնապահպանական մեծ խնդիր. «Քաղաքի ռելիեֆն այնպես է, որ անձրևի հետևանքով ամբողջ քաղաքի կեղտը լցվում է դիտակետի տարածք: Հույս ունեմ, որ վերականգնումը նախատեսում է նաև սելավատարների հարցը», ընդգծում են քննարկման մասնակիցները: Միաժամանակ, քննարկման մասնակիցների մի խումբ գտնում է, որ դիտակետի վերանորոգումը տուրիստական «բումի» չի բերելու, հետևաբար, ավելի նպատակահարմար է դրա վերականգնման համար հատկացված գումարի մի մասը ուղղել համայնքի այլ, կարևոր խնդիրների լուծմանը. օրինակ՝ խոշորացված համայնքի բնակավայրերում մանկապարտեզներ կառուցելուն:

Միաժամանակ, քաղաքացիների մի խումբ էլ կարծում է, որ ավելի նպատակահարմար է վերականգնել Մշակույթի տան հարակից այգին. «Ճեմուղին հաստատ դիտակետից արդյունավետ է... տուրիստն էլ է ճեմուղուց օգտվելու: Ուր գնում ես, ասում ես մի հատ էսինչի հրապարակը տեսնեմ: Գորիսում մի էդպիսի տեղ չկա:»,- նշում են քաղաքացիները: Քննարկման մասնակիցների կարծիքով ճեմուղու վերանորոգումը կնպաստի քաղաքային մշակույթի ձևավորմանը. «Գորիսում մի ծաղիկ է աճում, երեխան պոկում է, չի տեսել, ճաշակ չի զարգացել գեղեցիկը պահպանելու, քաղաքը սիրելու», նշում են բնակիչները, իսկ այգու վերանորոգումը հնարավորություն կտա այդ մշակույթը սերմանել և զարգացնել հատկապես երեխաների շրջանում: Այգին կարևոր դեր ունի նաև քաղաքի և հարակից բնակավայրերի բնակիչների ժամանցը կազմակերպելու հարցում, քանի որ մարդիկ կունենան հավաքվելու, ժամանակ անցկացնելու մաքուր և բարեկարգ այգի, նշում են քննարկման մասնակիցները:

Քարանձավային քաղաքի վերականգնումը քննարկման մասնակիցների մի խումբ համարում է համայնքում տուրիզմի զարգացման կարևոր նախադրյալներից մեկը. «Քարանձավը մեր տուրիզմի բրենդն է»,- նշում են քաղաքացիները: Ճիշտ է, տեղաբնակների համար քարանձավները սովորական են, և նույնիսկ որոշ դեպքերում այդ քարանձավներն օգտագործվում են որպես անասնագոմ, սակայն դրանք գրավում են զբոսաշրջիկներին իրենց յուրօրինակությամբ, ընդ որում, ինչպես նշում են բնակիչները, քարանձավներ կան ոչ միայն Գորիս և Խնձորեսկ համայնքներում, այլև համայնքի այլ բնակավայրերում, որտեղ մարդիկ մինչև անցյալ դարի 50-ականները բնակվել են: Ինչպես նշում են քննարկման մասնակիցները, Գորիս համայնքն ավելի գրավիչ դարձնելու համար պետք է փորձել համայնքի պատմամշակութային վայրերը հետաքրքիր ձևով ներկայացնել աշխարհին, օրինակ՝ քարանձավներում կինոդիտումներ կազմակերպելով հնարավոր կլինի մեծ թվով զբոսաշրջիկների գրավել: Քննարկման

մասնակիցների մի խումբ էլ կարծում է, որ քարանձավային քաղաքը վերանորոգելուց առաջ պետք է վերականգնել այդտեղ տանող ճանապարհը: Միաժամանակ, ինչպես նշում են բնակիչները, քարանձավային քաղաքի վերականգնումից ավելի հրատապ լուծում պահանջող խնդիրներ կան համայնքում, իսկ «Որոտան» ՀԷԿ-ը համաձայնել է համաֆինանսավորմամբ վերանորոգել այն:

Քննարկման մասնակիցների կարծիքով, Գորիսում տուրիզմի զարգացումը կնպաստի նաև հարակից համայնքների զարգացմանը, օրինակ՝ Գորիս քաղաքի հյուրանոցներում բացի տեղացիներից, աշխատում են նաև հարևան գյուղերի բնակիչները, իսկ հյուրատների զարգացումը հնարավորություն կտա առանձին տնային տնտեսություններին զարգացնել սեփական բիզնեսը, մանավանդ, ինչպես նշում են բնակիչները, տուրիզմի զարգացմանը զուգահեռ բարձրանում են նաև տան վարձերը . «Տուրիստը միայն հյուրանոց չի ուզում գնալ, ուզում է գնալ գյուղական վայր, աքլորի ձայնից զարթնել»,- նշում են քաղաքացիները: Քննարկման մասնակիցների մի խումբ էլ կարծում է, որ պետական աշխատողների եկամտի վրա տուրիզմի զարգացումն էական ազդեցություն չի ունենա, հետևաբար, մասնավոր սեկտորը պետք է զբաղվի զբոսաշրջության զարգացմամբ:

Քաղաքացիների կարծիքով տուրիզմի զարգացման կարևոր նախապայմաններից մեկը համայնքային ենթակառուցվածքների՝ խմելու ջուր, ճանապարհներ, մայթեզր, զարգացումն է. «Գորիսում մեծ խնդիր է մայթերի բացակայությունը, տուրիստի համար ոտքով քայլելը հարմար չի ու անգամ վտանգավոր»,- նշում են քննարկման մասնակիցները: Ինչպես նշում են քաղաքացիները, տուրիստական գործակալությունները երկրի մասին առաջին հերթին պատկերացում են կազմում նայելով ենթակառուցվածքներին. եթե չկա ջուր, ճանապարհ, ապա տուրիստներ չեն գա, անգամ եթե լինեն գրավիչ տեսարժան վայրեր:

Միաժամանակ, ինչպես նշում են բնակիչները, տուրիզմի զարգացումը շատ կարևոր է, բայց չպետք է կենտրոնանալ միայն դրա վրա՝ մոռանալով սեփական բնակիչներին. «Մտածում են տուրիզմը զարգացնեն. բայց բնակչի ապրելակերպի մասին չեն մտածում»,- կարծում են բնակիչները: Զբոսաշրջության զարգացման ծրագրերը լավն են, բայց դրանց արդյունքները կերևան երկարաժամկետ ժամանակահատվածում, իսկ մինչ այդ բնակիչները պետք է ջուր խմեն, երեխաները մանկապարտեզ հաճախեն, կարծում են քաղաքացիները:

Քննարկման մասնակիցների կարծիքով պետք է նախևառաջ մտածել մարդու առողջությունն ապահովելու մասին, հետո նոր անցնել մնացած խնդիրներին: Քաղաքացիների կարծիքով մարզադաշտերի կառուցումը կնպաստի որպեսզի մարդիկ մարզվեն, առողջ ապրելակերպի ավանդույթ կձևավորվի, իսկ երիտասարդները կհրաժարվեն վատ սովորություններից: Ըստ բնակիչների՝ առողջությունն առաջնային է, և պետք է օր առաջ սկսել զբաղվել առողջության պահպանմամբ, իսկ մարզասրահների բացումը կնպաստի բազմաթիվ հիվանդությունների կանխարգելմանը: Այսօր, նմանատիպ մարզահրապարակների բացակայության պատճառով շատերը խուսափում են կամ հնարավորություն չունեն սպորտով զբաղվել: Միաժամանակ, բնակիչների կարծիքով համայնքի բնակավայրերում մարզադաշտերի բաշխվածությունն է խնդիր առաջացնում, քանի որ խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերն ունեն նմանատիպ մարզադաշտերի անհրաժեշտություն, իսկ ծրագրով նախատեսված է կառուցել միայն Գորիս քաղաքում:

Համայնքային ենթակառուցվածքների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա

Մեղրի խոշորացված համայնքում քննարկման ժամանակ, բնակիչները վեր հանեցին Ագարակի զբոսայգու, համայնքի տարբեր բնակավայրերում հանգստյան գոտիների, խոշորացված համայնքի գազաֆիկացման խնդիրները, իսկ Գորիս խոշորացված համայնքում՝ դիտակետի, քարանձավային քաղաքի, համայնքի մարզահրապարակների, Գորիս մշակույթի տան հարակից այգու, համայնքի կոյուղագծերի զարգացման և վերանորոգման անհրաժեշտությունը: Միաժամանակ, երկու համայնքներում ել կարևորվեց աղբահանույթան կազմակերպման, խմելու և ոռոգման ջրերի ցանցի, միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերականգման անհրաժեշտությունը:

Քննարկման մասնակիցների կարծիքով զբոսայգին պետք է կառուցվի խոշորացված համայնքի բնակիչներին հասանելի վայրում: Քննարկման մասնակիցների մի խումբ գտնում է, որ, քանի որ Մեղրին խոշորացված համայնքի կենտրոնն է, իսկ այնտեղ զբոսայգի չկա, հետևաբար, հենց Մեղրիում պետք է այն կառուցվի: Քննարկման մասնակիցները կարևոր են համարում Մեղրիում այգու տարածքին հանրային կարգավիճակ տալը, քանի որ ըստ բնակիչների, այգու տարածքը անօրինական կերպով սեփականաշնորհվել է: Միաժամանակ քաղաքացիների մի խումբ էլ կարծում է, որ Ագարակը համայնքի

ամենաարագ զարգացող բնակավայրն է, որին ևս անհրաժեշտ են զբոսայգիներ, ուստի ավելի նպատակահարմար է զբոսայգին կառուցել Ագարակում: Քաղաքացիների մի այլ խումբ կարծում է, որ մեծ զբոսայգու փոխարեն ավելի լավ կլիներ խոշորացված համայնքի տարբեր բնակավայրերում մի քանի զբոսայգիներ կառուցել. սա հնարավորություն կտա խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերի երեխաներին օգտվել զբոսայգիներից:

Քաղաքացիները կարծում են, որ Մեղրու տարածաշրջանում չկա մի այնպիսիս հանգստյան գոտի, որտեղ հնարավոր կլինի ընտանիքով գնալ և ժամանակ անցկացնել, սակայն խոշորացված համայնքի բնակավայրերը գրավիչ հանգստավայր դառնալու մեծ ներուժ ունեն: Օրինակ՝ Լիճքը հրաշալի բնակավայր է հանգստի գոտի վերածելու համար. ժամանակին այն եղել է պարսից շահի ամառանոցը, կամ Շվանիձոր բնակավայրը, որտեղ փոքր գումար ծախսելով, հնարավոր կլինի տպավորիչ արդյունքներ ունենալ, նշում են բնակիչները: Քննարկման մասնակիցների մի խումբ գտնում է, որ մասնավոր հատվածը պետք է ֆինանսավորի և հետագայում զբաղվի հանգստյան գոտիների պահպանման հարցերով:

Եթե հանգստյան գոտիներից օգտվելու համար գումար սահմանվի, դա կնպաստի բիզնեսի զարգացմանը, իսկ հանգստյան գոտիների համար Մեղրի եկող զբոսաշրջիկը միանգամից կգնի նաև իրեն անհրաժեշտ գյուղատնտեսական ապրանքները: Միաժամանակ, բնակիչների մեկ այլ խումբ կարծում է, որ հանգստյան գոտիների հիմնումը կարևոր նշանակություն ունի համայնքի համար, հետևաբար դրանց կառուցման համար պետք է ներդրումներ արվեն համայնքային բյուջեից, իսկ տարածքի մաքրությունը պահպանելու համար կարելի տուգանքներ սահմանել:

Քաղաքացիներն առաջարկում են հանգստյան գոտիներն ավելի գրավիչ դարձնելու համար այնտեղ կառուցել, օրինակ, արհեստական լճակներ կամ զիփլայն. «Պարսիկը կխմի, կգա զիփլայնով կթռչի, փողն էլ կգա համայնքի բյուջե»,- նշում են համայնքի բնակիչները, իսկ մարզի բնակիչը իր հանգստի համար նախատեսած գումարը կծախսի հենց իր մարզում:

Քննարկման մասնակիցները նշում են, որ եթե թիրախային ներդրումներ արվեն, բացի արտասահմանցի զբոսաշրջիկներից, Գորիսը գեղեցիկ հանգստյան գոտի դառնալու պոտենցիալ ունի նաև այն հայերի համար, որոնք հնարավորություն չունեն մեկնել այլ երկրներ: Օրինակ՝ վերանորոգված դիտակետը կդառնա քաղաքի այցեքարտերից մեկը: Ինչպես նշում են քաղաքացիները՝ դիտակետի վերանորոգումը կաշխուժացնի կյանքն այդ հատվածում, սրճարանների, արագ սննդի կետերի բացումը կնպաստի բիզնեսի զարգացմանը, կկանխվեն ինքնասպանության դեպքերը, և տարածքը կմաքրվի աղբից: Բնակիչների կարծիքով դիտակետի վերանորոգումը սերտորեն կապված է քարանձավային քաղաքի վերանորոգման հետ, և դրանք պետք է դիտարկել որպես մեկ ամբողջություն. «Դիտակետով գնում և հասնում ես այստեղ, դիտակետից տեսնում Քարանձավային քաղաքը. այսինքն կոմպլեքս պետք է վերականգնել, մեկն առանց մյուսի չի կարող լինել»,- նշում են քաղաքացիները: Քննարկման մասնակիցները կարևորում են քարանձավային քաղաքի վերանորոգումը, քանի որ այդ տարածքը դարձել է արոտավայր, իսկ մշակույթը, որի անբաժանելի մասն են կազմում քարանձավները, պետք է պահպանել և փոխանցել սերունդներին: Միաժամանակ, քննարկման մասնակիցները նշում են, որ քարանձավային քաղաքի վերականգնումը շատ կարևոր է, բայց համայնքում կան հրատապ լուծում պահանջող այլ, առօրեական խնդիրներ:

Գորիսի մշակույթի տան հարակից ճեմուղու վերակառուցումը շատ կարևոր է, քանի որ այն հենց քաղաքի կենտրոնում է, կարծում են քաղաքացիները: Ճեմուղու վերակառուցումը ոչ միայն քաղաքի էսթետիկ տեսքը կապահովի, այլև մարդկանց ժամանցի արդյունավետ կազմակերպման հարցը կլուծվի: Բնակիչները նշում են, որ բացի երեխաներից, որոնք կարող են այգու մոտակայքում գտնվող գրադարանից գիրք վերցնել և կարդալ, նրանց ծնողները, տարեց բնակչությունը ևս հավաքվելու և զրուցելու հնարավորություն կունենա: Քաղաքացիները նշում են, որ այգու վերանորոգման աշխատանքները սկսվել են, և ինչպես ցույց են տալիս նախնական դիտարկումները, բավականին գեղեցիկ այգի է նախատեսվում:

Քաղաքացիների կարծիքով մարզահրապարակի կառուցումը էապես կնպաստի առողջության պահպանմանը, սակայն, միայն Գորիս քաղաքով սահմանափակվելը սխալ է, քանի որ մյուս համայնքներն էլ մարզահրապարակների անհրաժեշտություն ունեն: Քանի որ միջոցառումների անցկացման հարմար վայր չկա քաղաքում, մարզահրապարակ կառուցումը կլուծի նաև այս խնդիրը, կարծում են քաղաքացիները: Միաժամանակ, ինչպես նշում են բնակիչները, մարզահրապարակները սեզոնային բնույթ կկրեն՝ կախված եղանակային պայմաններից, այդ պատճառով ավելի լավ կլիներ մարզադպրոց

կառուցել, իսկ եթե դպրոցները լինեին համայնքի վերահսկողության տակ, ապա հնարավոր կլիներ դասերից հետո դպրոցների մարզադահլիճները վճարովի տրամադրել համայնքի բնակիչներին, կամ էլ համայնքի կիսակառույց շենքերը վերանորոգեն որպես մարզասրահներ:

Վերը նշված համայնքային ենթակառուցվածքների զարգացումը 2 համայնքներում էլ քաղաքացիները պայմանավորում են միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վիճակով: Գորիսի համար մեծ կարևորություն ունի նաև միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերանորոգումը, նույնիսկ ռազմավարական նշանակության ճանապարհներն այնքան վատ վիճակում են, որ անգամ տանկերը չեն կարողանում անցնել, նշում են քաղաքացիները: Ինչպես նշում են բնակիչները, թե՛ տուրիզմի զարգացման, թե՛ բերքի իրացման համար, առաջին հերթին անհրաժեշտ է բարեկարգել ճանապարհները: Օրինակ՝ Մեղրի համայնքի Նռնաձոր բնակավայրում բնակիչները ստանում են մեծ քանակությամբ բերք, բայց նորմալ ճանապարհների բացակայության պատճառով իրացման խնդիր են ունենում: Լիճքը մեծ ներուժ ունի հանգստյան գոտի դառնալու համար, սակայն ճանապարհների վատ որակի պատճառով մարդիկ խուսափում են այդ բնակավայրում որևէ բան նախաձեռնել՝ մտածելով, որ տուրիստներ չեն գա: Փողոցների բարեկարգմանը զուգահեռ՝ պետք է ուշադրություն դարձնել նաև դրանց լուսավորությանը, կարծում են համայնքի բնակիչները. «Շատ մութ անկյուններ կան, որոնցով գիշերը չես կարողանում անցնել», նշում են քաղաքացիները: Հաշվի առնելով այս ամենը՝ մասնակիցների մի խումբ նշում է, որ բոլոր ծրագրերին հատկացված գումարը պետք է ուղղել ճանապարհների վերանորոգմանը և լուսավորությանը:

Գորիսի քարանձավային քաղաքը վերականգնելուց առաջ պետք է մտածել այդտեղ տանող ճանապարհի մասին, որը գտնվում է անմխիթար վիճակում, առաջարկում են քննարկման մասնակիցները: Ինչպես զբոսաշրջիկների, այնպես էլ տեղի բնակիչների համար մեծ վտանգ է փողոցներին մայթերի բացակայությունը:

Քննարկումների մասնակիցների կարծիքով խոշորացված համայնքում բնակավայրերը միմյանց և կենտրոնին տրանսպորտով կապելու խնդիր կա: Գյուղական բնակավայրերում մանկապարտեզների, խաղահրապարակների բացակայության պայմաններում մարդիկ երեխաներին պետք է տանեն այն մոտակա բնակավայրերը, որտեղ կան մանկապարտեզներ կամ խաղահրապարակներ, բայց տրանսպորտի բացակայության պատճառով, ստիպված մնում են գյուղում՝ չօգտվելով ոչնչից:

Երկու համայնքներում էլ բնակիչների կարծիքով այսօր շատ բնակավայրերում խիստ անհրաժեշտ է կարգավորել խմելու և ոռոգման ջրերի հարցը: Ըստ բնակիչների՝ համայնքում խմելու ջրի հարցը պետք է կարգավորել առաջին հերթին, ոչ միայն սեփական բնակիչների, այլև տուրիզմի զարգացման համար: Հորդառատ անձրևների ժամանակ մարդիկ, որպեսզի չխմեն անձրևաջուր, ստիպված խանութից են ջուր գնում:

Մեղրի խոշորացված համայնքի բնակիչների կարծիքով բերքի որակը մեծապես կախված է ոռոգման ջրից, իսկ ամռան ամիսներին՝ ջրի ամենաանհրաժեշտ եղանակին, ջուր չի լինում համայնքում, հետևաբար, բնակիչների կարծիքով, Մեղրի համայնքում առաջնահերթ պետք է լուծել ոռոգման ջրի ցանցի և ջրամբարի կառուցման հարցերը:

Գորիսի կոյուղու հնացած ցանցը համայնքի բնակիչների համար մեծ խնդիրներ է առաջացնում, այդ թվում՝ առողջական: Սրտաբանական հիվանդանոցի կոյուղին թափվում է գետի մեջ, որից ոռոգվում են համայնքի ցանքատարածությունները և ջուր են խմում կենդանիները. այդ ջուրը համաճարակի պատճառ կարող է դառնալ, կարծում են քաղաքացիները: Տուրիզմի զարգացման կարևոր ենթակառուցվածքներից մեկը հանրային զուգարանների ցանցի առկայությունն է, որը սակայն բացակայում է, և պետք է այդ մասին մտածել, նշում է քաղաքացիների մի խումբ:

Համայնքում աղբամաններ տեղադրելու և աղբահանությունը ճիշտ կազմակերպելու խնդիր ունեն համայնքապետարանները, կարծում են բնակիչները: Քաղաքում աղբամաններ գրեթե չկան, իսկ կարևոր նշանակություն ունեցող պատմամշակութային վայրերը, ինչպիսին օրինակ Գորիսի քարանձավային քաղաքն է, լցված են աղբով, նշում են քաղաքացիները: Համայնքապետարանը պետք է բյուջեից գումար նախատեսի այս կարևոր խնդիրը լուծելու համար, առաջարկում են քաղաքացիները: Միաժամանակ, բնակիչների մի խումբ նշեց, որ ամեն ինչ հանգում է ֆինանսների առկայությանը, մինչդեռ համայնքի բնակիչներն իրենք կարող են համախմբվել, շաբաթօրյակ կազմակերպել և մաքրել համայնքն աղբից:

Մեղրի խոշորացված համայնքի բնակիչները պայմանավորում են գազաֆիկացմամբ: Լինելով Իրանին սահմանակից համայնք՝ Մեղրին չունի գազ. «Մեղրիում գազը վառեցին ցույց տվեցին ու մենք էլ գազ չտեսանք, խողովակները կա գազ չկա. կատակում են որ էս խողովակները պետք է կտրել թառմա սարքել խաղողի համար. Մեղրիով գնաց Եվրոպա, մենք չտեսանք»,- նշում են բնակիչները: Ըստ քննարկման մասնակիցների՝ համայնքում նույնիսկ անցկացված գազի խողովակներ կան, սակայն բնակիչները մինչ այսօր բնակարանները տաքացնում են փայտով, իսկ կենցաղային կարիքները ստիպված են հոգալ հեղուկ գազով, որը բազմաթիվ դժվարություններ է առաջացնում: Համայնքի բնակիչների կարծիքով գազաֆիկացումը կլուծի ապօրինի անտառահատումների խնդիրը, քանի որ մարդիկ ունենալով բնական գազ, ծառեր չեն կտրի ձմռանը տաքանալու համար, իսկ սանիտարական էտի արդյունքում կտրված փայտը բավարար չի ամբողջ համայնքի ջեռուցման խնդիրը լուծելու համար: Բնակիչները պատրաստ են ցույցեր կազմակերպել, որպեսզի պատկան մարմինների ուշադրությունը գրավեն և վերջապես լուծեն իրենց համար երազանք թվացող համայնքի գազաֆիկացման հարցը: Միաժամանակ, բնակիչների մի խումբ էլ կարծում է, որ գազաֆիկացումն այնուամենայնիվ չի լուծի ջեռուցման հարցը, քանի որ վառելափայտն անհամեմատ էժան է գազից:

Գենդերային խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա

Քննարկումների մասնակիցները կարևորում են ծրագրերի իրականացման ընթացքում կանանց զբաղվածության ապահովման հարցը: Ըստ բնակիչների՝ մայրիկներին տրամադրվում է 18000 դրամ՝ տանը մնալու և երեխայի խնամքը կազմակերպելու համար, իսկ մանկապարտեզներն ու նախակրթարանները հնարավորություն կտան ծնողին երեխայի խնամքը կազմակերպելուն զուգահեռ նաև աշխատել:

Զբոսայգիների կառուցումը ոչ միայն երեխաների, այլ նրանց ծնողների՝ հատկապես մայրերին, հնարավորություն կտա արդյունավետ կազմակերպել իրենց հանգիստը. «Գյուղերում կանայք գործ են անում ու բամբասում: Ոչ մի տեղ չկա, որտեղ մարդիկ իրար հետ նորմալ կհավաքվեն, ժամանակ կանցկացնեն»,- նշում են բնակիչները:

Երեխաների, դեռահասների և երիտասարդների խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա

Քննարկումների մասնակիցները կարևորում են նախակրթության և նախակրթարանների դերը երեխայի դաստիարակության և հետագա զարգացման հարցում: «Հիմա մարդիկ անմիջապես տեսնում են մանկապարտեզ գնացող ու չգնացող երեխայի տարբերություն, անգամ երեխայի շրջապատ մտնելն ու բարևելը փոխվում է». նշում են մասնակիցները: Քննարկումների մասնակիցներ մանկապարտեզների հասանելիության ապահովման խնդիրը համարում են համայնքի կարևորագույն գերակայություն. «Երեխաներին ապահովենք, հետո ձեր չիրը ծախելու տեղը կսարքեք»: Միաժամանակ, մասնակիցներն առաջարկում են տիպային մանկապարտեզների այլընտրանքներ, մասնավորապես՝ խոշորացված համայնքում ունենալ մեկ հիմնական մանկապարտեզ, և մասնաճյուղեր՝ մի շարք բնակավայրերում, ինչը հնարավորություն կընձեռի կենտրոնացնել կառավարումը և վարչական ծախսերը: Մասնակիցները առաջարկում են իրար մոտ բնակավայրերի համար ունենալ մեկ ընդհանուր մանկապարտեզ՝ ապահովելով հարևան գյուղերի երեխաներին փոխադրամիջոցով: Քննարկման մասնակիցների մեկ այլ խումբ գտնում է, որ մանկապարտեզների փոխարեն ավելի լավ է նախակրթարաններ ունենալ:

Քննարկումների մասնակիցները մանկապարտեզը համարում են համայնքի սոցիալական կառուցվածքի և անգամ գոյության կարևոր նախադրյալ. «Գյուղի զարգացման մասին չենք խոսում, գյուղի պահպանման հարց է գնում: Մանկապարտեզն օրհասական խնդիր է»,- նշում են քննարկումների մասնակիցները: Քաղաքացիները նկատում են, որ նոր համայնք տեղափոխվելիս, առաջին հերթին ուշադրություն են դարձնում համայնքային ենթակառուցվածքներին՝ մասնավորապես մանկապարտեզի և դպրոցի առկայությանը: Յուրաքանչյուր համայնքում, անկախ երեխաների թվից, պետք է մանկապատեզներ լինեն, նույնիսկ եթե անհրաժեշտ է անտեսել համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող այլ խնդիրներ, նշում են քննարկումների մասնակիցները:

Քաղաքացիների մեկ այլ խումբ գտնում է, որ մանկապարտեզ պետք է կառուցել համեմատաբար երիտասարդ համայնքներում, որտեղ մեծ թիվ են կազմում երիտասարդ ընտանիքները, և նրանց երեխաները մանկապարտեզ գնալու խնդիր են ունենալու հետագայում: «Եթե մեզ մոտ մանկապարտեզ

չկա, և մարդիկ հեռանում են, գոնե մյուս գյուղերում թող կառուցեն մանկապարտեզ, որ իրենք մեր վիճակում չհայտնվեն». նշում են քննարկումներին մասնակցած քաղաքացիները:

Քաղաքացիների մի խումբ էլ կարծում է, որ համայնքներում կան ավելի հրատապ խնդիրներ, և միայն դրանց լուծումից հետո պետք է մտածել մանկապարտեզի մասին. «Մինչև մանկապարտեզի շենքը սարքեն, ջրի պատճառով գյուղը կդատարկվի»: Անիմաստ է մեծ ներդրումներ կատարել և մանկապարտեզ կառուցել փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքներում, կարծում են քննարկումների մասնակիցները: Որպես լուծում նշում են մանկապարտեզի փոխարեն՝ համայնքի բնակավայրերից մեկում ճամբար կառուցելը, ինչը նույնպես կարող է նպաստել գյուղի պահպանմանը:

Քաղաքացիները մանկապարտեզների դերը հատկապես կարևորում են ծնողների զբաղվածության ապահովման տեսանկյունից. «Քանի դեռ երեխան մանկապարտեզում է, ծնողը կարող է աշխատել և ապահովել երեխայի բարեկեցությունը». կարծում են քննարկումների մասնակիցները: Քաղաքացիներն առաջարկում են մանկապարտեզների աշխատանքային ժամերը սահմանել մինչև 16:30-17:00, որպեսզի ծնողները կարողանան լիարժեք աշխատել: Ի լրումն, ըստ քննարկումների մասնակիցների, մանկապարտեզների ստեղծումը կնպաստի համայնքում նոր աշխատատեղերի բացմանը:

Երեխաների հետագա առողջ զարգացման տեսակետից կարևոր է խաղահրապարակների և մարզադաշտերի վերանորոգումը, քանի որ սպորտդպրոցը ոչ բոլորին է հասանելի թե՛ ֆինանսական, թե՛ հեռավորության պատճառներով: Ֆուտբոլի փոքր դաշտերը գերծանրաբեռնված են, իսկ ֆիզկուլտուրայի դասերին պատշաճ ուշադրություն չեն դարձնում, ուստի ազատ ժամանակը երեխաները հիմնականում անց են կացնում համակարգչի առաջ, ինչը հիվանդությունների պատճառ է դառնում, կարծում են քննարկման մասնակիցները: Քաղաքացիները մեծապես կարևորում են համայնքի բոլոր բնակավայրերում փոքր խաղադաշտերի կառուցումը, որպեսզի ոչ միայն կենտրոնի, այլև համայնքի ծայրամասային բնակավայրերի երեխաները օգտվեն դրանցից: Այնուամենայնիվ, քննարկումների ընթացքում, մասնակիցների մի մասն առաջարկում է խաղահրապարակների փոխարեն վերանորոգել դպրոցների և մանկապարտեզների մարզադահլիճները՝ համարելով դա ավելի հրատապ լուծում պահանջող հարց:

Երեխաների կրթության և զարգացման գործում մեծ է թանգարանի դերը, կարծում են քննարկման մասնակիցները: Համայնքներն ունեն լուրջ կրթական բազա, դիդակտիկ նյութեր, բայց չունեն դրանք ցուցադրելու և երեխաների փոխանցելու հնարավորություն: Թանգարանները երեխաներին սովորեցնում են ոչ միայն գնահատել մշակույթը, այլև պահպանել այն, նշում են բնակիչները:

Քննարկումների մասնակիցների մի խումբ կարծում է, որ խոշորացված համայնքի առաջնահերթ լուծում պահանջող հարցերից մեկն Ագարակի զբոսայգու վերանորոգումն է: Ագարակը բավականին մեծ բնակավայր է, մեծաթիվ բնակչությամբ, և երեխաների առօրյան կազմակերպելու հարցում այգի ունենալու անհրաժեշտություն կա. «Ես երեխայիս վերցնում ու Կապան եմ գնում, որպեսզի նա կարողանա կարուսել նստի, ավազի մեջ խաղա, սղարան նստի»,- նշում են քննարկումների մասնակիցները, իսկ այգին նախատեսվում է կառուցել քաղաքի այնպիսի հատվածում, որտեղ երիտասարդ ընտանիքները շատ են, հետևաբար զբոսայգուց օգտվող երեխաների թիվն էլ բավական մեծ կլինի: Քաղաքացիների կարծիքով, զբոսայգու կառուցումը կարևոր է հատկապես երեխաների անվտանգությունն ապահովելու տեսանկյունից, քանի որ համայնքի երեխաները խաղում են փողոցում, ասֆալտի վրա, իսկ այգին վերանորոգված չէ և վտանգավոր է: Քննարկումների ն մասնակիցները համոզված են, որ երեխաներին զբոսայգի տանելով, ծնողները ևս հանգստանալու հնարավորություն կունենան:

Երիտասարդների զբաղվածության և ժամանցի ապահովումը ևս քննարկումների մասնակիցների ուշադրության կենտրոնում էր: Այսօր համայնքներում երիտասարդները բավականին մեծ թիվ են կազմում, սակայն աշխատանքի բացակայության պատճառով հեռանում են իրենց բնակավայրերից: Եթե լինի որևէ արտադրություն կամ աշխատելու հնարավորություն, երիտասարդները կկարողանան աշխատել, գտնում են քննարկումների մասնակիցները: Քաղաքացիների կարծիքով, պակաս կարևոր չի նաև երիտասարդների ժամանցի ապահովման խնդիրը: Նրանց կարծիքով եթե երիտասարդներն իրենց ժամանցը կազմակերպելու, սպորտով զբաղվելու հնարավորություն ունենան, կհրաժարվեն վատ սովորույթներից:

Տարեցների խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա

Քննարկումների ընթացքում բարձրացվեց նաև համայնքի տարեց բնակչության խնդիրները: Քաղաքացիները նշում են, որ երեխաների և երիտասարդների խնդիրներին զուգահեռ պետք է ուշադրության կենտրոնում պահել նաև համայնքի մեծահասակ բնակչությանը: Քննարկման մասնակիցներն առաջարկում են մեծահասակներին տրամադրել սենյակ, որտեղ նրանք կարող են հավաքվել, ժամանակ անցկացնել. «Մեզ մարզահրապարակ պետք չի, այլ մի սենյակ է պետք, որտեղ տարեցները հավաքվեն, իրար հետ նարդի խաղան»,- նշում են քննարկումների մասնակիցները: Միաժամանակ, բնակիչները մի խումբ էլ նշում է, որ տարեց բնակչության շրջանում սպորտով զբաղվելը խթանելու և հիվանդությունները կանխարգելելու առումով մարզահրապարակները կարևոր դեր ունեն:

Բնապահպանության, էներգախնայողության, այլընտրանքային էներգետիկայի խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա

Քննարկումների ընթացքում բավականին մեծ ուշադրություն է դարձվում բնապահպանական հարցերին: Պետությանը պետք են հանքեր, բայց դրանք այնպես պետք է շահագործել, որպեսզի մեծ վնաս չպատճառի շրջակա միջավայրին, նշում են բնակիչները: Հանքերի, հէկ-երի պատճառով ամայանում են տարածքներ, փոխվում է կլիման. սա բացասական է անդրադառնում մարդկանց առողջության և բերքի որակի վրա, կարծում են բնակիչները: Քաղաքացիների կարծիքով պետք է որոշակի ստանդարտներ սահմանվեն տարածքում գործող հանքերի շահագործման համար, օրինակ՝ պարտավորեցնել հանքերի սեփականատերերին ամայացած տարածքների փոխարեն կանաչապատել այլ տարածքներ. «Ագարակի պղնձամոլիբդենային ընկերությունը պետք է շքեղ այգի կառուցեր Ագարակում, քանի որ իր գործունեության արդյունքում մեծ վնաս է հասցվում բնակչության առողջությանը»,- նշում են քննարկումների մասնակիցները:

Բնակիչների կարծիքով Սյունիքի մարզում բնակլիմայական պայմանները բարենպաստ են այլընտրանքային էներգետիկայի զարգացման համար. «Ամենաշատ արևը Մեղրիում է, և այս արևից ոչինչ չվերցնելը, ուղղակի ծիծաղելի է.,- կարծում են քաղաքացիները: Արևային էներգիայով աշխատող վահանակները լուծում են երկարաժամկետ խնդիրներ. մի անգամ տեղադրելով՝ ապահովելու է երկարաժամկետ արդյունք, նշում են քաղաքացիները: Քննարկումների մասնակիցների մի խումբ էլ առաջարկում է էլեկտրաէներգիա ստանալու համար օգտագործել ոչ թե ջուրը, որը հանգեցնում է բերքի ոչնչացման, այլ՝ քամու ուժը: Որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր, մարդկանց մի խումբ էլ առաջարկում է Գորիսի Տեղ գյուղի օրինակով հացահատկի ծղոտի վերամշակումից ստանալ խտացված վառելանյութ:

Ապօրինի անտառահատումներից խուսափելու համար քննարկումների մասնակիցներն առաջարկում են համայնքում լուծել գազամատակարարման հարցը, հակառակ դեպքում այլընտրանքն էլեկտրականությամբ ջեռուցելն է, որը բավականին թանկ է: Մարդիկ կհրաժարվեն անտառահատումներից, եթե այլընտրանք առաջարկվի, նշում են քաղաքացիները:

Ժողովրդագրական խնդիրների ազդեցությունը համայնքի բյուջեի և կապիտալ ծրագրերի վրա

Քննարկումների մասնակիցները ցանկացած հարց քննարկելիս կարևորում են հատկապես համայնքի պահպանման խնդիրները, քանի որ հատկապես գյուղական համայնքներում բարձր է արտագաղթի մակարդակը, որը կանխելու համար բնակիչներն առաջարկում են խոշորացված համայնքի բնակավայրերն ապահովել մինիմալ կենսական պայմաններով. «Խմելու ջրի հարցը կնպաստի ծնելիության աճին, եթե ջուր չկա, ծնելիություն չկա, ո՞ւմ համար ենք մանկապարտեզ կառուցում».- նշում են քննարկումների մասնակիցները: Քաղաքացիների մի խումբ էլ նշում է, որ առաջարկվող ծրագրերն անիմաստ են խոշորացված համայնքի հատկապես փոքր բնակավայրերում, որովհետև այնտեղ բնակիչ չկա, հետևաբար դա կլինի անարդյունավետ ծախս:

Շահեր, դիրքորոշում, մտադրություններ, զգացմունքներ, վախեր, մտահոգություններ, արժեքներ, կարծրատիպեր, համոզմունք

Ա. ԽՈՇՈՐԱՑՈՒՄ

Ինչո՞ւ կառուցել միայն Ագարակում, Մեղրին ունի մի քանի զբոսայգիների կարիք:

Եթե բյուջեից հատկացում է արվում այգու համար, ապա պետք է ուղղվի Մեղրիին: Ագարակում մարդիկ հնարավորություն ունեն դուրս գալու ու զբոսնելու:

Ես Ագարակից եմ, և հպարտ եմ դրանով, բայց ի՞նչ իմաստ ունի արդեն երրորդ զբոսայգին կառուցել այնտեղ, եթե **Մեղրիում նույնիսկ մի զբոսայգի չկա**:

Զբոսայգին եղել է, **եթե խոշորացում չլիներ**, այս այգին արդեն կառուցված կլիներ:

Խոշորացումից հետո **պետական հատկացումները քչացել** են, եթե նախկինում տրվում էր ամեն համայնքին առանձին, ապա հիմա միայն խոշորացված համայնքին, որը մի բնակավայրի էլ չի հերիքում:

Մենք **մի համայնք ենք**, եկեք, ոչ թե քննարկենք, թե այստեղ չկառուցենք, այնտեղ կառուցենք: Միևնույն է միջոցները չեն հերիքելու բոլորին, եկեք քննարկումը տանենք թե ինչ կտան այս ծրագրերը մեզ, և խոսենք նոր ծրագրերի ու նախաձեռնությունների մասին:

Այս ծրագիրը մինչև **խոշորացումն** էր նախատեսվում, սակայն դրա փոխարեն Վարդանիձորի մանկապարտեզը կառուցվեց. համենայն դեպս «լուրերն» այդպիսին են: Պիտի հասկանալ, թե խոշորացումից հետո ինչպես պետք է առաջնահերթություններ որոշվեն:

Ամբողջ խոշորացված համայնքում կա զբոսայգու խնդիր: Սակայն խոշորացված համայնքում ավելի **առաջնահերթ է հենց Մեղրիում** զբոսայգու կառուցումը:

Հարակից **գյուղերի բնակիչներն էլ են ուզում օգտվել զբոսայգուց**, երեխաներին խաղահրապարակ տանել: Տարբերություն չկա, Մեղրիում կլինի զբոսայգին, թե Ագարակում:

Պետք է ընտրել այնպիսի ծրագիր, որը կընդգրկի **ամբողջ տարածաշրջանի բնակչությանը**:

Պետք չի էնպես անել, որ ամեն ինչ կենտրոններում է կենտրոնացած: **Պետք է մի քիչ ցրել:**

Միշտ լինում են նման հարցեր. ինչո՞ւ այստեղ լուսավորություն կա, իսկ, օրինակ, այլ բնակավայրում չկա, այսինքն, մենք՝ բոլորս միշտ **առավելությունը տվել ենք Մեղրի քաղաքին**՝ համարելով այն կենտրոն:

Ագարակում զբոսայգու կառուցմանն առաջնահերթություն կարելի է տալ թերևս միայն այն դեպքում, եթե մոտակա տարիներին նախատեսվելու է նաև Մեղրիում զբոսայգու կառուցում:

Առաջարկվող գումարով կարելի է մեկ ընդհանուր զբոսայգի կառուցել՝ ասենք **հինգ համայնքի համար հարմար տարածքում**, ոչ թե մեկում:

Ութսունական թվականներին, Մեղրու տարածաշրջանի **բոլոր բնակավայրերում կային զբոսայգիներ,** օրինակ՝ Մեղրու ստադիոնը, ուր հիմա ամաչում ես գնալ: Դեմ չենք, որ Ագարակում կառուցվի, բայց **Մեղրիում էլ զբոսայգի պիտի կառուցվի:**

Այս գումարով կարելի էր փոքրիկ **այգիներ ստեղծել բոլոր համայնքներում**, ոչ թե մեկ մեծ զբոսայգի, տարբեր ծառայություններով, բայց մեկ համայնքում:

Պետք է այնպես անենք, որ **Մեղրիի փողը պահենք Մեղրիում:**

Վարդանիձորն աճող գյուղ է, ի տարբերություն մյուս գյուղերի, որտեղ երիտասարդությունը թողում գնում է, մենք նույնպես **կարիք ունենք խաղահրապարակի**:

Խոշորացման հրաշքը դպրոցի կառուցումն էր, շատ գոհ ենք, ժամանակին շատ երկար տարածք պետք է անցնեին երեխաները. ավելացավ աղբամաններ, լուսավորություն գյուղերում, քաղաքը բարելավվեց:

Ագարակցիների համար Մեղրիում **շուկան եղած-չեղած**... Լոկալ հարց է լուծելու էդ շուկան:

Համայնքների խոշորացումից հետո դրանք **դատարկվել են**, ծրագրերը տանում ենք առանց մարդ համայնքներում ի՞նչ անեն:

Համայնքների խոշորացումը էշություն է:

Ագարակին տիպային զբոսայգի է պետք, բայց քանի որ **մյուս համայնքները չունեն**, ավելի լավ կլինի ուրիշ տեղ կառուցել:

Ապրում ենք գյուղում, բայց ողջունում եմ նախաձեռնությունը, սիրով կգանք ժամանակ անցկացնելու:

Թող Ագարակը խաղահրապարակ ունենա, Մեղրին էլ շուկա:

Չմոռանանք, որ **Արենիի շուկան լավ առևտուր է ապահովում** տեղացիներին: Տեղի ընտրությունը խիստ կարևոր է: Շուկան պիտի Մեղրիից էլ լինի մի քիչ դուրս: Մարդ կա գալիս է Ագարակ, մարդ կա գալիս է Մեղրի: Էնպես անենք, որ **բոլորը կարողանան օգտվել էդ շուկայից**:

Ամեն մարդ **իր համայնքի առանձին հարցերն** ունի, դժվար է ասել, որն է առաջնային:

Յուրաքանչյուր համայնքի ղեկավար առաջին հերթին ուշադրություն է դարձնում իր բնակավայրին:

2017-2018 թվականներին **Ագարակին համարյա բյուջե չի հատկացվել:**

Երբ իմանում ենք, թե ինչպես են բյուջեն բաժանել, միշտ հարց է առաջանում - ինչու հենց այդպես: Շատ դեպքերում **մենք չենք հասկանում բյուջեի բաժանման օրինաչափությունները:**

Մեր **խոշորացված** համայնքում կան տեսարժան վայրեր, օրինակ Լիճքում մի քանի ջրվեժ կա: Տուրիստների մեծ հոսք էլ ենք ունենում:

Խոշորացման արդյունքում համայնքապետարաններում ներդրվել են կոմունալ աշխատողների հաստիքներ, բայց իրենք չեն աշխատում:

Համայնքներն ավելի համախմբված եթե աշխատեն, կկարողանան տուրիզմը զարգացնել:

Օրինակ՝ Կարճևանքում մենք նախընտրեցին կոյուղին վերանորոգելու փոխարեն խաղահրապարակ սարքել երեխաների համար, որովետև դրանով լուծեցինք նաև երեխաների անվտանգության հարցը՝ փողոցից բերեցինք ավելի անվտանգ տեղ: Թանգարանը ևս շատ կարևոր է, ուղղակի պետք է հասկանալ, թե բոլոր համայնքների համար առաջնային ծրագիրը որն է, ինչպիսի ծրագիրն է հնարավորություն տալու ավելի **մեծ թվով բնակիչների** ծառայել:

Առանձին-առանձին արդեն տուժել ենք, գուցե մի մեծ ծրագիր իրականացվի, որ **բոլորիս** վրա ազդի:

Կողմ եմ, որ ծրագիրը **բարձրադիր գյուղերում** սկսվի առաջնահերթ, ուր ձմեռները խիստ են և երկար:

Առաջարկված ծրագրերը միգուցե կարևոր են, սակայն յուրաքանչյուր **համայնքում** կան շատ ավելի առաջնային խնդիրներ, օրինակ՝ Ալվանքում խմելու ջրի հարցը, որն ազդում է երեխաներին պարտադիր տաք սննդով ապահովելու խնդրի վրա:

Ոչ միայն **խոշորացված** համայնքին, այլ ամբողջ Հայաստանին է պետք - խոսքը ֆիզիկական պատրաստվածության մասին է. դա բոլորին է պետք:

Ակներում վարչական բյուջեից գումարներ են հատկացվել նորածիններին, ինչ-որ դժբախտ պատահարի դեպքում՝ տվյալ ընտանիքին: Բայց այս ամենը կրկին **խոշորացումից** առաջ:

Այստեղ խոսում ենք Գորիս բնակավայրի մասին, բայց **խոշորացված** համայնքից մնացած բնակավայրերին անդրադարձ չկա:

2018-19թթ. անհատ բարերարի աջակցությամբ վերանորոգվելու է Գորիսի ֆուտբոլային դաշտը: Եվս երեքը նախատեսվում է **խոշորացված** համայնքում և դեռևս քննարկվում է, թե որ համայնքներում, թերևս երկուսը կլինեն այլ համայնքներում:

Մենք համաձայն ենք կենտրոնին հարևան բնակավայրերի բնակիչների հետ՝ Էս **խոշորացումն ա**պուշություն էր... Կենտրոնին տրվելու է ամեն ինչ, մեր երեխաները մնալու են դպրոցի դասարաններում շաշկի-շախմատ խաղալու:

Միգուցե Ակների համար մարզադաշտն արդիական չի, բայց այլ համայքներ դրա կարիքն ունեն: Պետք է հասկանալ, թե Գորիսի **խոշորացված** համայնքի որ բնակավայրերը դրա կարիքն ունեն:

Այն գումարը, որը հատկացնում են դիտակետին, եթե բաժանեն **խոշորացված** համայնքների միջև, ավելի շատ օգուտ կտա:

Խոշորացված համայնք ունենալը դժվար է, գիտեն, որ գնալու են համայնքներ, խոստանան, ու չկարողանան անել:

Մարզպետարանի ներկայացուցիչ չենք տեսնում մեր համայնքում, մենակ Գորիս քաղաք են գալիս **խոշորացումից** հետո: Շատ պասիվ են աշխատում:

Հիմա մեզ մոտ լճացում է, մինչև **խոշորացումը** մենք ավելի ակտիվ էինք:

Խոշորացումը չի կարող արդյունավետ լինել, քաղաքի հոգսն ուրիշ է, գյուղինը՝ ուրիշ:

Խոշորացումը որ պիտի լիներ, իբր ժողովրդի կարծիք էին ուզում հարցնեին, հետո էլ հասկացնել տվեցին, թե մեր կարծիքը ոչ ոք հաշվի չի առնելու: Իմաստը ո՞րն էր մեր կարծիքը հարցնելու: Այնինչ բոլորս դեմ ենք էս խոշորացմանը:

Խոշորացումից հետո անգամ փոքր փոսերը չեն լցվում այլևս, մինչև **խոշորացումը** համայնքային բյուջեով գոնե մեկ-մեկ փոս էին լցնում, ժամանակավոր ինչ-որ հարցեր էին լուծվում:

Խոշորացումից հետո, օրինակ Խնձորեսկում, աղբահանությունը կազմակերպվեց վերջապես, լուսավորությունը կարգավորեցին, դա էլ խոշորացման դրական կողմերն են:

Խոշորացումից շահել է Գորիսը, տուժել՝ Ակները...

Հարակից համայնքների համար էլ օգուտ կտա, **տուրիզմի զարգացումը,** վերջին հաշվով մենք էլ կկարողանանք գալ Գորիս, հանգստանալ, մի բան տեսնել:

Դուք այստեղ խոսում եք բյուջեն կենտրոնում տուրիզմը զարգացնելու համար, իսկ **ծայրամասային գյուղերն** ի՞նչ ասեն, իրենք բանտարկյալ են, իրենց վրա գումար չծախսե՞ն:

Գորիսը պետք է ունենա տուրիզմի կոմպլեքս զարգացման ծրագրեր, որ բոլոր համայնքներով տուրեր կազմակերպեն, **ամեն համայնք ունենա իր բրենդը**:

Դիտակետի և ընդհանրապես զբոսաշրջության զարգացումը կնպաստի նաև **հարակից համայնքներին**, որոնք կարող են իրենց գյուղմթերքը իրացնել, հյուրատներ առաջարկել: Սակայն, որպեսզի զարգացումը համաչափ տեղի ունենա, պետք է քվոտաներ առաջարկել համայնքներին:

Երեք դպրոցներից մեկը Գորիսում կառուցելը բավարար կլինի, մնացածը **հարակից գյուղերում** կառուցելն ավելի արդյունավետ կլինի:

Ակներում գրեթե ոչ մի ծրագիր չի իրականացվում... կամուրջ են կառուցում, Ակները ոչ մի կապ չունի, եկեղեցի են վերանորոգում...

Այս ծրագրերում խոսվում է միայն Գորիս քաղաքի մասին, այլ **ոչ թե համայնքի**: Բոլոր ներդրումները Գորիս քաղաքին են ուղղվում:

Մենք նույնիսկ տրանսպորտ չունենք, որ Խնձորեսկից գանք այստեղի մարզահրապարակներից օգտվենք: Թող մեր մոտ մի հատ կառուցեն, ոչ թե Գորիսում երեքը:

Կողքի բնակավայրերի երեխաներն ինչպես պիտի գան հասնեն Գորիս, մենք խնդիր ենք տեսում, որ բոլոր **կենտրոնները հավաքվեն Գորիսում**. հո չե՞նք կարող տաքսիով երեխային ուղարկել պարապմունքի, մարզման:

Տպավորություն է, որ **այլ բնակավայրերում** խնդիր չկա, ու ամեն ինչ կենտրոնանում է Գորիսում:

Գյուղը միշտ անտեսվում է... ինչ արվում, քաղաքացու համար է արվում:

Կարելի է այդ մարզահրապարակների գումարներից մի քիչ առանձնացնել Խնձորեսկում կամ Ներքին Խնձորեսկում կառուցել, որ այնտեղ էլ կառուցեն. այս բնակավայրերը իրար ավելի մոտ են:

Գյուղերից եկողների համար մարզադպրոցը պետք է անվճար դարձնել, որպեզի այդ գումարը ծախսվի տրանսպորտային ծախսերի վրա:

Քաղաքից հեռու **գյուղերը** ծանր վիճակում են, պետք է այնտեղ պայմաններ ստեղծել: Քաղաքում ինչ-որ կերպ ապրում ենք:

Քաղաքի ու **հարևան բնակավայրերի** մեջ մեծ տարբերություն կա, թող Գորիսում կառուցվի համալիրը, բայց գոնե տրանսպորտի հարցը լուծվի, հարևաններն էլ հնարավորություն ունենան մասնակցելու:

Անգամ քաղաքի **ծայրամասային** թաղամասերն են ծանր վիճակում, էլ ինչ խոսք **գյուղերի** մասին:

Ակներում առավոտյան արթնանում են, հավաքվում աղբյուրի մոտ, 4-ին մտնում գոմ: Երեխաներն էլ սովորում են այն, ինչ տեսնում են: Կանայք էլ, ինչ, տներում գործ են անում ու բամբասում: Ոչ մի տեղ չկա, որտեղ մարդիկ իրար հետ նորմալ կհավաքվեն, ժամանակ կանցկացնեն:

Կարելի է մտածել սահմանափակ ռեսուրսներն ինչ-որ հարաբերակցությամբ բաշխել նախկին **համայնքների** մեջ:

Մենք միայն ողջունում ենք առողջ ապրելակերպը, բայց մեծ խնդիր է միջոցառումների բաշխվածությունը Գորիս **համայնքում**:

Վերինշենում նախկին տնօրենն ինչ սարքել է, այնպես է սարքել, որ մնա Վերինշենին: Ակները շատ մոտիկ **համայնք** է, բայց գրեթե ոչնչից չի կարողանում օգտվել:

Ավելի լավ է փոքր արժեքով շատ տեղեր սարքել: 45 միլիոնով կարելի է բոլոր **համայնքներում** ներդրումներ անել:

Նոր մարզահամալի՛ր, բայց կարելի էր մյուս **բնակավայրերի** մարկապարտեզներն ու դպրոցները զինել սպորտային պարագաներով, գույքով, վերանորոգել սպորտային դահլիճները:

Պետք է կարիքների գնահատում անել Գորիս **համայնքում**: Որտեղ ընդհանրապես մարզահրապարակ չկա, այնտեղ ստեղծվի:

Պետք է հաշվառել, թե քանի **շահառու** է օգտվում այդ մարզահրապարակներից: Դա էական է:

Եթե մենք **գյուղ** ենք ու մեր մոտ քիչ մարդիկ են ապրում, ուրեմն մենք իրավունք չունե՞նք մարզահրապարակ ունենալու:

Ես, որպես **սահմանամերձ գյուղի** բնակիչ, ուզում եմ, որ առանձնահատուկ ուշադրության արժանանամ ու ոչ թե սկզբում մտածեն քաղաքների մասին, հետո նոր իմ:

Նույնիսկ հարևան գյուղերից են գալիս Գորիսի հյուրանոցում աշխատելու: Եթե բացվեն հյուրանոցներ, ռեստորաններ, կապրի **ամբողջ համայնքը**:

Պետք է **կենտրոնի** վրա գումար դնել, որ կամաց-կամաց ընդլայնվի. իսկ եթե ծայրամասերում գումար դնենք, մինչև մյուս հարցերին ենք հասնում, նոր խնդիրներ են առաջանում:

Ակների բնակիչը չի կարող ոչինչ ասել Գորիս քաղաքում կատարվող փոփոխությունների մասին:

Եթե Գորիսն ուժեղ համայնք լինի՝ հստակ զարգացման տեսլականով ու քարտեզով, **գյուղերն էլ կզարգանան**, որովհետև այդ զարգացման համար անհրաժեշտ նախաձեռնությունները կպատվիրակվեն ըստ ամեն գյուղի առանձնահատկությունների:

Մենք մեր երկրում ունենք **ապակենտրոնացման** խնդիր: Արդյունքում հեռավոր գյուղերն են դատարկվում. ռազմավարական խնդիր է:

Եթե փոփոխությունները պետք է լինեն **միայն Գորիս** քաղաքում մեր տված հարկերից, մենք դեմ ենք:

Էլի խոսում ենք կենտրոնի ճեմուղու զարգացման մասին, իսկ այն փողոցները, որոնց վրա ապրում է **համայնքի բնակիչը**, դրանք ինչու՞ ենք անտեսում:

Այսօր **համայնքում** բազմաթիվ այլ խնդիրներ կան, օրինակ կոյուղին, Խնձորեսկում ջրի խնդիր ունենք, Քարահունջում խմելու ջրի ցանցն անբարեկարգ է, իսկ մենք խոսում ենք ճեմուղու մասին, որը կարծես մեծ ազդեցություն չի ունենալու:

Այս ծրագրերը պիտի գոնե մի թելով կապված լինեն գյուղական **համայնքների** հետ:

Տնտեսական զարգացման ծրագրեր իրականացնելով՝ մեծանում է ամբողջ համայնքի բյուջեն, որն արդեն հնարավոր կլինի **վերաբաշխել ըստ գյուղերի** կարիքների, օրինակ՝ եթե մեկին կոմբայն է պետք, կապիտալ ծրագրի արդյունքում ստացված ֆինանսական ռեսուրսներով արդեն կարող ենք այդ կոմբայնն առնել:

Խնձորեսկն էլ ունի, Քարահունջն էլ ունի քարանձավներ, էլի **կենտրոնացել** ենք Գորիսի վրա:

Երբ մենք կենտրոնանում ենք Գորիսի վրա, **մյուս բնակավայրերի** խնդիրները կորում են:

Եթե բարերարները քաղաքը նորոգում են, ինչո՞ւ **գյուղը** չեն նորոգում: Հարուստին կատվի նման պիտի փիսիփիսի անես:

Բացի Գորիս քաղաքից, ևս **երկու բնակավայր** կունենան մարզադաշտեր և խաղահրապարակներ:

Մենք անընդհատ խոսում ենք Գորիս քաղաքի մասին, դա ինձ շատ է մտահոգում, բա **մյու՞ս բնակավայրերը...**

Գորիսում մենք փորձում ենք հասկանալ, թե **գյուղերում** մարդիկ ինչ խնդիրներ ունենք, որպեսզի մենք էլ համապատասխան ռեսուրսները տրամադրենք:

Գորիսի վրա ամբողջական գումարի տասը տոկոսն է **ծախսվում**:

Ներքին Խնձորեսկում վերջին տասնհինգ տարում ոչինչ չի ծախսվել:

Այս տարի Գորիսը **մշակութային** մայրաքաղաք էր, մենք զիջեցինք, որ ներդրումներն արվեն հենց Գորիս քաղաքում: Բայց հաջորդ տարի այդպես չպետք է լինի:

Բ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ինչու կառուցել միայն Ագարակում, Մեղրին ունի մի քանի զբոսայգիների կարիք:

Ագարակի ոչ մի բակում նորմալ այգի չկա: Գործող երեքն են, որոնցից **միայն երկուսն են հարմար երեխաների համար**: Նշված զբոսայգու վերանորոգումը **մի քանի բակերի բնակիչներին կսպասարկի:**

Ագարակում արդեն շատ աշխատանք է կատարված զբոսայգու համար, եթե չկառուցենք, կպարզվի այդ **գումարն անիմաստ է ծախսվել**:

Ագարակում կա երկու զբոսայգի, ավելի **նպատակահարմար կլիներ բարեկարգել զբոսայգիները**, այլ ոչ թե նորը հիմնել:

Ագարակը մեր խոշորացված համայնքի ամենարագ աճող բնակավայրերից մեկն է, այն անմիջապես հարևանում է Իրանին: Այս հատվածում **չկա որևէ հանգստի գոտի**, այստեղ արդեն աշխատանքներ են կատարվել: Համայնքի բյուջեից մեծ գումար չի տրամադրվում, հիմնական գումարը նվիրատվություն է: Ագարակն ունի **յոթ հարյուր աշակերտ**:

Ագարակի դպրոցի հին մասնաճյուղն անմխիթար վիճակում է, ավելի լավ կլինի, մտածել **դպրոցի վերակառուցման ու վերանորոգման** ուղղությամբ:

Ամենամոտ համայնքը Կճևանն է, որտեղից Ագարակ հյուր գնալիս **կարելի է այդ զբոսայգում հանգստանալ,** հանդիպել բարեկամ-ընկերներին:

Սուբվենցիոն ծրագիրը մշակելիս հաշվի է առնվի նաև **համայնքի կողմից համաֆինանսավորումը:** Ագարակում արդեն որոշակի քայլեր արվել են, այնինչ Մեղրիում զբոսայգու կառուցումը պետք կլիներ սկսել զրոյից: Հետևաբար ավելի նպատակահարմար կլիներ զբոսայգին **կառուցել հենց Ագարակում:**

Ցանկացած նոր բան կառուցելիս պետք է նաև հաշվի առնենք, որ դա հետո ծախսեր է առաջացնելու՝ **պահպանման ծախսեր:**

Ագարակում հին զբոսայգի էլ կա, որի **բարեկարգումն ավելի թանկ կլինի**:

Այս ծրագրում ընդգրկված **շահառուների թիվը բավականին փոքր է:**

Մեղրիում կա բավականաչափ մեծ տարածք, որը **երիտասարդները մաքրում են, խնամում:** Կարելի է որոշ ժամանակ անց ավելի մեծ բյուջեով այդ տարածքում զբոսայգի կառուցել:

Տուրիզմը պետք է զարգացնել, այլ ոչ թե արդեն զբոսայգի ունեցող համայնքում զբոսայգի կառուցել:

1.20մ բարձրությամբ պատով ցանկապատված զբոսայգու հենց կենտրոնում մի այլ ցանկապատ էլ կա, որն անհասկանալի է, թե ինչու է նախատեսված: Առկա նախագծով շքեղ այգի է նախատեսվում, սակայն **կարելի է ուղղակի հարթեցնել զբոսայգու տարածքը**, անվտանգ դարձնելով երեխաների համար, կանաչապատել և **խնայված փողով կառուցել փոքրիկ բակային այգիներ** նաև այլ համայնքներում:

Էական չէ, թե որտեղ կլինի զբոսայգին: Ագարակի Մշակույթի պալատի հարևանությամբ կա մեծ տարածք, որտեղ **կարելի է զբոսայգի կառուցել:**

Հայանտառին թույլատրվում է սանիտարական մաքրումներ իրականացնել: Եթե Մեղրին լինի գազաֆիկացված, սանիտարական հատումները **կբավականացնեն մնացած գյուղային համայնքներին,** որտեղ գազաֆիկացնելը դժվար է: Հակառակ դեպքում միայն սանիտարական հատումներով ողջ բնակչության տաքացման հարցը չի լուծվի:

Ամոթ է, որ **Իրանի կառավարությանը մեր մասին ավելի շատ է մտածում**, քան մեր կառավարությունը: Իրանական կողմը երկու միլիոն դոլար փող է ծախսել մեր գազատար խողովակների համար:

Շատ կարևոր է **հասկանալ, թե ովքեր են իսկապես խոցելի**... Ոչ թե ծանոթ-բարեկամով որոշված «խոցելին», այլ իսկապես կարիքավոր մարդկանց: Իսկապես կան նման մարդիկ, ձմռանը տանը նստած սառում են, ու շատ լավ կլիներ նրանց օգնել թեկուզ այսպես:

Այս գումարի նպատակային իրացումը պետք է վերահսկել, որպեսզի հավաստիանանք, որ ամեն մի դրամն իսկապես ծառայել է իրական կարիք ունեցող մարդու կարիքների բավարարմանը:

Եթե մի կենտրոն ստեղծվեր, որ զբաղվեր **տուրիզմի** զարգացման խնդիրներով, այն մի հետազոտություն անցկացներ, խորհուրդ տար, թե որտեղ, ինչը վերանորոգեն, տուրիստին խորհրդատվություն տար, դա կարող էր ավելի լավ ազդեցություն ունենար տուրիզմի զարգացման վրա:

Դիտակետի կառուցումից էնպես չի, թե հսկայական **տուրիստական բում** է տեղի ունենալու էս կողմերում: Կարելի է հետո էլ դրան ուշադրություն դարձնել:

Եթե ՏԻՄ-ը դիտակետի վերանորոգումը դիտում է միայն որպես բարեկարգման, աղբանոցի վերացման ծրագիր, ապա դա մեծ հարց չի լուծելու **համայքնում**, իսկ եթե սա նպաստելու է որ տուրիզմի ու հարակից ոլորտներում աշխատատեղեր բացվեն, գումար պտտվի, տուրիստին հետաքրքիր լինի գա Գորիս ու դիտակետ այցելի, ապա միանշանակ կողմ ենք:

Մտածում են **տուրիզմը զարգացնեն**. բայց բնակչի ապրելակերպի մասին չեն մտածում:

Էս տուրիզմի ծրագրերը լավ են, բայց պիտի մի քանի տարի սպասենք, որ զարգանա, փող բերի, իսկ մինչ այդ մենք պիտի **շարունակենք ապրել**, ջուր խմել, երեխաներին դպրոց ուղարկել, առողջությունը պահպանել:

Իսկ ո՞վ է ասել, որ տուրիզմը պետք է միայն կենտրոնում զարգացնել, **ծայրամասային գյուղերը** նույնպես շատ պոտենցիալ ունեն:

Որքան էլ **տուրիզմը զարգանա**, մինչև գյուղատնտեսությունը զարգացած չլինի, գումարները կկորեն:

Գյուղատնտեսություն-տուրիզմ փոխկապակցված են, այս ոլորտների վրա պետք է ուշադրություն դարձնել. հետո արդեն մյուս հարցերը ընթացքում կսկսեն լուծվել:

Պիտի հստակ սահմանվի, թե ովքեր են **խոցելի խմբերում,** դա էլ է խնդիր, մարդիկ իրենք գույքը գրելու են ուրիշի վրա, որ նպաստ ստանան, զավակին գրանցելու են այլ տեղ, որ միայնակ դառնան:

Պետություն-համայնք-գյուղացի **համագործակցություն է** պետք, գնա գնահատեն անտառն ասեն սանիտարական էտի համար կարող եք այսքան ծառ կտրել:

Լավ կլինի, որ թանգարան ունենանք, բայց դա միմիայն համայնքում մնացած ավելի **արդիական հարցերը** լուծելուց հետո:

Ամեն ինչը ֆինանսի է տանում, եկեք օրինակ մի շաբաթօրյակ կազմակերպենք, մարդիկ գան իրենք իրենց **համայնքին օժանդակեն**, «շպակլյովկա» էլ կքաշեմ, ինչ ա եղել... Էս թանգարանն առանց էդ կարգի մեծ ծախսերի էլ կարելի կլինի գլուխ բերել:

Կարծում ենք, որ եթե դրվի հանրաքվեի, ապա մարդիկ դեմ են լինելու այս ծրագրի իրականացմանը, մարդիկ տաքանալու, այգիները ջրելու, այլ **խնդիրներ** ունեն:

Բնակչությունը ոչ թե դեմ կլինի թանգարանի ստեղծմանը, այլ բազմաթիվ այլ խնդիրների մեջ **առաջնահերթությունների** հարց կառաջանա:

Շվանիձորում մի լողավազան վերանորոգվեց, որի համար Մեղրում մի կազմակերպություն պահանջում էր վեց միլիոն դրամ: Շվանիձորցիք **հավաքվեցին** և յոթ հարյուր հազար դրամով արեցին գործը:

Եթե Շվանիձորի տարածքի հինգ տաղավարների վրա ծախսվի **ընդամենը կես մլն դրամ**, դրանք կդառնան մեկօրյա հանգստի հրաշալի վայրեր:

Զանգեզուր ԿՀՆ Արևիկ մասնաճյուղը մի փորձ արեց, **ճամբար** հիմնեց երեք հազար դրամ վճարով՝ սանհագույց, գիշերակաց, վայֆայ՝ ընդամենը երեք հազար դրամով, հիսուն միլիոնից քիչ փոխանցեն այդ կազմակերպությունը, այն շատ լավ կկազմակերպի գործը շատ ավելի **քիչ միջոցներով** ու արդյունավետությամբ:

Կողմ եմ, որ ծրագիրը բարձրադիր գյուղերում սկսվի **առաջնահերթ**, ուր ձմեռները խիստ են և երկար:

Այս ծրագրերը մեր իրական **կարիքներին** չեն համապատասխանում:

Երեք դպրոցներից մեկը Գորիսում կառուցելը բավարար կլինի, մնացածը հարակից գյուղերում կառուցելն ավելի **արդյունավետ** կլինի:

Ինչպես են ընտրել քանի խաղահրապարակ կառուցել: Գուցե ամեն մեկից մի քիչ **կրճատել**, որ մի չորս կամ հինգ լինի: Ավելի լավ է շատ և փոքր, քան շատ մեծ ու քիչ:

Գյուղերում կարելի է ոչ թե նոր խաղահրապարակներ կառուցել, այլ դպրոցամերձ տարածքները **հարմարեցնել**: Իհարկե ուզում ենք նորը կառուցել, բայց բյուջեն սահմանափակ է:

Դիտակետից շատ մարդ է իրեն զգում, Կիևյան կամուրջն է դարձել: Պետք է **անվտանգ** դարձնել այն:

Եթե մասսայական վայր լինի, մարդիկ այնտեղից այդքան **ինքնասպանություն** չեն գործի նաև:

Անմիջապես դիտակետի մոտ կա ֆուտբոլի դաշտ, լավ կլինի դա էլ **բարեկարգեն**:

Պետք է բյուջեն այնպես ծախսել, որ **գումարը մեծանա** և երբ ավելանա, համամասնորեն կբաժանենք:

Մենք տարածքներ ունենք, որտեղ **քիչ գումար** ներդնելով կարելի է հարմարեցնել, դարձնել խաղահրապարակ:

Մեծ գումարը չի կարելի **բաժանել** շատ մանր մասերի, փոշիանում է. ես եղել եմ կոմունիստ ու դա շատ լավ գիտեմ:

Ասենք մի տարի հարցը լուծվեց, բա հաջորդ **տարի՞**...

Գ. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Մինչև ընտրեն ու ծրագրերը իրականացնեն, մենք էլ չենք լինի:

Էդ ո՞ր կազմակերպությունն է, տեսնես, որին երկու միլիոն դոլար գումար են հատկացրել, որ ամբողջ համայնքը գազաֆիկացվի, էսօր էդ գործն արված չի: Պետք է սա **հետաքննել, հասկանալ,** թե ինչպես է դա տեղի ունեցել:

Ո՞վ է խոցելի խումբը. խնդիրը նրանում է, որ միշտ չի որ խոցելի խմբին է հասնում փայտը:

Խոշորացումից հետո **պետական հատկացումները քչացել** են, եթե նախկինում տրվում էր ամեն համայնքին առանձին, ապա հիմա միայն խոշորացված համայնքին, որը մի բնակավայրի էլ չի հերիքում:

Երբ իմանում ենք, թե ինչպես են բյուջեն բաժանել, միշտ հարց է առաջանում - ինչու հենց այդպես: Շատ դեպքերում **մենք չենք հասկանում բյուջեի բաժանման օրինաչափությունները:**

Շատ կարևոր է **հասկանալ, թե ովքեր են իսկապես խոցելի**... Ոչ թե ծանոթ-բարեկամով որոշված «խոցելին», այլ իսկապես կարիքավոր մարդկանց: Իսկապես կան նման մարդիկ, ձմռանը տանը նստած սառում են, ու շատ լավ կլիներ նրանց օգնել թեկուզ այսպես:

Այս գումարի նպատակային իրացումը պետք է վերահսկել, որպեսզի հավաստիանանք, որ ամեն մի դրամն իսկապես ծառայել է իրական կարիք ունեցող մարդու կարիքների բավարարմանը:

Պետք է **բացառվի մենաշնորհային մոտեցումը**, այսինքն գրանտ չստանան ու բերեն մի երկու ռեկլամային ցուցանակ դնեն ու ամբողջ ծրագրից օգտվեն մի հինգ հոգի:

Խոշորացված համայնք ունենալը դժվար է, գիտեն, որ գնալու են համայնքներ, **խոստանան**, ու չկարողանան անել:

Խոշորացումը որ պիտի լիներ, իբր ժողովրդի կարծիք էին ուզում հարցնեին, հետո էլ հասկացնել տվեցին, թե մեր կարծիքը ոչ ոք հաշվի չի առնելու: **Իմաստը** ո՞րն էր մեր կարծիքը հարցնելու: Այնինչ բոլորս դեմ ենք էս խոշորացմանը:

Մենք **վստահ** ենք, որ բյուջեից տուրիզմի համար ներդրված գումարը հետ է գալու ավելի շատ:

Վերին Շենն **ավելի մոտ է** Գորիսին, բայց տուրիստն այստեղից հասնում է Խնձորեսկ քարանձավները տեսնելու համար:

Մենք էս շրջանում ունենք դրական **տրամադրվածության խնդիր**: Մարդիկ վատատեսորեն են նայում շատ խնդիրների: Համայնքապետին չսիրողն էլ չի ուզում համայնքի խնդիրներին խառնվի: Բայց ախր քաղաքապետն էսօր կա, վաղը չկա: Պիտի մեր վերաբերմունքը փոխենք:

Պետք է համայնքապետարանին հարցնենք՝ այս բյուջեն Ձեզ ո՞րտեղից, եթե ցանկացած կարևոր հարցով դիմում ենք, ասում են՝ **բյուջե չկա:**

Մեզ անհրաժեշտ են մաքուր, իրենց պարտականությունները կատարող **համայնքի ղեկավարներ**, մենք կունենանք նորմալ հանգստյան գոտիներ:

Ամեն ինչ հնարավոր է անել, ժողովուրդ ջան, մնում է միայն դրական **տրամադրվածություն** ունենանք:

Համայնքի բյուջեն պիտի **վերահսկվի** բնակիչների կողմից:

Մեր երեխաները ոչ մի օգուտ չեն ստանալու այս ծրագրերից: Միայն **համայնքապետարանի** համար են դրանք:

Ռիսկային մեծ ներդրում է, կարծում եմ չարժի:

Այս ծրագրերը մեր իրական **կարիքներին** չեն համապատասխանում:

Մեղրին **անտեսված** գոտի է Հայաստանի համար: Մենք մեզ այդպես ենք զգում:

Եթե հարցնում եք ընտրել նույն է, թե ասես, եթե հաց տանք, հետո ջուր կուզես խմել, թե գնալ զուգարան. դե ընտրեք:

Ակներ մարզպետը մի անգամ է մտել, տեղն էլ չգիտեն: Ընտրությունից ընտրություն մեկը գալիս է, ինչ-որ բան խոստանում ու գնում, ոչ մի ծրագիր **չի իրականացվում** մեր համայնքում:

Մենք հիմա խոսում ենք **ֆանտաստիկ** ժանրից:

Հարթաշեն գյուղի դպրոցի սպորտի դահլիճը վաղուց անմխիթար վիճակում է, վերանորոգելու համար միշտ ասում են, որ միջոցներ չկան, հիմա այդ մի փոքր խնդիրը չեն կարողանում լուծել, էտ բազմամիլիոն ծրագիրն **ինչպե՞ս են անելու**:

Համայնքապետարանը իր ֆեյսբուքյան էջով տեղեկացնում է Դիտակետի աշխատանքների վերաբերյալ: Բոլոր քաղաքացիներն էլ **տեղյակ** են ու գոհ են:

Գորիս քաղաքի հանդեպ **ուշադրությունը** զգացել ենք միայն վերջին մեկ տարում:

Պետք է բնակչության գիտակցությունը բարձրանա, որ բյուջեի **վերահսկողություն** իրականացնի:

Անցած տարի բյուջեի քննարկումը **բոլոր բնակավայրերում չի եղել**: Մի անգամ կարելի է Քարահունջում անցկացնել, մյուս անգամ՝ Վերիշենում, որ ժողովուրդը մասնակցի, իմանա՝ ինչ է կատարվում:

Քաղաքացին պիտի **իմանա**, թե ուր է իր վճարած հարկը:

Ես՝ որպես գյուղական համայնքի բնակիչ, միշտ բողոքում եմ, որ չեն **հարցնում**, թե ինչ խնդիրներ ունեմ: Պիտի գան, կարիքների գնահատում անեն, գոնե գրեն մեր խնդիրները:

Պարտադիր չէ, որ **համայնքի ղեկավարը** ինքը գա ժողովրդից հարցնի խնդիրները, կարող են ուրիշ մասնագետներ էլ գան:

Կոմբայնն ինձ այս գարնանն է պետք, ձեր ծրագիրը քանի՞ տարի հետո պետք է գումար բերի: Իսկ եթե այդ կապիտալ ծրագրերը **չարդարացնե**՞ն ակնկալիքները:

8800 մ կտրտված հողեր են, մի մասը կպած է Շինուհայրին, ասում են դուք օգտագործեք: Ինձ ընդհանուր հող է պետք, թեկուզ ամենավատը, բայց իրար հետ **պայմանավորվել** չի լինում:

Գորիսը կենտրոնում դնելը պայմանավորում եմ ավագանու **պասիվությամբ**:

Խնձորեսկի ջրի հարցը լուծվել է, բնակչությունը ճանապարհը փակել էր, եկան մարզպետարանից, համայքապետարանից **խոստացան** հարցը լուծել:

Գյուղացին պետք է ոչ թե հավատա իր ապագային, այլ **տեսնի** այդ ապագան: Քո առաջարկած ծրագիրն անկախ նրանից, թե ինչքան լավն է, պետք է գյուղերում ընկալվի որպես այդպիսին:

Այս ծրագիրը նման է նրան, որ ես ծառ տնկեմ, հետո իմ երեխան վայելի:

250 աշխատատեղն **անիրատեսական** է, հիմնավորված չէ: Բոլոր ծրագրերի արդյունքում հազիվ այդքան աշխատատեղ ստեղծվի:

Դիտակետի մակետը շատ հետաքրքիր է ու **հասանելի** է ինտերնետում:

Սցենարները դրական են հնչում, բայց **հույս** չեն ներշնչում:

Ես Համայնքի ղեկավար եմ, բայց այս թվերը տեսնում եմ ու **զարմանում**:

Դ. ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

Այս շուկայի **գոյությունն անհնար** է, քանի որ մեղրեցին իր ապրանքը **երկու անգամ ավելի թանկ** վաճառում է Երևանում:

Մեղրեցին **այսպես թե այնպես իրացնում է իր ապրանքը**, հետևաբար այս հարցն առաջնային չէ:

Եթե նույնիսկ դիտարկենք **զբոսաշրջության զարգացման տեսանկյունից**, ապա զբոսաշրջիկներն արդեն գիտեն այն տները, որտեղից գնում են անհրաժեշտ ապրանքները:

Տարածաշրջանում արտադրվող գյուղմթերքն արդեն ունի իր սպառումը: Մեղրիում արտադրված **ոչինչ պահեստում չի մնում:**

Որ շուկա եղավ, հենց **ես էլ պատրաստ եմ գնալ**, կանգնել էդ շուկայում: Դրա առկայությունը **կզարգացնի համայնքը**:

Ծնողը պետք է **ֆինանսապես այնքան ապահովված լինի**, որ կարողանա երեխային տանել զբոսայգի կամ սրճարան գնալ:

Լավ կլիներ զբոսայգում մանկական սրճարան էլ կառուցվեր, սակայն այս դեպքում վաճառողները միանգամից **գները կբարձրացնեն**:

Զբոսայգին կառուցելու դեպքում **մրցակցություն կսկսվի տարբեր խանութների միջև**. առաջինն ինչ-որ գին է առաջարկելու, երկրորդը պիտի փորձի գինը գցել, երրորդը՝ հավասարակշռել կամ նոր ապրանք առաջարկել:

Զբոսայգուց օգտվելու համար նախ պիտի աշխատատեղեր բացել, որպեսզի առաջարկվող ծառայությունների համար **ծնողը կարողանա վճարել**:

Իսկ **ովքե՞ր են օգտվելու** այդ շուկայից, այս հարցի պատասխանը պետք է հասկանանք:

Եթե համեմատենք զբոսայգու հետ, միանշանակ **շուկան առաջնային** է:

Խոշոր ֆերմերները, որոնք հնարավորություն ունեն **պահելու գյուղմթերքը և վաճառելու** ավելի բարձր գնով, ավելի են շահելու գյուղատնտեսական շուկայից:

Գյուղատնտոսական **շուկայի կարիքը** վաղուց ունեինք:

Գյուղ կա, որտեղ բոլորը պայմանավորվում են **նույն մթերքը վաճառել մեկ գնով**, բայց իմ գյուղում նման բան չկա, և շատերը տուժում են. ես չեմ կարողանում իմ ապրանքն իր ինքնարժեքով անգամ վաճառել:

Մենք շուկայի հիմնումով կստեղծենք **միասնական գնագոյացման դաշտ**, այսինքն մեկը կարող է Շվանիձորից թուզ առնի մի այնպիսի գնով, որն այլ վաճառողներ տալիս են ավելի էժան:

Մեղրեցիները չունեն իրենց ապրանքը վաճառելու խնդիր: Բայց կարելի է ամբողջ **գործընթացն ավելի ցուցադրելի դարձնել**, օրինակ չրի պատրաստման գործընթացը տեսանելի լինի բոլորի համար:

Գյուղատնտեսական շուկայի կառուցումը **կհեշտացնի հարակից գյուղական համայնքների գործը**: Բացի այդ զբոսաշրջիկները կուղղորդվեն կենտրոնացված շուկա, գները կարող են փոքր-ինչ բարձրանալ, ինչից գյուղարտադրողը կօգտվի:

Մենք ստիպված ենք լինում **ոչ շահավետ պայմաններով փոխանակում կատարել**, որովհետև վաճառել չենք կարողանում:

Ես, օրինակ, **աշխատող չեմ կարող պահել**: 500-1000 չիր եմ պատրաստում, բայց արդեն տանում եմ Երևան 3000-ով վաճառելու: Էլ ինչո՞ւ է պետք գյուղատնտեսական շուկան:

Օրինակ ես ստանում եմ մեկ տոննա արքայանարինջ, ինչի պետք է կանգնեմ Մեղրիում վաճառեմ 350 դրամով, եթե կարող եմ տանել Երևան, հանձնել 800 դրամով և հետ վերադառնալ:

Իրականում միրգը հենց **տեղում է վաճառվում**: Համաձայնվեք, որ մենք **իրացման խնդիր չունենք**:

Թող Ագարակը խաղահրապարակ ունենա, Մեղրին էլ շուկա:

Տասնհինգ տաղավարը մեր տարածաշրջանի համար **գրեթե ոչ մի խնդիր չի լուծելու**:

Մեղրին **ինքնաբավ համայնք** է, այստեղ մեծածախ վաճառքը չի աշխատի:

Դուք կարծում եք, թե այս շուկան ստեղծելով **այդքան սպառող ենք ունենալո՞ւ:**

Չիրը Երևան հասցնելու համար մեծ միջոցներ են պահանջվում: Նախընտրելի կլինի **մոտակայքում շուկա ստեղծել:**

Մի ժամանակ գյուղ մտնող մեքենային ասում էինք **500 դրամ մուծեք,** գալիս եք ապրանք փոխելու, աղմուկ բարձրացվեց, ասում էին մենք չգանք դուք կմեռնեք:

Խոշորացված համայնքում կենտրոնացված շուկան պարտադիր պետք է **ունենա փորձաքննության կետ,** ինչը կբացառի անորակ ապրանքների վաճառքը: Հետևաբար ներդրումների ծավալը, հնարավոր է, ավելին պիտի լինի, քան նախատեսված է այժմ:

Քաղաքացին **գնելու է հենց բնակչից**, ու՞մ համար է շուկան: Մենք չենք օգտվելու դրանից:

Երևանից եկողը գալիս ընկնում է գյուղերը տանից-տուն ու չգիտես ի՞նչ գնով ի՞նչ ապրանք է առնում տանում, շուկան կօգնի, որ **գնորդը մի տեղ ունենա:**

Մեր **գյուղմթերքը թանկ** է, գնորդ չկա:

Բոլոր մարդիկ չէ, որ կարող են ապրանքը հասցնել Երևան: Դժվարություններ ունեցողները **պետք է հնարավորություն ունենան** այս տարածքում իրացնել ապրանքը:

Շուկան պետք է **հասանելի լինի արտադրողի համար**, որ վերավաճառողների ինստիտուտը չզարգանա. դա արտադրողին վնաս է:

Շուկայի փոխարեն ավելի լավ կլիներ **մթերող կազմակերպություն ստեղծվեր**, որը կմթերեր այստեղ արտադրվող գյուղմթերքը:

Շուկան չի արդարացնելու, գյուղացին հնարավորություն չի ունենալու արկղերով բերել ապրանքը շուկա, **տաղավարների մեծ մասը չի զբաղեցվելու**: Սա լուծում չի մեծածախ վաճառողի ու արտադրողի համար:

Մեղրու ազատ գոտին կա, այնտեղ կարող են առևտուր անել:

Ամեն մի **մեղրեցու այգին մի շուկա** է, տուրիզմը զարգացած չէ, ավելի լավ է գան մեզանից առնեն:

Շուկան պետք է **չափորոշիչներ դնի**, որ խաղի ֆիքսված կանոններ լինեն:

Ես **պարտավոր չեմ** իմ արտադրած բերքը տանեմ հասցնեմ Երևան, որ վաճառեմ:

Տասնհինգ տաղավարը **շատ քիչ է** Մեղրիի համար:

Երխաներին ապահովենք, հետո ձեր չիրը ծախելու տեղը կսարքեք...

Իրականում **սուբվենցիան խթան է համայնքի համար**, որպեսզի համայնքն ավելի արդյունավետ ծախսի:

Միջսահմանային շուկան կար, բայց չիմացանք ինչ պատճառով փակվեց:

Մեզ մոտ **բանջարեղեն գրեթե չի արտադրվում**. ամեն մեկն իր համար արտադրում ու սպառում է: Եղածի համար խանութները բավարար են: Անիմաստ է շուկա կառուցել: Թերևս դա միայն տուրիստների համար է լինելու:

Շուկայի ծրագրի շրջանակներում անհրաժեշտ է նախատեսել նաև **սառնարանների կառուցում**:

Իրացնող եմ: **Հաճախորդներ ունեմ**, ում հետ տարիների ընթացքում ստեղծված հարաբերություններ կան ու բնականաբար, իմ չիրը չեմ տանելու շուկա: Ինձ նմանները շատ են մեր համայնքում:

Արդյո՞ք Երևանցին գալու է այստեղ ու մեծ քանակով միրգ առնի ու տանի, **սա չի աշխատելու**:

Ագարակի խանութը կարելի է համարել այդ **շուկայի մի տաղավար:**

Շուկայի կառուցումն առևտուր է զարգացնելու, մարքեթինգ է զարգացնելու, գները կկանոնավորվեն... գյուղացին էսօր սպասում է, մինչև գան իրենից գնորդի ուզած գնով առնեն: Շուկա լինի, **գյուղացին ինչ-որ տեղ էլ կարող է իր գինը թելադրել**, չտուժել արդյունքում:

Օրինակ Արարատյան դաշտում շատ մանրամեծածախ շուկաներ կան, նաև Արարատը շատ մոտ է Երևանին: Մենք **մինչև միրգը տեղ ենք հասցնում, արդեն փչացած է** լինում:

Մեղրում շատերը **գնում են Իրան ու անտեղից ավելի էժան գներով առնում** անհրաժեշտ ապրանքը: Ո՞վ պիտի ավելի թանկ վճարի, շուկայից դա գնելու համար:

Մեղրիում բազմաթիվ այլ բաներ արժի անել, բայց **շուկան անարդյունավետ ծրագիր է**:

Կարելի է որևէ **սոցիալական կայք** ստեղծել, որի միջոցով կգտնվեն գյուղմթերքի հնարավոր գնորդներ:

Մենք Իրանից այցելուներ ունենք, Հայաստանից են գնում Իրան, շուկան կարող է իրենց էլ սպասարկել:

Շուկայում **վաճառելու մշակույթ պիտի զարգանա**. մեզ մոտ առայժմ բարտերային մշակույթն է գերակշռում:

Մեր իրացումը կազմակերպվում է հետևյալ կերպ՝ իրացողները գալիս են, մեզնից գնում են ու տանում: **Ոչ մի մեղրեցի չի գնա նստի ճանապարհին** ու վաճառի:

Մեղրիում հիմնականում փոքր բիզնեսմեններ ու անհատ ձեռներեցներ են, **արդեն ձևավորված շուկայով**, ուստի այդ տաղավարներն անիմաստ են թե՛ առաջարկողի, թե՛ սպառողի համար:

Հյուսիս-հարավի յոթանասուն մետր տարածքում **օրենքով արգելվում է կառուցապատում**, որը խոչընդոտում է առևտրի զարգացմանը Մեղրիում:

Մեզ շուկա պետք չէ, ավելի պետքական է **ընդունման կետեր** լինեն:

Խոցելի խմբեր հասկացությունը լողացող է: Ավելի լավ է մարդկանց **կարթ տալ, ոչ թե ձուկ**:

Ինչի՞ նման ա, գեղագիտական կենտրոնի դիմացը **բանջարեղենի առևտրի կետի** են վերածել

Կաթնամթերքի ու բանջարեղենի **որակի հսկողություն** պիտի իրականցվի: Եթե շուկան նման ծառայություն ապահովի, միգուցե իմաստ ունենա:

Ես շատ մարդիկ գիտեմ, որ չիր են պատրաստում, **տեղ չեն ունենում իրացնելու**, վերջում ստիպված թափում, կամ օղի են պատրաստում:

Որ շուկա եղավ, մեղրեցիներն ա**վելի թանկ են գնելու էդ միրգը**... էնպես որ՝ սուս արեք, տեղներդ նստեք:

1901 թվականից Մեղրում **Հայաստանում առաջին կոոպերացիան** է ստեղծվել, մենք շատ լավ ավանդույթներ ունենք:

15 տաղավարը շատ քիչ է, և կարևոր է, որ Երևանի օրինակը չդառնա, **շուկան չդառնա վերավաճառողների տեղ**:

Պետք է մի կենտրոնական տեղ լինի, որտեղ **հնարավոր կլինի գնել ու վաճառել** ապրանքը:

Չմոռանանք, որ **Արենիի շուկան լավ առևտուր է ապահովում** տեղացիներին: Տեղի ընտրությունը խիստ կարևոր է: Շուկան պիտի Մեղրիից էլ լինի մի քիչ դուրս: Մարդ կա գալիս է Ագարակ, մարդ կա գալիս է Մեղրի: Էնպես անենք, որ **բոլորը կարողանան օգտվել էդ շուկայից:**

Սեպտեմբերից փետրվար մարդը մնում է իր մթերքի ձեռքին շվարած, չգիտի գնորդ կլինի՞, թե՞ ոչ: Պետք է ինչ-որ միասնական տեղ լինի, որ **վաճառքը կենտրոնացվի ու հեշտացվի**: Հիմա Վանքեցուն զանգելու ու լավ լոբով հետաքրքրվելու փոխարեն, կիմանամ, որ Մեղրիում տեղ կա, ուր կգամ ու կառնեմ, կամ չեմ առնի իմ ուզած լոբին:

Չիրը ոչ մեկի տանը չի մնում, վաճառվում է:

Որ շուկա եղավ, հենց **ես էլ պատրաստ եմ գնալ**, կանգնել էդ շուկայում: Դրա առկայությունը **կզարգացնի համայնքը**:

Պարզ է, որ մի քնաի հազար մարդ չի գալու այդ շուկայում վաճառի, **մեկին պիտի գտնենք, որ այնտեղ վաճառում է, մեր ունեցած միրգը տանք իրան, որ վաճառի**:

Կապանում Մեղրու **բերքը ձրի են ուզում**, մեր բերքը վաճառվում է կա՛մ Երևանում, կա՛մ Ռուսաստանում:

Անգամ զբոսաշրջիկները, օրինակ, **պարսիկները, գալիս են անձամբ ինձ մոտից առնում** ապրանքը:

Ազատ տնտեսական գոտին ստեղծվեց, բոլորն ուրախացան, բայց այսօր այն չի աշխատում:

Որոշ **անհատներ խաբում են պարսիկներին**, բնականաբար վերջիններս երկրորդ անգամ չեն գալու, իսկ շուկայի պարագայում նրանք կարող են համեմատել գները, նորմալ **մրցակցային առաջարկ ստանալ** ու վերադառնալ:

Խթան կլինի մանր ու մեծ արտադրողի համար: Հիմա նռան հյութ են արտադրում, դա խթանում է, որ այգիներից դուրս յուրաքանչյուր փոքր ծառ անգամ քաղվի:

Եթե շուկայում գյուղացին վաճառելու է ինքնարժեքով, օգուտ չի ունենա դրանից, չի շահի, ու ստիպված է նորից վաճառել այգուց չտանել ապրանքը շուկա:

Մենք տանը նստած սպասում ենք, որ գան մեզնից գնեն, տանեն, բայց չենք բողոքում. ամեն տարի էլ գիտեմ՝ ով է գալու, ինչքան է գնելու:

Ես իմ թուզը կտանեմ շուկա, եթե այն աշխատի, ու **մթերողը ըստ իր պահանջմունքի կառնի** ու կտանի՝ որը ջեմի համար, որը մուրաբի...

Որ իմանամ շուկայում երկու հարյուր կգ լոբի եմ կարողանալու վաճառեմ, կարտադրեմ էդ լոբին: Շուկայի առկայությունը **գյուղացու եկամուտներն ավելացնելու** է: Էսօր Արարատից բերում բանջարեղեն են վաճառում համայնքի բնակիչներին: Մենք էլ կարող ենք ախր վաճառել նույն բանջարեղենը:

Առաջինից բերքից մինչև վերջին միրգը երեք ամիս է, կարելի է շատ **միջոցառումներ կազմակերպել:**

Հայաստանի տարբեր համայնքներից ու գյուղերից մարդիկ գալիս են Իրանում առևտուր անում, վերադառնալիս էլ Մեղրու մրգի նկատմամբ անտարբեր չեն անցնում: Սակայն երբեմն **չգիտեն, թե որտեղից պետք է գնեն այդ միգն ու չիրը**: Տեսնում են այգու ծառերը, մոտենում տանն ու հարցնում, թե վաճառքի չիր կա, թե ոչ: Միգուցե շուկան կհեշտացնի այս հարաբերությունները:

Մեղրիում **չարտադրվող ապրանքների շուկա** պետք է ստեղծել:

Մենք էլ, օրինակ, տաքսի ենք վարձում մի քանի հոգով, գնում ենք Ագարակ, ստիպված **փողոցներով պտտվում ենք, որ մեր մածունը, կաթը իրացնենք**:

Շուկայի փոխարեն ավելի լավ է **պահեստային տնտեսություններ** ստեղծել:

Մեղրիում ծայրահեղ աղքատ ու **խոցելի բնակչություն չկա:**

Գյուղական համայնքներին Մեղրիում շուկան խիստ պետք է: Էսօր իրենց մոշը բերում են, **ինչ որ մի տեղ արևի տակ կանգնում վաճառում** են: Մարդկանց հնարավորություն թող տրվի, նորմալ աշխատեն էլի:

Պետք է **բացառվի մենաշնորհային մոտեցումը**, այսինքն գրանտ չստանան ու բերեն մի երկու ռեկլամային ցուցանակ դնեն ու ամբողջ ծրագրից օգտվեն մի հինգ հոգի:

Շուկան ավելի **առաջնային է** թվում:

Մարդկանց շատ հարմար կլինի, որ բոլոր **ապրանքները մի վայրում լինեն**:

Եթե շուկան լինի, **աշխատանք էլ կլինի:**

Արենիի **շուկան ամբողջ գյուղն է պահում**, մեզ մոտ այդպես չէ, նրանց շուկայի տարածքն է ճիշտ տեղում:

Բայց ախր գազաֆիկացնելուց հետո սոցիալապես խոցելի խումբն այս անգամ **ինչպե՞ս է վճարելու գազի դիմաց:**

Ո՞վ է խոցելի խումբը. խնդիրը նրանում է, որ միշտ չի որ խոցելի խմբին է հասնում փայտը:

Մրգի սեզոնին հատկապես, պետք է լինելու շուկան, բայց տեղը՝ մաքսատան մոտ, հարմար չէ, ավելի նպատակահարմար կլինի Մեղրիում կամ Ագարակում:

Մեղրիում **չի կարող ծայրահեղ աղքատ մարդ լինել**:

Գյուղացուն կարելի է **տրամադրել կով, ոչխար կամ այլ միջոցներ**, այլ ոչ թե պատուհանները վերանորոգել: Գյուղացու ապրելակերպը պետք է բարելավել:

Վառելափայտով խոցելի խմբերին օգնել կարելի է, բայց պետք է մտածել **վառելանյութի գների իջեցման մասին,** որպեսզի վաղը, մյուս օրը ինձ էլ ստիպված չլինեք օգնել:

Այսպիսի փորձ արվեց՝ մարդկանց բաժանեցին ցեմենտ, որ իրենց ոռոգման առուները կարգի բերեն, ու դրա դիմաց նրանց տրվում է մթերք: Հաջորդ տարի **մարդիկ սպասում էին**, որ պետությունը բերի ցեմենտ տա, որ գործ անեն:

Բազմազավակ ընտանիք, միայնակ թոշակառու... բոլորը խոցելի խմբեր են, բայց միգուցե կարիքները տարբեր են: Թերևս կարելի է նրանց գումար տալ,վառելանյութի ու լուսամուտի փոխարեն, և իրենք **որոշեն, թե ինչպես է ավելի նպատակահարմար բավարարել իրենց կարիքները:**

Վառելափայթի խնդիրը շատ կարևոր է՝ հատկապես անապահով խավի համար:

Քննարկված ծրագրերից պետք է առանձնացնել **արևային վահանակների և պաուհանների տրամադրումը խոցելի խմբերին** տարբերակը:

Համայնքապետարանում աշխատելով՝ ես շատ լավ գիտեմ, թե ովքեր են կարիքավոր, բայց երբ կանչում եմ օգնություն տալու համար, նեղվում են. «Դու ինձ ինչի՞ տեղ ես դրել... դու ինձ հող տուր մշակեմ, ես իմ մասին ինքս հոգ կտանեմ»: Միգուցե կարելի է այս 50 միլիոնով մտածել, թե ինչպես կարելի է այս **ընտանիքներին աշխատանքով, եկամուտ վաստակելու ինչ-որ միջոցով ապահովել**:

Մենք չենք կարող պատկերացնել **խոցելի ընտանիքի մրսելը,** որովհետև մենք տաք-տաք նստած ենք:

Եթե **քաղաքին գումար** կբերի դիտակետը, ապա միանշանակ այս ծրագիրն առաջնահերթ է, այդ էլ կխթանի, որ այլ ենթակառուցվածքները զարգանան:

Մարդիկ դեմ են գազաֆիկացմանը, քանի որ փայտը **ծրի** է, իսկ գազին պետք է փող տան:

Ինչքան էլ առողջ օրգաններ ունենաս, սնունդ ա պետք, որ ուղեղդ աշխատի... պետք է **փող բերող** ճյուղերը խթանել: Տուրիզմը զարգանա, մենք էլ կհարստանանք:

Հայաստանի **ռեսուրսը** տուրիզմն է, սրան առանձնահատուկ առաջնահերթություն պիտի տրվի:

Գորիսում զարգացած է հյուրատնային բիզնեսը. մարդիկ իրենց տներն են հարմարեցնում **տուրիզմի** համար և վարձով տալիս:

Դիտակետը տուրիզմի զարգացման շնորհիվ **համայնքի բյուջե** կմտնի գումար, որն էլ կուղղենք մարզահրապարակների կառուցմանը:

Եթե ՏԻՄ-ը դիտակետի վերանորոգումը դիտում է միայն որպես բարեկարգման, աղբանոցի վերացման ծրագիր, ապա դա մեծ հարց չի լուծելու **համայքնում**, իսկ եթե սա նպաստելու է որ տուրիզմի ու

հարակից ոլորտներում աշխատատեղեր բացվեն, գումար պտտվի, տուրիստին հետաքրքիր լինի գա Գորիս ու դիտակետ այցելի, ապա միանշանակ կողմ ենք:

Գորիս համայնքի զարգացման ռազմավարական ուղղությունը տուրիզմի զարգացման հետ է կապվում, իհարկե մյուս խնդիրները չեն անտեսվում ՏԻՄ-ի կողմից, բայց **եկամուտ ապահովելու** տեսանկյունից տուրիզմի զարգացումն առաջնահերթ է:

Տան վարձերը թանկանում են տուրիզմի զարգացմանը զուգահեռ:

Եթե եկամտի առումով նայենք, համայնքին ամենամեծ օգուտը միանշանակ **տուրիզմն է** տալու:

Էկոտուրիզմ կա, բայց թանգարանի կառուցումը կմեծացնի ինչպես տուրզմի զարգացմանը, այնպես էլ բնակչի **ձեռքի աշխատանքների վաճառքին**:

Կարճևանում գեղատեսիլ մի վայր ունենք, որտեղ թե՛ տեղացիներն են գնում հանգստանալու, թե՛ **զբոսաշրջիկները**: Շատ լավ կլիներ, որ այստեղ մի տեղ լիներ, որտեղ հնարավոր կլիներ Մեղրուն հատուկ ուտեստներ հյուրասիրել, տեղի միրգն ու չիրը վաճառել, հնարավորություն տալ հանգստացողներին հարմարավետ անցկացնել իրենց հանգիստը: Սա կնպաստի զբոսաշրջությանը, նոր աշխատեղեր կբացվեն:

Երբ ընտանիքը կարողանում է իր կեցությունը բարելավել, ամբողջ **համայնքն** է սկսում զարգանալ:

Եթե Անապաստանաց վանքի տարածքում հիմնվի թանգարանը, ապա միայն օգուտ կտա, Արենիի գտածո կոշիկը **միլիարդի օգուտ տվեց** Հայաստանին, Շվանիձորում թվագրված գերեզմանաքար ունենք, որը հանրապետությունում ամենահին գերեզմանաքարն է, ու դրա մասին շատ քչերը գիտեն:

Վերնիսաժի աշխատակիցները Մեղրիից են գնում կոլաժների համար նախատեսված նռները, եթե թանգարան լինի, կողքը կարող ենք **վաճառել** մեր աշխատանքները:

Ամբողջ աշխարհի միրգը Մեղրիում է, բայց Հայաստանի տարբեր տարածաշրջանում փառատոններ արվում են, իսկ Մեղրիում՝ ոչ:

Օրինակ բերեմ. մենք Աշտարակում ծանոթ ունենք, իրենց տանը **հոսթելի** նման բան են սարքել, գալիս են էն տուրսիտները, որոնք հյուրանոցներում չեն սիրում մնալ: Մեր մոտ էդպիսի տեղեր շատ քիչ կան: Կարելի է զարգացնել:

Պարսկաստան անցնելու նպատակով այլ շրջաններից շատ մարդիկ են գալիս, իրենք էլ կարող են օգտվել հանգստի գոտիներից, **փող ծախսել:**

Չրերի փաթեթավորումն ավելի **թանկացնում** է չրի գինը, որովհետև այն հատուկ պայմաններով պետք է անել, մեզ ձեռք է տալիս միանգամից շատ վաճառել, ոչ թե մաս-մաս:

Մեղրիի չիրը իրացման խնդիր իրականում չունի, մենք ունենք արտադրման, նորմատիվներին համապատասխան **ստանդարտացման** խնդիր:

Պարսիկը կխմի, կգա զիփլայնով կթռչի, փողն էլ կգա **համայնքի բյուջե**:

Ես իմ հանգստի համար նախատեսված գումարը չեմ տանի **ուրիշ մարզում** ծախսեմ:

Տուրզիմի զարգացման համար առաջին հերթին պետք է նպաստել **հյուրատների** զարգացմանը:

Մեղրիում կա տիպային հետաքրքիր հյուրանոց, որը ձեռք է բերել մի անհատ, ով չի հետևում այդ հյուրանոցին, լավ կլինի դա ձեռք բերել և դարձնել լավ **հյուրանոց**:

Օրինակ, ինչո՞ւ չենք Լիճքը ու Տաշտունը սարքում «Ծաղկաձոր» կապանցիների համար:

Շատ զինվորներ կան հեռավոր մարզերից, որ Ագարակում են ծառայում: Ծնողները գալուց մի օորով չեն գալիս, տեղ էլ չկա իրենց նորմալ դիմավորելու: Մաքուր, սիրուն **հոսթելատիպ** տեղեր կարելի է սարքել, մարդիկ գան, իրենց հանգիստը կարգին կազմակերպեն:

Ամբողջ Վրաստանում, Հունաստանում մարդիկ **հյուրատներվ** շատ լավ ապրում են:

Պետք է նպաստել **էթնիկ հյուրատների** զարգացմանը:

Ընդհանրապես չկան **մանկական** սրճարաններ, ծաղրածուների ծառայություն, երեխաները չգիտեն ինչ է ավազանկարչությունը և այլն:

Ինչո՞ւ **խոցելի խմբին** զրկենք հիսուն միլիոնից: Սա նրանց օգնելու միջոց է:

Անապահով խավն ամբողջովին իր պարտավորությունները կատարում է, մինչև դրանք չկատարվեն, մենք նախատեսած օգնությունը չենք կարողանում տրամադրել:

Մեղրիում **աշխատուժը** շատ թանկ է՝ օրը հինգ հազարից յոթ հազար, Արարատից էլ ենք մարդ բերում:

Հանքարդյունաբերությունը դեռ լուծում է խնդիրների, քանի դեռ այլ լուծում չկա, եթե դա էլ չլինի, այստեղ մարդ չի մնա:

Մեղրիիում աշխատում են ոչ միայն տեղացիները, այլև, օրինակ, ապարանցիները: Այս ներքին **աշխատանքային միգրացիան** դեռ աճում է, և Մեղրին իսկապես ներքին ռեսուրսներ ունի՝ իր քաղաքակրթությամբ ու մշակույթով, զարգանալ մինչև հարավային մայրաքաղաք դառնալը:

Մեղրիում ավելի շատ **հյուրատներ** են, հյուրանոցներ չկան: Հյուրանոցն իր նպատակին չի ծառայում:

Եթե այգիներով է չափվում կենսամակարդակը, ուրեմն Մեղրիում **ոչ ոք խոցելի չէ**: Բայց շատ ընտանիքներում միայն մի հոգի է աշխատում, որովհետև աշխատատեղ չկա:

Դիլիջանում գնացինք հաց կերանք անտառում, եկան մեզնից հինգ հազար դրամ ուզեցին. այսպես են **բիզնես** անում:

Զբոսայգու կառուցումը միանշանակ ավելի կարևոր է, քան **գյուղատնտեսական** շուկայի կառուցումը:

Դիտակետի ճանապարհի կառուցումը շատ կարևոր է, կբացվեն **աշխատատեղեր**, քաղաքը կապրի:

Գումարը մի տեղից տալու են, մի կողմից ինքը **գումար է առաջացնելու**, կարծում եմ արժե:

Դիտակետի տարածքում հնարավորություն կա փոքր **բիզնեսի** զարգացման համար. սրճարաններ, խանութներ և այլն:

Դիտակետից հրաշալի տեսարան է բացվում, որը գրավում է նաև հարակից համայնքների բնակիչներին: Սակայն այստեղ նորմալ սրճարանի առկայությունը կարող է ավելի **գրավիչ դարձնել** այս վայրը:

Տասը տարվա սեփականատերը սրճարան չի կառուցել, բայց երբ դիտակետը **նորոգվում** է, տեսնում է ու սկսում է սրճարանն էլ նորոգել:

Դիտակետի վերականգնումը կնպաստի նաև **բիզնեսի** զարգացմանը, համայնքի բյուջե փող կգա:

Օղու, չրի արտարդությունն ու շերամապահությունը փորձում ենք դարձնել մեր համայնքի **բրենդը**:

Աղքատ մարդն ապրելու իրավունք չունի, մենք պետք է աշխատենք, որ հարստանանք:

Մշակույթի տան հարակից այգու վերականգնումը եկամուտ կբերի **համայնքի բյուջե**:

Տնտեսական զարգացման ծրագրեր իրականացնելով՝ մեծանում է ամբողջ **համայնքի բյուջեն**, որն արդեն հնարավոր կլինի վերաբաշխել ըստ գյուղերի կարիքների, օրինակ՝ եթե մեկին կոմբայն է պետք, կապիտալ ծրագրի արդյունքում ստացված ֆինանսական ռեսուրսներով արդեն կարող ենք այդ կոմբայնն առնել:

Գյուղում հարուստ մարդ չկա՝ մեկ-երկու կով ամեն մի ընտանիքում ու վերջ: **Կոոպերատիվն** էլ ծառայում է հենց մարդկանց:

Մարզասրահները կարող են լինել **վճարովի**, որպեսզի կարողանան իրենց պահել, սա կնպաստի նաև նոր **աշխատատեղերի** ստեղծմանը:

Պետք է սկսենք անհրաժեշտից և այն ծրագրերից, որոնք նոր **գումարներ են բերում**:

Մեր համայնքի համար առաջնային է երիտասարդների զբաղվածությունը, արտադրության ստեղծումը: Լավ օղի ունենք, բայց **գովազդ** չի արվում:

Դիտակետի տարածքի վերանորոգումը ցանկալի չէր լինի պատվիրակել մասնավորին, որովհետև սա հրաշալի ռեսուրս է հենց **համայնքի բյուջեն** հարստացնելու համար:

Ակներում մաքուր ջուր ունենք, շշալցվում է, բայց մասնավորի կողմից: Գյուղն ու գյուղացին ինչո՞վ են **շահում**...

Գորիսցու համար ավելի կարևոր կլինի **գործարանների** կառուցումը, **աշխատատեղերի** ստեղծումը, քան քաղաքի կենտրոնի էսթետիկական տեսքը:

Ներդրումներ անելու դեպքում, նաև հողի **արժեքն** է բարձրանում. դա բնակիչների համար է դրական:

Մենք մի մեխանիզմի պակաս ունենք, որ այդ ամեն ներդրված լումայից ստացված ու ավելացված եկամուտը իրականում հետ գա մտնի բյուջե ու **ծառայի համայնքին**:

Հիմա լուրջ շինարարական աշխատանքներ են արվում Գորիսում, մեծ թվով **աշխատատեղեր** են ստեղծվում:

Տնտեսապես ձեռնտու է Դիտակետի նորոգումը, քանի որ **տուրիստների** քանակը կավելանա:

Տաթևի ճոպանուղին տուրիստական կետ է, շատ գորիսցիներն այդտեղ **աշխատում** են, իսկ Խնձորեսկի ճոճվող կամուրջը վճարովի չէ:

Գործկոմի կողքի սրճարանը շատ գեղեցիկ է, Երևանյան կոլորիտ կա, եթե բարեկարգվի ճեմուղին նրա շրջակայքում էլ գեղեցիկ **սրճարաններ** կբացվեն:

Մարզադպրոցները պետք է **վճարովի** լինեն, որպեսզի դրանց պահպանման ծախսերը պատշաճ ձևով հոգալու հնարավորություն լինի:

Գորիսի **հյուրանոցները** շատ մրցունակ են: Խաղասրահներով, լողավազանով, ռեստորանով, ֆիթնես ակումբով:

Նվազագույն **աշխատավարձ** ենք ստանում, խմբակներ գնալը ֆինանսապես հնարավոր չէ:

Մարդ ինչքա՞ն պիտի **վարձատրվի**, որ կարողանա ապրել: Մեզ մոտ մինիմալ աշխատավարձ էլ չկա:

Հին Գորիսի քարանձավների վերանորոգումը մեծ տուրիստական ներուժ ունի, և լավ նախադրյալ է համայնքի զարգացման համար, բայց հարակից խնդիրներն այնքան մեծ են, որ անհրաժեշտ է սրանց զուգահեռ որոշակի միջոցներ ուղղել ավելի **հրատապ ու առօրեական խնդիրների** լուծմանը:

Այս ինտերնետի ու հաղորդակցության զարգացած միջոցների դարում չարժի ութսուն միլիոն դրամ տալ շուկայի ծրագրին:

Ե. ԾԱԽՍԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Մենք **մի համայնք ենք**, եկեք, ոչ թե քննարկենք, թե այստեղ չկառուցենք, այնտեղ կառուցենք: Միևնույն է միջոցները չեն հերիքելու բոլորին, եկեք քննարկումը տանենք թե ինչ կտան այս ծրագրերը մեզ, և խոսենք նոր ծրագրերի ու նախաձեռնությունների մասին:

Զբոսայգին ցանկացած պարագայում օգուտ է և գուցե համայնքի բնակիչներն էլ **իրենց գրպանից գումար** դնեն բարեկարգելու համար:

Սուբվենցիոն ծրագիրը մշակելիս հաշվի է առնվեն նաև **համայնքի կողմից համաֆինանսավորումը:** Ագարակում արդեն որոշակի քայլեր արվել են այս ուղղությամբ, այնինչ Մեղրիում զբոսայգու կառուցումը պետք կլիներ սկսել զրոյից: Հետևաբար ավելի նպատակահարմար կլիներ զբոսայգին կառուցել հենց Ագարակում:

Այն տեղերում, որտեղ միջպետական խնդիրներ են լուծվում, **պետական բյուջեից թող ֆինանսավորվի**, որը՝ տեղական, համապատասխանաբար **տեղական բյուջեյից**:

Եթե ֆինանսավորումը լիներ միայն բյուջեի հաշվին, զբոսայգու կառուցումը իրոք **նպատակահարմար չէր լինի:**

Այսպիսի փորձ արվեց՝ մարդկանց բաժանեցին ցեմենտ, որ իրենց ոռոգման առուները կարգի բերեն, ու դրա դիմաց նրանց տրվում է մթերք: Հաջորդ տարի **մարդիկ սպասում էին**, որ պետությունը բերի ցեմենտ տա, որ գործ անեն:

Եկեք բոլորս համախմբվենք, էս առիթից օգտվենք, ժողովորդ ջան, ես մտածել եմ նույնիսկ թե կառավարությունն ինչպես կարող է մեզ օգնել էս հարցում: Առաջարկում եմ **գազի** ավելացված արժեքի հարկից մեզ ազատեն: Սա էականորեն բնակչության գազի ծախսերը կկրճատի:

Հասկանում ենք, որ պետք է տուրիզմ, բիզնես զարգացնել, բայց առանց **սոցիալական** ծրագրերի էլ չի լինի:

Որպես հեռավոր գյուղի բնակիչ կարծում եմ, որ տուրիզմի համար պետք է **բիզնես սեկտորը** հոգ տանի, ոչ թե մեր հաշվին:

Ես իմ տանը որ հյուրատուն սարքեմ, ոչ ոք ինտերնետով նայելով իմ մոտ չի գալու, պետական լուրջ օժանդակություն է պետք, որ մարքեթինգ արվի տարածաշրջանը: Սերժն իր ժամանակով Տաթևը **տուրիստական գոտի** հայտարարեց, էդքան ներդրումներ եղան: Հիմա վարչապետը նման բան պիտի անի նաև Մեղրու տարածաշրջանի համար:

Չենք կարծում, որ ութսուն մլն դրամ արժի տալ այս խնդրին, այն դեպքում, երբ **բազմաթիվ այլ խնդիրներ** ունենք լուծելու:

Լավ կլինի, որ **թանգարան ունենանք**, բայց դա միմիայն համայնքում մնացած ավելի արդիական հարցերը լուծելուց հետո:

Երկրագիտական թանգարանի կառուցումանը դեմ եմ, այդ ութսուն միլիոնին, որպես քաղաքաշինության բաժնի պետ:

Կարելի է Մեղրիում **հեռուստամարաթոն** անել, միլիոնատեր բազմաթիվ մեղրեցիներ ունենք դրսում, այդ գումարներով արժի իրականացնել այս ծրագիրը:

Ութսուն միլիոն դրամը թանգարանի համար անիմաստ է: Ավելի **հրատապ խնդիրներ** կան:

Եթե թանգարանը պիտի գործի անվճար, իսկ ով՞ պիտի **վճարի** աշխատավարձը, պահպանման համար, արդյո՞ք համայնքը պատրաստ է այդ ծախսերն անելուն:

Ջրամբարն ավելի մեծ **նշանակություն** ունի, քան շուկան, թանգարանը, և մնացած այլ կետերն այս սցենարներում:

Ես համաձայն եմ թանգարանի կառուցմանը, բայց ոչ համայնքի **բյուջեյից**:

Եթե հովանավորներ գտնեն, դրահամահավաք լինի, թող բացվի թանգարան, բայց ոչ **համայնքի** հաշվին:

Մեղրի համայնքի հանգստի գոտիները պիտի զարգանան **մասնավորի** կողմից:

Հանգստի գոտիների ծախսը **մասնավորը** պիտի հոգա, սա ի՞նչ պետության գործն ա:

Հիսուն միլիոնը հինգ տաղավարի համար **ճոխություն է:**

Մեկօրյա հանգստի մեկնողը բարեկարգ հատուկ պայմաններ չեն ուզում, այստեղ այդքան գումար **ծախսելու բան չկա**:

Գյուղատնտեսությունն առանց պետության էլ կզարգանա, թող **բյուջեն** ծախսեն սոցիալական ծրագրերի վրա:

Ինչո՞ւ խոցելի խմբին զրկենք հիսուն միլիոնից: Սա նրանց օգնելու **միջոց** է:

Մեր տարածաշրջանն էլ է սահմանամերձ, բայց մեզ, որևէ զիջում, որևէ **օգնություն չի նախատեսվում**, ինչպես Տավուշի դեպքում է:

Մեղրի համայնքում **սոցիալական հիմնադրամ** կա, դիմողներին այսպես թե այնես օգնում են. նման ծրագրի անհրաժեշտություն չկա:

Տարիներ առաջ, որպես **սահմանամերձ**, աշխատանքի դիմաց ավել էին վճարում, դա էլ են հանել:

Սա մի տարվա ծրագիր է, բայց լուսամուտները մի տարուց ավելի **կծառայեն**:

Սցենար երրորդը հարցի ժամանակավոր լուծում է միայն, իսկ արդյո՞ք համայնքային **բյուջեն** դրա վրա ծախսելը նպատակահարմար է:

Գորիսը մեգապոլիս չի, փոքր քաղաք է, կարելի է բավարարվել միայն մեկ՝ ավելի մեծ դպրոցով, մնացած գումարն ուղղել այլ **ծախսերի:**

«Մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում կատարվել են պետական **սուբվենցիաներ**՝ 60% և 40% համաֆինանսավորմամբ համայնքային բյուջեից, որի արդյունքում կապիտալ ծրագրեր են իրականացվում հենց Գորիսում:

Առաջին ծրագիրը ֆինանսավորվելու է միմիայն **դրամաշնորհների** միջոցով և ոչ՝ մեր բյուջեի:

Նշված **գումարը** չկա համայնքային բյուջեում, հետևաբար անիմաստ է քննարկումը:

Այս պահին հազիվ աշխատատեղ ենք կրճատում, որ **պարտադիր ծախսերը** հոգանք, եթե կա համաֆինանսավորման տարբերակ, ապա հնարավոր է:

Գումարը **մի տեղից տալու են**, մի կողմից ինքը գումար է առաջացնելու, կարծում եմ արժե:

Ես, որպես սահմանամերձ գյուղի բնակիչ, ուզում եմ, որ **առանձնահատուկ ուշադրության** արժանանամ ու ոչ թե սկզբում մտածեն քաղաքների մասին, հետո նոր իմ:

Դիտակետի կառուցումը շատ ողջունելի է, եթե միայն **ֆինանսավորում** լինի:

Ֆիֆան և համաշխարհային բանկը մեզ **ֆինասնավորում** են, ուզում են Գորիսը զարգացնել: Դիտակետը նորոգելով մենք ցույց ենք տալիս, որ պատրաստ ենք այդ ֆինասավորմանը:

Դիտակետի խնդիրը կարելի է լուծել **բիզնեսի** միջոցով և ոչ թե բյուջեի հաշվին:

Այս տարի շատ ծրագրեր ենք արել, դրա համար մյուս տարի այդքան **մեծ գումարներ** չկան ֆոնդում մեծ ներդրումներ անելու համար:

Այս տարի Գորիսը **մշակութային** մայրաքաղաք էր, մենք զիջեցինք, որ ներդրումներն արվեն հենց Գորիս քաղաքում: Բայց հաջորդ տարի այդպես չպետք է լինի:

Ամոթ չի՞ Գորիսը էսպիսի գեղեցիկ **ճեմուղի** չունենա:

Եթե բարերարները քաղաքը **նորոգում** են, ինչո՞ւ գյուղը չեն նորոգում: Հարուստին կատվի նման պիտի փիսիփիսի անես:

2-4 միլիոնով **ստենտավորում** է, բայց անգամ իր ճանապարհը չի վերանորոգում, կոյուղու հարցով ի՞նչ պիտի անի:

Քարանձավային քաղաքի վերականգնման համար բանակցային փուլը գրեթե ավարտած է, և Որորտանի հեկ-ը պատրաստվում է **համաֆինանսավորմամբ** նպաստել քաղաքի վերականգնմանը:

Գորիսը թող մի գեղեցիկ հանգստյան գոտի լինի նաև այն հայերի համար, որոնք հնարավորություն չունեն մեկնել արտերկիր: Գորիսն այդ պոտենցիալն ունի, պետք են ուղղակի թիրախային **ներդրումներ**:

Չենք կարող տասնհինգ հազար դոլար դնել, տասը երեխայի համար:

Մենք շատ լավ գիտակցում ենք, որ հիսուն միլիոնը կարող ենք **այլ սոցիալական ծրագրերի** վրա ծախսենք, բայց որ քաղաքի կենտրոնը պետք է բարեկարգ լինի:

Խնձորեսկն ամենահարուստ գյուղն է. բոլորն ունեն հսկայական տարածքներ, բայց իրենց գյուղի փողոցները, դպրոցը **չեն նորոգում**:

Շատ բաց կետեր կան փաստաթղթերում: Ավելի **կարևոր կետեր** կան, որոնց ուշադրություն չի դարձվել:

Ժամանակին բանակի փոխարեն գալիս էին մեր դպրոցում յոթ տարի աշխատում ու վերադառնում. այ դա **օժանդակություն** էր:

Ինչո՞ւ հենց սյունեցիները ներդրումներ չեն անում **տուրիզմը** զարգացնելու համար. չգիտենք:

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՏՈՒՐԻԶՄ, ՍՊՈՐՏ

Եթե Ագարակում զբոսայգի լիներ, հավանական է, որ նպաստեր **տուրիզմի զարգացմանը** քաղաքում:

Մեղրիում **չկա որևէ տարածք**, որտեղ մարդիկ կարող են աշխատանքից հետո գնալ ու ժամանակ անցկացնել:

Եթե Ագարակում լինի բարեկարգ զբոսայգի, ես **հաճույքով երեխաներիս Մեղրիից կբերեմ Ագարակ:**

Ագարակն ավելի հարմար է, այնտեղ **երիտասարդները շատ են**:

Ագարակին ավելի շատ **եկեղեցի է պետք**:

Տուրիզմը պետք է զարգացնել, այլ ոչ թե արդեն զբոսայգի ունեցող համայնքում զբոսայգի կառուցել:

Ես երեխայիս վերցնում ու Կապան եմ գնում, որպեսզի **նա կարողանա կարուսել նստի**, ավազի մեջ խաղա, սղարան նստի:

Ագարակը չունի մի մատուռ, մի եկեղեցի, զբոսայգու փոխարել ավելի **լավ կլիներ մի եկեղեցի լիներ:**

Եթե նույնիսկ դիտարկենք **զբոսաշրջության զարգացման տեսանկյունից**, ապա զբոսաշրջիկներն արդեն գիտեն այն տները, որտեղից գնում են անհրաժեշտ ապրանքները:

Շուկան կարող է **«վերնիսաժի»** պես մի բան լինի:

Լիճքում, Տաշտունում, որտեղ ավելի զով է, նման վայրերի կառուցումն ավելի նպատակահարմար է. այստեղ կարող էինք մեր **բարբառների մասին տեղեկացնել** մեր հյուրերին: Շատ կարևոր է հասկանալ ամեն մի համայնքի առանձնահատկությունները և այս **հանգստավայրերի առաջարկները կառուցել** հենց դրանց վրա:

Տուրիզմի զարգացման **ենթակառուցվածքները զարգացնել**, այդ դեպքում միգուցե շուկան էլ գրավիչ դառնա:

Մեզ մոտ **բանջարեղեն գրեթե չի արտադրվում**. ամեն մեկն իր համար արտադրում ու սպառում է: Եղածի համար խանութները բավարար են: Անիմաստ է շուկա կառուցել: Թերևս դա միայն **տուրիստների** համար է լինելու:

Եթե կազմակերպվեր **փառատոններ, մշակութային կյանքը զարգանա**, հայաստանցին ճանաչի մեղրին, գա Մեղրի, չմնանք պարսիկների հույսին:

Առաջին մրգից մինչև վերջին միրգը բերքն ունի երեք ամիս է, կարելի է շատ **միջոցառումներ կազմակերպել:**

Մենք աշխարհին **ցուցարդելու շատ բան ունենք**, բայց չգիտենք ինչպես:

Եթե ինքներս պետք է ընտրենք, **թանգարանը վերջինն** է առաջնայնությունների ցանկում:

Եթե մարդիկ ուզենան ինչ որ բան տեսնել, կգան - կտեսնեն. չարժի դրան գումար հատկացնել:

Թանգարանի ծրագիրն **ամենաառաջնայինն է**, մնացած ծրագրերը զրո են:

Մեր խոշորացված համայնքում կան տեսարժան վայրեր, օրինակ Լիճքում մի քանի ջրվեժ կա: **Տուրիստների** մեծ հոսք էլ ենք ունենում:

Տուրիստական կենտրոնը վերցնում է տվյալներ երկրի մասին, օրինակ սննդի անվտանգությունն աշխատում է թե ոչ, ճանապարհներ, ենթակառուցվածքներ կան, թե ոչ, ո՞վ կգա թանգարանի համար:

Տուրիզմի համար ամենակարևորը ենթակառուցվածքների կառուցումն է, նոր պետք է անցնել թանգարաններին:

Տեսեք, Խնձորեսկի ճոճվող կամուրջը որևէ կերպ չի նպաստում համայնքի զարգացմանը, այն հիմնական բնակավայրից հեռու է, չկան համապատասխան ենթակառուցվածքներ, այստեղ խնդիրը միայն դիտակետի վերանորոգումը չի, անհրաժեշտ է մեխանիզմ ստեղծել, որ Գորիսից հետո մարդկանց ուղղորդի նաև Խնձորեսկ, այլ վայրեր, որ **տուրիզմին** տրված գումարն արդյունավետ դառնա:

Տուրիստը գալիս է Մեղրի, բայց այստեղ բավարար պայմաններ չկան, գազ չկա: Տեղի մարդիկ էլ են արտագաղթում:

Բնակչի գոյատևման մինիմալ պահանջները պետք է բավարարել, օրինակ գազ, ջուր, լույս, նոր մտածել **տուրիզմի** զարգացման մասին, քանի որ տուրիստը մնում է երեք օր, իսկ բնակիչը՝ միշտ էլ այստեղ է:

Տարածաշրջանի երեխաները պատկերացում չունեն **թանգարանի** մասին:

Սպորտային **տուրիզմ** կարող ենք զարգացնել. շատ եվրոպացիներ, երբ գալիս են մեզ մոտ հյուր, ուզում են առավոտները սպորտով զբաղվել ու դրա հնարավորությունը չի լինում, ցավոք:

Տուրիստների քանակը չի կարող կրկնապատկվել միայն դիտակետի վերականգնման շնորհիվ, մարդիկ Գորսի գալիս են հիմնականում Տաթև գնալու համար:

Դիտակետից ժայռերի տեսարանն է բացվում, շատ գեղեցիկ է, **շատ տուրիստ** կբերի:

Գորիսի դիտակետը չի կարող դառնալ համաշխարհային **տուրիստական** կենտրոն: Եթե հասարակ ամերիկացին փնտրում է ամենաերկար ճոպանուղին միանգամից Տաթևն է բերում, բայց դիտակետը ոչ մի շանս չունի նմանատիպ կետ դառնալու համար:

Գորիսը դառնում է **տուրիստական** կենտրոն, տարեցտարի շարժն ավելանում է:

Երկրորդ սցենարի թիրախը պետք է լինի այն, որ **տուրիստը,** գալով Գորիս, մնա առնվազն մեկ օր, այլ ոչ թե Տաթև այցելելու համար գա-անցնի քաղաքի միջով:

Տնտեսապես ձեռնտու է Դիտակետի նորոգումը, քանի որ **տուրիստների** քանակը կավելանա:

Տաթևի ճոպանուղին **տուրիստական կետ** է, շատ գորիսցիներն այդտեղ աշխատում են, իսկ Խնձորեսկի ճոճվող կամուրջը վճարովի չէ:

Առողջությունն ավելի առաջնային խնդիր է էս պահին, քան **տուրիզմի** խթանումը: Ճիշտ կլինի գումարներն ուղղել մարզադպրոցների կառուցմանը, ոչ թե դիտակետին:

Եթե մի կենտրոն ստեղծվեր, որ զբաղվեր **տուրիզմի** զարգացման խնդիրներով, այն մի հետազոտություն անցկացներ, խորհուրդ տար, թե որտեղ, ինչը վերանորոգեն, տուրիստին խորհրդատվություն տար, դա կարող էր ավելի լավ ազդեցություն ունենար տուրիզմի զարգացման վրա:

Ինչքան էլ առողջ օրգաններ ունենաս, սնունդ ա պետք, որ ուղեղդ աշխատի... պետք է փող բերող ճյուղերը խթանել: **Տուրիզմը** զարգանա, մենք էլ կհարստանանք:

Հայաստանի ռեսուրսը **տուրիզմն** է, սրան առանձնահատուկ առաջնահերթություն պիտի տրվի:

Առաջինը մեզ համար լավ պիտի լինի, **տուրիստ** է էլի, կգա էլ կգնա էլ:

Գորիսում մեծ խնդիր է մայթերի բացակայությունը, **տուրիստի** համար ոտքով քայլելը հարմար չի ու անգամ վտանգավոր:

Գորիսում զարգացած է հյուրատնային բիզնեսը. մարդիկ իրենց տներն են հարմարեցնում **տուրիզմի** համար և վարձով տալիս:

Դիտակետը **տուրիզմի** զարգացման շնորհիվ համայնքի բյուջե կմտնի գումար, որն էլ կուղղենք մարզահրապարակների կառուցմանը:

Աշխատավարձով ապրող մարդու համար ի՞նչ տարբերություն՝ **տուրիստն եկավ, թե չէ**: Դրանից օգտվում են հաշված մարդիկ:

Պետք է զարգացնել քաղաքի մշակույթը, քաղաքին պետք են սրճարաններ, արագ սննդի կետեր, ինչը կօգնի **տուրիզմի զարգացմանը**:

Տուրիստական երթուղիներ պիտի մշակվեն, որ բոլորն առաջնորդվեն այդ երթուղիներով, որպեսզի յուրաքանչյուր ներդրած դրամ իր ազդեցությունը թողնի զարգացման վրա:

Գորիս շատ են գալիս **հեծանվային տուրիզմի** սիրահարները, Դիտակետի ճանապարհի վերականգնումը նրանց էլ է շատ անհրաժեշտ:

Դիտակետի կառուցումից էնպես չի, թե հսկայական **տուրիստական բում** է տեղի ունենալու էս կողմերում: Կարելի է հետո էլ դրան ուշադրություն դարձնել:

Հարակից համայնքների համար էլ օգուտ կտա, **տուրիզմի զարգացումը,** վերջին հաշվով մենք էլ կկարողանանք գալ Գորիս, հանգստանալ, մի բան տեսնել:

Ինչքան շատ լինեն մեր գեղատեսիլ վայրերը, այնքան լավ է լինելու մեզ համար. մեզ մոտ շատ են գալիս եվրոպացիներ, չինացիներ, շատ են գալիս էկոտուրիստներ, լինում է, որ մենք **տուրիստներին** անգամ անվճար ենք պահում մեր տանը:

Մշակույթի տան հարակից այգու վերականգնումը միակողմանի չէ, օրինակ **տուրիսիտը քաղաքում** մնալով, քայլելու, զբոսնելու տեղ կունենա: Գեղագիտական առումով, մեզ էլ է հաճելի կենտրոնում նման զբոսայգի ունենալ:

Դուք այստեղ խոսում եք բյուջեն կենտրոնում **տուրիզմը զարգացնելու** համար, իսկ ծայրամասային գյուղե՞րն ինչ ասեն, իրենք բանտարկյալ են, իրենց վրա գումար չծախսե՞ն:

Եթե ՏԻՄ-ը դիտակետի վերանորոգումը դիտում է միայն որպես բարեկարգման, աղբանոցի վերացման ծրագիր, ապա դա մեծ հարց չի լուծելու համայքնում, իսկ եթե սա նպաստելու է որ **տուրիզմի** ու հարակից ոլորտներում աշխատատեղեր բացվեն, գումար պտտվի, տուրիստին հետաքրքիր լինի գա Գորիս ու դիտակետ այցելի, ապա միանշանակ կողմ ենք:

Մեր **տուրիստներն ա**վելի պրակտիկ են, իրենք չեն ուզում ինչ-որ ճոխ հյուրանոցներում մնալ, ճոխ պայմաններում, նրանց համար առավել կարևոր է տեսնել պատմամշակութային ինչ-որ վայրեր:

Հասկանում ենք, որ պետք է **տուրիզմ բիզնես** զարգացնել, բայց առանց սոցիալական ծրագրերի էլ չի լինի:

Ճեմուղու բարեկարգումը կլուծի մեր բնակավայրի **բնակիչների և տուրիստների** հանգստյան ժամերն անցկացնելու հարցը, մենք տեղ չունենք հավաքվելու, ճեմելու, հանգիստ նստելու, զրուցելու. Երևան ենք գնում, մարդիկ տարբեր այգիներում նստած են, վայելում են ամառային օրերը, իսկ մենք ինչ անենք:

Մտածում են **տուրիզմը զարգացնեն**. բայց բնակչի ապրելակերպի մասին չեն մտածում:

Շատ գյուղական համայնքներ կան, որ տեսարժան վայրեր ունեն, ինչու՞ տուրիստին չտանեն գյուղեր:

Մենք պետք է Գորիսում ինչ-որ ցույց տալու բան ունենանք. ես **տուրիստի աչքերով** եմ ասում:

Ճեմուղին հաստատ դիտակետից արդյունավետ է... **տուրիստն** էլ է ճեմուղուց օգտվելու: Ուր գնում ես, ասում ես մի հատ էսինչի հրապարակը տեսնեմ: Գորիսում մի էդպիսի տեղ չկա: Արվարձաններում ընդհանրապես վիճակ չկա: Գոնե կենտրոնը պիտի լավը լինի:

Էս **տուրիզմի ծրագրերը** լավ են, բայց պիտի մի քանի տարի սպասենք, որ զարգանա, փող բերի, իսկ մինչ այդ մենք պիտի շարունակենք ապրել, ջուր խմել, երեխաներին դպրոց ուղարկել, առողջությունը պահպանել:

Մենք էլ **տեսարժան վայրեր** ունենք, բայց տուրիստը գնում է մենակ Տաթև, Խնձորեսկ: Եթե ինֆորմացիան հասանելի լինի, շատ տեղեր կգնան:

Գորիսը պետք է ունենա **տուրիզմի կոմպլեքս զարգացման ծրագրեր**, որ բոլոր համայնքներով տուրեր կազմակերպեն, ամեն համայնք ունենա իր բրենդը:

Որպես հեռավոր գյուղի բնակիչ կարծում եմ, որ **տուրիզմի** համար պետք է բիզնես սեկտորը հոգ տանի, ոչ թե մեր հաշվին:

Տուրիստը գալիս է փող ծախսելու նպատակով, ինչու՞ չօգտագործենք դա:

Քարանձավային քաղաքի վերականգնումը շատ ողջունելի է, հատկապես եթե զարգացնում ենք **էկո տուրիզմը:**

Տուրիստը միայն հյուրանոց չի ուզում գնալ, ուզում է գնալ գյուղական մի վայր, աքլորի ձայնից զարթնել: Դրա համար պիտի **գովազդենք մեր գյուղերը**:

Գիդերն էլ տեղեկացված չեն, **տուրիստներին տանում են մենակ** Տաթև, Խնձորեսկ: Ինչի՞ մեր գյուղեր չեն բերում:

Վերին Շենն ավելի մոտ է Գորիսին, բայց **տուրիստն ա**յստեղից հասնում է Խնձորեսկ քարանձավները տեսնելու համար:

Գորիս համայնքի զարգացման ռազմավարական ուղղությունը **տուրիզմի զարգացման** հետ է կապվում, իհարկե մյուս խնդիրները չեն անտեսվում ՏԻՄ-ի կողմից, բայց եկամուտ ապահովելու տեսանկյունից տուրիզմի զարգացումն առաջնահերթ է:

Ճոճվող կամուրջն այսօր ամենաշատն է **տուրիստ բերում,** բայց մենք այնքան ուրիշ հին, պատմամշակութային կոթողներ ունենք, պետք է տեր կանգնենք ուղղակի:

Այն, որ Գորիսում **տուրիզմը** զարգացել է, ու պոտենցիալ ունի զարգանալու, անառարկելի է, դրա համար էլ համայնքի ներկա ռազմավարությունն ուղղված է տուրիզմի զարգացմանը:

Պետք է հասկանալ, ինչո՞ւ է **տուրիստը** գալիս Գորիս: Կարծում եմ՝ նրանց մեկ է բարեկարգումը: Նրանք գալիս են քարանձավների համար. դա պետք է ֆիքսել:

Հին Գորիսի քարանձավների վերանորոգումը մեծ **տուրիստական ներուժ** ունի, և լավ նախադրյալ է համայնքի զարգացման համար, բայց հարակից խնդիրներն այնքան մեծ են, որ անհրաժեշտ է սրանց զուգահեռ որոշակի միջոցներ ուղղել ավելի հրատապ ու առօրեական խնդիրների լուծմանը:

Տուրիստները շատ են հետաքրքրված քարանձավներով, մեզ համար արդեն սովորական է այս ամենը, նրանք հիանում են, հիացած նկարահանում:

Քարանձավը մեր **տուրիզիմի բրենդն** է: Ուրիշ ցույց տալու բան չունենք:

Տուրիզմի զարգացումը պետական աշխատողի աշխատավարձի վրա ազդեցությունն չունի: Իսկ բյուջետային հիմնարկների աշխատակիցների քանակը մեծ է: Տուրիզմի զարգացման կողմնակիցները շատ չեն լինելու:

Իսկ ո՞վ է ասել, որ տուրիզմը պետք է միայն կենտրոնում զարգացնել, ծայրամասային գյուղերը նույնպես շատ պոտենցիալ ունեն:

Տան վարձերը թանկանում են **տուրիզմի** զարգացմանը զուգահեռ:

Ուզում ե՞նք գյուղը չմեռնի, եկեք **էկոտուրիզմը** զարգացնենք: Արևի ավանը որ կառուցել էին, տուրիզմն էնքան առաջ գցեց: Թանգարանը էդ կարգի առաջնահերթություն չունի:

Տուրիզմի զարգացման հնարավորությունն այնուամենայնիվ մեծ չի, կենտրոնից շատ հեռու է:

Եթե եկամտի առումով նայենք, համայնքին ամենամեծ օգուտը միանշանակ **տուրիզմն է** տալու:

Էկոտուրիզմ կա, բայց **թանգարանի** կառուցումը կմեծացնի ինչպես տուրզմի զարգացմանը, այնպես էլ բնակչի ձեռքի աշխատանքների վաճառքին:

Տուրիստն այստեղ՝ Մեղրիում, ընդամենը մի գիշեր է մնում, այն էլ, եթե հոգնած է լինում, բա մնա՝ ի՞նչ անի, ու՞ր գնա:

Եթե համայնքն իր հինգամյա զարգացման ծրագրում դրել է **տուրիզմի** զարգացումն, ապա **երկրագիտական թանգարանի** հիմնումն անհրաժեշտություն է:

Մեղրի տուրիստների մեծ հոսք կա, բայց չկան բավարար չափով հյուրանոցներ:

Տուրիստը գալու է այստեղի ջուրը խմի ու հիվանդանոց ընկնի՞:

2018 թվականին, քանի որ սահմանն անցնելու գումարները բարձրացել են, զգալի պակասել է **տուրիստների** քանակը:

Պետք է փոխել կարծրատիպերը, Մեղրին ոչ թե արդյունաբերական, այլ **տուրիստական** կենտրոն պետք է ընկալվի:

Իրանցի տուրիստներին հետաքրքրում են Մեղրու տարածքում գտնվող **մուսուլմանական մզկիթները,** որոնք կարելի է վերականգնել:

Կարծում եմ՝ մեր ռեսուրսները թույլ են տալիս երկրի **ամենատուրիստական** կենտրոնը դառնալ:

Ես Մեղրիի բնակիչ եմ ու ջուրը չեմ խմում: **Տուրիստը** ո՞նց է խմելու:

Մեր համայնքում իրոք շատ լավ տեղեր կա, որ կարելի ա **տուրիստներին** ցույց տալ: Այն տուրիստները, որ գալիս են Հայաստանի հյուսիսից, հասնում են ճոպանուղի, Գորիս, շրջվում, հետ են գնում: Էդ մարդկանց կարելի է բերել ավելի հարավ էլ:

Արդյունաբերությունը էկոլոգիական խնդիրներ է առաջացնում, իսկ **տուրիզմը** հակառակը լուծում է էկոլոգիական շատ խնդիրներ:

Համայնքներն ավելի համախմբված եթե աշխատեն, կկարողանան **տուրիզմը** զարգացնել:

Ինչու հենց սյունեցիները ներդրումներ չեն անում **տուրիզմը** զարգացնելու համար. չգիտենք:

Մեղրի ժամանած միջազգային փորձագետն ասեց, որ եթե շաբաթական երկու **տուրիստ** տեսնում եք փողոցում, ապա տուրզմի զարգացման պոտենցիալ կա:

Մեր մոտ **տուրիզմը զրոյական** վիճակում է, իսկ զրոյից սկսել ոչ մեկը չի ուզում, պետությունը պետք է սկսի, գուցե հետո միանան մյուսները:

Զիփլայնի կառուցումը կնպաստի **տուրիզմի** զարգացմանը, տարածքը շատ բարենպաստ է:

Ես իմ տանը որ հյուրատուն սարքեմ, ոչ ոք ինտերնետով նայելով իմ մոտ չի գալու, պետական լուրջ օժանդակություն է պետք, որ մարքեթինգ արվի տարածաշրջանը: Սերժն իր ժամանակով Տաթևը **տուրիստական գոտի** հայտարարեց, էդքան ներդրումներ եղան: Հիմա վարչապետը նման բան պիտի անի նաև Մեղրու տարածաշրջանի համար:

Որքան էլ **տուրիզմը զարգանա**, մինչև գյուղատնտեսությունը զարգացած չլինի, գումարները կկորեն:

Եթե հետաքրքրություն չլիներ, տուրստները չէին գա պալատկաներ խփեին քարանձավների կողքը: **Էկոտուրիզմի** սիրահարները գալիս են:

Գյուղատնտեսություն-տուրիզմ փոխկապակցված են, այս ոլորտների վրա պետք է ուշադրություն դարձնել. հետո արդեն մյուս հարցերը ընթացքում կսկսեն լուծվել:

Մենք նախևառաջ պետք է իմանանք, թե **տուրիստը** ինչի կարիք ունի, նոր հասկանանք, թե ինչ անենք:

Պետք է մարդ լինի, որ **տուրիզմը** կամ գյուղատնտեսությունը զարգանա:

Մեղրիում **խմբային տուրիզմը** չի աշխատում:

Միայն Բայրամները և Նովրուզները քիչ են, դրանով **տուրիստի** հարց չենք լուծելու:

Մեզ մոտ շատ լավ կզարգանա, օրինակ, **վրանային տուրիզմը:**

Մեղրիում շատ լավ կաշխատի **ագրարային տուրիզմը**:

Տուրիստը մաքսակետից դուրս է գալիս՝ չկա զուգարան գնալու, հաց ուտելու տեղ ուր նաև շուկա կլինի:

Այստեղ **թանգարանը** խթան կդառնա, որ **զբոսաշրջիկներ** գան Մեղրի:

Փոքր Թաղում մի բարեգործի կողմից պատմամշակութային ծրագիր էր իրականցվում, որն այս տարի կարծես կասեցվեց: Սակայն սա շատ կարևոր ծրագիր է թե՛ տեղացիների, թե՛ **զբոսաշրջիկների** համար, որովհետև սրանով մենք երեխաների մեջ կրթում ենք ոչ միայն գնահատել իր մշակույթը, այլև պահպանել այն:

Մեղրու **որմնանկարներով եկեղեցիները** գրավում են **զբոսաշրջիկների,** Հայաստանում շատ են եկեղեցիները, բայց որմնանկարներով եկեղեցիներ չկան:

Զբոսաշրջիկը որտե՞ղ է մնալու: Մեղրիում չկան հյուրատներ կամ հյուրանոցներ:

Մեր հայ ժողովուրդը միավորվում ու համախմբվում է մենակ օրհասական պահերին: Եկեք մեր տրամադրվածությունը փոխենք, **զբոսայգի ու թանգարան** սարքելու համար էլ սովորենք համախմբվել

Եթե Մեղրիում գտնված ցուցանմուշները դրվեն **թանգարանում**, մեծ թվով **զբոսաշրջիկներ** կգրավի:

Մենք էլ կարող ենք նռան, չրերի **փառատոն** կազմակերպել : **Զբոսաշրջիկներ** կգան հաստատ:

Որպես զբոսավար ասեմ, որ Իրանցին մեր համար թիրախային չէ **տուրիզմի** տեսանկյունից, որովհետև Մեղրին միայն տարանցիկ է նրանց համար, ժամանցի վայրեր չկան, հետաքրքիր ոչինչ չկա, գալիս մի բաժակ խմում գնում են:

Կարճևանում գեղատեսիլ մի վայր ունենք, որտեղ թե՛ տեղացիներն են գնում հանգստանալու, թե՛ **զբոսաշրջիկները**: Շատ լավ կլիներ, որ այստեղ մի տեղ լիներ, որտեղ հնարավոր կլիներ Մեղրուն հատուկ ուտեստներ հյուրասիրել, տեղի միրգն ու չիրը վաճառել, հնարավորություն տալ

հանգստացողներին հարմարավետ անցկացնել իրենց հանգիստը: Սա կնպաստի զբոսաշրջությանը, նոր աշխատեղեր կբացվեն:

Մինչև Գորիսի դիտակետին հասնելը, լավ կլիներ մտածեինք, մարզի մանկապարտեզների մասին, երկուհարյուր հիսուն երեխա խաղալու տեղ չուն, գուցե պետք է մտածել ավելի քիչ գումարով **զբոսաշրջությունը** զարգացնել, մի մասն էլ ուղղել սոցիալական ծրագրերին:

Այսօր մենք շուրջ երեք հարյուր հիսուն հազար **զբոսաշրջիկ** ենք ունենում տարեկան, շատերը չեն մնում գիշերելու, քանի որ մենք նման խնդիրներ ունենք. բնությունը շռայլ է գտնվել Գորիսի հանդեպ, բայց մենք չենք գնահատում այդ ամենը, չենք պահպանում ու չենք զարգացնում այն, ինչ ունենք:

Հին Գորիս, Ակներ, Խնձորեսկ. **զբոսաշրջիկները** հարակից համայնքներ միշտ են գնում, բայց ամենակարևորը նորմալ ճանապարհ ունենալն է:

Դիտակետի և ընդհանրապես **զբոսաշրջության** զարգացումը կնպաստի նաև հարակից համայնքներին, որոնք կարող են իրենց գյուղմթերքը իրացնել, հյուրատներ առաջարկել: Սակայն, որպեսզի զարգացումը համաչափ տեղի ունենա, պետք է քվոտաներ առաջարկել համայնքներին:

Համայնքի կարևորագույն ծրագրերը **զբոսաշրջության** շուրջ են պտտվում:

Ես արտասահմանից հյուրեր եմ ունեցել, ասում էին արի մեզ տար Մեղրին ցույց տուր: Ես մտածում էի, որ էդպիսի տեղ չկա տանելու, էդ մարդկանց ցույց տալու մեր համայնքի **պատմությունը:**

Երկրագիտական թանգարանի դիմաց սեփական գոմեր են ու գերեզմաններ, ինչու՞ է հենց այդտեղ կառուցվում:

Գեղագիտական կենտրոնում մի փոքր տարածքում մի անհատ հիմնել է մի փոքր թանգարան, բայց համայնքում կան չօգտագործվող մեծ տարածքներ, որոնք անհրաժեշտ է օգտագործել այս նպատակով:

Գաղափարը ծագել է ճարտարապետ Ստեփան Նալբանդյանի մոտ: Համայնքում բավական մեծ քանակությամբ **պեղածո նյութեր** կային, անհրաժեշտ էր մի տեղ հատկացնել, որ դրանք ցուցադրվեն:

Լավ կլինի, որ **թանգարան ունենանք**, բայց դա միմիայն համայնքում մնացած ավելի արդիական հարցերը լուծելուց հետո:

Շատ սրտաճմլիկ է գերեզմանների մոտ **թանգարանի** կառուցումը:

Թանգարանի հիմնումը կնպաստի Մեղրու հոգևոր և մշակութային արժեքների փողանցմանը սերունդերին, նրանք կզգան թե ինչ մշակույթի կրողներ են և չեն լքի բնակավայրը:

Բազաթիվ **նմուշներ ունենք**, եկեղեցական սպասք, տեղ չունենք դնելու:

Տարիներ հետո կունենանք մի կենտրոն, որ կարող է դառնալ **մշակույթի** զարգացման կենտրոն:

Այցելուների «ավելացումը» **թանգարան** իհարկե հնարավոր է, որովհետև մարդիկ ամեն օր գերեզմաններ են գնում:

Ամեն ինչը ֆինանսի է տանում, եկեք օրինակ մի շաբաթօրյակ կազմակերպենք, մարդիկ գան իրենք իրենց համայնքին օժանդակեն, «շպակլյովկա» էլ կքաշեմ, ինչ ա եղել... Էս **թանգարանն** առանց էդ կարգի մեծ ծախսերի էլ կարելի կլինի գլուխ բերել:

Երկրագիտական **թանգարանի** տարածքն անգամ կա, ինչ-որ դրամաշնորհով կիսակառույց կա կառուցված, անգամ ցուցանակ կա:

Մենք ունենք Գեղագիտության կենտրոն, Մշակույթի տուն, որտեղ կարող ենք ցուցադրել **թանգարանային նմուշներն ա**ռանձին սենյակում:

Գորիսում, օրինակ, **ֆիլմեր** են նկարահանում, այստեղ չկա ինչ-որ նման բան:

Եթե Անապաստանաց վանքի տարածքում հիմնվի այս **թանգարանը**, ապա այն միայն օգուտ կտա, Արենիի գտածո կոշիկը միլիարդի օգուտ տվեց Հայաստանին, Շվանիձորում թվագրված գերեզմանաքար ունենք, որը հանրապետությունում ամենահին գերեզմանաքարն է, ու դրա մասին շատ քչերը գիտեն:

Ինչո՞ւ պետք է մեծ ծախս անես, աշակերտներին հասցնես Երևան Պատմության թանգարան, Մեղրիի պատմությանը ծանոթանալու համար: Նման **թանգարանը** խիստ անհրաժեշտ է:

Երկրագիտական **թանգարանի** կառուցումանը դեմ եմ, այդ ութսուն միլիոնին, որպես քաղաքաշինության բաժնի պետ:

Բայց մեզ մոտ էլ կարող է **լեռնագնացությունը** զարգանալ, լեռնային հեծանվավարությունը, էքստրեմալ սպորտաձևերը:

Ութսուն միլիոն դրամը **թանգարանի** համար անիմաստ է: Ավելի հրատապ խնդիրներ կան:

Համարյա զրո է հավանականությունը, որ հարևան Իրանի բնակչին կհետաքրքրի մեր **երկրագիտական թանգարանը:**

Գեղագիտական կենտրոնը հսկա դահլիճ ունի: Պատկանում է մշակույթի նախարարությանը, կարելի է դիմել նախարարին, էդ դահլիճն օգտագործել **թանգարանի** համար:

Պետք է ուշադիր լինենք մեր **մշակութային** արժեքների նկատմամբ:

Վերնիսաժի աշխատակիցները Մեղրիից են գնում կոլաժների համար նախատեսված նռները, եթե **թանգարան** լինի, կողքը կարող ենք վաճառել մեր աշխատանքները:

Մենք ունենք բնություն և հարևան, որը սիրում է բնության գրկում սնվել. եթե հարմարություններ լինեն, կարելի է դա օգտագործել:

Քանի որ Իրանը տնտեսական շրջափակման մեջ է, նրանց ձեռք չի տալիս դուրս գալ երկրից, հաշվարկում են իրենց բյուջեն և նախընտրում են երկրից դուրս չգալ:

Թանգարանի կառուցումը եկող տարվա համար լրիվ անիմաստ է:

Բնակչությունը ոչ թե դեմ կլինի **թանգարանի** ստեղծմանը, այլ բազմաթիվ այլ խնդիրների մեջ առաջնահերթությունների հարց կառաջանա:

Ալվանք գյուղում ընդհանրապես խմելու ջուր չկա: Ամբողջ ամառը ջրի կռիվ է: Ոչ խմելու ջուր կա, ոչ ոռոգման: Էս վիճակում ու՞մ է պետք **թանգարանը**:

Պարսիկները գինու **փառատոն** շատ են սիրում, հաստատ նռան փառատոնին կմասնակցեն:

Կարելի է այսօր անհատի կողմից ստեղծած փոքրիկ **թանգարանի** վրա ավելի համեստ ներդրումներ անելով կամաց-կամաց ձևավորելու ու զարգացնել մի արժեքավոր կառույց:

Օրինակ՝ Կարճևանքում մենք նախընտրեցին կոյուղին վերանորոգելու փոխարեն խաղահրապարակ սարքել երեխաների համար, որովետև դրանով լուծեցինք նաև երեխաների անվտանգության հարցը՝ փողոցից բերեցինք ավելի անվտանգ տեղ: **Թանգարանը** ևս շատ կարևոր է, ուղղակի պետք է հասկանալ, թե բոլոր համայնքների համար առաջնային ծրագիրը որն է, ինչպիսի ծրագիրն է հնարավորություն տալու ավելի մեծ թվով բնակիչների ծառայել:

Գիտեք, որ մեր մոտ կարելի է **դահուկային** կենտրոններ հիմնել. չգիտեք:

Եթե **թանգարանը** պիտի գործի անվճար, իսկ ո՞վ պիտի վճարի աշխատավարձը, պահպանման համար, արդյո՞ք համայնքը պատրաստ է այդ ծախսերն անելուն:

Հանգստի գոտիների ստեղծումը նաև կօժանդակի **ժամանցի** որակի բարձրացմանը:

Պատմության ուսուցիչը չի հանձնում գտածոները, որովհետև հույս ունի, որ **թանգարան** կբացվի:

Ամբողջ աշխարհի միրգը Մեղրիում է, բայց Հայաստանի տարբեր տարածաշրջանում **փառատոններ** արվում են, իսկ Մեղրիում՝ ոչ:

Մեղրին կարող է հետարքրել **պատմությամբ:**

Ես համաձայն եմ **թանգարանի** կառուցմանը, բայց ոչ համայնքի բյուջեյից:

Պարսկաստան անցնելու նպատակով այլ շրջաններից շատ մարդիկ են գալիս, իրենք էլ կարող են օգտվել **հանգստի** գոտիներից, փող ծախսել:

Եթե հովանավորներ գտնեն, դրահամահավաք լինի, թող բացվի **թանգարան**, բայց որ համայնքի հաշվին

Ով գիտի որ Մեղրում կան 12 դարի **բուրգեր**, 16 դարի ջրանցիկ **կամուրջներ** են եղել, եղել ա առաջին կուսանոցը 17 դարի:

Գեղագիտական ազգային կենտրոնի բաժնում, լսելով պատմությունները, բոլորը զարմանում են, որ ինչո՞ւ չկա **թանգարան**:

Տուրզիմի զարգացման համար առաջին հերթին պետք է նպաստել հյուրատների զարգացմանը:

Մեղրեցին, կտրված լինելով քաղաքից, ի տարբերություն Կապանի, Քաջարանի, խոսում է **գրական հայերենով:**

Մեղրիիում աշխատում են ոչ միայն տեղացիները, այլև, օրինակ, ապարանցիները: Այս ներքին աշխատանքային միգրացիան դեռ աճում է, և Մեղրին իսկապես ներքին ռեսուրսներ ունի՝ իր քաղաքակրթությամբ ու մշակույթով, զարգանալ մինչև **հարավային մայրաքաղաք** դառնալը:

Բոլոր ծրագրերն էլ ակտուալ են, բացի **թանգարանից**:

Նոնաձորում բոլորը թանկարժեք մեքենաներ ունեն, բայց տները գոմերի են նման, սա ավելի շատ **ապրելակերպի մշակույթ է:**

Ժողովուրդը գնում է Մեղրի **եկեղեցու** համար, բայց չունի մի տեղ, որտեղ հետո նստի:

Զբոսայգու կառուցումը միանշանակ ավելի կարևոր է, քան գյուղատնտեսական շուկայի կառուցումը:

«Մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում կատարվել են պետական սուբվենցիաներ՝ 60% և 40% համաֆինանսավորմամբ համայնքային բյուջեից, որի արդյունքում կապիտալ ծրագրեր են իրականացվում հենց Գորիսում:

Նոր վանքի տապ թաղամասը Գորիսի ամենախիտ թաղամասն է, մեր տարածքն այնքան մեծ է, որ այստեղ կարելի է մի ամբողջ **մարզական համալիր** կառուցել, շծրագրի անհրաժեշտությունը վաղուց կա:

Շատ կարևոր նախաձեռնություն է, մարդիկ կմարզվեն, նոր **ավանդույթ** կձևավորվի առողջ ապրելակերպի, երիտասարդները վատ սովորությունները կթողնեն:

Նախևառաջ պետք է մարդու **առողջությունն ա**պահովել ու նոր անցնել մնացած խնդիրներին:

Մարդիկ **ամաչում** են դուրս գալ ու վազել, չեն ուզում, որ իրենց տեսնեն:

Առողջությունն առաջնահերթություն է, եթե դրանով այսօր չզբաղվենք, հետո ավելի շատ խնդիրներ ենք ունենալու:

Մենք միայն ողջունում ենք **առողջ ապրելակերպը**, բայց մեծ խնդիր է միջոցառումների բաշխվածությունը Գորիս համայնքում:

Դիտակետը կարող ենք տարիների ընթացքում կառուցել, էլ դրա վրա գումար պետք չի ավելացել: Իսկ **առողջության** հարցը միշտ ակտուալ է:

Դիտակետից հրաշալի տեսարան է բացվում, որը գրավում է նաև **հարակից համայնքների բնակիչներին**: Սակայն նորմալ սրճարանի առկայությունը կարող է ավելի գրավիչ դարձնել այս վայրը:

Մշակույթի տան առաջին հարկում կա երկրագիտական թանգարան, որի մասին բնակիչները տեղյակ չեն:

Պատմամշակութային ժառանգությունը որպես բիզնես ռեսուրս դիտարկելը և մասնավորին պատվիրակելը նպատակահարմար չի, քանի որ շատ դժվար կլինի վերահսկել նրանց գործունեությունը:

Մարզասրահների բացումը կնպաստի բազմաթիվ **հիվանդությունների** կրճատմանը:

Մենք գտել ենք մեր թվարկությունից առաջ բրոնզե առյուծ, բայց չենք կարողանում **ճիշտ ցուցադրել:**

Քարանձավային քաղաքը Բակունցի հին Գորիսն է եղել, շատ կարևոր է դրա վերակառուցումը:

Քարանձավային քաղաքը սրբություն է, այնտեղ իրավունք չունի մի ավելորդ քար, ծխախոտի մնացորդ լինել:

Ուզում էին անգամ մեր **բնական քարանձավները** քանդեին, արհեստական ինչ-որ բաներով փոխարինեին, պատկերացնու՞մ եք...

Քարանձավային քաղաքին տիրություն անող չկա, մարդիկ անասուններին քշում են այդտեղ արածացնելու:

Քարանձավային քաղաքի վերականգնումը շատ լավ ծրագիր է: Շատ մարդիկ քարանձավը որպես գոմ են օգտագործում այսօր:

Քարանձավային քաղաքի վերականգնման համար բանակցային փուլը գրեթե ավարտած է, և Որորտանի հեկ-ը պատրաստվում է համաֆինանսավորմամբ նպաստել քաղաքի վերականգնմանը:

Քարանձավային քաղաքը վերականգնելուց առաջ պետք է վերականգնել այդտեղ տանող ճանապարհը:

Քարանձավային **կինոդիտում** են ուզում կազմակերպել, կարծում եմ՝ շատ լավ միտք է:

Եթե այսօր մենք ֆիզկուլտուրայի մարզահրապարակները ուժեղացնենք, ավելի **առողջ** կլինենք, և այն գումարները, որոնք ծախսում են առողջապահության վրա, կարող են նվազել:

Փողոցով քայլում ես, երեխան տեսնում է, ճաշակը զարգանում է, քաղաքային **կուլտուրան** շատ կարևոր է:

Երևանում ծաղիկները շատ են, Գորիսում մի ծաղիկ է աճում երեխան պոկում է, չի տեսել, **ճաշակ** չի զարգացել գեղեցիկը պահպանելու, քաղաքը սիրելու:

Ինձ համար էլ կարևոր է պահպանել մեր հին **մշակույթը**, մենք պատասխանատու ենք մեր սերնդի առջև:

Քարանձավային քաղաքը պետք է այնպես կառուցել, որ այլ բաների վնաս չտանք, այսինքն պահպանենք տարածքի **պատմամշակութային** արժեքը:

Պարսիկները գալիս են միայն խաղատների և գիշերային ակումբների համար:

Պարսիկները Հայաստան գալիս են ազատության համար, Մեղրիում էդ ազատությունը չենք կարողանալու ապահովել:

Մենք Քեոփսի բուրգ չունենք, պետք է մեր ունեցածը զարգացնենք:

Ակներ և Վերին Շեն բնակավայրերը մինչև 1950թ. եղել են **քարանձավներում**, ոչ մի քարաշեն տուն չի եղել:

Գորիսը շատ այլ խնդիրներ ունի, բայց **սպորտը** շատ կարևոր է:

Մենք **մտածելակերպի** խնդիր ունենք. մարդիկ մտածում են՝ եթե ինձ պետք չէ, ուրեմն պետք չէ նաև մյուսներին:

Համայնքի ղեկավարներն այցելում են գյուղեր, փորձում հասկանալ համայնքային կարիքները, սակայն մարդիկ խոսում են միայն անհատական խնդիրներից: Հանրային շահի մասին **ընկալում** չկա:

Մենք չէինք կարող գուշակել, որ ԱՄՆ-ը սանկցիաներ կկիրառի Իրանի հանդեպ: Եթե անցած տարիների քանակները լիներ, կողջունեի այս ծրագիրը:

Գորիսեցիներն ա**կտիվ** ու **նախաձեռնող** են, եթե նախկինում ծաղիկ էինք տնկում, պոկում էին, ապա հիմա խնամում են:

Է. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Պետք է այնպիսի տեղում կառուցել զբոսայգին, որ **բոլորը հնարավորություն ունենան** օգտագործել:

Մեծ դժվարությամբ հնարավոր եղավ զբոսայգու տարածքին **վերադարձնել հանրային կարգավիճակը:** Հանրային զբոսայգու առկայությունը **խիստ կարևոր է համայնքի երեխաների** համար:

Ագարակը ունի **ավելի լուրջ խնդիրներ**: Շատ փողոցներ կան, որտեղ լուսավորություն չկա: Զբոսայգու հարակից փողոցը լուսավոր չէ, ասֆալտապատված չէ:

Եթե բյուջեից հատկացում է արվում **այգու** համար, ապա պետք է ուղղվի Մեղրիին: Ագարակում մարդիկ հնարավորություն ունեն դուրս գալու ու զբոսնելու:

Ամբողջ խոշորացված համայնքում կա զբոսայգու խնդիր: Սակայն խոշորացված համայնքում ավելի **առաջնահերթ է հենց Մեղրիում** զբոսայգու կառուցումը:

Շենքերի բակերում բավարար տարածք չկա բակային այգիներ կառուցելու համար, ուստի այս **զբոսայգին բոլորին է ծառայելու**:

Հարակից գյուղերի բնակիչներն էլ են ուզում օգտվել **զբոսայգուց**, երեխաներին խաղահրապարակ տանել: Տարբերություն չկա, Մեղրիում կլինի զբոսայգին, թե Ագարակում:

Տարբեր բնակիչներ խնդիրներ են ստեղծել այստեղ. **անօրինական սեփականատերեր** են եղել այս տարածքի փոքր մասերի համար:

Մեղրիում **չկա որևէ տարածք**, որտեղ մարդիկ կարող են աշխատանքից հետո գնալ ու ժամանակ անցկացնել:

Առաջարկվող գումարով կարելի է մեկ ընդհանուր զբոսայգի կառուցել՝ ասենք **հինգ համայնքի համար հարմար տարածքում**, ոչ թե մեկում:

Միշտ լինում են նման հարցեր. ինչո՞ւ այստեղ լուսավորություն կա, իսկ, օրինակ, այլ բնակավայրում չկա, այսինքն, մենք՝ բոլորս միշտ **առավելությունը տվել ենք Մեղրի քաղաքին**՝ համարելով այն կենտրոն:

Ագարակում զբոսայգու կառուցմանն առաջնահերթություն կարելի է տալ թերևս միայն այն դեպքում, եթե մոտակա տարիներին նախատեսվելու է նաև Մեղրիում **զբոսայգու** կառուցում:

Մեղրիում ավելի կարևոր բան ունենք անելու՝ ստադիոնն ու **ենթակառուցվածքների վերականգնումը**:

Մեզ համար ավելի **հրատապ է լուսավորության ու փողոցների վիճակը**: Շատ մութ անկյուններ կան, որոնցով գիշերը չես կարողանում անցնել: Այս գումարը պետք է ուղղվի հենց լուսավորությանը:

Լիճք բնակավայրը հրաշալի բնակավայր է հանգստի գոտի վերածելու համար, ժամանակին եղել է պարսից շահի ամառանոցը: Ավելի լավ կլիներ, որ այդ **բնակավայրի ճանապարհը վերանորգվեր**:

Արտադրանքի իրացման խնդիրները կապված են նաև ճանապարհների հետ, օրինակ Նռնիձորում ստանում են լավ բերք, բայց **ճանապարների վատ որակ**ի պատճառով դժվարանում է բերքի իրացումը:

Եթե մի օր **ջուր չի լինու**մ, դա ազդում է բերքի որակի վրա, ինչքան էլ ջրեմ, արդեն արքայախնձորը չի մեծանա:

Մեղրիում **ջրի ու ոռոգման խնդիր** ունենք: Ինչո՞ւ ուշադրություն չի դարձվում դրան:

Ջրօգտագործումը մեզ մոտ սխալ է կազմակերպված:

Շվանիձորի համար ոչ թե մանկապարտեզն է առաջնային, այլ **խմելու ջրի հարցը:**

Մի ծնողը կարող է Ալվանքից իր երեխային տանի Շվանիձորում մանկապարտեզ, մյուսը՝ տարբեր պատճառներով, դա չի կարող անել: Միգուցե անհրաժեշտ է **ավտոբուս ապահովել**, որպեսզի տարբեր համայնքներից երեխաներին հասցնի մանկապարտեզ:

Մեղրիում գազի խողովակները շատ են, բայց **գազ չկա:**

Մեղրիում գազն անցնում է գնում է Երևան, բայց **Մեղրիում գազ չկա,** ցախով ենք տաքացնում:

Մեղրիում ամենահրատապը **գազի հարցն** է:

Մինչև «դուռնուլուսամուտը» **գազաֆիկացայի հարցը պիտի լուծել**: Հա, կողմ եմ, բայց անտառահատումը նվազեցնելու համար պետք է մեղրեցուն այլընտրանք առաջարկել, օրինակ՝ գազ:

Երևանում ասում ենք Մեղրիում **գազ** չկա, ծիծաղում են մեզ վրա:

Մեղրում գազը վառեցին ցույց տվեցին ու **մենք էլ գազ չտեսանք**, խողովակները կա գազ չկա. կատակում են որ էս խողովակները պետք է կտրել թառմա սարքել խաղողի համար. Մեղրիով գնաց Եվրոպա, մենք չտեսանք:

Գազը Իրանից գալիս մեր տարածքով հասնում է Երևան: Մեզ մոտ գազաֆիկացված չէ, անհրաժեշտ է մտածել գազաֆիկացման ծրագիրն աշխատացնել:

Լուսամուտի ու վառելափայտի կարիք, կարելի է ասել, համայնքում առանձնապես չկա: Էս դարաշրջանում վառելափայտը որս է... բնական գազ կա... եկեք ոտքի կանգնենք, մի հատ ցույց անենք: Մեր հեղափոխական նախարարը թող մի հատ էլ Մեղրի գա: Ես էլ էդ կուսակցությունից եմ, գամ հետներդ կանչեմ թող էդ մարդը գա էս **գազաֆիկացման հարցը լուծի**... ամոթ ա, ախր...

Գյուղեր կան, որտեղ **գազաֆիկացումն էլ չի օգնի**, առանց վառելափայտի հնարավոր չի տաքանալ:

Հիսուն միլիոնով գազաֆիկացիա հնարավոր չի անել, բայց միգուցե նորմալ լուսամուտն ու վառելափայտի տեսքով օգնությունը մի քայլ է դեպի ավելի համապարփակ լուծում:

Անհրաժեշտ է այս ծրագրում **վառելափայտը փոխարինել գազով:**

Լուսամուտների փոխելը շատ կարևոր է ու **մնայուն**. փայտի համար այս տարի գումար կտանք փայտը կվառենք, բա հաջո՞րդ տարի: Դրա համար **պետք է գազաֆիկացնել:**

Հայանտառին թույլատրվում է սանիտարական մաքրումներ իրականացնել: Եթե Մեղրին լինի գազաֆիկացված, սանիտարական հատումները **կբավականացնեն մնացած գյուղային համայնքներին,** որտեղ գազաֆիկացնելը դժվար է: Հակառակ դեպքում միայն սանիտարական հատումներով ողջ բնակչության տաքացման հարցը չի լուծվի:

Ամենահրատապը գազաֆիկացումն է, քանի որ մեր խեղճ տղամարդիկ ամեն ամիս **գազի բալոնները ուսներին գազ են բերում** կենցաղային կարիքները հոգալու համար:

Իրականում ամոթալի ա էն փաստը, որ **Իրանի կառավարությանը մեր համար ավելի շատ ա մտածում**, քան մեր կառավարությունը: Իրանական կողմը երկու միլիոն դոլար փող է ծախսել մեր գազատար խողովակների համար:

Գազը մեզ համար երազ է ու երազ էլ մնալու է:

Անկախ համայնքից, մեխանիզմներ են պետք, որպեսզի **բոլոր համայնքների բոլոր երեխաները հաճախեն մանկապարտեզ**, կլինի դա մանկապարտեզ կառուցելով, թե երեխաների համար տրանսպորտ ապահովելով:

Խոշորացումից հետո, օրինակ Խնձորեսկում, աղբահանությունը կազմակերպվեց վերջապես, **լուսավորությունը** կարգավորեցին, դա էլ խոշորացման դրական կողմերն են:

Դեպի դիտակետ ճանապարհը շատ վատն էր, շներն էլ ավելի վտանգավոր են դարձնում այդ ճանապարհը, որովհետև **լուսավորություն** չկա, աղբն ա մեն տեղ թափված է: Այս ամենը պետք է վերացնել, որպեսզի դա հաճելի հանգստավայր դառնա:

Լուսամուտների խնդիրը շատ արդիական է ոչ միայն խոցելի խմբերի համար, այլ նաև համայնքային կարևոր **ենթակառուցվածքներին**, օրինակ՝ Ալվանքի դպրոցի:

Անգամ մեծ գումարների ներդրումն այս ծրագրում արդարացված է, որովետև նման ծրագիրը՝ իր յուրահատուկ **ենթակառուցվածքներով**՝ օրինակ հանգստավայրով, կնպաստի մեր ինքնության պահպանմանը: Օրինակ՝ մեր նոր սերունդ արդեն չգիտի, թե իլիկն ինչ է: Տանում թափում է: Ինչո՞ւ պետք է մի տաս տարի հետո միայն իմանա, որ դա ասենք տաս հազար դոլար արժողության իր էր...

Տուրիստական կենտրոնը վերցնում է տվյալներ երկրի մասին, օրինակ սննդի անվտանգությունն աշխատում է թե ոչ, ճանապարհներ, **ենթակառուցվածքներ** կան, թե ոչ, ո՞վ կգա թանգարանի համար:

Տուրիզմի համար ամենակարևորը **ենթակառուցվածքների** կառուցումն է, նոր պետք է անցնել թանգարաններին:

Եթե քաղաքին գումար կբերի դիտակետը, ապա միանշանակ այս ծրագիրն առաջնահերթ է, այդ էլ կխթանի, որ այլ **ենթակառուցվածքները** զարգանան:

Տեսեք, Խնձորեսկի ճոճվող կամուրջը, որևէ կերպ չի նպաստում համայնքի զարգացմանը, այն հիմնական բնակավայրից հեռու է, չկան համապատասխան **ենթակառուցվածքներ**, այստեղ խնդիրը միայն դիտակետի վերանորոգումը չի, անհրաժեշտ է մի մեխանիզմ ստեղծել, որ Գորիսից հետո մարդկանց ուղղորդի նաև Խնձորեսկ, այլ վայրեր, որ տուրիզմին տրված գումարն արդյունավետ դառնա:

Եթե **դպրոցները** լինեին համայնքի ենթակայության տակ, ապա մարզադահլիճները կտրամադրվեին համայնքի բնակչիներին:

Տաս-տասներկու խորանարդ մետր փայտ ենք վառում, որ տաքանանք. բնակարան լինի, թե սեփական տուն: Դրա համարժեք **գազը** շատ է թանկ նստելու, բնակչությունն ի վիճակի չի լինի վճարել:

Եկեք բոլորս համախմբվենք, էս առիթից օգտվենք, ժողովորդ ջան, ես մտածել եմ նույնիսկ թե կառավարությունն ինչպես կարող է մեզ օգնել էս հարցում: Առաջարկում եմ **գազի** ավելացված արժեքի հարկից մեզ ազատեն: Սա էականորեն բնակչության գազի ծախսերը կկրճատի:

Մեզ համար այս պահին հրատապը վառելափայտի հարցն է: Այս գումարով պետք է **գազի** հարցը լուծենք:

Մարդիկ դեմ են գազաֆիկացմանը, քանի որ փայտը ձրի է, իսկ **գազին** պետք է փող տան:

Եթե համայնքում **գազ** լինի, ապօրինի անտառահատումներն էլ կկրճատվեն:

Մարզպետի հետ խոսում էս, ասում է գազաֆիկացումը թանկ հաճույք է, հոսանք վառեք:

Տուրիստը գալիս է Մեղրի, բայց այստեղ բավարար պայմաններ չկան, **գազ** չկա: Տեղի մարդիկ էլ են արտագաղթում:

Գազը, **լույսը**, **ջուրն ա**ռաջնային լուծում են պահանջում այս տարածքում:

Գազաֆիկացումն ավելի հրատապ խնդիր է համարվում: Գազն անցնում է Մեղրիի կողքով, բայց մենք գազ չունենք:

Բնակչի կենսագոյատևման մինիմալ պահանջները պետք է բավարարել, օրինակ **գազ**, **ջուր**, **լույս**, նոր մտածել տուրիզմի զարգացման մասին, քանի որ տուրիստը մնում է երեք օր, իսկ բնակիչը՝ միշտ էլ այստեղ է:

Գորիսում մեծ խնդիր է **մայթերի բացակայությունը**, տուրիստի համար ոտքով քայլելը հարմար չի ու անգամ վտանգավոր:

Տուրիստական երթուղիներ պիտի մշակվեն, որ բոլորն առաջնորդվեն այդ երթուղիներով, որպեսզի յուրաքանչյուր ներդրած դրամ իր ազդեցությունը թողնի զարգացման վրա:

Էս տուրիզմի ծրագրերը լավ են, բայց պիտի մի քանի տարի սպասենք, որ զարգանա, փող բերի, իսկ մինչ այդ մենք պիտի **շարունակենք ապրել**, ջուր խմել, երեխաներին դպրոց ուղարկել, առողջությունը պահպանել:

Տուրիստը գալու է այստեղի **ջուրը** խմի ու հիվանդանոց ընկնի՞:

Տուրիստը մաքսակետից դուրս է գալիս՝ չկա **զուգարան, հաց ուտելու տեղ ուր կլինի նաև շուկա:**

Հին Գորիս, Ակներ, Խնձորեսկ. զբոսաշրջիկները հարակից համայնքներ միշտ են գնում, բայց ամենակարևորը նորմալ **ճանապարհ** ունենալն է:

Առաջ որ «**լևի» լույս** ունեինք, նենց լավ էր:

Եթե մարդ ուզում է գնալ և ինչ-որ գյուղում ապրել, անպայման ծանոթանում է **ինֆրաստրուկտուրային**՝ կա մանկապարտեզ, թե՝ ոչ, դպրոց, շուկա և այլն:

Մեղրիում չկան մայթեր, նորմալ փողոցներ: Քաղաքը կորցրել է իր **հատակագիծը:**

Ալվանք գյուղում ընդհանրապես **խմելու ջուր** չկա: Ամբողջ ամառը ջրի կռիվ է: Ոչ խմելու ջուր կա, ոչ ոռոգման: Էս վիճակում ու՞մ է պետք թանգարանը:

Մենք գետի **ջուր** ենք խմում:

Մեղրի համայնքի **հանգստի գոտիները** պիտի զարգանան մասնավորի կողմից:

Եթե **հանգստյան գոտիները** պետք է աշխատեն սպասարկումով, ապա ես կողմ եմ, իսկ եթե անվճար է, ապա դա կվերածվի խոզանոցի:

Եթե տնտեսվարող սուբյեկտները տուգանվեն թափված **աղբի** համար, ապա Մեղրու կանաչ գոտիները նորմալ տեսք կունենան:

Հանգստի գոտիների ծախսը մասնավորը պիտի հոգա, սա ի՞նչ պետության գործն ա:

Համայնքն ինքը պետք է կարգավորի **հանգստի գոտիների** մաքրության հարցը:

Հանգստի գոտիների ստեղծումը ռեալ ու իրատեսական չէ: Ի՞նչ է հանգստի գոտին, ո՞րն է դրա նշանակությունը:

Լիճք բնակավայրը **հրաշալի բնակավայր է հանգստի գոտի վերածելու համար**, ժամանակին եղել է պարսից շահի ամառանոցը: Ավելի լավ կլիներ, որ այդ **բնակավայրի ճանապարհը վերանորգվեր:**

Եթե Շվանիձորի տարածքի հինգ **տաղավարների** վրա ծախսվի ընդամենը կես մլն դրամ, դրանք կդառնան մեկօրյա հանգստի հրաշալի վայրեր:

Գործարարները իրենց գումարը ներդնում են մեքենաներ ներմուծելու համար, համյանքը պետք է գումար տրամադրի տուրզիմի զարգացման, զիփլայն կառուցելու համար:

Մենք ուզում ենք ընտանիքով դուրս գալ քաղաքից ու մի տեղ **հանգստանալ**, չկա որևէ մի տեղ նման հանգիստը կազմակերպելու համար, այս շատ կարևոր ծրագիր է:

Հանգստյան գոտիները թույլ կտան իրացնել մեր չիրը, գումար վաստակել, էն դուռ-լուսամուտնի համար էլ փող բերել բյուջե:

Պարսիկը կխմի, կգա **զիփլայնով** կթռչի, փողն էլ կգա համայնքի բյուջե:

Որպեսզի այս **հանգստյան գոտիները** նորմալ աշխատեն, պետք է նաև ճանապարհները վերանորոգել, համապատասխան ցուցանակներ տեղադրել:

Ես իմ **հանգստի** համար նախատեսված գումարը չեմ տանի ուրիշ մարզում ծախսեմ:

Աղբամաններ չկան մեր քաղաքում, նախ պետք է դրա մասին մտածեն, հետո՝ հանգստի գոտու:

Կարելի է արհեստական լճակներ ստեղծել, այս կերպ ևս **տուրսիտեր** գրավել:

Հանգստի գոտիների ստեղծման հարցը բյուջեում նախատեսված էլ չի, հետևաբար այս սցենարը մնացածներին հավասար քննարկելու կարիք դեռևս չկա:

Մեկօրյա հանգստի մեկնողը բարեկարգ **հատուկ պայմաններ** չեն ուզում, այստեղ այդքան գումար ծախսելու բան չկա:

Այգեձորում կա նմանատիպ **հանգստի գոտի,** որը չի արդարացնում:

Զանգեզուր ԿՀՆ Արևիկ մասնաճյուղը մի փորձ արեց, **ճամբար** հիմնեց երեք հազար դրամ վճարով՝ սանհագույց, գիշերակաց, վայֆայ՝ ընդամենը երեք հազար դրամով, հիսուն միլիոնից քիչ փոխանցեն այդ կազմակերպությունը, այն շատ լավ կկազմակերպի գործը շատ ավելի քիչ միջոցներով ու արդյունավետությամբ:

Մեզ անհրաժեշտ են մաքուր, իրենց պարտականությունները կատարող համայնքի ղեկավարներ, մենք կունենանք նորմալ **հանգստյան գոտիներ:**

Լիճքում, Տաշտունում, որտեղ ավելի զով է, նման վայրերի կառուցումն ավելի նպատակահարմար է. այստեղ կարող էինք մեր **բարբառների մասին տեղեկացնել** մեր հյուրերին: Շատ կարևոր է հասկանալ ամեն մի համայնքի առանձնահատկությունները և այս **հանգստավայրերի առաջարկները կառուցել** հենց դրանց վրա:

Տուրիզմի **ենթակառուցվածքները զարգացնել**, այդ դեպքում միգուցե շուկան էլ գրավիչ դառնա:

Մեր մոտ **հանրային ծառայությունների** գործը լավ ռելսերի վրա է դրված, աղբը լավ մաքրում են, աղբամաններ էլ կան:

Ցանկացած ծախս ինքնանպատակ չի լինելու. **համայնքի գրավչությունն** ենք ապահովելու, եթե գեղեցիկ այգի ունենանք:

Փոխարենը պետք է ուղղել գումարը Մեղրիի **ջրամբարի կառուցմանը:**

Շատ կարևոր է հանրային **զուգարանների ցանցը**, քանի որ դրանք գրեթե գոյություն չունեն:

Առաջարկված ծրագրերը միգուցե կարևոր են, սակայն յուրաքանչյուր համայնքում կան շատ ավելի առաջնային խնդիրներ, օրինակ՝ Ալվանքում խմելու **ջրի** հարցը, որն ազդում է երեխաներին պարտադիր տաք սննդով ապահովելու խնդրի վրա:

Եթե հորդառատ անձրև է գալիս, մենք **ջուր** չենք ունենում, ուզած-չուզած՝ խանութից ենք գնում:

Լուսամուտները պիտի փոխվեն հատկապես դպրոցներում:

Մենք նույնիսկ **տրանսպորտ** չունենք, որ Խնձորեսկից գանք այստեղի մարզահրապարակներից օգտվենք: Թող մեր մոտ մի հատ կառուցեն, ոչ թե Գորիսում երեքը:

Ուզում եմ բոլորիդ տանեմ մեր գյուղը տեսնեք, որ ոչինչ չկա. միայն հրապարակը կամ **ճանապարհները** չեն:

Դիտակետի հատվածը գրեթե վերածված է աղբատեղիի, **ճանապարհ** էլ չկա անգամ արդեն:

Հիմա այդ տարածքը **կեղտոտ** է շատ, աղբանոց է, երեկոյան ժամերին կվախենաս քայլես:

Դիտակետի հետ կապվում են մյուս **ինֆրաստրուկտուրաները**, որոնք նույնպես կզարգանան:

Դիտակետը լուսանկարահանվելու հրաշալի վայր է, բայց մարդիկ **չեն կարողանում հասնել** այնտեղ, ով էլ փորձում է գնալ, հաստատ փոշմանում է:

Երիտասարդները շատ են սիրում այդ վայրը, բայց դրա հետ մեկտեղ նաև շատ են փչացնում, չեն պահպանում, **աղբն ա**ղբամանում չեն թափում. պահակներ պետք է լինեն, հնարավոր է նաև հասարակական հիմունքներով պահակություն անեն, կամ տարածքի բիզնեսները պահակություն անեն:

Վերին Շեն գյուղում մարդիկ խմում եմ կեղտոտ **ջուր**, այս դեպքում դիտակետի կամ քարանձավային քաղաքի կառուցումն ակտուալ չի:

Այսօր համայնքում բազմաթիվ այլ խնդիրներ կան, օրինակ կոյուղին, Խնձորեսկում ջրի խնդիր ունենք, Քարահունջում խմելու **ջրի** ցանցն անբարեկարգ է, իսկ մենք խոսում ենք ճեմուղու մասին, որը կարծես մեծ ազդեցություն չի ունենալու:

Քաղաքի կենտրոնի բարեկարգ լինելը ցանկացած քաղաքի այցեքարտն է, շատ կարևոր է, որ մեր կենտրոնն էլ գեղեցիկ լինի, բարեկարգ և մաքուր:

Միջհամայնքային **ճանապարհները** գտնվում են անմխիթար վիճակում:

Խնձորեսկ համայնքում մեծ է խմելու **ջրի** խնդիրը:

Ակներ համայնքի **կոյուղին** լցվում է գետը, այս խնդիրը պետք է առաջին հերթին լուծել:

Առաջարկում ենք քարանձավային քաղաքի վերակառուցումը դեռ թողնենք ու մտածենք, ասենք, նույն քարանձավ տանող **ճանապարհների** մասին:

Սրտաբանականի **կոյուղաջուրը** թափվում է փողոց ու դաշտ, կովերն էլ էդ ջուրն են խմում: Տեղով հիվանդության բուն ա...

2-4 միլիոնով ստենտավորում է, բայց անգամ իր **ճանապարհը** չի վերանորոգում, կոյուղու հարցով ի՞նչ պիտի անի:

Քարանձավային քաղաքը վերականգնելուց առաջ պետք է վերականգնել այդտեղ տանող

Գորիսը թող մի գեղեցիկ **հանգստյան գոտի** լինի նաև այն հայերի համար, որոնք հնարավորություն չունեն մեկնել այլ երկրներ: Գորիսը դրա ներուժն ունի, ուղղակի պետք են թիրախային ներդրումներ:

Քաղաքի միակ գործող **աղբավայրն ա**նցնում է քարանձավային քաղաքի կողքով, **ճանապարհները** եթե վերականգնվեն, աղբը չի թափվի այնտեղ:

Չի կարելի ինֆրատրուկտուրան զարգացնել առանց լավ **ճանապարհների**:

Մենք շատ գեղեցիկ տարածքներ ունենք Գորիս քաղաքից հեռու, ուղղակի **ճանապարհ** չլինելու պատճառով, մարդիկ դրոններով են նկարում, չեն հասնում այդ տարածքներ:

Մենք նաև ռազմավարական նշանակության **ճանապարհներ** ունենք, որոնք այնքան վատ վիճակում են, որ անգամ տանկերը չեն կարողանում անցնել:

Ճանապարհներ պետք է սարքվեն, **տրանսպորտ** աշխատի:

Դիտակատը կարելի է դիտարկել ավելի շատ որպես հանգստի գոտի:

Դիտակետը միայն մի տեղ չի, դա հսկայական տարածք է, որտեղ ամեն ինչ կարելի է կառուցել ու հարմարացնել:

Դիտակետի տարածքում ամենամեծ խնդիրն **աղբի** կուտակումն է:

Դիտակետի տարածքը բարեկարգելու դեպքում մի ռիսկ էլ կա. միգուցե այն սկսի հրապուրել հարբեցողների՞ն:

Մշակույթի տան հարակից **այգու** վերականգնումը մի ամսից կավարտվի:

Ճեմուղու բարեկարգումն ավելի կարևոր է, քան, օրինակ, դիտակետինը:

Մշակույթի տան հարակից **ճեմուղու** վերակառուցումը շատ կարևոր է, քանի որ քաղաքի կենտրոնում է:

Այգին շատ գեղեցիկ է, կողմ ենք, աջակցում ենք, մեր համայնքի համար է արվում:

Հետագա եկաուտի առումով գուցե **դիտակետն ա**վելի օգտակար է, բայց **հրապարակը** չի կարելի անբարեկարգ թողնել:

Մենք **դիտակետի** դեպքում ավելի կողմ ենք վերակառուցմանը, բայց, կարծում եմ, **ճեմուղու** վերանորոգումը մեծ հարց չի լուծելու:

Քրոջս գերմանացի ամուսինը շատ հետաքրքրված էր Ներքին խոր գյուղի քարանձավներով, և այնտեղ հասնելու համար վարձում են նիվա, որովհետև **ճանապարհները** շատ վատն են:

Մեր մոտ ամեն ինչ իրար մոտ է, երբ մեկը **բարեկարգում** ենք, մյուսի վրա էլ է մասամբ ազդում:

Քարանձավային քաղաքի վերանորոգումը և **դիտակետի** բարեկարգումն իրար հետ շատ փոխկապակցված են. չի լինի մեկը սարքել, մյուսը՝ ոչ:

Առաջ տատս ասում էր, աղջի, փողոցը մաքրի, նոր մտիր տուն, հիմա էլ էդպես չի: Այսինքն մենք մեր **համայնքի** մասին չենք մտածում, միայն մեր մասնավորը:

Դիտակետով ես գնում և հասնում այստեղ, **դիտակետից** տեսնում ես Քարանձավային քաղաքը. այսինքն կոմպլեքս պետք է վերականգնել, մեկն առանց մյուսի չի կարող լինել:

Համայնքը պետք է պատասխանատվություն կրի **տարածքի** պահպանման համար: Երբ որ դրսից ներդրումներ են լինում, լինում են միանվագ, և տարածքը հետագայում չի սպասարկվում:

Մեր ամբողջ շրջանում ամենամեծ **գյուղատնտեսական հողերը** Խնձորեսկն ունի, ինչու՞ եք դուք ամեն ինչ թողնում պետությանը, գուցե ձեր հողերը՞ մշակեք:

Դիտակետից շատ ինքնասպանություններ են լինում, ավելի լավ է Քարանձավային քաղաքը կառուցենք:

Ամբողջ **քարանձավային քաղաքը** վերածվել է արոտավայրի:

Մշակույթի տան աշխատանքները տեսանելի են մեզ համար, կենտրոնական տեղ է, ամեն ինչ լավ սարքում են:

Մշակույթի տան հարակից **այգին**, որը գտնվում է ադմինսիտրատիվ շենքերի մեջ, շատ գեղեցիկ է:

Գորիսի **դիտակետի** վերանորոգման համար ներդրումը ճիշտ է, բայց պիտի հասկանանք, որ խնդիրը միայն վերանորոգել չի, այլ նաև պահպանելը, այդքան գումար ներդրեցինք, իսկ **պահպանելը**:

Եթե ընտրություն լինի խաղահրապարակը, թե **դիտակետը**, միանշանակ դիակետը. նա ավելի շատ շահառուներ է ներառում:

Գորիսում կա ֆուտբոլի դաշտ, կարելի է **դիտակետն ա**յնպես սարքել, որ վերևից դաշտը երևա:

Խոսքը բաց **խաղահրապարակների** մասին է, որոնք սեզոնային են: Իսկ փակ խաղահրապարակնե՞ր, **մարզադպրո**՞ց...

Դիտակետի վերակառուցումն արդեն սկսված է, փողն էլ կա:

Հիմա այդ **տարածքները** շատ վտանգավոր են, փողոցային կռիվները, ռազբորկաները հիմնականում այդտեղ են լինում:

Մեզ մոտ շատ **կիսակառույց շենքեր** կան, եթե դրանք վերակառուցեն, մեծ օգուտ կտան:

Ֆուտբոլի դաշտը կարելի է նաև որպես **միջոցառումների** վայր օգտագործել:

Քաղաքում կան **օբյեկտներ**, որոնք կարող են ծառայել որպես մարզասրահներ, օրինակ դպրոցի դահլիճը, կարելի է դասերից հետո համայնքին տալ վճարովի սկզբունքով:

Գործկոմի կողքի սրճարանը շատ գեղեցիկ է, Երևանյան կոլորիտ կա, եթե բարեկարգվի **ճեմուղին** նրա շրջակայքում էլ գեղեցիկ սրճարաններ կբացվեն:

Ոչ մի գյուղում, անգամ Գորիսում նորմալ **մարզահրապարակ** չկա: **Միջոցառումների** դեպքում չգիտենք որտեղ կազմակերպել:

Մենք ունենք հրաշալի **աղբյուրներ**, որտեղ գորիսեցիները գնում են հանգստանալու՝ անվճար:

Հին Գորիսի քարանձավների վերանորոգումը մեծ տուրիստական ներուժ ունի, և լավ նախադրյալ է համայնքի զարգացման համար, բայց հարակից խնդիրներն այնքան մեծ են, որ անհրաժեշտ է սրանց զուգահեռ որոշակի միջոցներ ուղղել ավելի **հրատապ ու առօրեական խնդիրների** լուծմանը:

Էնա կգնամ **գետի** մոտ պալատկա կխփեմ կմնամ:

Ես հեռու եմ ապրում, բայց ես կուզենամ մտնել Ագարակ և **գեղեցիկ** տեսնեմ:

Ես Մեղրիի բնակիչ եմ ու **ջուրը** չեմ խմում: Տուրիստը ո՞նց է խմելու:

Ը. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Կանայք ավելի լավ կպատկերացնեն այս զբոսայգու կարևորությունը. երբ երեխաներդ հանգիստ և ապահով խաղում են, իսկ դու կարողանում ես գոնե մի քիչ հանգիստ նստել:

Ամենահրատապը գազաֆիկացումն է, քանի որ մեր խեղճ **տղամարդիկ** ամեն ամիս գազի բալոնները ուսներին գազ են բերում կենցաղային կարիքները հոգալու համար:

Պետությունը ընդամենը տասնութ հազար դրամ է տալիս **մայրիկներին**, որպեսզի նրանք մնան տանը և իրենց **բալիկներին** խնամեն:

Ծրագրում գրված է, որ 50 **կին** աշխատանք կստանա, բայց այդ համայնքում 20 կին չկա:

Ակներում առավոտյան արթնանում են, հավաքվում աղբյուրի մոտ, 4-ին մտնում գոմ: Երեխաներն էլ սովորում են այն, ինչ տեսնում են: **Կանայք** էլ, ինչ, տներում գործ են անում ու բամբասում: Ոչ մի տեղ չկա, որտեղ մարդիկ իրար հետ նորմալ կհավաքվեն, ժամանակ կանցկացնեն:

Թ. ԵՐԵԽԱՆԵՐԻ, ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Այս, այսպես կոչված, «այգին» երեխաների անվտանգության համար մեծ ռիսկ է: Մեջտեղում կուտակված քարերն ու փոսերը թակարդ են. ամառվա ընթացքում դեպքեր ենք ունեցել, որ երեխաներն ընկել են փոսը, վնասվել:

Ագարակում երեխաները շատ են, հետևաբար պետք է երեխաների մասին մտածել առաջին հերթին:

Այգու տարածքն ամայի է և շատ հարմար է կանաչապատելու և երեխաների ժամանցի համար:

Մեծ դժվարությամբ հնարավոր եղավ զբոսայգու տարածքին վերադարձնել հանրային կարգավիճակը: Հանրային զբոսայգու առկայությունը **խիստ կարևոր է համայնքի երեխաների** համար:

Ագարակի ոչ մի բակում նորմալ այգի չկա: Գործող երեքն են, որոնցից **միայն երկուսն են հարմար երեխաների համար**: Նշված զբոսայգու վերանորոգումը մի քանի բակերի բնակիչներին կսպասարկի:

Զբոսայգի ասելով չպետք է հասկանալ միայն նստարանը, **կարևոր է նաև խաղահրապարակի առկայությունը**, ինչպես նաև միջին տարիքի մարդկանց համար պայմանների ապահովումը:

Ագարակը մեր խոշորացված համայնքի ամենարագ աճող բնակավայրերից մեկն է, այն անմիջապես հարևանում է Իրանին: Այս հատվածում չկա որևէ հանգստի գոտի, այստեղ արդեն աշխատանքներ են կատարվել: Համայնքի բյուջեից մեծ գումար չի տրամադրվում, հիմնական գումարը նվիրատվություն է: Ագարակն ունի **յոթ հարյուր աշակերտ**:

Հարակից **գյուղերի բնակիչներն էլ են ուզում օգտվել զբոսայգուց**, երեխաներին խաղահրապարակ տանել: Տարբերություն չկա, Մեղրիում կլինի զբոսայգին, թե Ագարակում:

Այս զբոսայգուն շրջապատող շենքերում հիմնականում երիտասարդ ընտանիքներ են բնակվում, հետևաբար **երեխաները շատ են** ու վերանորոգված զբոսայգին շատ հարմար կլինի իրենց համար:

Ես երեխայիս վերցնում ու Կապան եմ գնում, որպեսզի **նա կարողանա կարուսել նստի**, ավազի մեջ խաղա, սղարան նստի:

Մեղրին **կարիք ունի խաղահրապարակի** և այգու:

Վարդանիձորում ունենք 165 մշտական մնացող բնակիչ, նորաստեղծ ընտանիքները 2018 թվականին ունեցել են 8 նորածին երեխա, 40 երեխա ընդհանուր: Խաղահրապարակ չունենք, երեխաները **ստիպված են գյուղապետարանի տարածքում խաղալ հողով, քարերով:**

Զբոսայգին տեղադրված է շատ **խիտ բնակեցված թաղամասում**, որտեղ **բակային տարածքներ էլ չկան**, այնպես որ դրա գործարկումը շատ կարևոր է:

Վարդանիձորն աճող գյուղ է, ի տարբերություն մյուս գյուղերի, որտեղ երիտասարդությունը թողում գնում է, մենք նույնպես **կարիք ունենք խաղահրապարակի**:

Եթե երեխաս էսօր խաղալու տեղ չունի, պետք ա՞ ինձ էդ եկամուտը... ու՞մ ա պետք էդ հարյուր հազար դրամը, թող **երեխան էդ «անդրոիդներից» կտրվի**...

Եթե անգամ **մեկով ավելի երեխա պիտի օգտվի** այս ծրագրից, ապա այն պիտի իրականացվի:

Մանկապարտեզ գնացող **երեխան զարգացվածությամբ տարբեր է լինում** շատ. մանկապարտեզի առկայությունը և հասանելիությունը շատ կարևոր խնդիր է:

Խոշորացման հրաշքը դպրոցի կառուցումն էր, շատ գոհ ենք, ժամանակին շատ երկար տարածք պետք է անցնեին երեխաները. ավելացավ աղբամաններ, լուսավորություն գյուղերում, քաղաքը բարելավվեց:

Նախակրթարանները իրենց կարևոր դերն ունեն **բնակիչների հետագա կրթության** գործում:

Ավելի լավ է մանկապարտեզ ունենանք, քան նախակրթարան:

Վարդանձիորից ընդամենը երկու երեխա է հաճախում մանկապարտեզ, այն էլ Լեհվազի մանկապարտեզ, բայց 10-12 երեխա կա գյուղում մանկապարտեզի տարիքի:

Եթե մեր մոտ մանկապարտեզ չկա և մարդիկ հեռանում են, գոնե մյուս գյուղերում թող կառուցեն մանկապարտեզ, որ իրենք մեր վիճակում չհայտնվեն:

Շվանիձորում կա տիպային մանկապարտեզ, դա **պետք է ուղղակի բարեկարգել**:

Մեր այս պահին ունենք **մի մանկապարտեզ, ու մի քանի գյուղերի մասնաճյուղեր**, այստեղ կառավարումը և վարչական ծախսերը կենտրոնացված է, և սա շատ արդյունավետ սխեմա է, այս նոր մանկապարտեզներն էլ այս սխեմայով կաշխատեն:

Այս համայնքներից երեխաները դպրոց հաճախելիս հոգեբանական տրավմա են ապրում, որովհետև **շբման, հարաբերվելու** խնդիր ունեն:

Հիմա մարդիկ անմիջապես տեսնում են **մանկապարտեզ գնացող ու չգնացող երեխայի տարբերություն**, անգամ երեխայի շրջապատ մտնելն ու բարևելը փոխվում է:

Ծնողները կկարողանան իրենց երեխաներին **ճիշտ դաստիարակություն** տալ, ծնողները կարող են **գնան աշխատելու**, հետո կարող են նորմալ ուսման տալ երեխաներին:

Քաղաքում ո՞նց են երկու - երեք կանգառ տանում երեխային: Էստեղ տրանսպորտի հարցն էլ համայնքնապետարանը լուծում է: Ի՞նչն է խնդիրը, որ երեխաներին այլ համայնք չեն ուղարկում մանկապարտեզ:

Շվանիձորն ամենաբազմամարդ և երիտասարդ գյուղն է, բայց մինչև մանկապարտեզի շենքը սարքեն, ջրի պատճառով գյուղը կդատարկվի:

Մանկապարտեզն աշխատատեղերի բացման հարց էլ է լուծում, այնուամենայնիվ սա պիտի **երեխակենտրոն դիտի,** ոչ թե ընտանիքի եկամուտների աղբյուր:

Վարդանիձորի մանկապարտեզն արդեն 7-8 տարի փակ է, անմխիթար վիճակում է, աշխատանքներ տարվում են հուսով եմ հունվարից կաշխատի:

Մի ծնողը կարող է Ալվանքից իր երեխային տանի Շվանիձորում մանկապարտեզ, մյուսը՝ տարբեր պատճառներով, դա չի կարող անել: Միգուցե անհրաժեշտ է **ավտոբուս ապահովել**, որպեսզի տարբեր համայնքներից երեխաներին հասցնի մանկապարտեզ:

Եթե երեխան մանկապարտեզ չի գնում, հետագայում **դպրոցում խնդիր է ունենում**:

Թող Ագարակը խաղահրապարակ ունենա, Մեղրին էլ շուկա:

Երխաներին ապահովենք, հետո ձեր չիրը ծախելու տեղը կսարքեք...

Որպեսզի նախադպրոցական հաստատությունների վրա ծախսերն արդյունավետ լինեն, պետք է **մասնաճյուղեր ստեղծվեն**, որոնք կկցվեն մանկապարտեզին:

Վարդանիձորն ա**ճող գյուղ է**. շատ անհրաժեշտ է մանկապարտեզ:

Մանկապարտեզը պիտի աշխատի իննից մինչև չորսն անց կես-հինգ:

Եթե **համայնքն այնքան փոքր է**, որ հազիվ երեխա կա, ո՞րն է մանկապարտեզ պահելու իմաստը...

Մենք համաձայն ենք վճարել մանկապարտեզի ծառայությունների համար, այն հնարավորություն է տալիս, որ **ծնողն աշխատի** ու եկամուտ ստեղծի ու ոչ միայն մանկապարտեզի վճարի համար:

Վարդանիձորում **արդեն կառուցվում է մանկապարտեզ**, ու դա նպատակահարմար է, քանի որ այստեղ երեխաները շատ են: Շվանիձորում էլ կա նման կարիք, նույն պատճառով:

Անկախ համայնքից, մեխանիզմներ են պետք, որպեսզի **բոլոր համայնքների բոլոր երեխաները հաճախեն մանկապարտեզ**, կլինի դա մանկապարտեզ կառուցելով, թե երեխաների համար տրանսպորտ ապահովելով:

Երիտասարդները չունեն ժամանցի որևէ վայր: Չկա սպորտի կամ այլ զբաղմունքի հնարավորություն:

Ակներում վարչական բյուջեից գումարներ են հատկացվել **նորածիններին**, ինչ-որ դժբախտ պատահարի դեպքում՝ տվյալ ընտանիքին: Բայց այս ամենը կրկին խոշորացումից առաջ:

Մենք համաձայն ենք կենտրոնին հարևան բնակավայրերի բնակիչների հետ՝ Էս խոշորացումն ապուշություն էր... Կենտրոնին տրվելու է ամեն ինչ, մեր **երեխաները** մնալու են դպրոցի դասարաններում շաշկի-շախմատ խաղալու:

Տարածաշրջանի երեխաները պատկերացում չունեն թանգարանի մասին:

Փոքր Թաղում մի բարեգործ պատմամշակութային ծրագիր էր իրականացնում, որն այս տարի կարծես կասեցվեց: Սակայն շատ կարևոր ծրագիր էր թե՛ տեղացիների, թե՛ զբոսաշրջիկների համար, որովհետև սրանով մենք **երեխաների** մեջ կրթում ենք ոչ միայն գնահատել իր մշակույթը, այլև պահպանել այն:

Մինչև Գորիսի դիտակետին հասնելը, լավ կլիներ մտածեինք, մարզի **մանկապարտեզների** մասին, երկուհարյուր հիսուն երեխա խաղալու տեղ չուն, գուցե պետք է մտածել ավելի քիչ գումարով զբոսաշրջությունը զարգացնել, մի մասն էլ ուղղել սոցիալական ծրագրերին:

Վարդանիձորում երկար ժամանակ **մանկապարտեզ** կար, ինչո՞ւ են փակել:

Եթե մարդ ուզում է գնալ և ինչ-որ գյուղում ապրել, անպայման ծանոթանում է ինֆրաստրուկտուրային՝ կա **մանկապարտեզ**, թե՝ ոչ, դպրոց, շուկա և այլն:

Ավելի լավ է Լիճքում **ճամբար** կառուցենք, որպեսզի Լիճքը չդատարկվի:

Երեխայի խնամքը մամայից լավ ոչ մեկ չի կարող անել, բայց երեխան, երբ գնում է **մանկապարտեզ**, մայրիկը հնարավորություն է ունենում աշխատել և ընտանիքի բարեկեցությունն ավելի լավացնել:

Ճամբարի կառուցումը քարանձավային մտածելակերպ է: Ճամբարը օգտագործվում է միայն ամռանը, ավելի կարևոր է **մանկապարտեզներ** կառուցել:

Բայց քանի **մանկապարտեզի** երեխա ունի Լիճքը, ընդամենը մեկ երեխա կա: Իմաստ չկա կառուցել:

Մենք ունեցել են լուրջ կրթական բազա, դիդակտիկ նյութեր, միջավայր, որտեղ հնարավոր է **երեխային կրթել՝** ցույց տալով նմուշներ, հիմա դրա հնարավորությունը չունենք:

Սահմանամերձ համայանքներում հատկապես անհրաժեշտ է **մանկապարտեզ** ունենալ, որովհետև երեխաների տեղափոխությունն արդեն անվտանգ չի: Ամեն համայնքում, անկախ երեխաների թվից, պետք է **մանկապարտեզ** լինի՝ անգամ եթե պետք է վերաբաշխել համայնքի ռեսուրսները և ստիպված անտեսել այլ, միգուցե նույնպես կարևոր, կարիքների բավարարումը:

Ագարակում, օրինակ, հայտարարություն են տալիս **մսուրային խմբի** բացման համար, եթե թիվը բավարար է լինում, ապա խումբը բացվում է:

Գյուղի զարգացման մասին չենք խոսում, գյուղի պահպանման հարց է գնում: **Մանկապարտեզն** օրհասական խնդիր Է:

Բոլորը կողմ են, որ Վարդանիձորում բացվի **մանկապարտեզ**:

Օրինակ՝ Կարճևանքում մենք նախընտրեցին կոյուղին վերանորոգելու փոխարեն խաղահրապարակ սարքել երեխաների համար, որովետև դրանով լուծեցինք նաև **երեխաների անվտանգության** հարցը՝ փողոցից բերեցինք ավելի անվտանգ տեղ: Թանգարանը ևս շատ կարևոր է, ուղղակի պետք է հասկանալ, թե բոլոր համայնքների համար առաջնային ծրագիրը որն է, ինչպիսի ծրագիրն է հնարավորություն տալու ավելի մեծ թվով բնակիչների ծառայել:

Այս ծրագրերը ժամանակատար են, տարիների հարց է. իսկ **մանկապարտեզները** հրատապ են, պետք է օր առաջ լուծել:

Մեր **երիտասարդները** երեկոյան վեցից հետո գնալու տեղ չունեն: Էս գործերին հանրության ուժերն օգտագործելը կօգնի նաև էս հարցը լուծել: Եթե ես շպակլյովկա քսեմ, մի սիրուն աղջիկ էլ սուրճը բերի, գուցե աղջիկ հավանելու հնար էլ ստեղծվի, ինչն էլ մի այլ խնդիր է երիտասարդության համար հիմա:

Մեր **երեխաները** ոչ մի օգուտ չեն ստանալու այս ծրագրերից: Միայն համայնքապետարանի համար են:

Գորիսը մեգապոլիս չի, փոքր քաղաք է, կարելի է բավարարվել միայն մեկ՝ ավելի մեծ **դպրոցով**, մնացած գումարն ուղղել այլ ծախսերի:

Երեխաներ կան, որ հնարավորություն չունեն զբաղվելու սպորտով, կմարզվեն կզբաղվեն այդ խաղահրապարակներում:

Սպորտդպրոցը բոլորին հասանելի չէ, թե՛ հեռավորության, թե՛ ֆինանսի պատճառով, խաղահրապարակները պետք են:

Երեխաները կկտրվեն ինտերնետից, կհանդիպեն, կշփվեն, ինչը մեզանում շատ քչացել է:

Մենք ունենք փոքր ֆուտբոլի դաշտեր, որոնք **գերծանրաբեռնված** են:

Սպորտով զբաղվելու խնդիր ունեն ոչ միայն **երեխաները**, նաև մեծահասակները:

Մեր մոտ ֆիզկուլտուրա առարկայի հետ կապված խնդիրներ կան, **երեխաները** փախնում են դասերից:

Մանկապարտեզների մարզադահլիճները քանդված վիճակում են, արժե՞ արդյոք գումարն ուղղել խաղահրապարակներին, կարծում եմ ոչ:

Շատ կարևոր նախաձեռնություն է, մարդիկ կմարզվեն, նոր ավանդույթ կձևավորվի առողջ ապրելակերպի, **երիտասարդները** վատ սովորությունները կթողնեն:

Կողքի բնակավայրերի երեխաներն ինչպես պիտի գան հասնեն Գորիս, մենք խնդիր ենք տեսում, որ բոլոր կենտրոնները հավաքվեն Գորիսում. հո չե՞նք կարող տաքսիով **երեխային** ուղարկել պարապմունքի, մարզման:

Ներքին Խնձորենսկի **դպրոցում** անգամ մարզադաշտ ու մարզասրահ չկա, եթե եղանակային պայմանները ներում են, մենք դրսում ենք անցկացնում ֆիզկուլտուրայի դասերը, եթե ոչ՝ խնդիր ենք ունենում:

Պետք է ուղղորդել, **երեխաներին** հանել խաղասրահներից, համակարգիչներից կտրել ու տանել խաղահրապարակներ

Կարևորը՝ մեր **երեխաները** սպորտով զբաղվելու տեղ ունենան, կարևոր չէ, թե ով է ֆինանսավորելու:

Ես սոցիալական հարցումներ իրականացնող եմ և պարզել եմ, որ մարդիկ շատ կարիք ունեն **մարզադաշտերի**, **խաղահրապարակների** և **նախակրթարանների**:

Ակներում առավոտյան արթնանում են, հավաքվում աղբյուրի մոտ, 4-ին մտնում գոմ: **Երեխաներն** էլ սովորում են այն, ինչ տեսնում են: Կանայք էլ, ինչ, տներում գործ են անում ու բամբասում: Ոչ մի տեղ չկա, որտեղ մարդիկ իրար հետ նորմալ կհավաքվեն, ժամանակ կանցկացնեն:

Նոր մարզահամալի՞ր, բայց կարելի էր մյուս բնակավայրերի **դպրոցներն** ու **մարկապարտեզները** զինել սպորտային պարագաներով, գույքով, վերանորոգել սպորտային դահլիճները:

Մեր մոտ չկա որևէ տեղ, որ **երեխաները** խաղան, գնում են ասֆալտի վրա խաղում:

Պետք է մանկապարտեզներից սկսել ներդրումները, ոչ բոլոր **մանկապարտեզներն** ունեն խաղահրապարակներ կամ նորմալ գույք:

Ակների **դպրոցը** մարզադահլիճ չունի, խաղահրապարակի փոխարեն լավ կլիներ այդ դահլիճը վերանորոգվեր:

Քարահունջի գրադարանին հարակից տարածքում հիմնականում դպրոցահասակ երեխաներն են խաղում, բայց մեծահասակները ու **մանկապարտեզի** երեխաները խաղալու տեղ չունեն:

Ես զինվորականի ընտանիքից եմ, դրսից եմ եկել, շատ դժգոհ եմ... ոչ մի բան չկա **երեխաների** զբաղմունքի ու զարգացման համար: Երեխային խմբակից հանել բերել եմ, հիմա չգիտեմ ուր տանեմ:

Երիտասարդները շատ են սիրում այդ վայրը, բայց դրա հետ մեկտեղ նաև շատ են փչացնում, չեն պահպանում, աղբն աղբամանում չեն թափում. պահակներ պետք է լինեն, հնարավոր է նաև հասարակական հիմունքներով պահակություն անեն, կամ տարածքի բիզնեսները պահակություն անեն:

Մեր գյուղի **երեխան** մակնապարտեզ չի կարողանում գնալ, դիտակետը մեր համար ի՞նչ:

Երիտասարդները քաղաքի 18 տոկոսն են, եթե նոր աշխատատեղեր բացվեն, կարող են աշխատել:

Ամոթ ա էլի, Հարթաշենը երեք գյուղի միավորումից առաջացած գյուղ է, **մանկապարտեզ** չունի: Ինքս գորիսեցի լինելով զարմանում եմ, թե ինչպես կարելի ա էդպես թողնել: Էս ա առաջնահերթությունը:

Չենք կարող տասնհինգ հազար դոլար դնել, տասը **երեխայի** համար:

Փողոցով քայլում ես, **երեխան** տեսնում է, ճաշակը զարգանում է, քաղաքային կուլտուրան շատ կարևոր է:

Երևանում ծաղիկները շատ են, Գորիսում մի ծաղիկ է աճում **երեխան** պոկում է, չի տեսել, **ճաշակ** չի զարգացել գեղեցիկը պահպանելու, քաղաքը սիրելու:

Մշակույթի տուն այցելող **երեխաները**, խմբակներից հետո այգում կարող են ժամանակ անցկացնել, կամ գրադրանից գիրք վերցնել այգում ընթերցել:

Մեր համայնքի համար առաջնային է **երիտասարդների** զբաղվածությունը, արտադրության ստեղծումը: Լավ օղի ունենք, բայց գովազդ չի արվում:

Սովետի ժամանակ կարողացել են մարդուն համոզել, որ աշխատասիրությունը լավ բան է: Եթե կարողանանք **ջահելին** համոզել, որ աշխատանքով կարող է վաստակել, միգուցե մի բան կփոխվի:

Մենք նույնպես սիրով կգնանք, **երեխաներին** կտանենք:

Ժ. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Ծերերին, թոշակառուներին ովքեր չեն կարող իրենց ապրանքը տանել հանրապետության այլ շուկաներ, մեծ օգնություն կլինի, կօգնի, որ նրանց ճանապարհածախսը կրճատել, օժանդակություն կդառնա:

Նաև **տարեցների** համար է լավ:

Սպորտով զբաղվելու խնդիր ունեն ոչ միայն երեխաները, նաև **մեծահասակները**:

Մենք որպես **ավագ սերնդի ներկայացուցիչ** մեծ հաճույքով ինքներս էլ կօգտվենք մարզահրապարակներից:

Տարեց բնակիչները զբաղված են, գոնե իրենց տնամերձ հողատարածքը լուծում է այս խնդիրը:

Ակներում մեզ խաղահրապարակ պետք չի, այլ մի սենյակ է պետք, որտեղ **տարեցները** հավաքվեն, իրար հետ նարդի խաղան:

Ի. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Այգու տարածքն ամայի է և շատ հարմար է կանաչապատելու և երեխաների ժամանցի ապահովման համար:

Ագարակի պղանձամոլիբդենային ընկերությունը **պետք է շքեղ այգի կառուցեր Ագարակում**, քանի որ իր գործունեության արդյունքում մեծ վնաս է հասցվում բնակչության առողջությանը:

Ագարակում համարյա ծառեր չկան: Զբոսայգու **կանաչապատումը կփրկի համայնքը:**

Ագարակում **էկոլոգիական խնդիր կա**, թող շատ կանաչ գոտիներ լինեն:

Գործող այգին ամբողջությամբ ծառածածկ է, պետք է մոտ **70 ծառ հատեինք**, որպեսզի ստանայինք ստանայինք այն ինչ անում ենք նոր զբոսայգում:

Գետի ջրի ոչ ճիշտ բաշխման, կլիմայի փոփոխության պատճառով **այգիների 40% չի աշխատում:**

Հանքերի, ՀԷԿ-երի պատճառով **վատացել է բերքի որակը:**

Սարերում մի որոպե քամին չի կանգնում, փոխանակ դա օգտագործեն էլեկտաէներգիա ստանալու համար, ջուրն են օգտագործում, որը հանգեցնում է բերքի ոչնչացման: Սա բարբարոսություն է:

ՀԵԿ-եր շահագործողներին պետք է պարտավորեցնել, որ իրենց հեկ-պատճառով ամայացած տարածքները իրենց միջոցներով **վերականգնեն կանաչապատ տարածքները**:

Որտեղ կա հանք այնտեղ ամեն **բնակչի հաշվող պետք է լինի 5-6 ծառ:**

Տեղի համար կասկածներ կան, բայց եթե **առյուծի բաժինը կոմբինատինն** է, թող անի:

Միևնույն է **փայտը գողանալու են**, որքան էլ միայն խոցելի խմբերին տրամադրեն:

Սանիտարական փայտը պիտանի չէ. մարդիկ կամ սեփական ծառերն են կտրում, կամ գնում եմ, կամ էլ գողանում ձմռանը տաքանալու համար:

Մինչև «դուռնուլուսամուտը» **գազաֆիկացայի հարցը պիտի լուծել**: Հա, կողմ եմ, բայց անտառահատումը նվազեցնելու համար պետք է մեղրեցուն այլընտրանք առաջարկել, օրինակ՝ գազ:

Պետք է զարգացնել այլընտրանքային **էներգիայի աղբյուրները:**

Խտացված վառելանյութ կարող են ստանալ օրինակ հացահատիկի ծղոտի վերամշակումից ինչպես օրինակ Գորիսի Տեղ գյուղում կա նման փորձ:

Ամենաշատ արևը Մեղրիում է, և այս արևից ոչինչ չվերցնելը, ուղղակի ծիծաղելի է:

Ավելորդ ծախսերի փոխարեն պետք է գումարը տրամադրել **արևայի պանելներ գնելու**, ինչն ավելի արդյունավետ է:

Պետք է պատուհանն ու վառելապայտը փոխարինել- **պատուհան և արևային վահանակներով:**

Մեղրեցիները մաքրակենցաղ ժողովուրդ են, և հենց այդ մաքրության համար շահագրգռված կլինեն անցնել արևային էներգիայի կիրառմանը:

Ապօրինի **ծառահատումներն անում են այն մարդիկ, ովքեր զորեղ են**. այս ծրագրով ծառահատումից չես փրկի:

Քննարկված ծրագրերից պետք է առանձնացնել **արևային վահանակների և պաուհանների տրամադրումը խոցելի խմբերին** տարբերակը:

Եթե համայնքում գազ լինի, ապօրինի **անտառահատումներն** էլ կկրճատվեն:

Արդյունաբերությունը **էկոլոգիական խնդիրներ** է առաջացնում, իսկ տուրիզմը հակառակը լուծում է էկոլոգիական շատ խնդիրներ:

Այս ծրագիրը լուրջ ազդեցության չի ունենա **ապօրինի ծառահատման** վրա: Հիմնականում փայտը տանում են վառելու համար:

Պետություն-համայնք-գյուղացի համագործակցություն է պետք, գնա գնահատեն անտառն ասեն **սանիտարական էտի** համար կարող եք այսքան ծառ կտրել:

Նկատել եմ, որ վաճառում են լրիվ **կանաչ ծառեր**, ոչ թե չոր ծառեր. գյուղացին, համոզված եմ, չորն է կտրում, ապօրինի վաճառողները կտրում են ինչ տեսնում են:

Մեղրիում մենակ ծառահատում են անում, **ծառատնկում** չեն անում: Հանքեր, ՀԷԿ-եր են բացում, ու փչացնում ջուրը:

Հասկանում ենք, որ պետությանը պետք են **հանքեր**, բայց ոչ այդ չափով, որ ամբողջ գյուղեր դատարկվեն:

Եթե տնտեսվարող սուբյեկտները տուգանվեն թափված **աղբի** համար, ապա Մեղրու **կանաչ գոտիները** նորմալ տեսք կունենան:

Սովետական Միության տարիներին հին այգիում ամեն ինչ էլ կար, կառուսելներ և այլն. և չեմ հիշում որ այն շատ **ծառածածկ** էր:

Ես բոլոր գյուղացիների անունից ասում եմ, որ խայտառակ վիճակ է մեր գյուղերում: **Փայտահատումն ա**րգելված է, իսկ էլեկտաէներգիայով հնարավոր չի ջեռուցել տները:

Մենք **փայտը** թողած ինչո՞վ պիտի տաքացնենք մեր տները:

Տեղում արտադրում են **բրիկետներ**, ՈՒկրաինայից ներկրում են **քարածուխ**, որը կփոխարինի ծառահատմանը: Մեկ տոննա քարածուխը 110.000 դրամ, որը կփրկի 5-6 խորհանարդ մետր ծառ:

Մենք չենք կարող վառարան չդնել, և՛ **վառելափայտին** ենք փող տալիս, և՛ հոսանքին:

Բնակիչները սովոր են գնալ **ծառը** կտրել, ոչ ոք չի կարող համոզել ծառ չկտրել, այլ քարածուխ գնել:

Փայտ գողացողը միևնույն է գողանալու է. կբերի և կվաճառի:

Լինելով բարձրլեռնային համայնք՝ մենք արդեն մեկ ամիս է՝ վառելափայտ ենք օգտագործում: Պետք է հիմա հնարավորություն ունենանք մեր համայնքի հարակից **անտառից** փայտ վերցնել:

Պլաստմասե **պատուհաններն ա**նարդյունավետ են, տները միշտ քրտնած են:

Փայտ հավաքելը քանի գնում դժվարանում է ու թանկանում, դպրոցներում փայտի վառարաններ են դրված, որը խախտում է, մենք հաշվարկել ենք, մոտ երեք մլն դրամ է պետք, որ պատուհանները փոխենք, ու դնենք էլեկտրական վառարաններ:

Դիտակետի վերականգնումը լուծում է **բնապահպանական** մեծ խնդիր. քաղաքի ռելիեֆն այնպես է, որ անձրևի հետևանքով ամբողջ քաղաքի կեղտը լցվում է դիտակետի տարածք: Հույս ունեմ, որ վերականգնումը նախատեսում է նաև սելավատարերի հարցը:

Նույնիսկ հարևան գյուղերից են գալիս Գորիսի հյուրանոցում աշխատելու: Եթե բացվեն հյուրանոցներ, ռեստորաններ, **կապրի** ամբողջ համայնքը:

Լ. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիճքի դպրոցը փակվեց, որովհետև **բնակիչ չկա**, ինչ իմաստ ունի այնտեղ փայտ տրամադրել. արդար չէ:

Խմելու ջրի հարցը **կնպաստի ծնելիության աճին**, եթե ջուր չկա, ծնելիություն չկա, ո՞ւմ համար ենք մանկապարտեզ կառուցում:

Համայնքների խոշորացումից հետ դրանք **դատարկվել են**, ծրագրերը տանում ենք առանց մարդ համայնքներում ի՞նչ անեն:

Մանկապարտեզ լինելու համար պետք է մարդիկ լինեն, հետևաբար ցախն առաջնային է:

Եթե **համայնքն այնքան փոքր է**, որ հազիվ երեխա կա, ո՞րն է մանկապարտեզ պահելու իմաստը...

Շվանիձորում եթե ջուր լինի, **երիտասարդությունն էլ կմնա**, հետագայում միգուցե մանկապարտեզի հարց էլ առաջանա:

Տուրիստը գալիս է Մեղրի, բայց այստեղ բավարար պայմաններ չկան, գազ չկա: Տեղի մարդիկ էլ են **արտագաղթում**:

Առողջությունն ավելի առաջնային խնդիր է էս պահին, քան **տուրիզմի** խթանումը: Ճիշտ կլինի գումարներն ուղղել մարզադպրոցների կառուցմանը, ոչ թե դիտակետին:

Առաջինը մեզ համար լավ պիտի լինի, տուրիստ է էլի, կգա էլ կգնա էլ:

Պետք է **մարդ լինի**, որ տուրիզմը կամ գյուղատնտեսությունը զարգանա:

Լիճքը, Տաշտունը վտանգված են, տաս տարի հետո **մարդ** չի լինի:

Ավելի լավ է Լիճքում ճամբար կառուցենք, որպեսզի Լիճքը **չդատարկվի:**

Փառք Աստծո տրանսպորտ կա, շինանյութ մատակարարվում է հետագայում արդեն կաշխատենք գյուղի ու քաղաքի տարբերությունը հասցնել մինիմալի: Կարևորը **գյուղի փրկության** հարցն է:

Հասկանում ենք, որ պետությանը պետք են հանքեր, բայց ոչ այդչափ, որ ամբողջ **գյուղեր** դատարկվեն:

Մեր **երիտասարդները** երեկոյան վեցից հետո գնալու տեղ չունեն: Էս գործերին հանրության ուժերն օգտագործելը կօգնի նաև էս հարցը լուծել: Եթե ես շպակլյովկա քսեմ, մի սիրուն աղջիկ էլ սուրճը բերի, գուցե աղջիկ հավանելու հնար էլ ստեղծվի, ինչն էլ մի այլ խնդիր է երիտասարդության համար հիմա

Գյուղացին **գյուղում** չի ուզում մնալ, քաղաքացին **քաղաքում:**

Հիմա ընտանիք չկա, որ դրսում՝ խոպանում մարդ չունենա, նման ներդրումը կնվազեցնի նաև **արտագաղթը**:

Վարդանիձորն **աճող** գյուղ է, ի տարբերություն մյուս գյուղերի, որտեղ երիտասարդությունը թողում գնում է, մենք նույնպես կարիք ունենք խաղահրապարակի:

4. Սոցիալական երկխոսություն

Ա. ԽՈՇՈՐԱՑՈՒՄ

Ինչո՞ւ կառուցել միայն Ագարակում, **Մեղրին** ունի մի քանի զբոսայգիների կարիք:

Եթե բյուջեից հատկացում է արվում այգու համար, ապա պետք է ուղղվի Մեղրիին: Ագարակում մարդիկ հնարավորություն ունեն դուրս գալու ու զբոսնելու:

Ես Ագարակից եմ, և հպարտ եմ դրանով, բայց ի՞նչ իմաստ ունի արդեն երրորդ զբոսայգին կառուցել այնտեղ, եթե **Մեղրիում նույնիսկ մի զբոսայգի չկա**:

Ողջ խոշորացված համայնքում զբոսայգու խնդիր կա: Սակայն ավելի առաջնահերթ է հենց **Մեղրիում** զբոսայգու կառուցումը:

Ագարակում զբոսայգու կառուցմանն առաջնահերթություն կարելի է տալ թերևս միայն այն դեպքում, եթե մոտ ապագայում նախատեսվի նաև Մեղրիում զբոսայգու կառուցում:

Հարակից գյուղերի բնակիչներն էլ են ուզում օգտվել զբոսայգուց, երեխաներին խաղահրապարակ տանել: Տարբերություն չկա, Մեղրիում կլինի զբոսայգին, թե Ագարակում:

Զբոսայգին եղել է, եթե **խոշորացում** չլիներ, այս այգին արդեն կառուցված կլիներ:

Այս ծրագիրը մինչև **խոշորացումն** էր նախատեսվում, սակայն դրա փոխարեն Վարդանիձորի մանկապարտեզը կառուցվեց. համենայն դեպս «լուրերն» այդպիսին են: Պիտի հասկանալ, թե խոշորացումից հետո ինչպես պետք է առաջնահերթություններ որոշվեն:

Միշտ լինում են նման հարցեր. ինչո՞ւ այստեղ լուսավորություն կա, իսկ, օրինակ, այլ բնակավայրում չկա, այսինքն, մենք՝ բոլորս միշտ **առավելությունը տվել ենք Մեղրի քաղաքին**՝ համարելով այն կենտրոն:

Խոշորացումից հետո **պետական հատկացումները քչացել** են, եթե նախկինում տրվում էր ամեն համայնքին առանձին, ապա հիմա միայն խոշորացված համայնքին, որը մի բնակավայրի էլ չի հերիքում:

Ութսունական թվականներին, Մեղրու տարածաշրջանի **բոլոր բնակավայրերում կային զբոսայգիներ,** օրինակ՝ Մեղրու ստադիոնը, ուր հիմա ամաչում ես գնալ: Դեմ չենք, որ

Մենք **մի համայնք ենք**, եկեք, ոչ թե քննարկենք, թե այստեղ չկառուցենք, այնտեղ կառուցենք: Միևնույն է միջոցները չեն հերիքելու բոլորին, եկեք քննարկումը տանենք թե ինչ կտան այս ծրագրերը մեզ, և խոսենք նոր ծրագրերի ու նախաձեռնությունների մասին:

Պետք է ընտրել այնպիսի ծրագիր, որը կընդգրկի **ամբողջ տարածաշրջանի բնակչությանը**:

Այս գումարով կարելի էր փոքրիկ այգիներ ստեղծել **բոլոր համայնքներում**, ոչ թե մեկ մեծ զբոսայգի, տարբեր ծառայություններով, բայց մեկ համայնքում:

Խոշորացման հրաշքը դպրոցի կառուցումն էր, շատ գոհ ենք, ժամանակին շատ երկար տարածք պետք է անցնեին երեխաները. ավելացավ աղբամաններ, լուսավորություն գյուղերում, քաղաքը բարելավվեց:

Չմոռանանք, որ **Արենիի շուկան լավ առևտուր է ապահովում** տեղացիներին: Տեղի ընտրությունը խիստ կարևոր է: Շուկան պիտի Մեղրիից էլ լինի մի քիչ դուրս: Մարդ կա գալիս է Ագարակ, մարդ կա գալիս է Մեղրի: Էնպես անենք, որ **բոլորը կարողանան օգտվել էդ շուկայից**:

Օրինակ՝ Կարճևանքում մենք նախընտրեցին կոյուղին վերանորոգելու փոխարեն խաղահրապարակ սարքել երեխաների համար, որովետև դրանով լուծեցինք նաև երեխաների անվտանգության հարցը՝ փողոցից բերեցինք ավելի անվտանգ տեղ: Թանգարանը ևս շատ կարևոր է, ուղղակի պետք է հասկանալ, թե բոլոր համայնքների համար առաջնային ծրագիրը որն է, ինչպիսի ծրագիրն է հնարավորություն տալու ավելի **մեծ թվով բնակիչների** ծառայել:

Առաջարկվող գումարով կարելի է մեկ ընդհանուր զբոսայգի կառուցել՝ ասենք **հինգ համայնքի համար հարմար տարածքում**, ոչ թե մեկում:

Համայնքներն ավելի համախմբված եթե աշխատեն, կկարողանան տուրիզմը զարգացնել:

Մեր **խոշորացված** համայնքում կան տեսարժան վայրեր, օրինակ Լիճքում մի քանի ջրվեժ կա: Տուրիստների մեծ հոսք էլ ենք ունենում:

Խոշորացումից հետո, օրինակ Խնձորեսկում, աղբահանությունը կազմակերպվեց վերջապես, լուսավորությունը կարգավորեցին, դա էլ խոշորացման դրական կողմերն են:

Ագարակում կառուցվի, բայց Մեղրիում էլ **զբոսայգի** պիտի կառուցվի:

Ագարակցիների համար Մեղրիում շուկան եղած-չեղած... **Լոկալ** հարց է լուծելու էդ շուկան:

Համայնքների խոշորացումը էշություն է:

Ագարակին տիպային զբոսայգի է պետք, բայց քանի որ **մյուս համայնքները չունեն**, ավելի լավ կլինի ուրիշ տեղ կառուցել:

Մենք **ապրում ենք գյուղում**, բայց ողջունում եմ նախաձեռնությունը, սիրով կգանք ժամանակ անցկացնելու:

Թող Ագարակը **խաղահրապարակ** ունենա, Մեղրին էլ՝ **շուկա**:

Կողմ եմ, որ ծրագիրը **բարձրադիր գյուղերում** սկսվի առաջնահերթ, որտեղ ձմեռները խիստ են և երկար:

Ակներում վարչական բյուջեից գումարներ են հատկացվել նորածիններին, ինչ-որ դժբախտ պատահարի դեպքում՝ տվյալ ընտանիքին: Բայց այս ամենը կրկին **խոշորացումից** առաջ:

2018-19թթ. անհատ բարերարի աջակցությամբ վերանորոգվելու է Գորիսի ֆուտբոլային դաշտը: Եվս երեքը նախատեսվում է **խոշորացված** համայնքում և դեռևս քննարկվում է, թե որ բնակավայրերում, թերևս երկուսը կլինեն այլ բնաակավայրերում:

Խոշորացված համայնք ունենալը դժվար է, գիտեն, որ գնալու են համայնքներ, խոստանան, ու չկարողանան անել:

Հիմա մեզ մոտ լճացում է, մինչև **խոշորացումը** մենք ավելի ակտիվ էինք:

Խոշորացումը որ պիտի լիներ, իբր ժողովրդի կարծիք էին ուզում հարցնել, հետո հասկացնել տվեցին, թե մեր կարծիքը ոչ ոք հաշվի չի առնելու: Իմաստը ո՞րն էր մեր կարծիքը հարցնելու: Այնինչ բոլորս դեմ ենք էս խոշորացմանը:

Երեք դպրոցներից մեկը Գորիսում կառուցելը բավարար կլինի, մնացածը **հարակից գյուղերում** կառուցելն ավելի արդյունավետ կլինի:

Մենք նույնիսկ տրանսպորտ չունենք, որ Խնձորեսկից գանք այստեղի մարզահրապարակներից օգտվենք: Թող մեր մոտ մի հատ կառուցեն, ոչ թե Գորիսում երեքը:

Կողքի բնակավայրերի երեխաներն ինչպես պիտի գան հասնեն Գորիս, մենք խնդիր ենք տեսում, որ բոլոր **կենտրոնները հավաքվեն**

Կարելի է այդ մարզահրապարակների գումարներից մի քիչ առանձնացնել Խնձորեսկում կամ Ներքին Խնձորեսկում կառուցել, որ այնտեղ էլ կառուցեն. այս բնակավայրերը իրար ավելի մոտ են:

Գրված է ստեղծել նոր մարզահամալիր, բայց կարելի էր մտածել մյուս **բնակավայրերի** դպրոցներն ու մարկապարտեզները զինել սպորտային պարագաներով, գույքով, վերանորոգեն սպորտային դահլիճները:

Պետք է կարիքների գնահատում անել Գորիս **համայնքում**: Որտեղ ընդհանրապես որևէ տեղ չկա, այնտեղ ստեղծվի:

Այս ծրագրերը պիտի գոնե մի թելով կապված լինեն գյուղական **համայնքների** հետ:

Ոչ միայն **խոշորացված** համայնքին, այլ ամբողջ Հայաստանին է պետք - խոսքը ֆիզիկական պատրաստվածության մասին է. դա բոլորին է պետք:

Միգուցե Ակների համար մարզադաշտն արդիական չի, բայց այլ համայքներ դրա կարիքն ունեն: Պետք է հասկանալ, թե Գորիսի **խոշորացված** համայնքի որ բնակավայրերը դրա կարիքն ունեն:

Այն գումարը, որը հատկացնում են դիտակետին, եթե բաժանեն **խոշորացված** համայնքների միջև, ավելի շատ օգուտ կտա:

Հարակից համայնքների համար էլ օգուտ կտա, **տուրիզմի զարգացումը,** վերջին հաշվով մենք էլ կկարողանանք գալ Գորիս, հանգստանալ, մի բան տեսնել:

Գորիսը պետք է ունենա տուրիզմի կոմպլեքս զարգացման ծրագրեր, որ բոլոր համայնքներով տուրեր կազմակերպեն, **ամեն համայնք ունենա իր բրենդը**:

Պետք է հաշվառել, թե քանի **շահառու** է օգտվում այդ մարզահրապարակներից: Դա էական է:

Գորիսում. հո չե՞նք կարող տաքսիով երեխային ուղարկել պարապմունքի, մարզման:

Գյուղերից եկողների համար մարզադպրոցը պետք է անվճար դարձնել, որպեզի այդ գումարը ծախսվի տրանսպորտային ծախսերի վրա:

Ես, որպես **սահմանամերձ գյուղի** բնակիչ, ուզում եմ, որ առանձնահատուկ ուշադրության արժանանամ ու ոչ թե սկզբում մտածեն քաղաքների մասին, հետո նոր իմ:

Համայնքների խոշորացումից հետ դրանք **դատարկվել են**, ծրագրերը տանում ենք առանց մարդ համայնքներում ի՞նչ անեն:

Ագարակը մեր **խոշորացված** համայնքի ամենարագ աճող բնակավայրերից մեկն է, այն անմիջապես հարևանում է Իրանին: Այս հատվածում չկա որևէ հանգստի գոտի, այստեղ արդեն աշխատանքներ են կատարվել: Համայնքի բյուջեից մեծ գումար չի տրամադրվում, հիմնական գումարը նվիրատվություն է: Ագարակն ունի յոթ հարյուր աշակերտ:

Վարդանիձորն աճող գյուղ է, ի տարբերություն մյուս գյուղերի, որտեղ երիտասարդությունը թողում գնում է, մենք նույնպես **կարիք ունենք խաղահրապարակի**:

Առաջարկված ծրագրերը միգուցե կարևոր են, սակայն յուրաքանչյուր **համայնքում** կան շատ ավելի առաջնային խնդիրներ, օրինակ՝ Ալվանքում խմելու ջրի հարցը, որն ազդում է երեխաներին պարտադիր տաք սննդով ապահովելու խնդրի վրա:

Ամեն մարդ **իր համայնքի** առանձին հարցերն ունի, դժվար է ասել, որն է առաջնային:

Յուրաքանչյուր **համայնքի** ղեկավար առաջին հերթին ուշադրություն է դարձնում իր բնակավայրին:

2017-2018 թվականներին **Ագարակին** համարյա բյուջե չի հատկացվել:

Երբ իմանում ենք, թե ինչպես են բյուջեն բաժանել, միշտ հարց է առաջանում – ինչո՞ւ հենց այդպես: Շատ դեպքերում մենք չենք հասկանում բյուջեի բաժանման **օրինաչափությունները:**

Խոշորացման արդյունքում համայնքնապետարաններում ներդրվել են կոմունալ աշխատողների հաստիքներ, բայց իրենք չեն աշխատում:

Առանձին-առանձին տուժել ենք, գուցե մի մեծ ծրագիր իրականացվի, որ **բոլորիս** վրա ազդի:

Դիտակետի և ընդհանրապես զբոսաշրջության զարգացումը կնպաստի նաև **հարակից համայնքներին**, որոնք կարող են գյուղմթերք իրացնել, հյուրատներ առաջարկել: Սակայն, որպեսզի զարգացումը համաչափ տեղի ունենա, պետք է քվոտաներ առաջարկել համայնքներին:

Գորիսում մենք փորձում ենք հասկանալ, թե **գյուղերում** մարդիկ ինչ խնդիրներ ունենք, որպեսզի մենք էլ համապատասխան ռեսուրսները տրամադրենք:

Գորիսի վրա ամբողջական գումարի տասը տոկոսն է **ծախսվում**:

Այստեղ խոսում ենք Գորիս բնակավայրի մասին, բայց **խոշորացված** համայնքից մնացած բնակավայրերին անդրադարձ չկա:

Համաձայն ենք հարևան բնակավայրերի բնակիչների հետ՝ Էս **խոշորացումն ա**պուշություն էր... Կենտրոնին տրվելու է ամեն ինչ, մեր երեխաները մնալու են դպրոցի դասարաններում շաշկի-շախմատ խաղալու:

Էլի խոսում ենք կենտրոնի ճեմուղու զարգացման մասին, իսկ փողոցներն, ուր ապրում է **համայնքի բնակիչը**, դրանք ինչու՞ ենք անտեսում:

Երբ մենք կենտրոնանում ենք Գորիսի վրա, **մյուս բնակավայրերի** խնդիրները կորում են:

Ներքին Խնձորեսկում վերջին տասնհինգ տարում ոչինչ չի ծախսվել:

Մարզպետարանի ներկայացուցիչ չենք տեսնում համայնքում, միայն Գորիս քաղաք են գալիս **խոշորացումից** հետո: Շատ պասիվ են:

Խոշորացումը չի կարող արդյունավետ լինել, քաղաքի հոգսն ուրիշ է, գյուղինը՝ ուրիշ:

Խոշորացումից հետո անգամ փոքր փոսերը չեն լցվում այլևս, մինչև **խոշորացումը** համայնքային բյուջեով գոնե մեկ-մեկ փոս էին լցնում, ժամանակավոր ինչ-որ հարցեր էին լուծվում:

Անգամ քաղաքի **ծայրամասային** թաղամասերն են ծանր վիճակում, էլ ինչ խոսք **գյուղերի** մասին:

Ակներում առավոտյան արթնանում են, հավաքվում աղբյուրի մոտ, 4-ին մտնում գոմ: Երեխաներն էլ սովորում են այն, ինչ տեսնում են: Կանայք էլ տներում գործ են անում ու բամբասում: Տեղ չկա, որտեղ մարդիկ նորմալ հավաքվեն, ժամանակ անցկացնեն:

Ողջունում ենք առողջ ապրելակերպը, բայց մեծ խնդիր է միջոցառումների բաշխվածությունը Գորիս **համայնքում**:

Վերինշենում նախկին տնօրենն ինչ սարքել է, այնպես է սարքել, որ մնա Վերինշենին: Ակները շատ մոտիկ **համայնք** է, բայց գրեթե ոչնչից չի կարողանում օգտվել:

Խնձորեսկն, Քարահունջն էլ քարանձավներ ունեն, էլի **կենտրոնացել** ենք Գորիսի վրա:

Եթե բարերարները քաղաքը նորոգում են, ինչո՞ւ **գյուղը** չեն նորոգում: Հարուստին կատվի նման պիտի փիսիփիսի անես:

Մենք անընդհատ խոսում ենք Գորիս քաղաքի մասին, դա ինձ շատ է մտահոգում, բա **մյուս բնակավայրերը...**

Պետք չի էնպես անել, որ ամեն ինչ կենտրոններում է կենտրոնացած: **Պետք է մի քիչ ցրել:**

Բացի Գորիս քաղաքից, ևս **երկու բնակավայր** կունենան մարզադաշտեր և խաղահրապարակներ:

Կարելի է մտածել սահմանափակ ռեսուրսներն ինչ-որ հարաբերակցությամբ բաշխել նախկին **համայնքների** մեջ:

Ավելի լավ է փոքր արժեքով շատ տեղեր սարքել: 45 միլիոնով կարելի է բոլոր **համայնքներում** ներդրումներ անել:

Նույնիսկ հարևան գյուղերից են գալիս Գորիսի հյուրանոցում աշխատելու: Եթե բացվեն հյուրանոցներ, ռեստորաններ, կապրի **ամբողջ համայնքը**:

Եթե Գորիսն ուժեղ համայնք լինի՝ հստակ զարգացման տեսլականով ու քարտեզով, **գյուղերն էլ կզարգանան**, որովհետև այդ զարգացման համար անհրաժեշտ նախաձեռնությունները կպատվիրակվեն ըստ ամեն գյուղի առանձնահատկությունների:

Տնտեսական զարգացման ծրագրեր իրականացնելով՝ մեծանում է ամբողջ համայնքի բյուջեն, որն արդեն հնարավոր կլինի **վերաբաշխել ըստ գյուղերի** կարիքների, օրինակ՝ եթե մեկին կոմբայն է պետք, կապիտալ ծրագրի արդյունքում ստացված ֆինանսական ռեսուրսներով արդեն կարող ենք այդ կոմբայնն առնել:

Պետք է **կենտրոնի** վրա գումար դնել, որ կամաց-կամաց ընդլայնվի. իսկ եթե ծայրամասերում գումար դնենք, մինչև մյուս հարցերին ենք հասնում, նոր խնդիրներ են առաջանում:

Այս տարի Գորիսը **մշակութային** մայրաքաղաք էր, մենք զիջեցինք, որ ներդրումներն արվեն հենց Գորիս քաղաքում: Բայց հաջորդ տարի այդպես չպետք է լինի:

Խոշորացումից շահել է Գորիսը, տուժել՝ Ակները...

Դուք այստեղ խոսում եք բյուջեն կենտրոնում տուրիզմը զարգացնելու համար, իսկ **ծայրամասային գյուղերն** ի՞նչ ասեն, իրենք բանտարկյալ են, իրենց վրա գումար չծախսե՞ն:

Ակներում գրեթե ոչ մի ծրագիր չի իրականացվում... կամուրջ են կառուցում, Ակները ոչ մի կապ չունի, եկեղեցի են վերանորոգում...

Այս ծրագրերում խոսվում է միայն Գորիս քաղաքի մասին, այլ **ոչ թե համայնքի**: Բոլոր ներդրումները Գորիս քաղաքին են ուղղվում:

Տպավորություն է, որ **այլ բնակավայրերում** խնդիր չկա, ու ամեն ինչ կենտրոնանում է Գորիսում:

Գյուղը միշտ անտեսվում է... ինչ արվում, քաղաքացու համար է արվում:

Քաղաքից հեռու **գյուղերը** ծանր վիճակում են, պետք է այնտեղ պայմաններ ստեղծել: Քաղաքում ինչ-որ կերպ ապրում ենք:

Քաղաքի ու **հարևան բնակավայրերի** մեջ մեծ տարբերություն կա, թեկուզ Գորիսում կառուցվի համալիրը, բայց գոնե տրանսպորտի հարցը լուծվի, հարևաններն էլ հնարավորություն ունենան մասնակցելու:

Եթե մենք **գյուղ** ենք ու մեր մոտ քիչ մարդիկ են ապրում, ուրեմն մենք իրավունք չունե՞նք մարզահրապարակ ունենալու:

Ակների բնակիչը չի կարող ոչինչ ասել Գորիս քաղաքում կատարվող փոփոխությունների մասին:

Մենք մեր երկրում ունենք **ապակենտրոնացման** խնդիր: Արդյունքում հեռավոր գյուղերն են դատարկվում. ռազմավարական խնդիր է:

Եթե փոփոխություններ պետք է արվեն **միայն Գորիս** քաղաքում նաև մեր տված հարկերից, մենք դեմ ենք:

Համայնքում բազմաթիվ խնդիրներ կան, օրինակ կոյուղին, Խնձորեսկում ջրի խնդիր ունենք, Քարահունջում խմելու ջրի ցանցն անբարեկարգ է, իսկ մենք խոսում ենք ճեմուղու մասին, որը կարծես մեծ ազդեցություն չի ունենալու:

Ագարակում արդեն շատ աշխատանք է կատարված զբոսայգու համար, եթե չկառուցենք, կպարզվի այդ **գումարն անիմաստ է ծախսվել**:

Ագարակի ոչ մի բակում նորմալ այգի չկա: Գործող երեքն են, որոնցից **միայն երկուսն են հարմար երեխաների համար**: Նշված զբոսայգու վերանորոգումը **մի քանի բակերի բնակիչներին կսպասարկի:**

Ամենամոտ համայնքը Կճևանն է, որտեղից Ագարակ հյուր գնալիս **կարելի է այդ զբոսայգում հանգստանալ,** հանդիպել ընկերներ-բարեկամի:

Ագարակում հին զբոսայգի էլ կա, որի **բարեկարգումն ավելի թանկ կլինի**:

Սուբվենցիոն ծրագիրը մշակելիս հաշվի է առնվեն նաև **համայնքի կողմից համաֆինանսավորումը:** Ագարակում արդեն որոշակի քայլեր արվել են այս ուղղությամբ, այնինչ Մեղրիում զբոսայգու կառուցումը պետք կլիներ սկսել զրոյից: Հետևաբար ավելի նպատակահարմար կլիներ զբոսայգին **կառուցել հենց Ագարակում:**

Ցանկացած նոր բան կառուցելիս պետք է նաև հաշվի առնենք, որ դա հետո ծախսեր է առաջացնելու՝ **պահպանման ծախսեր:**

Այս ծրագրում ընդգրկված **շահառուների թիվը բավականին փոքր է:**

Էական չէ, որտեղ կլինի զբոսայգին: Ագարակի Մշակույթի պալատի հարևանությամբ կա մեծ տարածք, որտեղ **կարելի է զբոսայգի կառուցել:**

Հայանտառին թույլատրվում է սանիտարական մաքրումներ իրականացնել: Եթե Մեղրին լինի գազաֆիկացված, սանիտարական հատումները **կբավականացնեն մնացած գյուղային համայնքներին,** որտեղ գազաֆիկացնելը դժվար է: Հակառակ դեպքում միայն սանիտարական հատումներով ողջ բնակչության տաքացման հարցը չի լուծվի:

Իրականում ամոթալի ա էն փաստը, որ **Իրանի կառավարությանը մեր համար ավելի շատ ա մտածում**, քան մեր կառավարությունը: Իրանական կողմը երկու միլիոն դոլար փող է ծախսել մեր գազատար խողովակների համար:

Շատ կարևոր է **հասկանալ, թե ովքեր են իսկապես խոցելի**... Ոչ թե ծանոթ-բարեկամով որոշված «խոցելին», այլ իսկապես կարիքավոր

Ինչո՞ւ կառուցել միայն Ագարակում, Մեղրին ունի մի քանի զբոսայգիների կարիք:

Ագարակի դպրոցի հին մասնաճյուղն անմխիթար վիճակում է, ավելի լավ կլինի, մտածել **դպրոցի վերակառուցման ու վերանորոգման** ուղղությամբ:

Ագարակում կա երկու զբոսայգի, ավելի նպատակահարմար կլիներ **բարեկարգել զբոսայգիները**, այլ ոչ թե նորը հիմնել:

1.20 մետր բարձրությամբ պատով ցանկապատված զբոսայգու հենց կենտրոնում մի այլ ցանկապատ էլ կա, որն անհասկանալի է, թե ինչու համար է նախատեսված: Առկա նախագծով մի շքեղ այգի է նախատեսվում, սակայն **կարելի է ուղղակի հարթեցնել զբոսայգու տարածքը**, անվտանգ դարձնելով երեխաների համար, կանաչապատել և **խնայված փողերով կառուցել փոքրիկ բակային այգիներ** նաև այլ համայնքներում:

Մեղրիում կա բավականաչափ մեծ տարածք, որը **երիտասարդները մաքրում են, խնամում:** Կարելի է որոշ ժամանակ անց ավելի մեծ բյուջեով այդ տարածքում զբոսայգի կառուցել:

Ամեն ինչը ֆինանսի է տանում, եկեք օրինակ մի շաբաթօրյակ կազմակերպենք, մարդիկ գան իրենք իրենց **համայնքին օժանդակեն**, «շպակլյովկա» էլ կքաշեմ, ինչ ա եղել... Էս թանգարանն առանց էդ կարգի մեծ ծախսերի էլ կարելի կլինի գլուխ բերել:

Տուրիզմը պետք է զարգացնել, այլ ոչ թե արդեն զբոսայգի ունեցող համայնքում զբոսայգի կառուցել:

Ասենք մի տարի հարցը լուծվեց, բա հաջորդ **տարի՞**...

Գյուղատնտեսություն-տուրիզմ փոխկապակցված են, այս ոլորտների վրա պետք է ուշադրություն դարձնել. հետո արդեն մյուս հարցերը ընթացքում կսկսեն լուծվել:

Լավ կլինի, որ թանգարան ունենանք, բայց դա միմիայն համայնքում մնացած ավելի **արդիական հարցերը** լուծելուց հետո:

Կարծում ենք, որ եթե դրվի հանրաքվեի, ապա մարդիկ դեմ են լինելու այս ծրագրի

մարդկանց: Իսկապես կան նման մարդիկ, ձմռանը տանը նստած սառում են, ու շատ լավ կլիներ նրանց օգնել թեկուզ այսպես:

Պիտի հստակ սահմանվի, թե ովքեր են **խոցելի խմբերը,** դա էլ դառնալու է խնդիր, մարդիկ իրենք գույքը գրելու են ուրիշի վրա, որ նպաստ ստանան, զավակին գրանցելու են այլ տեղ, որ միայնակ դառնան:

Այս գումարի նպատակային իրացումը պետք է **վերահսկել**, որպեսզի հավաստիանանք, որ ամեն մի դրամն իսկապես ծառայել է իրական կարիք ունեցող մարդու կարիքների բավարարմանը:

Որքան էլ **տուրիզմը զարգանա**, մինչև գյուղատնտեսությունը զարգացած չլինի, գումարները կկորեն:

Պետություն-համայնք-գյուղացի **համագործակցություն է** պետք, գնա գնահատեն անտառն ասեն սանիտարական էտի համար կարող եք այսքան ծառ կտրել:

Շվանիձորում մի լողավազան վերանորոգվեց, որի համար Մեղրում մի կազմակերպություն պահանջում էր վեց միլիոն դրամ: Շվանիձորցիք **հավաքվեցին** և յոթ հարյուր հազար դրամով արեցին գործը:

Եթե Շվանիձորի տարածքի հինգ տաղավարների վրա ծախսվի **ընդամենը կես մլն դրամ**, դրանք կդառնան մեկօրյա հանգստի հրաշալի վայրեր:

Զանգեզուր ԿՀՆ Արևիկ մասնաճյուղը մի փորձ արեց, **ճամբար** հիմնեց երեք հազար դրամ վճարով՝ սանհագույց, գիշերակաց, վայֆայ՝ ընդամենը երեք հազար դրամով, հիսուն միլիոնից քիչ փոխանցեն այդ կազմակերպությունը, այն շատ լավ կկազմակերպի գործը շատ ավելի **քիչ միջոցներով** ու արդյունավետությամբ:

Ծրագիրը բարձրադիր գյուղերում **առաջնահերթ է**, որտեղ ձմեռները խիստ են և երկար:

Եթե մի կենտրոն ստեղծվեր, որ զբաղվեր **տուրիզմի** զարգացման խնդիրներով, այն մի հետազոտություն անցկացներ, խորհուրդ տար, թե որտեղ, ինչը վերանորոգեն, տուրիստին խորհրդատվություն տար, դա կարող էր ավելի լավ ազդեցություն ունենար տուրիզմի զարգացման վրա:

Դիտակետի կառուցումից էնպես չի, թե հսկայական **տուրիստական բում** է տեղի ունենալու էս կողմերում: Կարելի է հետո էլ դրան ուշադրություն դարձնել:

իրականացմանը, մարդիկ տաքանալու, այգիները ջրելու, այլ **խնդիրներ** ունեն:

Բնակչությունը ոչ թե դեմ կլինի թանգարանի ստեղծմանը, այլ բազմաթիվ այլ խնդիրների մեջ **առաջնահերթությունների** հարց կառաջանա:

Այս ծրագրերը մեր իրական **կարիքներին** չեն համապատասխանում:

Էս տուրիզմի ծրագրերը լավ են, բայց պիտի մի քանի տարի սպասենք, որ զարգանա, փող բերի, իսկ մինչ այդ մենք պիտի **շարունակենք ապրել**, ջուր խմել, երեխաներին դպրոց ուղարկել, առողջությունը պահպանել:

Իսկ ո՞վ է ասել, որ տուրիզմը պետք է միայն կենտրոնում զարգացնել, **ծայրամասային գյուղերը** նույնպես շատ պոտենցյալ ունեն:

Երեք դպրոցներից մեկը Գորիսում կառուցելը բավարար կլինի, մնացածը հարակից գյուղերում կառուցելն ավելի **արդյունավետ** կլինի:

Ինչպես են ընտրել քանի խաղահրապարակ կառուցել: Գուցե ամեն մեկից մի քիչ **կրճատել**, որ մի չորս կամ հինգ լինի: Ավելի լավ է շատ և փոքր, քան շատ մեծ ու քիչ:

Գյուղերում կարելի է ոչ թե նոր խաղահրապարակներ կառուցել, այլ դպրոցամերձ տարածքները **հարմարեցնել**: Իհարկե ուզում ենք նորը կառուցել, բայց բյուջեն սահմանափակ է:

Դիտակետից շատ մարդ է իրեն գցում, Կիևյան կամուրջն է դարձել: Պետք է **անվտանգ** դարձնել:

Եթե մասսայական վայր լինի, մարդիկ այնտեղից այդքան **ինքնասպանություն** չեն գործի նաև:

Անմիջապես դիտակետի մոտ կա ֆուտբոլի դաշտ, լավ կլինի դա էլ **բարեկարգեն**:

Պետք է բյուջեն այնպես ծախսել, որ այդ **գումարը մեծանա** և երբ ավելանա, համամասնորեն բաժանենք:

Մենք նույնիսկ տարածքներ ունենք, որոնց վրա **քիչ գումար** ներդնելով կարելի է հարմարեցնել, դարձնել **խաղահրապարակ**:

Մեծ գումարը չի կարելի **բաժանել** շատ մանր մասերի, փոշիանում է. ես եղել եմ նաև կոմունիստ ու դա շատ լավ գիտեմ:

Գ. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Մինչև ընտրեն ու ծրագրերը իրականացնեն, մենք էլ չենք լինի:

Էդ ո՞ր կազմակերպությունն է, տեսնես, որին երկու միլիոն դոլար գումար են հատկացրել, որ ամբողջ համայնքը գազաֆիկացվի, էսօր էդ գործն արված չի: Պետք է սա **հետաքննել, հասկանալ,** թե ինչպես է դա տեղի ունեցել:

Մենք **վստահ** ենք, որ բյուջեից տուրիզմի համար ներդրված գումարը հետ է գալու ավելի շատ:

Մենք էս շրջանում ունենք դրական **տրամադրվածության խնդիր**: Մարդիկ վատատեսորեն են նայում շատ խնդիրների: Համայնքապետին չսիրողն էլ չի ուզում համայնքի խնդիրներին խառնվի: Բայց ախր քաղաքապետն

Խոշորացումից հետո **պետական հատակցումները քչացել** են, եթե նախկինում տրվում էր ամեն համայնքին առանձին, ապա հիմա միայն խոշորացված համայնքին, որը մի բնակավայրի էլ չի հերիքում:

Երբ իմանում ենք, թե ինչպես են բյուջեն բաժանել, միշտ հարց է առաջանում - ինչու հենց այդպես: Շատ դեպքերում **մենք չենք հասկանում բյուջեի բաժանման օրինաչափությունները:**

Ո՞վ է խոցելի խումբը. խնդիրը նրանում է, որ միշտ չի որ խոցելի խմբին է հասնում փայտը:

Շատ կարևոր է **հասկանալ, թե ովքեր են իսկապես խոցելի**... Ոչ թե ծանոթ-բարեկամով որոշված «խոցելին», այլ իսկապես կարիքավոր մարդկանց: Իսկապես կան նման մարդիկ, ձմռանը տանը նստած սառում են, ու շատ լավ կլիներ նրանց օգնել թեկուզ այսպես:

Սցենարները դրական են հնչում, բայց **հույս** չեն ներշնչում:

Ես Համայնքի ղեկավար եմ, բայց այս թվերը տեսնում եմ ու **զարմանում**:

Պետք է համայնքապետարանին հարցնենք՝ այս բյուջեն Ձեզ ո՞րտեղից, եթե ցանկացած կարևոր հարցով դիմում ենք, ասում են՝ **բյուջե չկա:**

Մեզ անհրաժեշտ են մաքուր, իրենց պարտականությունները կատարող **համայնքի ղեկավարներ**, մենք կունենանք նորմալ հանգստյան գոտիներ:

Մեր երեխաները ոչ մի օգուտ չեն ստանալու այս ծրագրերից: Մենակ **համայնքապետարանի** համար են սրանք:

Ռիսկային մեծ ներդրում է, կարծում եմ չարժի:

Այս ծրագրերը մեր իրական **կարիքներին** չեն համապատասխանում:

Եթե հարցնում եք ընտրել նույն է, թե ասես, եթե հաց տանք, հետո ջուր կուզես խմել, թե գնալ զուգարան. դե ընտրեք:

Մենք հիմա խոսում ենք **ֆանտաստիկ** ժանրից:

Հարթաշեն գյուղի դպրոցի սպորտի դահլիճը վաղուց անմխիթար վիճակում է, վերանորոգելու համար միշտ ասում են, որ միջոցներ չկան, հիմա այդ մի փոքր խնդիրը չեն կարողանում լուծել, էտ բազմամիլիոն ծրագիրն **ինչպե՞ս են անելու**:

Ես՝ որպես գյուղական համայնքի բնակիչ, միշտ բողոքում եմ, որ չեն **հարցնում**, թե ինչ խնդիրներ ունեմ: Պիտի գան, կարիքների գնահատում անեն, գոնե գրեն մեր խնդիրները:

էսօր կա, վաղը չկա: Պիտի մեր վերաբերմունքը փոխենք:

Ամեն ինչ հնարավոր է անել, ժողովուրդ ջան, մնում է միայն դրական **տրամադրվածություն** ունենանք:

Այս գումարի նպատակային իրացումը պետք է վերահսկել, որպեսզի հավաստիանանք, որ ամեն մի դրամն իսկապես ծառայել է իրական կարիք ունեցող մարդու կարիքների բավարարմանը:

Համայնքի բյուջեն պիտի **վերահսկվի** բնակիչների կողմից:

Պետք է **բացառվի մենաշնորհային մոտեցումը**, այսինքն գրանտ չստանան ու բերեն մի երկու ռեկլամային ցուցանակ դնեն ու ամբողջ ծրագրից օգտվեն մի հինգ հոգի:

Պետք է բնակչության գիտակցությունը բարձրանա, որ **վերահսկողություն** իրականացնի բյուջեի նկատմամբ:\

Անցած տարի բյուջեի քննարկումը **բոլոր բնակավայրերում չի եղել**: Մի անգամ կարելի է Քարահունջում անցկացնել, մյուս անգամ՝ Վերիշենում, որ ժողովուրդը մասնակցի, իմանա՝ ինչ է կատարվում:

Քաղաքացին պիտի **իմանա**, թե ուր է իր վճարած հարկը:

Համայնքապետարանը իր ֆեյսբուքյան էջով տեղեկացնում է Դիտակետի աշխատանքների վերաբերյալ: Բոլոր քաղաքացիներն էլ **տեղյակ** են ու գոհ են:

Դիտակետի մակետը շատ հետաքրքիր է ու **հասանելի** է ինտերնետում:

Խնձորեսկի ջրի հարցը լուծվել է, բնակչությունը ճանապարհը փակել էր, եկան մարզպետարանից, համայքապետարանից **խոստացան** հարցը լուծել:

Գյուղացին պետք է ոչ թե հավատա իր ապագային, այլ **տեսնի** այդ ապագան: Քո առաջարկած ծրագիրն անկախ նրանից, թե ինչքան լավն է, պետք է գյուղերում ընկալվի որպես այդպիսին:

Այս ծրագիրը նման է նրան, որ ես ծառ տնկեմ, հետո իմ երեխան վայելի:

Պարտադիր չէ, որ **համայնքի ղեկավարը** ինքը գա ժողովրդից հարցնի խնդիրները, կարող են ուրիշ մասնագետներ էլ գան:

Կոմբայնն ինձ այս գարնանն է պետք, ձեր ծրագիրը քանի՞ տարի հետո պետք է գումար բերի: Իսկ եթե այդ կապիտալ ծրագրերը **չարդարացնե**՞ն ակնկալիքները:

8800 մ կտրտված հողեր են, մի մասը կպած է Շինուհայրին, ասում են դուք օգտագործեք: Ինձ ընդհանուր հող է պետք, թեկուզ ամենավատը, բայց իրար հետ **պայմանավորվել** չի լինում:

Գորիսը կենտրոնում դնելը պայմանավորում եմ ավագանու **պասիվությամբ**:

250 աշխատատեղն **անիրատեսական** է, հիմնավորված չէ: Բոլոր ծրագրերի արդյունքում հազիվ այդքան աշխատատեղ ստեղծվի:

Ակներ մարզպետը մի անգամ է մտել, տեղն էլ չգիտեն: Ընտրությունից ընտրություն մեկը գալիս է, ինչ-որ բան խոստանում ու գնում, ոչ մի ծրագիր **չի իրականացվում** մեր համայնքում:

Խոշորացված համայնք ունենալը դժվար է, գիտեն, որ գնալու են համայնքներ, **խոստանան**, ու չկարողանան անել:

Խոշորացումը որ պիտի լիներ, իբր ժողովրդի կարծիք էին ուզում հարցնեին, հետո էլ հասկացնել տվեցին, թե մեր կարծիքը ոչ ոք հաշվի չի առնելու: **Իմաստը** ո՞րն էր մեր կարծիքը հարցնելու: Այնինչ բոլորս դեմ ենք էս խոշորացմանը:

Մեղրին **անտեսված** գոտի է Հայաստանի համար: Մենք մեզ այդպես ենք զգում:

Գորիս քաղաքի հանդեպ **ուշադրությունը** զգացել ենք միայն վերջին մեկ տարում:

Այս շուկայի **գոյությունն անհնար** է, քանի որ մեղրեցին իր ապրանքը **երկու անգամ ավելի թանկ** վաճառում է Երևանում:

Մեղրեցին **այսպես թե այնպես իրացնում է իր ապրանքը**, հետևաբար այս հարցն առաջնային չէ:

Եթե նույնիսկ դիտարկենք **զբոսաշրջության զարգացման տեսանկյունից**, ապա զբոսաշրջիկներն արդեն գիտեն այն տները, որտեղից գնում են անհրաժեշտ ապրանքները:

Տարածաշրջանում արտադրվող գյուղմթերքն արդեն ունի իր սպառումը: Մեղրիում արտադրված **ոչինչ պահեստում չի մնում:**

Իսկ **ովքե՞ր են օգտվելու** այդ շուկայից, այս հարցի պատասխանը պետք է հասկանանք:

Գյուղ կա, որտեղ բոլորը պայմանավորվում են **նույն մթերքը վաճառել մեկ գնով**, բայց իմ գյուղում նման բան չկա, և շատերը տուժում են. ես չեմ կարողանում իմ ապրանքն իր ինքնարժեքով անգամ վաճառել:

Ես, օրինակ, **աշխատող չեմ կարող պահել**: 500-1000 չիր եմ պատրաստում, բայց արդեն տանում եմ Երևան 3000-ով վաճառելու: Էլ ինչո՞ւ է պետք գյուղատնտեսական շուկան:

Օրինակ ես ստանում եմ մեկ տոննա արքայանարինջ, ինչի պետք է կանգնեմ Մեղրիում վաճառեմ 350 դրամով, եթե կարող եմ տանել Երևան, հանձնել 800 դրամով և հետ վերադառնալ:

Իրականում միրգը հենց **տեղում է վաճառվում**: Համաձայնվեք, որ մենք **իրացման խնդիր չունենք**:

15 տաղավարը մեր տարածաշրջանի համար **գրեթե ոչ մի խնդիր չի լուծելու**:

Մեղրին **ինքնաբավ համայնք** է, այստեղ մեծածախ վաճառքը չի աշխատի:

Դուք կարծում եք, թե այս շուկան ստեղծելով **այդքան սպառող ենք ունենալո՞ւ:**

Մի ժամանակ գյուղ մտնող մեքենային ասում էինք **500 դրամ մուծեք,** գալիս եք ապրանք փոխելու, աղմուկ բարձրացվեց, ասում էին մենք չգանք դուք կմեռնեք:

Քաղաքացին **գնելու է հենց բնակչից**, ու՞մ համար է շուկան: Մենք չենք օգտվելու դրանից:

Մեր **գյուղմթերքը թանկ** է, գնորդ չկա:

Եթե համեմատենք զբոսայգու հետ, միանշանակ **շուկան առաջնային** է:

Խոշոր ֆերմերները, որոնք հնարավորություն ունեն **պահելու գյուղմթերքը և վաճառելու** ավելի բարձր գնով, ավելի են շահելու գյուղատնտեսական շուկայից:

Գյուղատնտոսական **շուկայի կարիքը** վաղուց ունեինք:

Մենք շուկայի հիմնումով կստեղծենք **միասնական գնագոյացման դաշտ**, այսինքն մեկը կարող է Շվանիձորից թուզ առնի մի այնպիսի գնով, որն այլ վաճառողներ տալիս են ավելի էժան:

Մեղրեցիները չունեն իրենց ապրանքը վաճառելու խնդիր: Բայց կարելի է ամբողջ **գործընթացն ավելի ցուցադրելի դարձնել**, օրինակ չրի պատրաստման գործընթացը տեսանելի լինի բոլորի համար:

Մենք ստիպված ենք լինում ոչ շահավետ պայմաններով **փոխանակում** կատարել, որովհետև վաճառել չենք կարողանում:

Թող Ագարակը խաղահրապարակ ունենա, Մեղրին էլ **շուկա**:

Չիրը Երևան հասցնելու համար մեծ միջոցներ են պահանջվում: Նախընտրելի կլինի մոտակայքում **շուկա** ստեղծել:

Խոշորացված համայնքում կենտրոնացված շուկան պարտադիր պետք է **ունենա փորձաքննության կետ,** ինչը կբացառի անորակ ապրանքների վաճառքը: Հետևաբար ներդրումների ծավալը, հնարավոր է, ավելին պիտի լինի, քան նախատեսված է այժմ:

Երևանից եկողը գալիս ընկնում է գյուղերը տանից-տուն ու չգիտես ի՞նչ գնով ի՞նչ ապրանք է առնում տանում, շուկան կօգնի, որ **գնորդը մի տեղ ունենա:**

Հյուսիս-հարավի յոթանասուն մետր տարածքում **օրենքով արգելվում է կառուցապատում**, որը խոչընդոտում է առևտրի զարգացմանը Մեղրիում:

Բոլոր մարդիկ չէ, որ կարող են ապրանքը հասցնել Երևան: Դժվարություններ ունեցողները **պետք է հնարավորություն ունենան** այս տարածքում իրացնել ապրանքը:

Շուկայի փոխարեն ավելի լավ կլիներ **մթերող կազմակերպություն ստեղծվեր**, որը կմթերեր այստեղ արտադրվող գյուղմթերքը:

Շուկան չի արդարացնելու, գյուղացին հնարավորություն չի ունենալու արկղերով բերել ապրանքը շուկա, այդ **տաղավարների մեծ մասը չեն զբաղեցվելու**: Սա լուծում չի մեծածախ վաճառողի ու արտադրողի համար:

Մեղրու ազատ գոտին կա, այնտեղ կարող են առևտուր անել:

Ամեն մի **մեղրեցու այգին մի շուկա** է, տուրիզմը զարգացած չէ, ավելի լավ է գան մեզանից առնեն:

15 տաղավարը **շատ փոքր է** Մեղրիի համար:

Երխաներին ապահովենք, հետո ձեր **չիրը ծախելու** տեղը կսարքեք...

Միջսահմանային շուկան կար, բայց չիմացանք ինչ պատճառով փակվեց:

Մեզ մոտ **բանջարեղեն գրեթե չի արտադրվում**. ամեն մեկն իր համար արտադրում ու սպառում է: Եղածի համար խանութները բավարար են: Անիմաստ է շուկա կառուցել: Թերևս դա միայն տուրիստների համար է լինելու:

Ես ինքս իրացնող եմ: Ես **արդեն իմ հաճախորդներն ունեմ**, ում հետ տարիների ընթացքում ստեղծված հարաբերություններ կան ու բնականաբար, իմ չիրը չեմ տանելու շուկա: Ինձ նման մարդիկ շատ են մեր համայնքում:

Արդյո՞ք Երևանցին գալու է այստեղ ու մեծ քանակով միրգ առնի ու տանի, **սա չի աշխատելու**:

Ագարակի խանութը կարելի է համարել այդ **շուկայի մի տաղավար:**

Մեղրում շատերը **գնում են Իրան ու անտեղից ավելի էժան գներով առնում** անհրաժեշտ ապրանքը: Ո՞վ պիտի ավելի թանկ վճարի, շուկայից դա գնելու համար:

Մեղրիում բազմաթիվ այլ բաներ արժի անել, բայց **շուկան** անարդյունավետ ծրագիր է:

Նախ **շուկայում** վաճառելու մշակույթը պիտի զարգանա. մեզ մոտ առայժմ բարտերային մշակույթն է գերակշռում:

Մեր իրացումը կազմակերպվում է հետևյալ կերպ՝ իրացողները գալիս են, մեզնից գնում են ու տանում: Ոչ մի մեղրեցի չի գնա նստի ճանապարհին ու **վաճառի**:

Շուկան պետք է **հասանելի լինի արտադրողի համար**, որ վերավաճառողների ինստիտուտը չզարգանա. դա արտադրողին վնաս է:

Շուկան պետք է **չափորոշիչներ դնի**, որ խաղի ֆիքսված կանոններ լինեն:

Ես **պարտավոր չեմ** իմ արտադրած բերքը տանեմ հասցնեմ Երևան, որ վաճառեմ:

Շուկայի ծրագրի շրջանակներում անհրաժեշտ է նախատեսել նաև **սառնարանների կառուցում**:

Շուկայի կառուցումն առևտուր է զարգացնելու, մարքեթինգ է զարգացնելու, գները կկանոնավորվեն... գյուղացին էսօր սպասում է, մինչև գան իրենից գնորդի ուզած գնով առնեն: Շուկա լինի, **գյուղացին ինչ-որ տեղ էլ կարող է իր գինը թելադրել**, չտուժել արդյունքում:

Օրինակ Արարատյան դաշտում շատ մանրամեծածախ շուկաներ կան, նաև Արարատը շատ մոտ է Երևանին: Մենք **մինչև միրգը տեղ ենք հասցնում, արդեն փչացած է** լինում:

Կարելի է որևէ **սոցիալական կայք** ստեղծել, որի միջոցով կգտնվեն գյուղմթերքի հնարավոր գնորդներ:

Մենք Իրանից այցելուներ ունենք, Հայաստանից են գնում Իրան, **շուկան** կարող է իրենց էլ սպասարկել:

Ես շատ մարդիկ գիտեմ, որ չիր են պատրաստում, **տեղ չեն ունենում իրացնելու**, վերջում ստիպված թափում, կամ օղի են պատրաստում:

Պետք է մի կենտրոնական տեղ լինի, որտեղ **հնարավոր կլինի գնել ու վաճառել** ապրանքը:

Չմոռանանք, որ **Արենիի շուկան լավ առևտուր է ապահովում** տեղացիներին: Տեղի ընտրությունը խիստ կարևոր է: Շուկան պիտի Մեղրիից էլ լինի մի քիչ դուրս: Մարդ կա գալիս է Ագարակ, մարդ կա գալիս է Մեղրի: Էնպես անենք, որ **բոլորը կարողանան օգտվել էդ շուկայից:**

Սեպտեմբերից փետրվար մարդը մնում է իր մթերքի ձեռքին շվարած, չգիտի գնորդ կլինի՞, թե՞ ոչ: Պետք է ինչ-որ միասնական տեղ լինի, որ **վաճառքը կենտրոնացվի ու հեշտացվի**: Հիմա Վանքեցուն զանգելու ու լավ լոբով հետաքրքրվելու փոխարեն, կիմանամ, որ Մեղրիում տեղ կա, ուր կգամ ու կառնեմ, կամ չեմ առնի իմ ուզած լոբին:

Որոշ **անհատներ խաբում են պարսիկներին**, բնականաբար վերջիններս երկրորդ անգամ չեն գալու, իսկ շուկայի պարագայում նրանք կարող

Մեղրիում հիմնականում փոքր բիզնեսմեններ ու անհատ ձեռներեցներ են, **արդեն ձևավորված շուկայով**, ուստի այդ տաղավարներն անիմաստ են թե՛ առաջարկողի, թե՛ սպառողի համար:

Կաթնամթերքի ու բանջարեղենի **որակի հսկողություն** պիտի իրականցվի: Եթե շուկան նման ծառայություն ապահովի, միգուցե իմաստ ունենա:

Մեզ շուկա պետք չէ, ավելի պետքական է **ընդունման կետեր** լինեն:

Ինչի՞ նման ա, գեղագիտական կենտրոնի դիմացը **բանջարեղենի առևտրի կետի** են վերածել

Որ շուկա եղավ, մեղրեցիներն **ավելի թանկ են գնելու էդ միրգը**... էնպես որ՝ սուս արեք, տեղներդ նստեք

1901 թվականից Մեղրում **Հայաստանում առաջին կոոպերացիան** է ստեղծվել, մենք շատ լավ ավանդույթներ ունենք:

15 տաղավարը շատ քիչ է, և կարևոր է, որ Երևանի օրինակը չդառնա, **շուկան չդառնա վերավաճառողների տեղ**:

Չիրը ոչ մեկի տանը չի մնում, վաճառվում է:

Պարզ է, որ մի քնաի հազար մարդ չի գալու այդ **շուկայում** վաճառի, մեկին պիտի գտնենք, որ այնտեղ վաճառում է, մեր ունեցած միրգը տանք իրան, որ **վաճառի**:

Կապանում Մեղրու **բերքը ձրի են ուզում**, մեր բերքը վաճառվում է կա՛մ Երևանում, կա՛մ Ռուսաստանում:

Անգամ զբոսաշրջիկները, օրինակ, պարսիկները, գալիս են անձամբ ինձ մոտից առնում **ապրանքը**:

Ազատ տնտեսական գոտին ստեղծվեց, բոլորն ուրախացան, բայց այսօր այն չի աշխատում:

Եթե շուկայում գյուղացին **վաճառելու** է ինքնարժեքով, օգուտ չի ունենա դրանից, չի շահի, ու ստիպված է նորից վաճառել այգուց չտանել ապրանքը շուկա:

Մենք տանը նստած սպասում ենք, որ գան մեզնից **գնեն**, տանեն, բայց չենք բողոքում. ամեն տարի էլ գիտեմ՝ ով է գալու, ինչքան է գնելու:

Առաջին մրգից մինչև վերջին միրգը բերքն ունի երեք ամիս է, կարելի է շատ **միջոցառումներ կազմակերպել:**

Շուկայի փոխարեն ավելի լավ է **պահեստային տնտեսություններ** ստեղծել:

են համեմատել գները, նորմալ **մրցակցային առաջարկ ստանալ** ու վերադառնալ:

Խթան կլինի մանր ու մեծ արտադրողի համար: Հիմա նռան հյութ են արտադրում, դա խթանում է, որ այգիներից դուրս յուրաքանչյուր փոքր ծառ անգամ քաղվի:

Ես իմ թուզը կտանեմ **շուկա**, եթե այն աշխատի, ու մթերողը ըստ իր պահանջմունքի կառնի ու կտանի՝ որը ջեմի համար, որը մուրաբի...

Որ իմանամ շուկայում երկու հարյուր կգ լոբի եմ կարողանալու վաճառեմ, կարտադրեմ էդ լոբին: Շուկայի առկայությունը **գյուղացու եկամուտներն ավելացնելու** է: Էսօր Արարատից բերում բանջարեղեն են վաճառում համայնքի բնակիչներին: Մենք էլ կարող ենք ախր վաճառել նույն բանջարեղենը:

Հայաստանի տարբեր համայնքներից ու գյուղերից մարդիկ գալիս են Իրանում առևտուր անում, վերադառնալիս էլ Մեղրու մրգի նկատմամբ անտարբեր չեն անցնում: Սակայն երբեմն **չգիտեն, թե որտեղից պետք է գնեն այդ միգն ու չիրը**: Տեսնում են այգու ծառերը, մոտենում տանն ու հարցնում, թե վաճառքի չիր կա, թե ոչ: Միգուցե շուկան կհեշտացնի այս հարաբերությունները:

Մեղրիում **չարտադրվող ապրանքների շուկա** պետք է ստեղծել:

Շուկան ավելի **առաջնային է** թվում:

Մարդկանց շատ հարմար կլինի, որ բոլոր **ապրանքները մի վայրում լինեն**:

Եթե շուկան լինի, **աշխատանք էլ կլինի:**

Մենք էլ, օրինակ, տաքսի ենք վարձում մի քանի հոգով, գնում ենք Ագարակ, ստիպված **փողոցներով պտտվում ենք, որ մեր մածունը, կաթը իրացնենք**:

Զբոսայգին կառուցելու դեպքում **մրցակցություն կսկսվի տարբեր խանութների միջև**. առաջինն ինչ-որ գին է առաջարկելու, երկրորդը պիտի փորձի գինը գցել, երրորդը՝ հավասարակշռել կամ նոր ապրանք առաջարկել:

Մրգի սեզոնին հատկապես, պետք է լինելու շուկան, բայց տեղը՝ մաքսատան մոտ, հարմար չէ, ավելի նպատակահարմար կլինի Մեղրիում կամ Ագարակում:

Եթե Անապաստանաց վանքի տարածքում հիմնվի այս թանգարանը, ապա այն միայն օգուտ կտա, Արենիի գտածո կոշիկը **միլիարդի օգուտ տվեց** Հայաստանին, Շվանիձորում թվագրված

Զբոսայգու կառուցումը միանշանակ ավելի կարևոր է, քան **գյուղատնտեսական** շուկայի կառուցումը:

Այս ինտերնետի ու հաղորդակցության զարգացած միջոցների դարում չարժի ութսուն միլիոն դրամ տալ նման ծրագրին: (Շուկա)

Պետք է **բացառվի մենաշնորհային մոտեցումը**, այսինքն գրանտ չստանան ու բերեն մի երկու ռեկլամային ցուցանակ դնեն ու ամբողջ ծրագրից օգտվեն մի հինգ հոգի:

Արենիի **շուկան ամբողջ գյուղն է պահում**, մեզ մոտ այդպես չէ, նրանց շուկայի տարածքն է ճիշտ տեղում:

Ամբողջ աշխարհի միրգը Մեղրիում է, բայց Հայաստանի տարբեր տարածաշրջանում փառատոններ արվում են, իսկ Մեղրիում՝ ոչ:

Պարսկաստան անցնելու նպատակով այլ շրջաններից շատ մարդիկ են գալիս, իրենք էլ կարող են օգտվել հանգստի գոտիներից, **փող ծախսել:**

Չրերի փաթեթավորումն ավելի **թանկացնում** է չրի գինը, որովհետև այն հատուկ պայմաններով պետք է անել, մեզ ձեռք է տալիս միանգամից շատ վաճառել, ոչ թե մաս-մաս:

Մեղրիի չիրը իրացման խնդիր իրականում չունի, մենք ունենք արտադրման, նորմատիվներին համապատասխան **ստանդարտացման** խնդիր:

Տաթևի ճոպանուղին տուրիստական կետ է, շատ գորիսցիներն այդտեղ **աշխատում** են, իսկ Խնձորեսկի ճոճվող կամուրջը վճարովի չէ:

Գործկոմի կողքի սրճարանը շատ գեղեցիկ է, Երևանյան կոլորիտ կա, եթե բարեկարգվի ճեմուղին նրա շրջակայքում էլ գեղեցիկ **սրճարաններ** կբացվեն:

Մարզադպրոցները պետք է **վճարովի** լինեն, որպեսզի դրանց պահպանման ծախսերը պատշաճ ձևով հոգալու հնարավորություն լինի:

Նվազագույն **աշխատավարձ** ենք ստանում, խմբակներ գնալը ֆինանսապես հնարավոր չէ:

Մարդ ինչքա՞ն պիտի **վարձատրվի**, որ կարողանա ապրել: Մեզ մոտ մինիմալ աշխատավարձ էլ չկա:

գերեզմանաքար ունենք, որը հանրապետությունում ամենահին գերեզմանաքարն է, ու դրա մասին շատ քչերը գիտեն:

Վերնիսաժի աշխատակիցները Մեղրիից են գնում կոլաժների համար նախատեսված նոները, եթե թանգարան լինի, կողքը կարող ենք **վաճառել** մեր աշխատանքները:

Տուրզիմի զարգացման համար առաջին հերթին պետք է նպաստել **հյուրատների** զարգացմանը:

Մեղրիում կա տիպային հետաքրքիր հյուրանոց, որը ձեռք է բերել մի անհատ, ով չի հետևում այդ հյուրանոցին, լավ կլինի դա ձեռք բերել և դարձնել լավ **հյուրանոց**:

Օրինակ, ինչո՞ւ չենք Լիճքը ու Տաշտունը սարքում «Ծաղկաձոր» կապանցիների համար:

Շատ զինվորներ կան հեռավոր մարզերից, որ Ագարակում են ծառայում: Ծնողները գալուց մի օորով չեն գալիս, տեղ էլ չկա իրենց նորմալ դիմավորելու: Մաքուր, սիրուն **հոսթելատիպ** տեղեր կարելի է սարքել, մարդիկ գան, իրենց հանգիստը կարգին կազմակերպեն:

Ամբողջ Վրաստանում, Հունաստանում մարդիկ **հյուրատներով** շատ լավ ապրում են:

Պետք է նպաստել **էթնիկ հյուրատների** զարգացմանը:

Ընդհանրապես չկան **մանկական** սրճարաններ, ծաղրածուների ծառայություն, երեխաները չգիտեն ինչ է ավազանկարչությունը և այլն:

Եթե **քաղաքին գումար** կբերի դիտակետը, ապա միանշանակ այս ծրագիրն առաջնահերթ է, այդ էլ կխթանի, որ այլ ենթակառուցվածքները զարգանան:

Ինչքան էլ առողջ օրգաններ ունենաս, սնունդ ա պետք, որ ուղեղդ աշխատի... պետք է **փող բերող** ճյուղերը խթանել: Տուրիզմը զարգանա, մենք էլ կհարստանանք:

Հայաստանի **ռեսուրսը** տուրիզմն է, սրան առանձնահատուկ առաջնահերթություն պիտի տրվի:

Գորիսում զարգացած է հյուրատնային բիզնեսը. մարդիկ իրենց տներն են հարմարեցնում **տուրիզմի** համար և վարձով տալիս:

Եթե ՏԻՄ-ը դիտակետի վերանորոգումը դիտում է միայն որպես բարեկարգման, աղբանոցի վերացման ծրագիր, ապա դա մեծ հարց չի լուծելու **համայքնում**, իսկ եթե սա նպաստելու է որ տուրիզմի ու հարակից ոլորտներում

աշխատատեղեր բացվեն, գումար պտտվի, տուրիստին հետաքրքիր լինի գա Գորիս ու դիտակետ այցելի, ապա միանշանակ կողմ ենք:

Տան վարձերը թանկանում են տուրիզմի զարգացմանը զուգահեռ:

Դիտակետի ճանապարհի կառուցումը շատ կարևոր է, կբացվեն **աշխատատեղեր**, քաղաքը կապրի:

Ներդրումներ անելու դեպքում, նաև հողի **արժեքն** է բարձրանում. դա բնակիչների համար է դրական:

Հիմա լուրջ շինարարական աշխատանքներ են արվում Գորիսում, մեծ թվով **աշխատատեղեր** են ստեղծվում:

Տնտեսապես ձեռնտու է Դիտակետի նորոգումը, քանի որ **տուրիստների** քանակը կավելանա միանշանակ:

Գորիսի **հյուրանոցները** շատ մրցունակ են: Խաղասրահներով, լողավազանով, ռեստորանով, ֆիտնես ակումբով:

Գումարը մի տեղից տալու են, մի կողմից ինքը **գումար է առաջացնելու**, կարծում եմ արժե:

Դիտակետի տարածքում հնարավորություն կա փոքր **բիզնեսի** զարգացման համար. սրճարաններ, խանութներ և այլն:

Դիտակետից հրաշալի տեսարան է բացվում, որը գրավում է նաև հարակից համայնքների բնակիչներին: Սակայն այստեղ նորմալ սրճարանի առկայությունը կարող է ավելի **գրավիչ դարձնել** այս վայրը:

Տասը տարվա սեփականատերը սրճարան չի կառուցել, բայց երբ դիտակետը **նորոգվում** է, տեսնում է ու սկսում է սրճարանն էլ նորոգել:

Մարզասրահները կարող են լինել **վճարովի**, որպեսզի կարողանան իրենց պահել, սա կնպաստի նաև նոր **աշխատատեղերի** ստեղծմանը:

Ծնողը պետք է **ֆինանսապես այնքան ապահովված լինի**, որ կարողանա երեխային տանել զբոսայգի կամ սրճարան գնալ:

Լավ կլիներ զբոսայգում մանկական սրճարան էլ կառուցվեր, սակայն այս դեպքում վաճառողները միանգամից **գները կբարձրացնեն**:

Զբոսայգուց օգտվելու համար նախ պիտի աշխատատեղեր բացել, որպեսզի առաջարկվող ծառայությունների համար **ծնողը կարողանա վճարել**:

Հանքարդյունաբերությունը դեռ լուծում է խնդիրների, քանի դեռ այլ լուծում չկա, եթե դա էլ չլինի, այստեղ մարդ չի մնա:

Մեղրիիում աշխատում են ոչ միայն տեղացիները, այլև, օրինակ, ապարանցիները: Այս ներքին **աշխատանքային միգրացիան** դեռ աճում է, և Մեղրին իսկապես ներքին ռեսուրսներ ունի՝ իր քաղաքակրթությամբ ու մշակույթով, զարգանալ մինչև հարավային մայրաքաղաք դառնալը:

Մեր համայնքի համար առաջնային է երիտասարդների զբաղվածությունը, արտադրության ստեղծումը: Լավ օղի ունենք, բայց **գովազդ** չի արվում:

Գորիսցու համար ավելի կարևոր կլինի **գործարանների** կառուցումը, **աշխատատեղերի** ստեղծումը, քան քաղաքի կենտրոնի էսթետիկական տեսքը:

Իրականում **սուբվենցիան խթան է համայնքի համար**, որպեսզի համայնքն ավելի արդյունավետ ծախսի:

Օրինակ բերեմ. մենք Աշտարակում ծանոթ ունենք, իրենց տանը **հոսթելի** նման բան են սարքել, գալիս են էն տուրսիտները, որոնք հյուրանոցներում չեն սիրում մնալ: Մեր մոտ էդպիսի տեղեր շատ քիչ կան: Կարելի է զարգացնել:

Ես իմ հանգստի համար նախատեսված գումարը չեմ տանի **ուրիշ մարզում** ծախսեմ:

Մեղրիում **աշխատուժը** շատ թանկ է՝ օրը հինգ հազարից յոթ հազար, Արարատից էլ ենք մարդ բերում:

Մեղրիում ավելի շատ **հյուրատներ** են, հյուրանոցներ չկան: Հյուրանոցն իր նպատակին չի ծառայում:

Դիլիջանում գնացինք հաց կերանք անտառում, եկան մեզնից հինգ հազար դրամ ուզեցին. այսպես են **բիզնես** անում:

Էկոտուրիզմ կա, բայց թանգարանի կառուցումը կմեծացնի ինչպես տուրզմի զարգացմանը, այնպես էլ բնակչի **ձեռքի աշխատանքների վաճառքին**:

Կարճևանում գեղատեսիլ մի վայր ունենք, որտեղ թե՛ տեղացիներն են գնում հանգստանալու, թե՛ **զբոսաշրջիկները**: Շատ լավ կլիներ, որ այստեղ մի տեղ լիներ, որտեղ հնարավոր կլիներ Մեղրուն հատուկ ուտեստներ հյուրասիրել, տեղի միրգն ու չիրը վաճառել, հնարավորություն տալ հանգստացողներին հարմարավետ անցկացնել իրենց հանգիստը: Սա կնպաստի զբոսաշրջությանը, նոր աշխատեղեր կբացվեն:

Խոցելի խմբեր հասկացությունը լողացող է: Ավելի լավ է մարդկանց **կարթ տալ, ոչ թե ձուկ**:

Գյուղացուն կարելի է տրամադրել կով, ոչխար կամ այլ միջոցներ, այլ ոչ թե **պատուհանները** վերանորոգել: Գյուղացու ապրելակերպը պետք է բարելավել:

Համայնքապետարանում աշխատելով՝ ես շատ լավ գիտեմ, թե ովքեր են **կարիքավոր**, բայց երբ կանչում եմ օգնություն տալու համար, նեղվում են. «Դու ինձ ինչի՞ տեղ ես դրել... դու ինձ հող տուր մշակեմ, ես իմ մասին ինքս հոգ կտանեմ»: Միգուցե կարելի է այս 50 միլիոնով մտածել, թե ինչպես կարելի է այս ընտանիքներին աշխատանքով, եկամուտ վաստակելու ինչ-որ միջոցով ապահովել:

Անապահով խավն ամբողջովին իր պարտավորությունները կատարում է, մինչև դրանք չկատարվեն, մենք նախատեսած օգնությունը չենք կարողանում տրամադրել:

Մարդիկ դեմ են գազաֆիկացմանը, քանի որ փայտը **ձրի** է, իսկ գազին պետք է փող տան:

Այսպիսի փորձ արվեց՝ մարդկանց բաժանեցին ցեմենտ, որ իրենց ոռոգման առուները կարգի բերեն, ու դրա դիմաց նրանց տրվում է մթերք: Հաջորդ տարի **մարդիկ սպասում էին**, որ պետությունը բերի ցեմենտ տա, որ գործ անեն:

Վառելափայտով խոցելի խմբերին օգնել կարելի է, բայց պետք է մտածել **վառելանյութի** գների իջեցման մասին**,** որպեսզի վաղը, մյուս օրը ինձ էլ ստիպված չլինեք օգնել:

Վառելափայթի խնդիրը շատ կարևոր է՝ հատկապես անապահով խավի համար:

Քննարկված ծրագրերից պետք է առանձնացնել արևային **վահանակների** և **պատուհանների** տրամադրումը խոցելի խմբերին տարբերակը:

Բազմազավակ ընտանիք, միայնակ թոշակառու... բոլորը խոցելի խմբեր են, բայց միգուցե կարիքները տարբեր են: Թերևս կարելի է նրանց գումար տալ,**վառելանյութի** ու **լուսամուտի** փոխարեն, և իրենք **որոշեն,** թե ինչպես է ավելի նպատակահարմար բավարարել իրենց կարիքները:

Բայց ախր գազաֆիկացնելուց հետո սոցիալապես **խոցելի խումբն** այս անգամ ինչպե՞ս է վճարելու գազի դիմաց:

Ո՞վ է խոցելի խումբը. խնդիրը նրանում է, որ միշտ չի որ խոցելի խմբին է հասնում փայտը:

Մեղրիում չի կարող **ծայրահեղ աղքատ** մարդ լինել:

Մեղրիում ծայրահեղ աղքատ ու **խոցելի բնակչություն չկա:**

Գյուղում հարուստ մարդ չկա՝ մեկ-երկու կով ամեն մի ընտանիքում ու վերջ: **Կոոպերատիվն** էլ ծառայում է հենց մարդկանց:

Մենք չենք կարող պատկերացնել **խոցելի ընտանիքների** մրսածը, որովհետև մենք տաք-տաք նստած ենք:

Ինչո՞ւ **խոցելի խմբին** զրկենք հիսուն միլիոնից: Սա նրանց օգնելու միջոց է:

Եթե այգիներով է չափվում կենսամակարդակը, ուրեմն Մեղրիում **ոչ ոք խոցելի չէ**: Բայց շատ ընտանիքներում միայն մի հոգի է աշխատում, որովհետև աշխատատեղ չկա:

Աղքատ մարդն ապրելու իրավունք չունի, մենք պետք է աշխատենք, որ հարստանանք:

Պարսիկը կխմի, կգա զիփլայնով կթռչի, փողն էլ կգա **համայնքի բյուջե**:

Եթե եկամտի առումով նայենք, համայնքին ամենամեծ օգուտը միանշանակ **տուրիզմն է** տալու:

Գյուղատնտեսական շուկայի կառուցումը **կհեշտացնի հարակից գյուղական համայնքների գործը**: Բացի այդ զբոսաշրջիկները կուղղորդվեն կենտրոնացված շուկա, գները կարող են փոքր-ինչ բարձրանալ, ինչից գյուղարտադրողը կօգտվի:

Որ շուկա եղավ, հենց **ես էլ պատրաստ եմ գնալ**, կանգնել էդ շուկայում: Դրա առկայությունը **կզարգացնի համայնքը**:

Գյուղական համայնքներին Մեղրիում շուկայի առկայությունը խիստ պետք է: Էսօր իրենց մոշը բերում են, **ինչ որ մի տեղ արևի տակ կանգնում վաճառում** են: Մարդկանց հնարավորություն թող տրվի, նորմալ աշխատեն էլի:

Երբ ընտանիքը կարողանում է իր կեցությունը բարելավել, ամբողջ **համայնքն** է սկսում զարգանալ:

Դիտակետը տուրիզմի զարգացման շնորհիվ **համայնքի բյուջե** կմտնի գումար, որն էլ կուղղենք մարզահրապարակների կառուցմանը:

Գորիս համայնքի զարգացման ռազմավարական ուղղությունը տուրիզմի զարգացման հետ է կապվում, իհարկե մյուս խնդիրները չեն անտեսվում ՏԻՄ-ի կողմից, բայց **եկամուտ ապահովելու** տեսանկյունից տուրիզմի զարգացումն առաջնահերթ է:

Դիտակետի վերականգնումը կնպաստի նաև **բիզնեսի** զարգացմանը, համայնքի բյուջե փող կգա:

Ակներում մաքուր ջուր ունենք, շշալցվում է, բայց մասնավորի կողմից: Գյուղն ու գյուղացին ինչո՞վ են **շահում**...

Հին Գորիսի քարանձավների վերանորոգումը մեծ տուրիստական ներուժ է պարունակում, և լավ նախադրյալ է համայնքի զարգացման համար, բայց հարակից խնդիրներն այնքան մեծ են, որ անհրաժեշտ է սրանց զուգահեռ որոշակի միջոցներ ուղղել ավելի **հրատապ ու առօրեական խնդիրների** լուծմանը:

Դիտակետի տարածքի վերանորոգումը ցանկալի չէր լինի պատվիրակել մասնավորին, որովհետև սա հրաշալի ռեսուրս է հենց **համայնքի բյուջեն** հարստացնելու համար:

Մենք մի մեխանիզմի պակաս ունենք, որ այդ ամեն ներդրված լումայից ստացված ու ավելացված եկամուտը իրականում հետ գա մտնի բյուջե ու **ծառայի համայնքին**:

Նույնիսկ հարևան գյուղերից են գալիս Գորիսի հյուրանոցում աշխատելու: Եթե բացվեն հյուրանոցներ, ռեստորաններ, **կապրի** ամբողջ համայնքը:

Օղու, չրի արտարդությունն ու շերամապահությունը փորձում ենք դարձնել մեր համայնքի **բրենդը**:

Մշակույթի տան հարակից այգու վերականգնումը եկամուտ կբերի **համայնքի բյուջե**:

Տնտեսական զարգացման ծրագրեր իրականացնելով՝ մեծանում է ամբողջ **համայնքի բյուջեն**, որն արդեն հնարավոր կլինի վերաբաշխել ըստ գյուղերի կարիքների, օրինակ՝ եթե մեկին կոմբայն է պետք, կապիտալ ծրագրի արդյունքում ստացված ֆինանսական ռեսուրսներով արդեն կարող ենք այդ կոմբայնն առնել:

Պետք է սկսենք անհրաժեշտից և այն ծրագրերից, որոնք նոր **գումարներ են բերում**:

Ե. ԾԱԽՍԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Սուբվենցիոն ծրագիրը մշակելիս հաշվի է առնվեն նաև **համայնքի կողմից համաֆինանսավորումը:** Ագարակում արդեն որոշակի քայլեր արվել են այս ուղղությամբ, այնինչ Մեղրիում զբոսայգու կառուցումը պետք կլիներ սկսել զրոյից: Հետևաբար ավելի նպատակահարմար կլիներ զբոսայգին կառուցել հենց Ագարակում:

Այն տեղերում, որտեղ միջպետական խնդիրներ են լուծվում, **պետական բյուջեից թող ֆինանսավորվի**, որը՝ տեղական, համապատասխանաբար **տեղական բյուջեյից**:

Եթե ֆինանսավորումը լիներ միայն **բյուջեի** հաշվին, զբոսայգու կառուցումը իրոք նպատակահարմար չէր լինի:

Այսպիսի փորձ արվեց՝ մարդկանց բաժանեցին ցեմենտ, որ իրենց ոռոգման առուները կարգի բերեն, ու դրա դիմաց նրանց տրվում է մթերք:

Մենք **մի համայնք ենք**, եկեք, ոչ թե քննարկենք, թե այստեղ չկառուցենք, այնտեղ կառուցենք: Միևնույն է միջոցները չեն հերիքելու բոլորին, եկեք քննարկումը տանենք թե ինչ կտան այս ծրագրերը մեզ, և խոսենք նոր ծրագրերի ու նախաձեռնությունների մասին:

Զբոսայգին ցանկացած պարագայում օգուտ է և գուցե համայնքի բնակիչներն էլ **իրենց գրպանից գումար** դնեն բարեկարգելու համար:

Կարելի է Մեղրիում **հեռուստամարաթոն** անել, միլիոնատեր բազմաթիվ մեղրեցիներ ունենք դրսում, այդ գումարներով արժի իրականացնել այս ծրագիրը:

Մեղրի համայնքի հանգստի գոտիները պիտի զարգանան **մասնավորի** կողմից:

Հանգստի գոտիների ծախսը **մասնավորը** պիտի հոգա, սա ի՞նչ պետության գործն ա:

Հաջորդ տարի **մարդիկ սպասում էին**, որ պետությունը բերի ցեմենտ տա, որ գործ անեն:

Եկեք բոլորս համախմբվենք, էս առիթից օգտվենք, ժողովրդ ջան, ես մտածել եմ նույնիսկ թե կառավարությունն ինչպես կարող է մեզ օգնել էս հարցում: Առաջարկում եմ **գազի** ավելացված արժեքի հարկից մեզ ազատեն: Սա էականորեն բնակչության գազի ծախսերը կկրճատի:

Ես իմ տանը որ հյուրատուն սարքեմ, ոչ ոք ինտերնետով նայելով իմ մոտ չի գալու, պետական լուրջ օժանդակություն է պետք, որ մարքեթինգ արվի տարածաշրջանը: Սերժն իր ժամանակով Տաթևը **տուրիստական գոտի** հայտարարեց, էդքան ներդրումներ եղան: Հիմա վարչապետը նման բան պիտի անի նաև Մեղրու տարածաշրջանի համար:

Չենք կարծում, որ ութսուն մլն դրամ արժի տալ այս խնդրին, այն դեպքում, երբ **բազմաթիվ այլ խնդիրներ** ունենք լուծելու:

Լավ կլինի, որ **թանգարան ունենանք**, բայց դա միմիայն համայնքում մնացած ավելի արդիական հարցերը լուծելուց հետո:

Երկրագիտական թանգարանի կառուցումանը դեմ եմ, այդ ութսուն միլիոնին, որպես քաղաքաշինության բաժնի պետ:

Ութսուն միլիոն դրամը թանգարանի համար անիմաստ է: Ավելի **հրատապ խնդիրներ** կան:

Եթե թանգարանը պիտի գործի անվճար, իսկ ով՞ պիտի **վճարի** աշխատավարձը, պահպանման համար, արդյո՞ք համայնքը պատրաստ է այդ ծախսերն անելուն:

Ջրամբարն ավելի մեծ **նշանակություն** ունի, քան շուկան, թանգարանը, և մնացած այլ կետերն այս սցենարներում:

Հիսուն միլիոնը հինգ տաղավարի համար **ճոխություն է:**

Մեկօրյա հանգստի մեկնողը բարեկարգ հատուկ պայմաններ չեն ուզում, այստեղ այդքան գումար **ծախսելու բան չկա**:

Գյուղատնտեսությունն առանց պետության էլ կզարգանա, թող **բյուջեն** ծախսեն սոցիալական ծրագրերի վրա:

Ինչո՞ւ խոցելի խմբին զրկենք հիսուն միլիոնից: Սա նրանց օգնելու **միջոց** է:

Մեր տարածաշրջանն էլ է սահմանամերձ, բայց մեզ, որևէ զիջում, որևէ **օգնություն չի նախատեսվում**, ինչպես Տավուշի դեպքում է:

Ես համաձայն եմ թանգարանի կառուցմանը, բայց ոչ համայնքի **բյուջեյից**:

Եթե հովանավորներ գտնեն, դրահամահավաք լինի, թող բացվի թանգարան, բայց ոչ **համայնքի** հաշվին:

Ինչո՞ւ հենց սյունեցիները ներդրումներ չեն անում **տուրիզմը** զարգացնելու համար. չգիտենք:

Որպես հեռավոր գյուղի բնակիչ կարծում եմ, որ տուրիզմի համար պետք է **բիզնես սեկտորը** հոգ տանի, ոչ թե մեր հաշվին:

Դիտակետի խնդիրը կարելի է լուծել **բիզնեսի** միջոցով և ոչ թե բյուջեի հաշվին:

Եթե բարերարները քաղաքը **նորոգում** են, ինչո՞ւ գյուղը չեն նորոգում: Հարուստին կատվի նման պիտի փիսիփիսի անես:

Քարանձավային քաղաքի վերականգնման համար բանակցային փուլը գրեթե ավարտած է, և Որորտանի հեկ-ը պատրաստվում է **համաֆինանսավորմամբ** նպաստել քաղաքի վերականգնմանը:

Մեղրի համայնքում **սոցիալական հիմնադրամ** կա, դիմողներին այսպես թե այնես օգնում են. նման ծրագրի անհրաժեշտություն չկա:

Տարիներ առաջ, որպես **սահմանամերձ**, աշխատանքի դիմաց ավել էին վճարում, դա էլ են հանել:

Սա մի տարվա ծրագիր է, բայց լուսամուտները մի տարուց ավելի **կծառայեն**:

Սցենար երրորդը հարցի ժամանակավոր լուծում է միայն, իսկ արդյո՞ք համայնքային **բյուջեն** դրա վրա ծախսելը նպատակահարմար է:

Շատ բաց կետեր կան մեր փաստաթղթերում: Ավելի **կարևոր կետեր** կան, որոնց ուշադրություն չի դարձվել:

Ժամանակին բանակի փոխարեն գալիս էին մեր դպրոցում յոթ տարի աշխատում ու վերադառնում. այ դա **օժանդակություն** էր:

Հասկանում ենք, որ պետք է տուրիզմ, բիզնես զարգացնել, բայց առանց **սոցիալական** ծրագրերի էլ չի լինի:

Գորիսը մեգապոլիս չի, փոքր քաղաք է, կարելի է բավարարվել միայն մեկ՝ ավելի մեծ դպրոցով, մնացած գումարն ուղղել այլ **ծախսերի:**

«Մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում կատարվել են պետական **սուբվենցիաներ**՝ 60% և 40% համաֆինանսավորմամբ համայնքային բյուջեից, որի արդյունքում կապիտալ ծրագրեր են իրականացվում հենց Գորիսում:

Առաջին ծրագիրը ֆինանսավորվելու է միմիայն **դրամաշնորհների** միջոցով և ոչ՝ մեր բյուջեի:

Նշված **գումարը** չկա համայնքային բյուջեում, հետևաբար անիմաստ է քննարկումը:

Այս պահին հազիվ աշխատատեղ ենք կրճատում, որ **պարտադիր ծախսերը** հոգանք, եթե կա համաֆինանսավորման տարբերակ, ապա հնարավոր է:

Գումարը **մի տեղից տալու են**, մի կողմից ինքը գումար է առաջացնելու, կարծում եմ արժե:

Ես, որպես սահմանամերձ գյուղի բնակիչ, ուզում եմ, որ **առանձնահատուկ ուշադրության** արժանանամ ու ոչ թե սկզբում մտածեն քաղաքների մասին, հետո նոր իմ:

Դիտակետի կառուցումը շատ ողջունելի է, եթե միայն **ֆինանսավորում** լինի:

Ֆիֆան և համաշխարհային բանկը մեզ **ֆինասնավորում** են, ուզում են Գորիսը

զարգացնել: Դիտակետը նորոգելով մենք ցույց ենք տալիս, որ պատրաստ ենք այդ ֆինասավորմանը:

Այս տարի շատ ծրագրեր ենք արել, դրա համար մյուս տարի այդքան **մեծ գումարներ** չկան ֆոնդում մեծ ներդրումներ անելու համար:

Այս տարի Գորիսը **մշակութային** մայրաքաղաք էր, մենք զիջեցինք, որ ներդրումներն արվեն հենց Գորիս քաղաքում: Բայց հաջորդ տարի այդպես չպետք է լինի:

Ամոթ չի՞ Գորիսը էսպիսի գեղեցիկ **ճեմուղի** չունենա:

2-4 միլիոնով **ստենտավորում** է, բայց անգամ իր ճանապարհը չի վերանորոգում, կոյուղու հարցով ի՞նչ պիտի անի:

Գորիսը թող մի գեղեցիկ հանգստյան գոտի լինի նաև այն հայերի համար, որոնք հնարավորություն չունեն մեկնել այլ երկրներ: Գորիսն այդ ամբողջ պոտենցիալը ունի, պետք են ուղղակի թիրախային **ներդրումներ**:

Չենք կարող տասնհինգ հազար դոլար դնել, տասը երեխայի համար:

Մենք շատ լավ գիտակցում ենք, որ հիսուն միլիոնը կարող ենք **այլ սոցիալական ծրագրերի** վրա ծախսենք, բայց որ քաղաքի կենտրոնը պետք է բարեկարգ լինի:

Խնձորեսկն ամենահարուստ գյուղն է. բոլորն ունեն հսկայական տարածքներ, բայց իրենց գյուղի փողոցները, դպրոցը **չեն նորոգում**:

Պատմամշակութային ժառանգությունը որպես բիզնես ռեսուրս դիտարկելը և մասնավորին պատվիրակելը նպատակահարմար չի, քանի որ շատ դժվար կլինի վերահսկել նրանց գործունեությունը:

Եթե Ագարակում զբոսայգի լինի, հավանական է, նպաստեր **տուրիզմի զարգացմանը** քաղաքում:

Մեղրիում **չկա որևէ տարածք**, որտեղ մարդիկ կարող են աշխատանքից հետո գնալ ու ժամանակ անցկացնել:

Եթե Ագարակում ունենանք բարեկարգ զբոսայգի, ես **հաճույքով երեխաներիս Մեղրիից կբերեմ Ագարակ:**

Ագարակն ավելի հարմար է, այնտեղ **երիտասարդները շատ են**:

Ես երեխայիս վերցնում ու Կապան եմ գնում, որպեսզի **նա կարողանա կարուսել նստի**, ավազի մեջ խաղա, սղարան նստի:

Շուկան կարող է **«վերնիսաժի»** պես մի բան լինի:

Տուրիզմի զարգացման **ենթակառուցվածքները զարգացնել**, այդ դեպքում միգուցե շուկան էլ գրավիչ դառնա:

Եթե կազմակերպվեր **փառատոններ, մշակութային կյանքը զարգանա**, հայաստանցին ճանաչի մեղրին, գա Մեղրի, չմնանք պարսիկների հույսին:

Առաջին բերքից մինչև վերջին միրգը երեք ամիս է, կարելի է **միջոցառումներ կազմակերպել:**

Մենք աշխարհին **ցուցարդելու շատ բան ունենք**, բայց չգիտենք ինչպես:

Թանգարանի ծրագիրն **ամենաառաջնայինն է**, մնացած ծրագրերը զրո են:

Մեր խոշորացված համայնքում կան տեսարժան վայրեր, օրինակ Լիճքում մի քանի ջրվեժ կա: **Տուրիստների** մեծ հոսք էլ ենք ունենում:

Տուրիստը գալիս է Մեղրի, բայց այստեղ բավարար պայմաններ չկան, գազ չկա: Տեղի մարդիկ էլ են արտագաղթում:

Տարածաշրջանի երեխաները պատկերացում չունեն **թանգարանի** մասին:

Տեսեք, Խնձորեսկի ճոճվող կամուրջը, որևէ կերպ չի նպաստում համայնքի զարգացմանը, այն հիմնական բնակավայրից հեռու է, չկան համապատասխան ենթակառուցվածքներ, այստեղ խնդիրը միայն դիտակետի վերանորոգումը չի, անհրաժեշտ է մի մեխանիզմ ստեղծել, որ Գորիսից հետո մարդկանց ուղղորդի նաև Խնձորեսկ, այլ վայրեր, որ **տուրիզմին** տրված գումարն արդյունավետ դառնա:

Ագարակին ավելի շատ **եկեղեցի է պետք**:

Տուրիզմը պետք է զարգացնել, այլ ոչ թե արդեն զբոսայգի ունեցող համայնքում զբոսայգի կառուցել:

Ագարակը չունի մի մատուռ, մի եկեղեցի, զբոսայգու փոխարել ավելի **լավ կլիներ մի եկեղեցի լիներ:**

Եթե նույնիսկ դիտարկենք զբոսաշրջության զարգացման տեսանկյունից, ապա զբոսաշրջիկներն արդեն գիտեն այն տները, որտեղից գնում են անհրաժեշտ ապրանքները:

Մեզ մոտ **բանջարեղեն գրեթե չի արտադրվում**. ամեն մեկն իր համար արտադրում ու սպառում է: Եղածի համար խանութները բավարար են: Անիմաստ է շուկա կառուցել: Թերևս դա միայն **տուրիստների** համար է լինելու:

Լիճքում, Տաշտունում, որտեղ ավելի զով է, նման վայրերի կառուցումն ավելի նպատակահարմար է. այստեղ կարող էինք մեր **բարբառների մասին տեղեկացնել** մեր հյուրերին: Շատ կարևոր է հասկանալ ամեն մի համայնքի առանձնահատկությունները և այս **հանգստավայրերի առաջարկները կառուցել** հենց դրանց վրա:

Եթե ինքներս պետք է ընտրենք, **թանգարանը վերջինն** է առաջնայնությունների ցանկում:

Եթե մարդիկ ուզենան ինչ որ բան տեսնել, կգան - կտեսնեն. չարժի դրան գումար հատկացնել:

Տուրիստական կենտրոնը վերցնում է տվյալներ երկրի մասին, օրինակ սննդի անվտանգությունն աշխատում է թե ոչ, ճանապարհներ կան, թե չէ, ենթակառուցվածքներ կան ,թե ոչ, ո՞վ կգա թանգարանի համար:

Տուրիզմի համար ամենակարևորը ենթակառուցվածքների կառուցումն է, նոր պետք է անցնել թանգարաններին:

Բնակչի կենսագոյատևման մինիմալ պահանջները պետք է բավարարել, օրինակ գազ, ջուր, լույս, նոր մտածել **տուրիզմի** զարգացման մասին, քանի որ տուրիստը մնում է երեք օր, իսկ բնակիչը՝ միշտ էլ այստեղ է:

Տուրիստների քանակը չի կարող կրկնապատկվել միայն դիտակետի վերականգնման շնորհիվ, մարդիկ Գորսի գալիս են հիմնականում Տաթև գնալու համար:

Սպորտային **տուրիզմ** կարող ենք զարգացնել. շատ եվրոպացիներ, երբ գալիս են մեզ մոտ հյուր, ուզում են առավոտները սպորտով զբաղվել ու դրա հնարավորությունը չի լինում, ցավոք:

Դիտակետից ժայռերի տեսարանն է բացվում, շատ գեղեցիկ է, **շատ տուրիստ** կբերի:

Գորիսը դառնում է **տուրիստական** կենտրոն, տարեցտարի շարժն ավելանում է:

Թիրախը պետք է լինի, որ **տուրիստը,** գալով Գորիս, մնա առնվազն մեկ օր, այլ ոչ թե Տաթև այցելելու համար գա-անցնի քաղաքի միջով:

Տնտեսապես ձեռնտու է Դիտակետի նորոգումը, քանի որ **տուրիստների** քանակը կավելանա:

Տաթևի ճոպանուղին **տուրիստական կետ** է, շատ գորիսցիներն այդտեղ աշխատում են, իսկ Խնձորեսկի ճոճվող կամուրջը վճարովի չէ:

Առողջությունն ավելի առաջնային խնդիր է էս պահին, քան **տուրիզմի** խթանումը: Ճիշտ կլինի գումարներն ուղղել մարզադպրոցների կառուցմանը, ոչ թե դիտակետին:

Եթե մի կենտրոն ստեղծվեր, որ զբաղվեր **տուրիզմի** զարգացման խնդիրներով, հետազոտություն աներ, խորհուրդ տար, թե որտեղ, ինչը վերանորոգեն, տուրիստին խորհրդատվություն տար՝ տուրիզմի զարգացման վրա ավելի լավ ազդեցություն կունենար:

Ինչքան էլ առողջ օրգաններ ունենաս, սնունդ ա պետք, որ ուղեղդ աշխատի... պետք է փող բերող ճյուղերը խթանել: **Տուրիզմը** զարգանա, մենք էլ կհարստանանք:

Հայաստանի ռեսուրսը **տուրիզմն** է, սրան առաջնահերթություն պիտի տրվի:

Գորիսում զարգացած է հյուրատնային բիզնեսը. մարդիկ իրենց տներն են հարմարեցնում **տուրիզմի** համար և վարձով տալիս:

Դիտակետը **տուրիզմի** զարգացման շնորհիվ համայնքի բյուջե կմտնի գումար, որն էլ կուղղենք մարզահրապարակների կառուցմանը:

Պետք է զարգացնել քաղաքի մշակույթը, քաղաքին պետք են սրճարաններ, արագ սննդի կետեր, ինչը կօգնի **տուրիզմի զարգացմանը**:

Տուրիստական երթուղիներ պիտի մշակվեն, որ բոլորն առաջնորդվեն այդ երթուղիներով, որպեսզի յուրաքանչյուր ներդրած դրամ իր ազդեցությունը թողնի զարգացման վրա:

Գորիսի դիտակետը չի կարող դառնալ համաշխարհային **տուրիստական** կենտրոն: Եթե հասարակ ամերիկացին փնտրում է ամենաերկար ճոպանուղին միանգամից Տաթևն է բերում, բայց դիտակետը ոչ մի շանս չունի նմանատիպ կետ դառնալու համար:

Առաջինը մեզ համար լավ պիտի լինի, **տուրիստ** է էլի, կգա էլ կգնա էլ:

Գորիսում մեծ խնդիր է մայթերի բացակայությունը, **տուրիստի** համար ոտքով քայլելը հարմար չի ու անգամ վտանգավոր:

Աշխատավարձով ապրող մարդու համար ի՞նչ տարբերություն՝ **տուրիստն եկավ, թե չէ**: Դրանից օգտվում են հաշված մարդիկ:

Դիտակետի կառուցումից էնպես չի, թե հսկայական **տուրիստական բում** է տեղի ունենալու էս կողմերում: Կարելի է հետո էլ դրան ուշադրություն դարձնել:

Դուք այստեղ խոսում եք բյուջեն կենտրոնում **տուրիզմը զարգացնելու** համար, իսկ ծայրամասային գյուղե՞րն ինչ ասեն, իրենք բանտարկյալ են, իրենց վրա գումար չծախսե՞ն:

Հասկանում ենք, որ պետք է **տուրիզմ բիզնես** զարգացնել, բայց առանց սոցիալական ծրագրերի էլ չի լինի:

Մտածում են **տուրիզմը զարգացնեն**. բայց բնակչի ապրելակերպի մասին չեն մտածում:

Էս **տուրիզմի ծրագրերը** լավ են, բայց պիտի մի քանի տարի սպասենք, որ զարգանա, փող բերի, իսկ մինչ այդ մենք պիտի շարունակենք ապրել, ջուր խմել, երեխաներին դպրոց ուղարկել, առողջությունը պահպանել:

Որպես հեռավոր գյուղի բնակիչ կարծում եմ, որ **տուրիզմի** համար պետք է բիզնես սեկտորը հոգ տանի, ոչ թե մեր հաշվին:

Պետք է հասկանալ, ինչո՞ւ է **տուրիստը** գալիս Գորիս: Կարծում եմ՝ նրանց մեկ է բարեկարգումը: Նրանք գալիս են քարանձավների համար. դա պետք է ֆիքսել:

Տուրիզմի զարգացումը պետական աշխատողի աշխատավարձի վրա ազդեցություն չունի: Իսկ բյուջետային հիմնարկների աշխատակիցների քանակը մեծ է: Տուրիզմի զարգացման կողմնակիցները շատ չեն լինելու:

Ուզում ե՞նք գյուղը չմեռնի, եկեք **էկոտուրիզմը** զարգացնենք: Արևի ավանը որ կառուցել էին, տուրիզմն էնքան առաջ գցեց: Թանգարանը էդ կարգի առաջնահերթություն չունի:

Գորիս շատ են գալիս **հեծանվային տուրիզմի** սիրահարները, Դիտակետի ճանապարհի վերականգնումը նրանց էլ է շատ անհրաժեշտ:

Հարակից բնակավայրերի համար էլ օգուտ կտա, **տուրիզմի զարգացումը,** վերջին հաշվով մենք էլ կկարողանանք գալ Գորիս, հանգստանալ, մի բան տեսնել:

Ինչքան շատ լինեն մեր գեղատեսիլ վայրերը, այնքան լավ է լինելու մեզ համար. մեզ մոտ շատ են գալիս եվրոպացիներ, չինացիներ, էկոտուրիստներ, լինում է, որ **տուրիստներին** անգամ անվճար ենք պահում մեր տանը:

Մշակույթի տան հարակից այգու վերականգնումը միակողմանի չէ, օրինակ **տուրիսիտը քաղաքում** մնալով, քայլելու, զբոսնելու տեղ կունենա: Գեղագիտական առումով, մեզ էլ է հաճելի կենտրոնում նման զբոսայգի ունենալ:

Եթե ՏԻՄ-ը դիտակետի վերանորոգումը դիտում է միայն որպես բարեկարգման, աղբանոցի վերացման ծրագիր, ապա դա մեծ հարց չի լուծելու համայքնում, իսկ եթե սա նպաստելու է որ **տուրիզմի** ու հարակից ոլորտներում աշխատատեղեր բացվեն, գումար պտտվի, տուրիստին հետաքրքիր լինի գա Գորիս ու դիտակետ այցելի, ապա միանշանակ կողմ ենք:

Մեր **տուրիստներն ա**վելի պրակտիկ են, չեն ուզում ճոխ հյուրանոցներում մնալ, ճոխ պայմաններում, նրանց համար առավել կարևոր է տեսնել պատմամշակութային ինչ-որ վայրեր:

Ճեմուղու բարեկարգումը կլուծի մեր բնակավայրի **բնակիչների և տուրիստների** հանգստյան ժամերն անցկացնելու հարցը, մենք տեղ չունենք հավաքվելու, ճեմելու, հանգիստ նստելու, իրար հետ զրուցելու. Երևան ենք գնում, մարդիկ տարբեր այգիներում նստած են, վայելում են ամառային օրերը, իսկ մենք ինչ անենք:

Շատ գյուղական համայնքներ կան, որ տեսարժան վայրեր ունեն, ինչու՞ տուրիստին չտանեն գյուղեր:

Մենք պետք է Գորիսում ինչ-որ ցույց տալու բան ունենանք. ես **տուրիստի աչքերով** եմ ասում:

Ճեմուղին հաստատ դիտակետից արդյունավետ է... **տուրիստն** էլ է ճեմուղուց օգտվելու: Ուր գնում ես, ասում ես մի հատ էսինչի հրապարակը տեսնեմ: Գորիսում մի էդպիսի տեղ չկա: Արվարձաններում ընդհանրապես վիճակ չկա: Գոնե կենտրոնը պիտի լավը լինի:

Մենք էլ **տեսարժան վայրեր** ունենք, բայց տուրիստը գնում է մենակ Տաթև, Խնձորեսկ: Եթե **Տուրիզմի** զարգացման հնարավորությունն այնուամենայնիվ մեծ չի, կենտրոնից շատ հեռու է:

Տուրիստը գալու է այստեղի ջուրը խմի ու հիվանդանոց ընկնի՞:

Ես Մեղրիի բնակիչ եմ ու ջուրը չեմ խմում: **Տուրիստը** ո՞նց է խմելու:

Ես իմ տանը որ հյուրատուն սարքեմ, ոչ ոք ինտերնետով նայելով իմ մոտ չի գալու, պետական լուրջ օժանդակություն է պետք, որ մարքեթինգ արվի տարածաշրջանը: Սերժն իր ժամանակով Տաթևը **տուրիստական գոտի** հայտարարեց, էդքան ներդրումներ եղան: Հիմա վարչապետը նման բան պիտի անի նաև Մեղրու տարածաշրջանի համար:

Որքան էլ **տուրիզմը զարգանա**, մինչև գյուղատնտեսությունը զարգացած չլինի, գումարները կկորեն:

Պետք է մարդ լինի, որ **տուրիզմը** կամ գյուղատնտեսությունը զարգանա:

Մեղրիում **խմբային տուրիզմը** չի աշխատում:

Որպես զբոսավար ասեմ, որ Իրանցին մեր համար թիրախային չէ **տուրիզմի** տեսանկյունից, որովհետև Մեղրին միայն տարանցիկ է նրանց համար, ժամանցի վայրեր չկան, հետաքրքիր ոչինչ չկա, գալիս մի բաժակ խմում գնում են:

Մինչև Գորիսի դիտակետին հասնելը, լավ կլիներ մտածեինք, մարզի մանկապարտեզների մասին, երկուհարյուր հիսուն երեխա խաղալու տեղ չուն, գուցե պետք է մտածել ավելի քիչ գումարով **զբոսաշրջությունը** զարգացնել, մի մասն էլ ուղղել սոցիալական ծրագրերին:

Հին Գորիս, Ակներ, Խնձորեսկ. **զբոսաշրջիկները** հարակից համայնքներ միշտ են գնում, բայց ամենակարևորը նորմալ ճանապարհ ունենալն է:

Երկրագիտական թանգարանի դիմաց սեփական գոմեր են ու գերեզմաններ, ինչու՞ է հենց այդտեղ կառուցվում:

Լավ կլինի, որ **թանգարան ունենանք**, բայց դա միմիայն համայնքում մնացած ավելի արդիական հարցերը լուծելուց հետո:

Երկրագիտական **թանգարանի** կառուցումանը դեմ եմ, այդ ութսուն միլիոնին, որպես քաղաքաշինության բաժնի պետ:

Ութսուն միլիոն դրամը **թանգարանի** համար անիմաստ է: Ավելի հրատապ խնդիրներ կան:

ինֆորմացիան հասանելի լինի, շատ տեղեր կգնան:

Գորիսը պետք է ունենա **տուրիզմի կոմպլեքս զարգացման ծրագրեր**, որ բոլոր համայնքներով տուրեր կազմակերպեն, ամեն համայնք ունենա իր բրենդը:

Տուրիստը գալիս է փող ծախսելու նպատակով, ինչու՞ չօգտագործենք դա:

Քարանձավային քաղաքի վերականգնումը շատ ողջունելի է, հատկապես եթե զարգացնում ենք **էկո տուրիզմը:**

Տուրիստը միայն հյուրանոց չի ուզում գնալ, ուզում է գնալ գյուղական վայր, աքլորի ձայնից զարթնել: Դրա համար պիտի **գովազդենք մեր գյուղերը**:

Գիդերն էլ տեղեկացված չեն, **տուրիստներին տանում են մենակ** Տաթև, Խնձորեսկ: Ինչի՞ մեր գյուղեր չեն բերում:

Վերին Շենն ավելի մոտ է Գորիսին, բայց **տուրիստն ա**յստեղից հասնում է Խնձորեսկ քարանձավները տեսնելու համար:

Գորիս համայնքի զարգացման ռազմավարական ուղղությունը **տուրիզմի զարգացման** հետ է կապվում, իհարկե մյուս խնդիրները չեն անտեսվում ՏԻՄ-ի կողմից, բայց եկամուտ ապահովելու տեսանկյունից տուրիզմի զարգացումն առաջնահերթ է:

Ճոճվող կամուրջն այսօր ամենաշատն է **տուրիստ բերում,** բայց մենք այնքան ուրիշ հին, պատմամշակութային կոթողներ ունենք, պետք է տեր կանգնենք ուղղակի:

Այն, որ Գորիսում **տուրիզմը** զարգացել է, ու պոտենցիալ ունի զարգանալու, անառարկելի է, դրա համար էլ համայնքի ներկա ռազմավարությունն ուղղված է տուրիզմի զարգացմանը:

Հին Գորիսի քարանձավների վերանորոգումը մեծ **տուրիստական ներուժ** է պարունակում, և լավ նախադրյալ է համայնքի զարգացման համար, բայց հարակից խնդիրներն այնքան մեծ են, որ անհրաժեշտ է սրանց զուգահեռ որոշակի միջոցներ ուղղել ավելի հրատապ ու առօրեական խնդիրների լուծմանը:

Տուրիստները շատ են հետաքրքրված քարանձավներով, մեզ համար արդեն սովորական է այս ամենը, նրանք հիանում են, հիացած նկարահանում:

Համարյա զրո է հավանականությունը, որ հարևան Իրանի բնակչին կհետաքրքրի մեր **երկրագիտական թանգարանը:**

Քանի որ Իրանը տնտեսական շրջափակման մեջ է, նրանց ձեռք չի տալիս դուրս գալ երկրից, հաշվարկում են իրենց բյուջեն և նախընտրում են երկրից դուրս չգալ:

Բոլոր ծրագրերն էլ ակտուալ են, բացի **թանգարանից**:

Պարսիկները գալիս են միայն խաղատների և գիշերային ակումբների համար:

Պարսիկները Հայաստան գալիս են ազատության համար, Մեղրիում էդ ազատությունը չենք կարողանալու ապահովել:

Մենք չէինք կարող գուշակել, որ ԱՄՆ-ը սանկցիաներ կկիրառի **Իրանի** հանդեպ: Եթե անցած տարիների քանակները լիներ, կողջունեի այս ծրագիրը:

Քարանձավային քաղաքը վերականգնելուց առաջ պետք է վերականգնել այդտեղ տանող ճանապարհը:

Քարանձավը մեր **տուրիզիմի բրենդն** է: Ուրիշ ցույց տալու բան չունենք:

Իսկ ո՞վ է ասել, որ տուրիզմը պետք է միայն կենտրոնում զարգացնել, ծայրամասային գյուղերը նույնպես շատ պոտենցյալ ունեն:

Տան վարձերը թանկանում են **տուրիզմի** զարգացմանը զուգահեռ:

Եթե եկամտի առումով նայենք, համայնքին ամենամեծ օգուտը միանշանակ **տուրիզմն է** տալու:

Էկոտուրիզմ կա, բայց **թանգարանի** կառուցումը կնպաստի տուրզմի զարգացմանը, այնպես էլ բնակչի ձեռքի աշխատանքների վաճառքին:

Տուրիստն այստեղ՝ Մեղրիում, ընդամենը մի գիշեր է մնում, այն էլ, եթե հոգնած է լինում, բա մնա՝ ի՞նչ անի, ու՞ր գնա:

Եթե համայնքն իր հինգամյա զարգացման ծրագրում դրել է **տուրիզմի** զարգացումն, ապա **երկրագիտական թանգարանի** հիմնումն անհրաժեշտություն է:

Մեղրի տուրիստների մեծ հոսք կա, բայց չկան բավարար չափով հյուրանոցներ:

2018 թվականին, քանի որ սահմանն անցնելու գումարները բարձրացել են, զգալի պակասել է **տուրիստների** քանակը:

Պետք է փոխել կարծրատիպերը, Մեղրին ոչ թե արդյունաբերական, այլ **տուրիստական** կենտրոն պետք է ընկալվի:

Իրանցի տուրիստներին հետաքրքրում են Մեղրու տարածքում գտնվող **մուսուլմանական մզկիթները,** որոնք կարելի է վերականգնել:

Կարծում եմ՝ մեր ռեսուրսները թույլ են տալիս երկրի **ամենատուրիստական** կենտրոնը դառնալու համար:

Մեր համայնքում իրոք շատ լավ տեղեր կա, որ կարելի ա **տուրիստներին** ցույց տալ: Այն տուրիստները, որ գալիս են Հայաստանի հյուսիսից, հասնում են ճոպանուղի, Գորիս, շրջվում, հետ են գնում: Էդ մարդկանց կարելի է բերել ավելի հարավ էլ:

Արդյունաբերությունը էկոլոգիական խնդիրներ է առաջացնում, իսկ **տուրիզմը** հակառակը լուծում է էկոլոգիական շատ խնդիրներ:

Համայնքներն ավելի համախմբված եթե աշխատեն, կկարողանան **տուրիզմը** զարգացնել:

Ինչո՞ւ հենց սյունեցիները ներդրումներ չեն անում **տուրիզմը** զարգացնելու համար. չգիտենք:

Մեղրի ժամանած միջազգային փորձագետն ասեց, որ եթե շաբաթական երկու **տուրիստ** տեսնում եք փողոցում, ապա տուրզմի զարգացման պոտենցիալ կա:

Մեր մոտ **տուրիզմը զրոյական** վիճակում է, իսկ զրոյից սկսել ոչ մեկը չի ուզում, պետությունը պետք է սկսի, գուցե հետո միանան մյուսները:

Զիփլայնի կառուցումը կնպաստի **տուրիզմի** զարգացմանը, տարածքը շատ բարենպաստ է:

Եթե հետաքրքրություն չլիներ, տուրստները չէին գա պալատկաներ խփեին քարանձավների կողքը: **Էկոտուրիզմի** սիրահարները գալիս են:

Գյուղատնտեսություն-տուրիզմ փոխկապակցված են, այս ոլորտների վրա պետք է ուշադրություն դարձնել. հետո արդեն մյուս հարցերը ընթացքում կսկսեն լուծվել:

Մենք նախևառաջ պետք է իմանանք, թե **տուրիստը** ինչի կարիք ունի, նոր հասկանանք, թե ինչ անենք:

Միայն Բայրամները և Նովրուզները քիչ են, դրանով **տուրիստի** հարց չենք լուծելու:

Մեզ մոտ շատ լավ կզարգանա, օրինակ, **վրանային տուրիզմը:**

Մեղրիում շատ լավ կաշխատի **ագրարային տուրիզմը**:

Տուրիստը մաքսակետից դուրս է գալիս չկա մի զուգարան գնալու, հաց ուտելու տեղ նաև որտեղ կլինի շուկա:

Այստեղ **թանգարանը** խթան կդառնա, որ **զբոսաշրջիկներ** գան Մեղրի:

Փոքր Թաղում մի բարեգործի կողմից պատմամշակութային ծրագիր էր իրականցվում, որն այս տարի կարծես կասեցվեց: Սակայն սա շատ կարևոր ծրագիր է թե՛ տեղացիների, թե՛ **զբոսաշրջիկների** համար, որովհետև սրանով մենք երեխաների մեջ կրթում ենք ոչ միայն գնահատել իր մշակույթը, այլև պահպանել այն:

Մեղրու **որմնանկարներով եկեղեցիները** գրավում են **զբոսաշրջիկների,** Հայաստանում շատ են եկեղեցիները, բայց որմնանկարներով եկեղեցիներ չկան:

Զբոսաշրջիկը որտե՞ղ է մնալու: Մեղրիում չկան հյուրատներ կամ հյուրանոցներ:

Մեր հայ ժողովուրդը միավորվում ու համախմբվում է մենակ օրհասական պահերին: Եկեք մեր տրամադրվածությունը փոխենք,

զբոսայգի ու թանգարան սարքելու համար էլ սովորենք համախմբվել

Եթե Մեղրիում գտնված ցուցանմուշները դրվեն **թանգարանում**, մեծ թվով **զբոսաշրջիկներ** կգրավի:

Մենք էլ կարող ենք, օրինակ, նռան **փառատոն** կազմակերպել, չրերի փառատոն: **Զբոսաշրջիկներ** կգան հաստատ:

Կարճևանում գեղատեսիլ մի վայր ունենք, որտեղ թե՛ տեղացիներն են գնում հանգստանալու, թե՛ **զբոսաշրջիկները**: Շատ լավ կլիներ, որ այստեղ մի տեղ լիներ, որտեղ հնարավոր կլիներ Մեղրուն հատուկ ուտեստներ հյուրասիրել, տեղի միրգն ու չիրը վաճառել, հնարավորություն տալ հանգստացողներին հարմարավետ անցկացնել իրենց հանգիստը: Սա կնպաստի զբոսաշրջությանը, նոր աշխատեղեր կբացվեն:

Այսօր մենք շուրջ երեք հարյուր հիսուն հազար **զբոսաշրջիկ** ենք ունենում տարեկան, շատերը չեն մնում գիշերելու, քանի որ մենք նման խնդիրներ ունենք. բնությունը շռայլ է գտնվել Գորիսի հանդեպ, բայց մենք չենք գնահատում այդ ամենը, չենք պահպանում ու չենք զարգացնում այն, ինչ ունենք:

Դիտակետի և ընդհանրապես **զբոսաշրջության** զարգացումը կնպաստի նաև հարակից համայնքներին, որոնք կարող են իրենց գյուղմթերքը իրացնել, հյուրատներ առաջարկել: Սակայն, որպեսզի զարգացումը համաչափ տեղի ունենա, պետք է քվոտաներ առաջարկել համայնքներին:

Համայնքի կարևորագույն ծրագրերը **զբոսաշրջության** շուրջ են պտտվում:

Ես արտասահմանից հյուրեր եմ ունեցել, ասում էին արի մեզ տար Մեղրին ցույց տուր: Ես մտածում էի, որ էդպիսի տեղ չկա տանելու, էդ մարդկանց ցույց տալու մեր համայնքի **պատմությունը:**

Գեղագիտական կենտրոնում մի փոքր տարածքում մի անհատ հիմնադրել է մի փոքրիկ թանգարան, բայց համայնքում կան մեծ չօգտագործվող տարածքներ, որոնք անհրաժեշտ են օգտագործել այս նպատակով:

Գաղափարը ծագել է ճարտարապետ Ստեփան Նալբանդյանի մոտ: Համայնքում բավական մեծ քանակությամբ **պեղածո նյութեր** կային, անհրաժեշտ էր մի տեղ հատկացնել, որ դրանք ցուցադրվեն:

Շատ սրտաճմլիկ է գերեզմանների մոտ **թանգարանի** կառուցումը:

Թանգարանի հիմնումը կնպաստի Մեղրու հոգևոր և մշակութային արժեքների փողանցմանը սերունդերին, նրանք կզգան թե ինչ մշակույթի կրողներ են և չեն լքի բնակավայրը:

Բազաթիվ **նմուշներ ունենք**, եկեղեցական սպասք, տեղ չունենք դնելու:

Տարիներ հետո կունենանք մի կենտրոն, որ կարող է դառնալ **մշակույթի** զարգացման կենտրոն:

Այցելուների «ավելացումը» **թանգարան** իհարկե հնարավոր է, որովհետև մարդիկ ամեն օր գերեզմաններ են գնում:

Ամեն ինչը ֆինանսի է տանում, եկեք օրինակ մի շաբաթօրյակ կազմակերպենք, մարդիկ գան իրենք իրենց համայնքին օժանդակեն, «շպակլյովկա» էլ կքաշեմ, ինչ ա եղել... Էս **թանգարանն** առանց էդ կարգի մեծ ծախսերի էլ կարելի կլինի գլուխ բերել:

Երկրագիտական **թանգարանի** տարածքն անգամ կա, ինչ-որ դրամաշնորհով կիսակառույց կա կառուցված, անգամ ցուցանակ կա:

Մենք ունենք Գեղագիտության կենտրոն, Մշակույթի տուն, որտեղ կարող ենք ցուցադրել **թանգարանային նմուշներն ա**ռանձին սենյակում:

Գորիսում, օրինակ, **ֆիլմեր** են նկարահանում, այստեղ չկա ինչ-որ նման բան:

Եթե Անապաստանաց վանքի տարածքում հիմնվի այս **թանգարանը**, ապա այն միայն օգուտ կտա, Արենիի գտածո կոշիկը միլիարդի օգուտ տվեց Հայաստանին, Շվանիձորում թվագրված գերեզմանաքար ունենք, որը հանրապետությունում ամենահին գերեզմանաքարն է, ու դրա մասին շատ քչերը գիտեն:

Ինչո՞ւ պետք է մեծ ծախս անես, աշակերտներին հասցնես Երևան Պատմության թանգարան, Մեղրիի պատմությանը ծանոթանալու համար: Նման **թանգարանը** խիստ անհրաժեշտ է:

Բայց մեզ մոտ էլ կարող է **լեռնագնացությունը** զարգանալ, լեռնային հեծանվավարությունը, էքստրեմալ սպորտաձևերը:

Գեղագիտական կենտրոնը հսկա դահլիճ ունի: Պատկանում է մշակույթի նախարարությանը,

կարելի է դիմել նախարարին, էդ դահլիճն օգտագործել **թանգարանի** համար:

Պետք է ուշադիր լինենք մեր **մշակութային** արժեքների նկատմամբ:

Վերնիսաժի աշխատակիցները Մեղրիից են գնում կոլաժների համար նախատեսված նռները, եթե **թանգարան** լինի, կողքը կարող ենք վաճառել մեր աշխատանքները:

Մենք ունենք բնություն և հարևան, որը սիրում է բնության գրկում սնվել. եթե հարմարություններ լինեն, կարելի է դա օգտագործել:

Թանգարանի կառուցումը եկող տարվա համար լրիվ անիմաստ է:

Բնակչությունը ոչ թե դեմ կլինի **թանգարանի** ստեղծմանը, այլ բազմաթիվ այլ խնդիրների մեջ առաջնահերթությունների հարց կառաջանա: Ալվանք գյուղում ընդհանրապես խմելու ջուր չկա: Ամբողջ ամառը ջրի կռիվ է: Ոչ խմելու ջուր կա, ոչ ոռոգման: Էս վիճակում ու՞մ է պետք **թանգարանը**:

Պարսիկները, օրինակ, գինու **փառատոներ** շատ են սիրում, հաստատ նռան փառատոնին

կմասնակցեն:

Կարելի է այսօր անհատի կողմից ստեղծած փոքրիկ **թանգարանի** վրա ավելի համեստ ներդրումներ անելով կամաց-կամաց ձևավորելու ու զարգացնել մի արժեքավոր կառույց:

Օրինակ՝ Կարճևանքում մենք նախընտրեցին կոյուղին վերանորոգելու փոխարեն խաղահրապարակ սարքել երեխաների համար, որովետև դրանով լուծեցինք նաև երեխաների անվտանգության հարցը՝ փողոցից բերեցինք ավելի անվտանգ տեղ: **Թանգարանը** ևս շատ կարևոր է, ուղղակի պետք է հասկանալ, թե բոլոր համայնքների համար առաջնային ծրագիրը որն է, ինչպիսի ծրագիրն է հնարավորություն տալու ավելի մեծ թվով բնակիչների ծառայել:

Գիտեք, որ մեր մոտ կարելի է **դահուկային** կենտրոններ հիմնել. չգիտեք:

Եթե **թանգարանը** պիտի գործի անվճար, իսկ ո՞վ պիտի վճարի աշխատավարձը, պահպանման համար, արդյո՞ք համայնքը պատրաստ է այդ ծախսերն անելուն:

Հանգստի գոտիների ստեղծումը նաև կօժանդակի **ժամանցի** որակի բարձրացմանը:

Պատմության ուսուցիչը չի հանձնում գտածոները, որովհետև հույս ունի, որ **թանգարան** կբացվի:

Ամբողջ աշխարհի միրգը Մեղրիում է, բայց Հայաստանի տարբեր տարածաշրջանում **փառատոններ** արվում են, իսկ Մեղրիում՝ ոչ:

Մեղրին կարող է հետարքրել **պատմությամբ:**

Ես համաձայն եմ **թանգարանի** կառուցմանը, բայց ոչ համայնքի բյուջեյից:

Եթե հովանավորներ գտնեն, դրահամահավաք լինի, թող բացվի **թանգարան**, բայց որ համայնքի հաշվին:

Պարսկաստան անցնելու նպատակով այլ շրջաններից շատ մարդիկ են գալիս, իրենք էլ կարող են օգտվել **հանգստի** գոտիներից, փող ծախսել:

Ով գիտի որ Մեղրում կան 12 դարի **բուրգեր**, 16 դարի ջրանցիկ **կամուրջներ** են եղել, եղել ա առաջին կուսանոցը 17 դարի:

Գեղագիտական ազգային կենտրոնի բաժնում, լսելով պատմությունները, բոլորը զարմանում են, որ ինչո՞ւ չկա **թանգարան**:

Տուրզիմի զարգացման համար առաջին հերթին պետք է նպաստել հյուրատների զարգացմանը:

Մեղրեցին, կտրված լինելով քաղաքից, ի տարբերություն Կապանի, Քաջարանի, խոսում է **գրական հայերենով:**

Մեղրիիում աշխատում են ոչ միայն տեղացիները, այլև, օրինակ, ապարանցիները: Այս ներքին աշխատանքային միգրացիան դեռ աճում է, և Մեղրին իսկապես ներքին ռեսուրսներ ունի՝ իր քաղաքակրթությամբ ու մշակույթով, զարգանալ մինչև **հարավային մայրաքաղաք** դառնալը:

Նռնաձորում բոլորը թանկարժեք մեքենաներ ունեն, բայց տները գոմերի են նման, սա ավելի շատ **ապրելակերպի մշակույթ է:**

Ժողովուրդը գնում է Մեղրի **եկեղեցու** համար, բայց չունի մի տեղ, որտեղ հետո նստի:

Զբոսայգու կառուցումը միանշանակ ավելի կարևոր է, քան գյուղատնտեսական շուկայի կառուցումը:

«Մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում կատարվել են պետական սուբվենցիաներ՝ 60% և 40% համաֆինանսավորմամբ համայնքային բյուջեից, որի արդյունքում կապիտալ ծրագրեր են իրականացվում հենց Գորիսում:

Նոր վանքի տապ թաղամասը Գորիսի ամենախիտ թաղամասն է, մեր տարածքն այնքան մեծ է, որ այստեղ կարելի է մի ամբողջ **մարզական համալիր** կառուցել, այս ծրագրի անհրաժեշտությունը վաղուց կար:

Շատ կարևոր նախաձեռնություն է, մարդիկ կմարզվեն, նոր **ավանդույթ** կձևավորվի առողջ ապրելակերպի, երիտասարդները վատ սովորությունները կթողնեն:

Նախևառաջ պետք է մարդու **առողջությունն ա**պահովել ու նոր անցնել մնացած խնդիրներին:

Մարդիկ **ամաչում** են դուրս գալ ու վազել, չեն ուզում, որ իրենց տեսնեն:

Առողջությունն առաջնահերթություն է, եթե դրանով այսօր չզբաղվենք, հետո ավելի շատ խնդիրներ ենք ունենալու:

Մենք միայն ողջունում ենք **առողջ ապրելակերպը**, բայց մեծ խնդիր է միջոցառումների բաշխվածությունը Գորիս համայնքում:

Դիտակետը կարող ենք տարիների ընթացքում կառուցել, էլ դրա վրա գումար պետք չի ավելացել: Իսկ **առողջության** հարցը միշտ ակտուալ է:

Դիտակետից հրաշալի տեսարան է բացվում, որը գրավում է նաև **հարակից համայնքների բնակիչներին**: Սակայն այստեղ նորմալ սրճարանի առկայությունը կարող է ավելի գրավիչ դարձնել այս վայրը:

Մշակույթի տան առաջին հարկում կա երկրագիտական թանգարան, որի մասին բնակիչներն այդքան էլ տեղյակ չեն:

Պատմամշակութային ժառանգությունը որպես բիզնես ռեսուրս դիտարկելը և մասնավորին պատվիրակելը նպատակահարմար չի, քանի որ շատ դժվար կլինի վերահսկել նրանց գործունեությունը:

Մարզասրահների բացումը կնպաստի բազմաթիվ **հիվանդությունների** կրճատմանը:

Մենք գտել ենք մեր թվարկությունից առաջ բրոնզե առյուծ, բայց չենք կարողանում **ճիշտ ցուցադրել:**

Քարանձավային քաղաքը Բակունցի հին Գորիսն է եղել, շատ կարևոր է դրա վերակառուցումը:

Քարանձավային քաղաքը սրբություն է, այնտեղ իրավունք չունի մի ավելորդ քար, ծխախոտի մնացորդ լինի:

Ուզում էին անգամ մեր **բնական քարանձավները** քանդեին, արհեստական ինչ-որ բաներով փոխարինեին, պատկերացնու՞մ եք...

Քարանձավային քաղաքին տիրություն անող չկա, մարդիկ անասուններին քշում են այդտեղ արածացնելու:

Քարանձավային քաղաքի վերականգնումը շատ լավ ծրագիր է: Շատ մարդիկ քարանձավը որպես գոմ են օգտագործում այսօր:

Քարանձավային քաղաքի վերականգնման համար բանակցային փուլը գրեթե ավարտած է, և Որորտանի հեկ-ը պատրաստվում է համաֆինանսավորմամբ նպաստել քաղաքի վերականգնմանը:

Քարանձավային **կինոդիտում** են ուզում կազմակերպել, կարծում եմ՝ շատ լավ միտք է:

Եթե այսօր մենք ֆիզկուլտուրայի մարզահրապարակները ուժեղացնենք, ավելի **առողջ** կլինենք, և այն գումարները, որոնք ծախսում են առողջապահության վրա, կարող են նվազել:

Փողոցով քայլում ես, երեխան տեսնում է, ճաշակը զարգանում է, քաղաքային **կուլտուրան** շատ կարևոր է:

Երևանում ծաղիկները շատ են, Գորիսում մի ծաղիկ է աճում երեխան պոկում է, չի տեսել, **ճաշակ** չի զարգացել գեղեցիկը պահպանելու, քաղաքը սիրելու:

Ինձ համար էլ կարևոր է պահպանել մեր հին **մշակույթը**, մենք պատասխանատու ենք մեր վաղվա սերնդի առջև:

Քարանձավային քաղաքը պետք է այնպես կառուցել, որ այլ բաների վնաս չտանք, այսինքն պահպանենք տարածքի **պատմամշակութային** արժեքը:

Մենք Քեոփսի բուրգ չունենք, պետք է մեր ունեցածը զարգացնենք:

Ակներ և Վերին Շեն բնակավայրերը մինչև 1950 եղել են **քարանձավներում**, ոչ մի քարաշեն տուն չի եղել:

Գորիսը շատ այլ խնդիրներ ունի, բայց **սպորտը** շատ կարևոր է:

Մենք **մտածելակերպի** խնդիր ունենք. մարդիկ մտածում են, եթե ինձ պետք չէ, ուրեմն դա պետք չէ նաև մյուսներին:

Համայնքի ղեկավարներն այցելում են գյուղեր, փորձում հասկանալ համայնքային կարիքները, սակայն մարդիկ խոսում են միայն անհատական խնդիրներից: Հանրային շահի մասին **ընկալում** չկա:

Գորիսեցիներն **ակտիվ** ու **նախաձեռնող** են, եթե նախկինում ծաղիկ էինք տնկում, պոկում էին, ապա հիմա խնամում են:

Է. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Պետք է այնպիսի տեղում կառուցել զբոսայգին, որ **բոլորը հնարավորություն ունենան** օգտագործել:

Մեծ դժվարությամբ հնարավոր եղավ զբոսայգու տարածքին **վերադարձնել հանրային կարգավիճակը:** Հանրային զբոսայգու առկայությունը **խիստ կարևոր է համայնքի երեխաների** համար:

Ագարակը մեր խոշորացված համայնքի ամենարագ աճող բնակավայրերից մեկն է, այն անմիջապես հարևանում է Իրանին: Այս հատվածում **չկա որևէ հանգստի գոտի**, այստեղ արդեն աշխատանքներ են կատարվել: Համայնքի բյուջեից մեծ գումար չի տրամադրվում, հիմնական գումարը նվիրատվություն է: Ագարակն ունի **յոթ հարյուր աշակերտ**:

Եթե բյուջեից հատկացում է արվում **այգու** համար, ապա պետք է ուղղվի Մեղրիին: Ագարակում մարդիկ հնարավորություն ունեն դուրս գալու ու զբոսնելու:

Ողջ խոշորացված համայնքում կա զբոսայգու խնդիր: Սակայն առաջնահերթ է հենց Մեղրիում **զբոսայգու** կառուցումը:

Շենքերի բակերում բավարար տարածք չկա բակային այգիներ կառուցելու համար, ուստի այս **զբոսայգին** բոլորին է ծառայելու:

Հարակից գյուղերի բնակիչներն էլ են ուզում օգտվել **զբոսայգուց**, երեխաներին խաղահրապարակ տանել: Տարբերություն չկա, Մեղրիում կլինի զբոսայգին, թե Ագարակում:

Տարբեր բնակիչներ խնդիրներ են ստեղծել այստեղ. անօրինական սեփականատերեր են եղել **զբոսայգու** տարածքի փոքր մասերի համար:

Մարզպետի հետ խոսում էս, ասում է **գազաֆիկացումը** թանկ հաճույք է, հոսանք վառեք:

Մեղրիում գազի խողովակները շատ են, բայց **գազ չկա:**

Մեղրիում գազն անցնում է գնում է Երևան, բայց Մեղրիում **գազ չկա,** ցախով ենք տաքացնում:

Մեղրիում ամենահրատապը **գազի** հարցն է:

Մինչև «դուռնուլուսամուտը» **գազաֆիկացայի** հարցը պիտի լուծել: Հա, կողմ եմ, բայց անտառահատումը նվազեցնելու համար պետք է մեղրեցուն այլընտրանք առաջարկել, օրինակ՝ գազի տեսքով:

Երևանում ասում ենք Մեղրիում **գազ** չկա, ծիծաղում են մեզ վրա:

Մեղրում **գազը** վառեցին ցույց տվեցին ու մենք էլ գազ չտեսանք, խողովակները կա գազ չկա. կատակում են որ էս խողովակները պետք է կտրել թառմա սարքել խաղողի համար. Մեղրիով գնաց Եվրոպա, մենք չտեսանք:

Գազը Իրանից գալիս մեր տարածքով հասնում է Երևան: Մեզ մոտ գազաֆիկացված չէ, անհրաժեշտ է մտածել **գազաֆիկացման** ծրագիրն աշխատացնել:

Ամենահրատապը գազաֆիկացումն է, քանի որ մեր խեղճ **տղամարդիկ** ամեն ամիս **գազի** բալոնները ուսներին գազ են բերում կենցաղային կարիքները հոգալու համար:

Լուսամուտի ու վառելափայտի կարիք, կարելի է ասել, համայնքում առանձնապես չկա: Էս դարաշրջանում վառելափայտը որս է... բնական գազ կա... եկեք ոտքի կանգնենք, մի հատ ցույց անենք: Մեր հեղափոխական նախարարը թող մի

Մեղրիում **չկա որևէ տարածք**, որտեղ մարդիկ կարող են աշխատանքից հետո գնալ ու ժամանակ անցկացնել:

Առաջարկվող գումարով կարելի է մեկ ընդհանուր **զբոսայգի** կառուցել՝ ասենք հինգ համայնքի համար հարմար տարածքում, ոչ թե մեկում:

Ագարակում զբոսայգու կառուցմանն առաջնահերթություն կարելի է տալ թերևս միայն, եթե մոտակա տարիներին նախատեսվելու է նաև Մեղրիում **զբոսայգու** կառուցում:

Մեղրիում ավելի կարևոր բան ունենք անելու՝ **ստադիոնն** ու **ենթակառուցվածքների** վերականգնումը:

Անկախ համայնքից, մեխանիզմներ են պետք, որպեսզի բոլոր համայնքների բոլոր երեխաները հաճախեն **մանկապարտեզ**, կլինի դա մանկապարտեզ կառուցելով, թե երեխաների համար տրանսպորտ ապահովելով:

Անգամ մեծ գումարների ներդրումն արդարացված է, որովետև նման ծրագիրը՝ իր **ենթակառուցվածքներով**, օրինակ՝ հանգստավայրով, կնպաստի մեր ինքնության պահպանմանը: Նոր սերունդ արդեն չգիտի, թե իլիկն ինչ է: Տանում թափում է: Ինչո՞ւ պետք է մի տաս տարի հետո միայն իմանա, որ դա ասենք տաս հազար դոլար արժողության իր էր...

Եթե քաղաքին գումար կբերի դիտակետը, ապա միանշանակ առաջնահերթ է, կխթանի, որ այլ **ենթակառուցվածքները** զարգանան:

Տեսեք, Խնձորեսկի ճոճվող կամուրջը, որևէ կերպ չի նպաստում համայնքի զարգացմանը, այն հիմնական բնակավայրից հեռու է, չկան համապատասխան **ենթակառուցվածքներ**, այստեղ խնդիրը միայն դիտակետի վերանորոգումը չի, անհրաժեշտ է մի մեխանիզմ ստեղծել, որ Գորիսից հետո մարդկանց ուղղորդի նաև Խնձորեսկ, այլ վայրեր, որ տուրիզմին տրված գումարն արդյունավետ դառնա:

Եթե **դպրոցները** լինեին համայնքի ենթակայության տակ, ապա մարզադահլիճները կտրամադրվեին համայնքի բնակչիներին:

Տուրիստական երթուղիներ պիտի մշակվեն, որ բոլորն առաջնորդվեն այդ երթուղիներով, որպեսզի յուրաքանչյուր ներդրած դրամ իր ազդեցությունը թողնի զարգացման վրա:

Էս տուրիզմի ծրագրերը լավ են, բայց պիտի մի քանի տարի սպասենք, որ զարգանա, փող բերի, իսկ մինչ այդ մենք պիտի **շարունակենք ապրել**, հատ էլ Մեղրի գա: Ես էլ էդ կուսակցությունից եմ, գամ հետներդ կանչեմ թող էդ մարդը գա էս **գազաֆիկացման** հարցը լուծի... ամոթ ա, ախր...

Գյուղեր կան, որտեղ **գազաֆիկացումն** էլ չի օգնի, առանց վառելափայտի հնարավոր չի տաքանալ:

Հիսուն միլիոնով **գազաֆիկացիա** հնարավոր չի անել, բայց միգուցե նորմալ լուսամուտն ու վառելափայտի տեսքով օգնությունը մի քայլ է դեպի ավելի համապարփակ լուծում:

Անհրաժեշտ է այս ծրագրում **վառելափայտը փ**ոխարինել **գազով:**

Լուսամուտների փոխելը շատ կարևոր է ու մնայուն. փայտի համար այս տարի գումար կտանք փայտը կվառենք, բա հաջո՞րդ տարի: Դրա համար պետք է **գազաֆիկացնել:**

Հայանտառին թույլատրվում է սանիտարական մաքրումներ իրականացնել: Եթե Մեղրին լինի գազաֆիկացված, սանիտարական հատումները կբավականացնեն մնացած գյուղային համայնքներին, որտեղ **գազաֆիկացնելը** դժվար է: Հակառակ դեպքում միայն սանիտարական հատումներով ողջ բնակչության տաքացման հարցը չի լուծվի:

Ամենահրատապը գազաֆիկացումն է, քանի որ մեր խեղճ տղամարդիկ ամեն ամիս **գազի** բալոնները ուսներին **գազ** են բերում կենցաղային կարիքները հոգալու համար:

Իրականում ամոթալի ա էն փաստը, ո**ր Իրանի կառավարությանը մեր համար ավելի շատ ա մտածում,** քան մեր կառավարությունը: Իրանական կողմը երկու միլիոն դոլար փող է ծախսել մեր **գազատար** խողովակների համար:

Գազը մեզ համար երազ է ու երազ էլ մնալու է:

Եկեք բոլորս համախմբվենք, էս առիթից օգտվենք, ժողովրդ ջան, ես մտածել եմ նույնիսկ թե կառավարությունն ինչպես կարող է մեզ օգնել էս հարցում: Առաջարկում եմ **գազի** ավելացված արժեքի հարկից մեզ ազատեն: Սա էականորեն բնակչության գազի ծախսերը կկրճատի:

Մեզ համար այս պահին հրատապը վառելափայտի հարցն է: Այս գումարով պետք է **գազի** հարցը լուծենք:

Մարդիկ դեմ են գազաֆիկացմանը, քանի որ փայտը ձրի է, իսկ **գազին** պետք է փող տան:

Եթե համայնքում **գազ** լինի, ապօրինի անտառահատումներն էլ կկրճատվեն:

ջուր խմել, երեխաներին դպրոց ուղարկել, առողջությունը պահպանել:

Եթե մարդ ուզում է գնալ և ինչ-որ գյուղում ապրել, անպայման ծանոթանում է **ինֆրաստրուկտուրային**՝ կա մանկապարտեզ, թե՝ ոչ, դպրոց, շուկա և այլն:

Մեղրի համայնքի **հանգստի գոտիները** պիտի զարգանան մասնավորի կողմից:

Եթե **հանգստյան գոտիները** պետք է աշխատեն սպասարկումով, ապա ես կողմ եմ, իսկ եթե անվճար է, ապա դա կվերածվի խոզանոցի:

Եթե տնտեսվարող սուբյեկտները տուգանվեն թափված **աղբի** համար, ապա Մեղրու կանաչ գոտիները նորմալ տեսք կունենան:

Հանգստի գոտիների ծախսը մասնավորը պիտի հոգա, սա ի՞նչ պետության գործն ա:

Համայնքն ինքը պետք է կարգավորի **հանգստի գոտիների** մաքրության հարցը:

Հանգստի գոտիների ստեղծումը ռեալ ու իրատեսական չէ: Ի՞նչ է հանգստի գոտին, ո՞րն է դրա նշանակությունը:

Լիճք բնակավայրը **հրաշալի բնակավայր է հանգստի գոտի վերածելու համար**, ժամանակին եղել է պարսից շահի ամառանոցը: Ավելի լավ կլիներ, որ այդ **բնակավայրի ճանապարհը վերանորգվեր:**

Եթե Շվանիձորի տարածքի հինգ **տաղավարների** վրա ծախսվի ընդամենը կես մլն դրամ, դրանք կդառնան մեկօրյա հանգստի հրաշալի վայրեր:

Գործարարները իրենց գումարը ներդնում են մեքենաներ ներմուծելու համար, համայնքը պետք է գումար տրամադրի **տուրզիմի** զարգացման, զիփլայն կառուցելու համար:

Մենք ուզում ենք ընտանիքով դուրս գալ քաղաքից ու մի տեղ **հանգստանալ**, չկա որևէ մի տեղ նման հանգիստը կազմակերպելու համար, այս շատ կարևոր ծրագիր է:

Հանգստյան գոտիները թույլ կտան իրացնել մեր չիրը, գումար վաստակել, էն դուռ-լուսամուտնի համար էլ փող բերել բյուջե:

Պարսիկը կխմի, կգա **զիփլայնով** կթռչի, փողն էլ կգա համայնքի բյուջե:

Որպեսզի այս **հանգստյան գոտիները** նորմալ աշխատեն, պետք է նաև ճանապարհները վերանորոգել, համապատասխան ցուցանակներ տեղադրել:

Տաս-տասներկու խորանարդ մետր փայտ ենք վառում, որ տաքանանք. բնակարան լինի, թե սեփական տուն: Դրա համարժեք **գազը** շատ է թանկ նստելու, բնակչությունն ի վիճակի չի լինի վճարել:

Տուրիստը գալիս է Մեղրի, բայց այստեղ բավարար պայմաններ չկան, **գազ** չկա: Տեղի մարդիկ էլ են արտագաղթում:

Գազը, **լույսը**, **ջուրն ա**ռաջնային լուծում են պահանջում այս տարածքում:

Գազաֆիկացումն ավելի հրատապ խնդիր է համարվում: Գազն անցնում է Մեղրիի կողքով, բայց մենք գազ չունենք:

Ագարակը ունի ավելի լուրջ խնդիրներ: Շատ **փողոցներ** կան, որտեղ լուսավորություն չկա: Զբոսայգու հարակից փողոցը լուսավոր չէ, ասֆալտապատված չէ:

Մեզ համար ավելի հրատապ է **լուսավորության** ու **փողոցների** վիճակը: Շատ մութ անկյուններ կան, որոնցով գիշերը չես կարողանում անցնել: Այս գումարը պետք է ուղղվի հենց լուսավորությանը:

Լիճք բնակավայրը հրաշալի բնակավայր է հանգստի գոտի վերածելու համար, ժամանակին եղել է պարսից շահի ամառանոցը: Ավելի լավ կլիներ, որ այդ բնակավայրի **ճանապարհը** վերանորգվեր:

Մեղրիում չկան մայթեր, նորմալ **փողոցներ**: Քաղաքը կորցրել է իր **հատակագիծը:**

Արտադրանքի իրացման խնդիրները կապված են նաև ճանապարհների հետ, օրինակ Նռնիձորում ստանում են լավ բերք, բայց **ճանապարների** վատ որակի պատճառով դժվարանում է բերքի իրացումը:

Տուրիստական կենտրոնը վերցնում է տվյալներ երկրի մասին, օրինակ սննդի անվտանգությունն աշխատում է թե ոչ, **ճանապարհներ** կան, թե չէ, **ենթակառուցվածքներ** կան ,թե ոչ, ո՞վ կգա թանգարանի համար:

Տուրիզմի համար ամենակարևորը **ենթակառուցվածքների** կառուցումն է, նոր պետք է անցնել թանգարաններին:

Միշտ լինում են նման հարցեր. ինչո՞ւ այստեղ **լուսավորություն** կա, իսկ, օրինակ, այլ բնակավայրում չկա, այսինքն, մենք՝ բոլորս միշտ առավելությունը տվել ենք Մեղրի քաղաքին՝ համարելով այն կենտրոն:

Ես իմ **հանգստի** համար նախատեսված գումարը չեմ տանի ուրիշ մարզում ծախսեմ:

Կարելի է **արհեստական լճակներ** ստեղծել, այս կերպ ևս տուրսիտեր գրավել:

Հանգստի գոտիների ստեղծման հարցը բյուջեում նախատեսված էլ չի, հետևաբար այս սցենարը մնացածներին հավասար քննարկելու կարիք դեռևս չկա:

Մեկօրյա հանգստի մեկնողը բարեկարգ **հատուկ պայմաններ** չեն ուզում, այստեղ այդքան գումար ծախսելու բան չկա:

Այգեձորում կա նմանատիպ **հանգստի գոտի,** որը չի արդարացնում:

Զանգեզուր ԿՀՆ Արևիկ մասնաճյուղը մի փորձ արեց, **ճամբար** հիմնեց երեք հազար դրամ վճարով՝ սանհագույց, գիշերակաց, վայֆայ՝ ընդամենը երեք հազար դրամով, հիսուն միլիոնից քիչ փոխանցեն այդ կազմակերպությունը, այն շատ լավ կկազմակերպի գործը շատ ավելի քիչ միջոցներով ու արդյունավետությամբ:

Մեզ անհրաժեշտ են մաքուր, իրենց պարտականությունները կատարող համայնքի ղեկավարներ, մենք կունենանք նորմալ **հանգստյան գոտիներ:**

Լիճքում, Տաշտունում, որտեղ ավելի զով է, նման վայրերի կառուցումն ավելի նպատակահարմար է. այստեղ կարող էինք մեր **բարբառների մասին տեղեկացնել** մեր հյուրերին: Շատ կարևոր է հասկանալ ամեն մի համայնքի առանձնահատկությունները և այս **հանգստավայրերի առաջարկները կառուցել** հենց դրանց վրա:

Տուրիզմի զարգացման **ենթակառուցվածքները զարգացնել**, այդ դեպքում միգուցե շուկան էլ գրավիչ դառնա:

Ցանկացած ծախս ինքնանպատակ չի լինելու. **համայնքի գրավչությունն** ենք ապահովելու, եթե գեղեցիկ այգի ունենանք:

:

Էնա կգնամ **գետի** մոտ պալատկա կխփեմ կմնամ:

Ես հեռու եմ ապրում, բայց ես կուզենամ մտնել Ագարակ և **գեղեցիկ** տեսնեմ:

Քաղաքի կենտրոնի բարեկարգ լինելը ցանկացած քաղաքի այցեքարտն է, շատ կարևոր

Մի ծնողը կարող է Ալվանքից իր երեխային տանի Շվանիձորում մանկապարտեզ, մյուսը՝ տարբեր պատճառներով, դա չի կարող անել: Միգուցե անհրաժեշտ է **ավտոբուս ապահովել**, որպեսզի տարբեր համայնքներից երեխաներին հասցնի մանկապարտեզ:

Եթե մի օր **ջուր** չի լինում, դա ազդում է բերքի որակի վրա, ինչքան էլ ջրեմ, արդեն արքայախնձորը չի մեծանա:

Մեղրիում **ջրի ու ոռոգման խնդիր** ունենք: Ինչո՞ւ ուշադրություն չի դարձվում դրան:

Ջրօգտագործումը մեզ մոտ սխալ է կազմակերպված:

Շվանիձորի համար ոչ թե մանկապարտեզն է առաջնային, այլ **խմելու ջրի հարցը:**

Տուրիստը գալու է այստեղի **ջուրը** խմի ու հիվանդանոց ընկնի՞:

Տուրիստը մաքսակետից դուրս է գալիս չկա մի **զուգարան գնալու, հաց ուտելու տեղ նաև որտեղ կլինի շուկա:**

Առաջ որ «**լևի» լույս** ունեինք, նենց լավ էր:

Ալվանք գյուղում ընդհանրապես **խմելու ջուր** չկա: Ամբողջ ամառը ջրի կռիվ է: Ոչ խմելու ջուր կա, ոչ ոռոգման: Էս վիճակում ու՞մ է պետք թանգարանը:

Փոխարենը պետք է ուղղել գումարը Մեղրիի **ջրամբարի կառուցմանը:**

Առաջարկված ծրագրերը միգուցե կարևոր են, սակայն յուրաքանչյուր համայնքում կան շատ ավելի առաջնային խնդիրներ, օրինակ՝ Ալվանքում խմելու **ջրի** հարցը, որն ազդում է երեխաներին պարտադիր տաք սննդով ապահովելու խնդրի վրա:

Եթե հորդառատ անձրև է գալիս, մենք **ջուր** չենք ունենում, ուզած-չուզած՝ խանութից ենք գնում:

Ես Մեղրիի բնակիչ եմ ու **ջուրը** չեմ խմում: Տուրիստը ո՞նց է խմելու:

Շատ կարևոր է հանրային **զուգարանների ցանցը**, քանի որ դրանք գրեթե գոյություն չունեն

Մենք գետի **ջուր** ենք խմում:

Աղբամաններ չկան մեր քաղաքում, նախ պետք է դրա մասին մտածեն, հետո՝ հանգստի գոտու:

Մեր մոտ **հանրային ծառայությունների** գործը լավ ռելսերի վրա է դրված, աղբը լավ մաքրում են, աղբամաններ էլ կան:

է, որ մեր կենտրոնն էլ գեղեցիկ լինի, բարեկարգ և մաքուր:

Գորիսը թող մի գեղեցիկ **հանգստյան գոտի** լինի նաև այն հայերի համար, որոնք հնարավորություն չունեն մեկնել այլ երկրներ: Գորիսն այդ ամբողջ պոտենցիալը ունի, պետք են ուղղակի թիրախային ներդրումներ:

Դիտակատը կարելի է դիտարկել ավելի շատ որպես հանգստի գոտի:

Դիտակետը միայն մի տեղ չի, դա հսկայական տարածք է, որտեղ ամեն ինչ կարելի է կառուցել ու հարմարացնել:

Դիտակետի տարածքում ամենամեծ խնդիրն **աղբի** կուտակումն է:

Դիտակետի տարածքը բարեկարգելու դեպքում մի ռիսկ էլ կա. միգուցե այն սկսի հրապուրել հարբեցողների՞ն:

Մշակույթի տան հարակից **այգու** վերականգնումը մի ամսից կավարտվի:

Ճեմուղու բարեկարգումն ավելի կարևոր է, քան, օրինակ, դիտակետինը:

Մշակույթի տան հարակից **ճեմուղու** վերակառուցումը շատ կարևոր է, քանի որ այն մեր քաղաքի կենտրոնում է:

Այգին շատ գեղեցիկ է, կողմ ենք, աջակցում ենք, մեր համայնքի համար է արվում:

Հետագա եկաուտի առումով գուցե **դիտակետն** ավելի օգտակար է, բայց **հրապարակը** չի կարելի անբարեկարգ թողնել:

Մենք **դիտակետի** դեպքում ավելի կողմ ենք վերակառուցմանը, բայց, կարծում եմ, **ճեմուղու** վերանորոգումը մեծ հարց չի լուծելու:

Մեր մոտ ամեն ինչ իրար մոտ է, երբ մեկը **բարեկարգում** ենք, մյուսի վրա էլ է մասամբ ազդում:

Քարանձավային քաղաքի վերանորոգումը և **դիտակետի** բարեկարգումն իրար հետ շատ փոխկապակցված են. չի լինի մեկը սարքել, մյուսը՝ ոչ:

Առաջ տատս ասում էր, աղջի, փողոցը մաքրի, նոր մտիր տուն, հիմա էլ էդպես չի: Այսինքն մենք մեր **համայնքի** մասին չենք մտածում, միայն մեր մասնավորը:

Դիտակետով գնում և հասնում ես այստեղ, **դիտակետից** տեսնում Քարանձավային քաղաքը. այսինքն կոմպլեքս պետք է վերականգնել, մեկն առանց մյուսի չի կարող լինել:

Լուսամուտների խնդիրը շատ արդիական է ոչ միայն խոցելի խմբերի համար, այլ նաև համայնքային կարևոր **ենթակառուցվածքներին**, օրինակ՝ Ալվանքի դպրոցի: **Լուսամուտները** պիտի փոխվեն հատկապես դպրոցներում:

Ուզում եմ բոլորիդ տանեմ մեր գյուղը տեսնեք, որ ոչինչ չկա. միայն հրապարակը կամ **ճանապարհները** չեն:

Դիտակետի հատվածը գրեթե վերածված է աղբատեղիի, **ճանապարհ** էլ չկա անգամ արդեն:

Դիտակետը լուսանկարահանվելու հրաշալի վայր է, բայց մարդիկ **չեն կարողանում հասնել** այնտեղ, ով էլ փորձում է գնալ, հաստատ փոշմանում է:

Միջհամայնքային **ճանապարհները** գտնվում են անմխիթար վիճակում:

Առաջարկում ենք քարանձավային քաղաքի վերակառուցումը դեռ թողնենք ու մտածենք, ասենք, նույն քարանձավ տանող **ճանապարհների** մասին:

2-4 միլիոնով ստենտավորում է, բայց անգամ իր **ճանապարհը** չի վերանորոգում, կոյուղու հարցով ի՞նչ պիտի անի:

Քարանձավային քաղաքը վերականգնելուց առաջ պետք է վերականգնել այդտեղ տանող **ճանապարհը:**

Չի կարելի ինֆրատրուկտուրան զարգացնել առանց լավ **ճանապարհների**:

Մենք շատ գեղեցիկ տարածքներ ունենք Գորիս քաղաքից հեռու, ուղղակի **ճանապարհ** չլինելու պատճառով, մարդիկ դրոններով են նկարում, չեն հասնում այդ տարածքներ:

Մենք նաև ռազմավարական նշանակության **ճանապարհներ** ունենք, որոնք այնքան վատ վիճակում են, որ անգամ տանկերը չեն կարողանում անցնել:

Ճանապարհներ պետք է սարքվեն, **տրանսպորտ** աշխատի:

Քրոջս գերմանացի ամուսինը շատ հետաքրքրված էր Ներքին խոր գյուղի քարանձավներով, և այնտեղ հասնելու համար վարձում են նիվա, որովհետև **ճանապարհները** շատ վատն են:

Դեպի դիտակետ **ճանապարհը** շատ վատն էր, շներն էլ ավելի վտանգավոր են դարձնում այդ ճանապարհը, որովհետև **լուսավորություն** չկա, աղբն ա մեն տեղ թափված է: Այս ամենը պետք է

Համայնքը պետք է պատասխանատվություն կրի **տարածքի** պահպանման համար: Երբ որ դրսից ներդրումներ են լինում, լինում են միանվագ, և տարածքը հետագայում չի սպասարկվում:

Մեր ամբողջ շրջանում ամենամեծ **գյուղատնտեսական հողերը** Խնձորեսկն ունի, ինչու՞ եք դուք ամեն ինչ թողնում պետությանը, գուցե ձեր հողերը՞ մշակեք:

Դիտակետից ինքնասպանություններ են լինում, լավ է Քարանձավային քաղաքը կառուցենք:

Ամբողջ **քարանձավային քաղաքը** վերածվել է արոտավայրի:

Մշակույթի տան աշխատանքները տեսանելի են մեզ համար, կենտրոնական տեղ է, ամեն ինչ լավ սարքում են:

Մշակույթի տան հարակից **այգին**, որը գտնվում է ադմինսիտրատիվ շենքերի մեջ, շատ գեղեցիկ է:

Գորիսի **դիտակետի** վերանորոգման համար ներդրումը ճիշտ է, բայց պիտի հասկանանք, որ խնդիրը միայն վերանորոգել չի, այլ նաև պահպանելը, այդքան գումար ներդրեցինք, իսկ **պահպանելը**:

Եթե ընտրություն լինի խաղահրապարակը, թե **դիտակետը**, միանշանակ դիակետը. նա ավելի շատ շահառուներ է ներառում:

Գորիսում կա ֆուտբոլի դաշտ, կարելի է **դիտակետն** այնպես սարքել, որ վերևից դաշտը երևա:

Խոսքը բաց **խաղահրապարակների** մասին է, որոնք սեզոնային են: Իսկ փակ խաղահրապարակնե՞ր, **մարզադպրո՞**ց...

Դիտակետի վերակառուցումն արդեն սկսված է, փողն էլ կա:

Հիմա այդ **տարածքները** շատ վտանգավոր են, փողոցային կռիվները, ռազբորկաները հիմնականում այդտեղ են լինում:

Մեզ մոտ շատ **կիսակառույց շենքեր** կան, եթե դրանք վերակառուցեն, մեծ օգուտ կտան:

Ֆուտբոլի դաշտը կարելի է նաև որպես **միջոցառումների** վայր օգտագործել:

Քաղաքում կան օբյեկտներ, որոնք կարող են ծառայել որպես **մարզասրահներ**, օրինակ դպրոցի դահլիճը, կարելի է դասերից հետո համայնքին տալ վճարովի սկզբունքով:

Գործկոմի կողքի սրճարանը շատ գեղեցիկ է, Երևանյան կոլորիտ կա, եթե բարեկարգվի վերացնել, որպեսզի դա հաճելի հանգստավայր դառնա:

Հին Գորիս, Ակներ, Խնձորեսկ. զբոսաշրջիկները հարակից համայնքներ միշտ են գնում, բայց ամենակարևորը նորմալ **ճանապարհ** ունենալն է:

Գորիսում մեծ խնդիր է **մայթերի բացակայությունը**, տուրիստի համար ոտքով քայլելը հարմար չի ու անգամ վտանգավոր:

Քաղաքի միակ գործող **աղբավայրն** անցնում է քարանձավային քաղաքի կողքով, **ճանապարհները** եթե վերականգնվեն, աղբը չի թափվի այնտեղ:

Հիմա այդ տարածքը **կեղտոտ** է շատ, աղբանոց է, երեկոյան ժամերին կվախենաս քայլես:

Երիտասարդները շատ են սիրում այդ վայրը, բայց դրա հետ մեկտեղ նաև շատ են փչացնում, չեն պահպանում, **աղբն** աղբամանում չեն թափում. պահակներ պետք է լինեն, հնարավոր է նաև հասարակական հիմունքներով պահակություն անեն, կամ տարածքի բիզնեսները պահակություն անեն:

Խոշորացումից հետո, օրինակ Խնձորեսկում, **աղբահանությունը** կազմակերպվեց վերջապես, **լուսավորությունը** կարգավորեցին, դա էլ խոշորացման դրական կողմերն են:

Վերին Շեն գյուղում մարդիկ խմում եմ կեղտոտ **ջուր**, այս դեպքում դիտակետի կամ քարանձավային քաղաքի կառուցումն ակտուալ չի:

Այսօր համայնքում բազմաթիվ այլ խնդիրներ կան, օրինակ կոյուղին, Խնձորեսկում ջրի խնդիր ունենք, Քարահունջում խմելու **ջրի** ցանցն անբարեկարգ է, իսկ մենք խոսում ենք ճեմուղու մասին, որը կարծես մեծ ազդեցություն չի ունենալու:

Խնձորեսկ համայնքում մեծ է խմելու **ջրի** խնդիրը:

Բնակչի կենսագոյատևման մինիմալ պահանջները պետք է բավարարել, օրինակ **գազ**, **ջուր**, **լույս**, նոր մտածել տուրիզմի զարգացման մասին, քանի որ տուրիստը մնում է երեք օր, իսկ բնակիչը՝ միշտ էլ այստեղ է:

Ակներ համայնքի **կոյուղին** լցվում է գետը, այս խնդիրը պետք է առաջին հերթին լուծել:

Սրտաբանականի **կոյուղաջուրը** թափվում է փողոց ու դաշտ, կովերն էլ էդ ջուրն են խմում: Տեղով հիվանդության բուն ա...

ճեմուղին նրա շրջակայքում էլ գեղեցիկ սրճարաններ կբացվեն:

Ոչ մի գյուղում, անգամ Գորիսում նորմալ **մարզահրապարակ** չկա: **Միջոցառումների** դեպքում չգիտենք որտեղ կազմակերպել:

Մենք ունենք հրաշալի **աղբյուրներ**, որտեղ գորիսեցիները գնում են հանգստանալու, և այդ ամենն անվճար է:

Հին Գորիսի **քարանձավների** վերանորոգումը մեծ տուրիստական ներուժ է պարունակում, և լավ նախադրյալ է համայնքի զարգացման համար, բայց հարակից խնդիրներն այնքան մեծ են, որ անհրաժեշտ է սրանց զուգահեռ որոշակի միջոցներ ուղղել ավելի **հրատապ ու առօրեական խնդիրների** լուծմանը:

Դիտակետի հետ կապվում են մյուս **ինֆրաստրուկտուրաները**, որոնք նույնպես կզարգանան:

Մենք նույնիսկ **տրանսպորտ** չունենք, որ Խնձորեսկից գանք այստեղի մարզահրապարակներից օգտվենք: Թող մեր մոտ մի հատ կառուցեն, ոչ թե Գորիսում երեքը:

Ը. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Կանայք ավելի լավ կպատկերացնեն այս **զբոսայգու** կարևորությունը. երբ երեխաներդ հանգիստ և ապահով խաղում են, իսկ դու կարողանում ես գոնե մի քիչ հանգիստ նստել:

Պետությունը ընդամենը տասնութ հազար դրամ է տալիս **մայրիկներին**, որպեսզի նրանք մնան տանը և իրենց **բալիկներին** խնամեն:

Ծրագրում գրված է, որ 50 **կին** աշխատանք կստանա, բայց այդ համայնքում 20 կին չկա:

Ակներում առավոտյան արթնանում են, հավաքվում աղբյուրի մոտ, 4-ին մտնում գոմ: Երեխաներն էլ սովորում են այն, ինչ տեսնում են: **Կանայք** էլ, ինչ, տներում գործ են անում ու բամբասում: Ոչ մի տեղ չկա, որտեղ մարդիկ իրար հետ նորմալ կհավաքվեն, ժամանակ կանցկացնեն:

Ամենահրատապը գազաֆիկացումն է, քանի որ մեր խեղճ **տղամարդիկ** ամեն ամիս գազի բալոնները ուսներին գազ են բերում կենցաղային կարիքները հոգալու համար:

Թ. ԵՐԵԽԱՆԵՐԻ, ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Մանկապարտեզ գնացող **երեխան** զարգացվածությամբ տարբեր է լինում շատ. մանկապարտեզի առկայությունը և հասանելիությունը շատ կարևոր խնդիր է:

Նախակրթարանները իրենց կարևոր դերն ունեն **բնակիչների հետագա կրթության** գործում:

Այս համայնքներից երեխաները դպրոց հաճախելիս հոգեբանական տրավմա են ապրում, որովհետև **շբման, հարաբերվելու** խնդիր ունեն:

Հիմա մարդիկ անմիջապես տեսնում են **մանկապարտեզ գնացող ու չգնացող երեխայի տարբերություն**, անգամ երեխայի շրջապատ մտնելն ու բարևելը փոխվում է:

Եթե երեխան մանկապարտեզ չի գնում, հետագայում **դպրոցում խնդիր է ունենում**:

Ծնողները կկարողանան իրենց երեխաներին **ճիշտ դաստիարակություն** տալ, ծնողները կարող են գնան աշխատելու, հետո կարող են նորմալ ուսման տալ երեխաներին:

Եթե մեր մոտ **մանկապարտեզ** չկա և մարդիկ հեռանում են, գոնե մյուս գյուղերում թող կառուցեն մանկապարտեզ, որ իրենք մեր վիճակում չհայտնվեն:

Շվանիձորում կա տիպային **մանկապարտեզ**, դա պետք է ուղղակի բարեկարգել:

Քաղաքում ո՞նց են երկու - երեք կանգառ տանում երեխային: Էստեղ տրանսպորտի հարցն էլ համայնքնապետարանը լուծում է: Ի՞նչն է խնդիրը, որ երեխաներին այլ համայնք չեն ուղարկում մանկապարտեզ:

Ճամբարի կառուցումը քարանձավային մտածելակերպ է: Ճամբարը օգտագործվում է միայն ամռանը, ավելի կարևոր է **մանկապարտեզներ** կառուցել:

Շվանիձորն ամենաբազմամարդ և երիտասարդ գյուղն է, բայց մինչև մանկապարտեզի շենքը սարքեն, ջրի պատճառով գյուղը կդատարկվի:

Ավելի լավ է մանկապարտեզ ունենանք, քան նախակրթարան:

Ավելի լավ է Լիճքում **ճամբար** կառուցենք, որպեսզի Լիճքը չդատարկվի:

Եթե **համայնքն այնքան փոքր է**, որ հազիվ երեխա կա, ո՞րն է մանկապարտեզ պահելու իմաստը...

Բայց քանի **մանկապարտեզի** երեխա ունի Լիճքը, ընդամենը մեկ երեխա կա: Իմաստ չկա կառուցել:

Չենք կարող տասնհինգ հազար դոլար դնել, տասը **երեխայի** համար:

Մեր այս պահին ունենք **մի մանկապարտեզ, ու մի քանի գյուղերի մասնաճյուղեր**, այստեղ կառավարումը և վարչական ծախսերը կենտրոնացված է, և սա շատ արդյունավետ սխեմա է, այս նոր մանկապարտեզներն էլ այս սխեմայով կաշխատեն:

Որպեսզի նախադպրոցական հաստատությունների վրա ծախսերն արդյունավետ լինեն, պետք է **մասնաճյուղեր ստեղծվեն**, որոնք կկցվեն մանկապարտեզին:

Ագարակում, օրինակ, հայտարարություն են տալիս **մսուրային խմբի** բացման համար, եթե թիվը բավարար է լինում, ապա խումբը բացվում է:

Վարդանիձորի մանկապարտեզն արդեն 7-8 տարի փակ է, անմխիթար վիճակում է, աշխատանքներ տարվում են հուսով եմ հունվարից կաշխատի:

Վարդանձիորից ընդամենը երկու երեխա է հաճախում մանկապարտեզ, այն էլ Լեհվազի մանկապարտեզ, բայց 10-12 երեխա կա գյուղում մանկապարտեզի տարիքի:

Վարդանիձորում **արդեն կառուցվում է մանկապարտեզ**, ու դա նպատակահարմար է, քանի որ այստեղ երեխաները շատ են: Շվանիձորում էլ կա նման կարիք, նույն պատճառով:

Վարդանիձորն **աճող գյուղ է**. շատ անհրաժեշտ է մանկապարտեզ:

Բոլորը կողմ են, որ Վարդանիձորում բացվի **մանկապարտեզ**:

Վարդանիձորում երկար ժամանակ **մանկապարտեզ** կար, ինչո՞ւ են փակել:

Մի ծնողը կարող է Ալվանքից իր երեխային տանի Շվանիձորում մանկապարտեզ, մյուսը՝ տարբեր պատճառներով, դա չի կարող անել: Միգուցե անհրաժեշտ է **ավտոբուս ապահովել**, որպեսզի տարբեր համայնքներից երեխաներին հասցնի մանկապարտեզ:

Անկախ համայնքից, մեխանիզմներ են պետք, որպեսզի **բոլոր համայնքների բոլոր երեխաները հաճախեն մանկապարտեզ**, կլինի դա մանկապարտեզ կառուցելով, թե երեխաների համար տրանսպորտ ապահովելով:

Երխաներին ապահովենք, հետո ձեր չիրը ծախելու տեղը կսարքեք...

Մանկապարտեզը պիտի աշխատի իննից մինչև չորսն անց կես-հինգ:

Մեր **երեխաները** ոչ մի օգուտ չեն ստանալու այս ծրագրերից: Մենակ համայնքապետարանի համար են սրանք:

Գորիսը մեգապոլիս չի, փոքր քաղաք է, կարելի է բավարարվել միայն մեկ՝ ավելի մեծ **դպրոցով**, մնացած գումարն ուղղել այլ ծախսերի:

Մանկապարտեզների մարզադահլիճները քանդված վիճակում են, արժե՞ արդյոք գումարն ուղղել խաղահրապարակներին, կարծում եմ ոչ:

Կողքի բնակավայրերի երեխաներն ինչպես պիտի գան հասնեն Գորիս, մենք խնդիր ենք տեսում, որ բոլոր կենտրոնները հավաքվեն Գորիսում. հո չե՞նք կարող տաքսիով **երեխային** ուղարկել պարապմունքի, մարզման:

Մենք համաձայն ենք կենտրոնին հարևան բնակավայրերի բնակիչների հետ՝ Էս խոշորացումն ապուշություն էր... Կենտրոնին տրվելու է ամեն ինչ, մեր **երեխաները** մնալու են դպրոցի դասարաններում շաշկի-շախմատ խաղալու:

Մանկապարտեզն աշխատատեղերի բացման հարց էլ է լուծում, այնուամենայնիվ սա պիտի **երեխակենտրոն** դիտի**,** ոչ թե ընտանիքի եկամուտների աղբյուր:

Մենք համաձայն ենք վճարել մանկապարտեզի ծառայությունների համար, այն հնարավորություն է տալիս, որ **ծնողն աշխատի** ու համապատասխան եկամուտ ստեղծի ու ոչ միայն մանկապարտեզի համար:

Երեխայի խնամքը մամայից լավ ոչ մեկ չի կարող անել, բայց երեխան, երբ գնում է **մանկապարտեզ**, մայրիկը հնարավորություն է ունենում աշխատել և ընտանիքի բարեկեցությունն ավելի լավացնել:

Խոշորացման հրաշքը դպրոցի կառուցումն էր, շատ գոհ ենք, ժամանակին շատ երկար տարածք պետք է անցնեին **երեխաները**. ավելացավ աղբամաններ, լուսավորություն գյուղերում, քաղաքը բարելավվեց:

Եթե մարդ ուզում է գնալ և ինչ-որ գյուղում ապրել, անպայման ծանոթանում է ինֆրաստրուկտուրային՝ կա **մանկապարտեզ**, թե՝ ոչ, դպրոց, շուկա և այլն:

Սահմանամերձ համայանքներում հատկապես անհրաժեշտ է **մանկապարտեզ** ունենալ, որովհետև երեխաների տեղափոխությունն արդեն անվտանգ չի: Ամեն համայնքում, անկախ երեխաների թվից, պետք է **մանկապարտեզ** լինի՝ անգամ եթե պետք է վերաբաշխել համայնքի ռեսուրսները և ստիպված անտեսել այլ, միգուցե նույնպես կարևոր, կարիքների բավարարումը:

Գյուղի զարգացման մասին չենք խոսում, գյուղի պահպանման հարց է գնում: **Մանկապարտեզն** օրհասական խնդիր է:

Այս ծրագրերը ժամանակատար են, տարիների հարց է. իսկ **մանկապարտեզները** հրատապ են, պետք է օր առաջ լուծել:

Ակներում վարչական բյուջեից գումարներ են հատկացվել **նորածիններին**, ինչ-որ դժբախտ պատահարի դեպքում՝ տվյալ ընտանիքին: Բայց այս ամենը կրկին խոշորացումից առաջ:

Մինչև Գորիսի դիտակետին հասնելը, լավ կլիներ մտածեինք, մարզի **մանկապարտեզների** մասին, երկուհարյուր հիսուն երեխա խաղալու տեղ չուն, գուցե պետք է մտածել ավելի քիչ գումարով զբոսաշրջությունը զարգացնել, մի մասն էլ ուղղել սոցիալական ծրագրերին:

Պետք է մանկապարտեզներից սկսել ներդրումները, ոչ բոլոր **մանկապարտեզներն** ունեն խաղահրապարակներ կամ նորմալ գույք:

Ես զինվորականի ընտանիքից եմ, դրսից եմ եկել, շատ դժգոհ եմ... ոչ մի բան չկա **երեխաների** զբաղմունքի ու զարգացման համար: Երեխային խմբակից հանել բերել եմ, հիմա չգիտեմ ուր տանեմ:

Մեր գյուղի **երեխան** մակնապարտեզ չի կարողանում գնալ, դիտակետը մեր համար ի՞նչ:

Ամոթ ա էլի, Հարթաշենը երեք գյուղի միավորումից առաջացած գյուղ է, **մանկապարտեզ** չունի: Ինքս գորիսեցի լինելով զարմանում եմ, թե ինչպես կարելի ա էդպես թողնել: Էս ա առաջնահերթությունը:

Երեխաներ կան, որոնք հնարավորություն չունեն զբաղվել սպորտով, կմարզվեն կզբաղվեն այդ խաղահրապարակներում:

Սպորտդպրոցը բոլորին հասանելի չէ, թե՛ հեռավորության, թե՛ ֆինանսի պատճառով, խաղահրապարակները պետք են:

Երեխաները կկտրվեն ինտերնետից, կհանդիպեն, կշփվեն, ինչը մեզանում շատ քչացել է:

Մենք ունենք փոքր ֆուտբոլի դաշտեր, որոնք **գերծանրաբեռնված** են:

Սպորտով զբաղվելու խնդիր ունեն ոչ միայն **երեխաները**, նաև մեծահասակները:

Մեր մոտ ֆիզկուլտուրա առարկայի հետ կապված խնդիրներ կան, **երեխաները** փախնում են դասերից:

Կոնկրետ Ներքին Խնձորենսկի **դպրոցում** անգամ մարզադաշտ ու մարզասրահ չկա, եթե եղանակային պայմանները ներում են, մենք դրսում ենք անցկացնում ֆիզկուլտուրայի դասերը, եթե ոչ, ապա խնդիր ենք ունենում:

Պետք է ուղղորդել, **երեխաներին** հանել խաղասրահներից, համակարգիչներից կտրել ու տանել խաղահրապարակներ

Կարևորը՝ մեր **երեխաները** սպորտով զբաղվելու տեղ ունենան, կարևոր չէ, թե ով է ֆինանսավորելու:

Ես սոցիալական հարցումներ իրականացնող եմ և պարզել եմ, որ մարդիկ շատ կարիք ունեն **մարզադաշտերի**, **խաղահրապարակների** և **նախակրթարանների**:

Ակներում առավոտյան արթնանում են, հավաքվում աղբյուրի մոտ, 4-ին մտնում գոմ: **Երեխաներն** էլ սովորում են այն, ինչ տեսնում են: Կանայք էլ, ինչ, տներում գործ են անում ու բամբասում: Ոչ մի տեղ չկա, որտեղ մարդիկ իրար հետ նորմալ կհավաքվեն, ժամանակ կանցկացնեն:

Այս, այսպես կոչված, «այգին» **երեխաների** անվտանգության համար մեծ ռիսկ է: Մեջտեղում կուտակված քարերն ու փոսերը թակարդ են. ամառվա ընթացքում դեպքեր ենք ունեցել, որ երեխաներն ընկել են փոսը, վնասվել:

Ագարակում երեխաները շատ են, հետևաբար պետք է **երեխաների** մասին մտածել առաջին հերթին:

Թող Ագարակը խաղահրապարակ ունենա, Մեղրին էլ շուկա:

Այգու տարածքն ամայի է և շատ հարմար է կանաչապատելու և **երեխաների** ժամանցի ապահովման համար:

Մեծ դժվարությամբ հնարավոր եղավ զբոսայգու տարածքին վերադարձնել հանրային կարգավիճակը: Հանրային զբոսայգու առկայությունը խիստ կարևոր է համայնքի **երեխաների** համար:

Ագարակի ոչ մի բակում նորմալ այգի չկա: Գործող երեքն են, որոնցից **միայն երկուսն են հարմար երեխաների համար**: Նշված զբոսայգու վերանորոգումը մի քանի բակերի բնակիչներին կսպասարկի:

Զբոսայգի ասելով չպետք է հասկանալ միայն նստարանը, կարևոր է նաև խաղահրապարակի առկայությունը, ինչպես նաև միջին տարիքի մարդկանց համար պայմանների ապահովումը:

Ագարակը մեր խոշորացված համայնքի ամենարագ աճող բնակավայրերից մեկն է, այն անմիջապես հարևանում է Իրանին: Այս հատվածում չկա որևէ հանգստի գոտի, այստեղ արդեն աշխատանքներ են կատարվել: Համայնքի բյուջեից մեծ գումար չի տրամադրվում, հիմնական գումարը նվիրատվություն է: Ագարակն ունի **յոթ հարյուր աշակերտ**:

Այս զբոսայգուն շրջապատող շենքերում հիմնականում երիտասարդ ընտանիքներ են բնակվում, հետևաբար **երեխաները շատ են** ու վերանորոգված զբոսայգին շատ հարմար կլինի իրենց համար:

Վարդանիձորում ունենք 165 մշտական մնացող բնակիչ, նորաստեղծ ընտանիքները 2018 թվականին ունեցել են 8 նորածին երեխա, 40 երեխա ընդհանուր: Խաղահրապարակ չունենք, երեխաները **ստիպված են գյուղապետարանի տարածքում խաղալ հողով, քարերով:**

Հարակից **գյուղերի բնակիչներն էլ են ուզում օգտվել զբոսայգուց**, երեխաներին խաղահրապարակ տանել: Տարբերություն չկա, Մեղրիում կլինի զբոսայգին, թե Ագարակում:

Վարդանիձորն աճող գյուղ է, ի տարբերություն մյուս գյուղերի, որտեղ երիտասարդությունը թողում գնում է, մենք նույնպես կարիք ունենք **խաղահրապարակի**:

Գրված է ստեղծել նոր մարզահամալիր, բայց կարելի էր մտածել մյուս բնակավայրերի **դպրոցներն** ու **մարկապարտեզները** զինել սպորտային պարագաներով, գույքով, վերանորոգեն սպորտային դահլիճները:

Ակների **դպրոցը** մարզադահլիճ չունի, խաղահրապարակի փոխարեն լավ կլիներ այդ դահլիճը վերանորոգվեր:

Ես երեխայիս վերցնում ու Կապան եմ գնում, որպեսզի **նա կարողանա կարուսել նստի**, ավազի մեջ խաղա, սղարան նստի:

Մեղրին կարիք ունի **խաղահրապարակի** և այգու:

Զբոսայգին տեղադրված է շատ խիտ բնակեցված թաղամասում, որտեղ բակային տարածքներ էլ չկան, այնպես որ դրա գործարկումը շատ կարևոր է:

Եթե երեխաս էսօր խաղալու տեղ չունի, պետք ա՞ ինձ էդ եկամուտը... ու՞մ ա պետք էդ հարյուր հազար դրամը, թող **երեխան էդ** «անդրոիդներից» կտրվի...

Եթե անգամ մեկով ավելի **երեխա** պիտի օգտվի այս ծրագրից, ապա այն պիտի իրականացվի:

Օրինակ՝ Կարճևանքում մենք նախընտրեցին կոյուղին վերանորոգելու փոխարեն խաղահրապարակ սարքել երեխաների համար, որովետև դրանով լուծեցինք նաև **երեխաների անվտանգության** հարցը՝ փողոցից բերեցինք ավելի անվտանգ տեղ: Թանգարանը ևս շատ կարևոր է, ուղղակի պետք է հասկանալ, թե բոլոր համայնքների համար առաջնային ծրագիրը որն է, ինչպիսի ծրագիրն է հնարավորություն տալու ավելի մեծ թվով բնակիչների ծառայել:

Մշակույթի տուն այցելող **երեխաները**, խմբակներից հետո այգում կարող են ժամանակ անցկացնել, կամ գրադրանից գիրք վերցնել այգում ընթերցել:

Մենք նույնպես սիրով կգնանք, **երեխաներին** կտանենք:

Մեր մոտ չկա որևէ տեղ, որ **երեխաները** խաղան, գնում են ասֆալտի վրա խաղում:

Քարահունջի գրադարանին հարակից տարածքում հիմնականում դպրոցահասակ երեխաներն են խաղում, բայց մեծահասակները ու **մանկապարտեզի** երեխաները խաղալու տեղ չունեն:

Տարածաշրջանի երեխաները պատկերացում չունեն թանգարանի մասին:

Փոքր Թաղում մի բարեգործի կողմից պատմամշակութային ծրագիր էր իրականցվում, որն այս տարի կարծես կասեցվեց: Սակայն սա շատ կարևոր ծրագիր է թե՛ տեղացիների, թե՛ զբոսաշրջիկների համար, որովհետև սրանով մենք **երեխաների** մեջ կրթում ենք ոչ միայն գնահատել իր մշակույթը, այլև պահպանել այն:

Մենք ունեցել են լուրջ կրթական բազա, դիդակտիկ նյութեր, միջավայր, որտեղ հնարավոր է **երեխային կրթել՝** ցույց տալով նմուշներ, հիմա դրա հնարավորությունը չունենք:

Փողոցով քայլում ես, **երեխան** տեսնում է, ճաշակը զարգանում է, քաղաքային կուլտուրան շատ կարևոր է:

Երևանում ծաղիկները շատ են, Գորիսում մի ծաղիկ է աճում **երեխան** պոկում է, չի տեսել, **ճաշակ** չի զարգացել գեղեցիկը պահպանելու, քաղաքը սիրելու:

Երիտասարդները շատ են սիրում այդ վայրը, բայց դրա հետ մեկտեղ նաև շատ են փչացնում, չեն պահպանում, աղբն աղբամանում չեն թափում. պահակներ պետք է լինեն, հնարավոր է նաև հասարակական հիմունքներով պահակություն անեն, կամ տարածքի բիզնեսները պահակություն անեն:

Մեր **երիտասարդները** երեկոյան վեցից հետո գնալու տեղ չունեն: Էս գործերին հանրության ուժերն օգտագործելը կօգնի նաև էս հարցը լուծել: Եթե ես շպակլյովկա քսեմ, մի սիրուն աղջիկ էլ սուրճը բերի, գուցե աղջիկ հավանելու հնար էլ ստեղծվի, ինչն էլ մի այլ խնդիր է երիտասարդության համար հիմա:

Երիտասարդները չունեն ժամանցի որևէ վայր: Չկա սպորտի կամ այլ զբաղմունքի հնարավորություն:

Շատ կարևոր նախաձեռնություն է, մարդիկ կմարզվեն, նոր ավանդույթ կձևավորվի առողջ ապրելակերպի, **երիտասարդները** վատ սովորությունները կթողնեն:

Մեր համայնքի համար առաջնային է **երիտասարդների** զբաղվածությունը, արտադրության ստեղծումը: Լավ օղի ունենք, բայց գովազդ չի արվում:

Սովետի ժամանակ կարողացել են մարդուն համոզել, որ աշխատասիրությունը լավ բան է: Եթե կարողանանք **ջահելին** համոզել, որ իր աշխատանքով է կարողանալ վաստակել, միգուցե մի բան կփոխվի:

Երիտասարդները քաղաքի 18 տոկոսն են կազմում, եթե նոր աշխատատեղեր բացվեն, կարող են աշխատել:

Ժ. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Ծերերին, թոշակառուներին մեծ օգնություն կլինի, ովքեր չեն կարող իրենց ապրանքը տանել հանրապետության այլ շուկաներ, սա կօգնի, որ նրանց ճանապարհածախսը կկրճատի, օժանդակություն կդառնա:

Նաև **տարեցների** համար է լավ:

Սպորտով զբաղվելու խնդիր ունեն ոչ միայն երեխաները, նաև **մեծահասակները**:

Մենք որպես **ավագ սերնդի ներկայացուցիչ** մեծ հաճույքով ինքներս էլ կօգտվենք մարզահրապարակներից:

Ակներում մեզ խաղահրապարակ պետք չի, այլ մի սենյակ է պետք, որտեղ **տարեցները** հավաքվեն, իրար հետ նարդի խաղան

Տարեց բնակիչները զբաղված են, գոնե իրենց տնամերձ հողատարածքը լուծում է այս խնդիրը:

Ի. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Այգու տարածքն ամայի է և շատ հարմար է կանաչապատելու և երեխաների ժամանցի ապահովման համար:

Ագարակի պղանձամոլիբդենային ընկերությունը **պետք է շքեղ այգի կառուցեր Ագարակում**, քանի որ իր գործունեության արդյունքում մեծ վնաս է հասցվում բնակչության առողջությանը:

Ագարակում համարյա ծառեր չկան: Զբոսայգու **կանաչապատումը կփրկի համայնքը:**

Ագարակում **էկոլոգիական խնդիր կա**, թող շատ կանաչ գոտիներ լինեն:

Գետի ջրի ոչ ճիշտ բաշխման, կլիմայի փոփոխության պատճառով **այգիների 40% չի աշխատում:**

Հանքերի, հեկ-երի պատճառով **վատացել է բերքի որակը:**

Սարերում մի որպե քամին չի կանգնում, փոխանակ դա օգտագործեն էլեկտաէներգիա ստանալու համար, ջուրն են օգտագործում, որը հանգեցնում է բերքի ոչնչացման: Սա բարբարոսություն է:

Հեկ-եր շահագործողներին պետք է պարտավորեցնել, որ իրենց հեկ-պատճառով ամայացած տարածքները իրենց միջոցներով **վերականգնեն կանաչապատ տարածքները**:

Որտեղ կա հանք այնտեղ ամեն **բնակչի հաշվող պետք է լինի 5-6 ծառ:**

Տեղի համար կասկածներ կան, բայց եթե **առյուծի բաժինը կոմբինատինն** է, թող անի:

Պետք է զարգացնել այլընտրանքային **էներգիայի աղբյուրները:**

Խտացված վառելանյութ կարող են ստանալ օրինակ հացահատիկի ծղոտի վերամշակումից ինչպես օրինակ Գորիսի Տեղ գյուղում կա նման փորձ:

Ամենաշատ **արևը** Մեղրիում է, և այս արևից ոչինչ չվերցնելը, ուղղակի ծիծաղելի է:

Ավելորդ ծախսերի փոխարեն պետք է գումարը տրամադրել **արևայի պանելներ գնել**, որն ավելի արդյունավետ է:

Պետք է պատուհանն ու վառելապայտը փոխարինել- **պատուհան և արևային վահանակներով:**

Մեղրեցիները մաքրակենցաղ ժողովուրդ են, և հենց այդ մաքրության համար շահագրգռված կլինեն անցնել արևային էներգիայի կիրառմանը:

Քննարկված ծրագրերից պետք է առանձնացնել **արևային վահանակների և պաուհանների տրամադրումը** խոցելի խմբերին տարբերակը:

Արդյունաբերությունը **էկոլոգիական խնդիրներ** է առաջացնում, իսկ տուրիզմը հակառակը լուծում է էկոլոգիական շատ խնդիրներ:

Հասկանում ենք, որ պետությանը պետք են **հանքեր**, բայց ոչ այդ չափով, որ ամբողջ գյուղեր դատարկվեն:

Սովետական Միության տարիներին հին այգիում ամեն ինչ էլ կար, կառուսելներ և այլն. և չեմ հիշում որ այն շատ **ծառածածկ** էր:

Տեղում արտադրում են **բրիկետներ**, ՈՒկրաինայից ներկրում են **քարածուխ**, որը կփոխարինի ծառահատմանը: Մեկ տոննա քարածուխը 110.000 դրամ, որը կփրկի 5-6 խորհանարդ մետր ծառ:

Լինելով բարձրլեռնային համայնք՝ մենք արդեն մեկ ամիս է՝ վառելափայտ ենք օգտագործում: Պետք է հիմա հնարավորություն ունենանք մեր համայնքի հարակից **անտառից** փայտ վերցնել:

Պլաստմասե **պատուհաններն ա**նարդյունավետ են, տները միշտ քրտնած են:

Փայտ հավաքելը քանի գնում դժվարանում է ու թանկանում, դպրոցներում փայտի վառարաններ են դրված, որը խախտում է, հաշվարկել ենք, մոտ երեք մլն դրամ է պետք, որ պատուհանները փոխենք, ու դնենք էլեկտրական վառարաններ:

Մինչև «դուռնուլուսամուտը» **գազաֆիկացայի հարցը պիտի լուծել**: Հա, կողմ եմ, բայց անտառահատումը նվազեցնելու համար պետք է մեղրեցուն այլընտրանք առաջարկել, օրինակ՝ գազի տեսքով:

Սանիտարական փայտը պիտանի չէ. մարդիկ կամ սեփական ծառերն են կտրում, կամ գնում եմ, կամ էլ գողանում ձմռանը տաքանալու համար:

Եթե համայնքում գազ լինի, ապօրինի **անտառահատումներն** էլ կկրճատվեն:

Պետություն-համայնք-գյուղացի համագործակցություն է պետք, գնա գնահատեն անտառն ասեն **սանիտարական էտի** համար կարող եք այսքան ծառ կտրել:

Նկատել եմ, որ վաճառում են լրիվ **կանաչ ծառեր**, ոչ թե չոր ծառեր. գյուղացին, համոզված եմ, չորն է կտրում, ապօրինի վաճառողները կտրում են ինչ տեսնում են:

Մեղրիում մենակ ծառահատում են անում, **ծառատնկում** չեն անում: Հանքեր, ՀԷԿ-եր են բացում, ու փչացնում ջուրը:

Ես բոլոր գյուղացիների անունից ասում եմ, որ խայտառակ վիճակ է մեր գյուղերում: **Փայտահատումն ա**րգելված է, իսկ էլեկտաէներգիայով հնարավոր չի ջեռուցել տները:

Գործող այգին ամբողջությամբ ծառածածկ է, պետք է մոտ **70 ծառ հատեինք**, որպեսզի ստանայինք ստանայինք այն ինչ անում ենք նոր զբոսայգում:

Միևնույն է **փայտը գողանալու են**, որքան էլ միայն խոցելի խմբերին տրամադրեն:

Ապօրինի **ծառահատումներն անում են այն մարդիկ, ովքեր զորեղ են**. այս ծրագրով ծառահատումից չես փրկի:

Այս ծրագիրը լուրջ ազդեցության չի ունենա **ապօրինի ծառահատման** վրա: Հիմնականում փայտը տանում են վառելու համար:

Մենք **փայտը** թողած ինչո՞վ պիտի տաքացնենք մեր տները:

Մենք չենք կարող վառարան չդնել, և՛ **վառելափայտին** ենք փող տալիս, և՛ հոսանքին:

Տեղի բնակիչները սովոր են գնան **ծառը** կտրեն գան, ոչ ոք չի կարող համոզել նրան ծառ չկտրի, այլ գնի քարածուխ:

Փայտ գողացողը միևնույն է գողանալու է. կբերի և կվաճառի:

Դիտակետի վերականգնումը լուծում է **բնապահպանական** մեծ խնդիր. քաղաքի ռելիեֆն այնպես է, որ անձրևի հետևանքով ամբողջ քաղաքի կեղտը լցվում է դիտակետի տարածք: Հույս ունեմ, որ վերականգնումը նախատեսում է նաև սելավատարերի հարցը:

Եթե տնտեսվարող սուբյեկտները տուգանվեն թափված **աղբի** համար, ապա Մեղրու **կանաչ գոտիները** նորմալ տեսք կունենան:

Լ. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիճքի դպրոցը փակվեց, որովհետև **բնակիչ չկա**, ինչ իմաստ ունի այնտեղ նույնպես փայտ տրամադրել. արդար չէ:

Փառք Աստծո տրանսպորտ կա, շինանյութ մատակարարվում է հետագայում արդեն կաշխատենք գյուղի ու քաղաքի տարբերությունը

Խմելու ջրի հարցը **կնպաստի ծնելիության աճին**, եթե ջուր չկա, ծնելիություն չկա, ո՞ւմ համար ենք մանկապարտեզ կառուցում:

Համայնքների խոշորացումից հետ դրանք **դատարկվել են**, ծրագրերը տանում ենք առանց մարդ համայնքներում ի՞նչ անեն:

Մանկապարտեզ լինելու համար պետք է մարդիկ լինեն, հետևաբար ցախն առաջնային է:

Եթե **համայնքն այնքան փոքր է**, որ հազիվ երեխա կա, ո՞րն է մանկապարտեզ պահելու իմաստը...

Շվանիձորում եթե ջուր լինի, **երիտասարդությունն էլ կմնա**, հետագայում միգուցե մանկապարտեզի հարց էլ առաջանա:

Տուրիստը գալիս է Մեղրի, բայց այստեղ բավարար պայմաններ չկան, գազ չկա: Տեղի մարդիկ էլ են **արտագաղթում**:

Առողջությունն ավելի առաջնային խնդիր է էս պահին, քան **տուրիզմի** խթանումը: Ճիշտ կլինի գումարներն ուղղել մարզադպրոցների կառուցմանը, ոչ թե դիտակետին:

Պետք է **մարդ լինի**, որ տուրիզմ**ը** կամ գյուղատնտեսությունը զարգանա:

Լիճքը, Տաշտունը վտանգված են, տաս տարի հետո **մարդ** չի լինի:

Ավելի լավ է Լիճքում ճամբար կառուցենք, որպեսզի Լիճքը **չդատարկվի:**

Հասկանում ենք, որ պետությանը պետք են հանքեր, բայց ոչ այնքան, որ ամբողջ **գյուղեր** դատարկվեն:

Մեր **երիտասարդները** երեկոյան վեցից հետո գնալու տեղ չունեն: Էս գործերին հանրության ուժերն օգտագործելը կօգնի նաև էս հարցը լուծել: Եթե ես շպակլյովկա քսեմ, մի սիրուն աղջիկ էլ սուրճը բերի, գուցե աղջիկ հավանելու հնար էլ ստեղծվի, ինչն էլ մի այլ խնդիր է երիտասարդության համար հիմա:

Գյուղացին **գյուղում** չի ուզում մնալ, քաղաքացին **քաղաքում:**

Հիմա ընտանիք չկա, որ դրսում /խոպանում/ մարդ չունենա, նման ներդրումը կնվազեցնի նաև **արտագաղթը**:

հասցնել մինիմալի: Կարևորը **գյուղի փրկության** հարցն է:

Վարդանիձորն **աճող** գյուղ է, ի տարբերություն մյուս գյուղերի, որտեղ երիտասարդությունը թողում գնում է, մենք նույնպես կարիք ունենք խաղահրապարակի:

Հավելված 1. Գունային կոդավորում

Գորիս համայնք (ՀՀ Սյունիքի մարզ), 19 հոկտեմբերի, 2018թ.

Մեղրի համայնք (ՀՀ Սյունիքի մարզ), 18 հոկտեմբերի, 2018թ.

Հավելված 2. Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքների քննարկման սցենարները

Մեղրի, Սցենար 1. Ագարակ քաղաքի Չարենցի 27/15 հասցեում զբոսայգու կառուցում

2018թ. աշնանը Ագարակ քաղաքում գործում էր երկու փոքր խաղահրապարակ, և մեկ զբոսայգի, որը հիմնվել է խորհրդային տարիներին և անմխիթար վիճակում էր: Ավելի քան 4,600 բնակիչ ունեցող և գերազանցապես հանքարդյունաբերությունից եկամուտներ վաստակող քաղաքում բացօթյա հանգիստն ու ժամանցը լիարժեք կերպով ապահովելու համար այս ենթակառուցվածքները բավարար չէին: Չկային երեխաների ու մեծահասակների ժամանցի կազմակերպման համար անհրաժեշտ խաղահրապարակներ և զբոսայգիներ: Քաղաքում աշխուժությունը ցածր էր, սակավ են կանաչապատ տարածքները:

Համայնքի 2018թ. բյուջեն կազմել է շուրջ 640 մլն ՀՀ դրամ, ընդ որում բյուջեի վարչական մասը կազմել է շուրջ 552 մլն ՀՀ դրամ, իսկ ֆոնդայինը՝ 88 մլն ՀՀ դրամ: Ֆոնդային մասի եկամուտները ձևավորվել են. (ա) համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից (շուրջ 39 մլն ՀՀ դրամ), (բ) պաշտոնական (շուրջ 27 մլն) և ոչ պաշտոնական (շուրջ 22 մլն) կապիտալ դրամաշնորհներից, և (գ) ոչ ֆինանսական ակտիվների իրացումից (շուրջ 30 մլն): Պաշտոնական կապիտալ դրամաշնորհները պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ են եղել (սուբվենցիաներ), մինչդեռ ոչ պաշտոնական կապիտալ դրամաշնորհները ներգրավվել են այլ ներդրողների կողմից՝ որպես համայնքի զարգացման կապիտալ ծրագրերում համաֆինանսավորում: Հատկանշական է, որ համայնքում կապիտալ ծրագրերի համար կատարվող ծախսերի իրականացման համար բյուջետային գումարները գոյանում են գերազանցապես ոչ ֆինանսական ակտիվների օտարումից, որոնք սահմանափակ են: Այս մուտքերը տարեց-տարի նվազում են:

Բնակիչների արժանապատիվ կյանքն ու ժամանցը կազմակերպելու հնարավորությունները, քաղաքի գրավչությունը բարձրացնելու նպատակով, պետական բյուջեից տրամադրված նպատակային հատկացման (սուբվենցիայի) շնորհիվ, 2019թ. համայնքի բյուջեից շուրջ 12 մլն ՀՀ դրամ հատկացվեց Ագարակ քաղաքի Չարենցի 27/15 հասցեում, բազմաբնակարան շենքերի հարևանությամբ, համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում զբոսայգու կառուցմանը: Զբոսայգու կառուցման համար անհրաժեշտ ևս 25 մլն ՀՀ դրամ տրամադրեց Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ն:

Ագարակում զբոսայգու կառուցման նախապատրաստման աշխատանքները մեկնարկել էին 2010թ., իսկ բուն կառուցապատումը՝ 2015թ.: 2018թ. ավարտվել էր կառուցապատման աշխատանքների առաջին փուլը: 2019թ. գարնանն ավարտվեցին նախագծա-նախահաշվային աշխատանքները, գնման գործընթացը, շինարարական աշխատանքները: Կառուցվեցին բազալտե եզրաքարեր, բետոնե աստիճաններ, մետաղական ցանկապատ, դարպասներ և դռնակ: Երեսպատվեցին հենապատերը, տեղադրվեցին ավազամաններ, սղարաններ, փայտե տնակներ, ճոճանակներ, վարժասարքեր, անցկացվեց արտաքին լուսավորություն և զբոսայգին հանձնվեց շահագործման:

Զբոսայգին ընդլայնեց բնակիչների ժամանցի և հանգստի գոտիները, համայնքի կանաչապատ տարածքները: Բնակիչների և քաղաքի հյուրերի համար ստեղծվեց հանգստի ու ժամանցի կազմակերպման նոր հնարավորություն: Զբոսայգու հարակից տարածքում կարճ ժամանակում զարգացավ մանրածախ առևտուրը և սպասարկման ոլորտի այլ ծառայությունները: Զբոսայգու հարակից խանութներում եկամուտների աճը 2020թ. կազմեց ամսական շուրջ 70,000 ՀՀ դրամ: Տնտեսվարողների եկամուտները աճեցին շուրջ 4%-ով:

Մեղրի, Սցենար 2. Գյուղատնտեսական շուկայի հիմնում Մեղրի համայնքում

Մեղրին սահմանակցում է Իրանի Իսլամական Հանրապետությանը. համայնքով է անցնում Երևան-Մեղրի-Իրանի սահման միջպետական մայրուղին: Տնտեսությունը գերազանցապես հիմնված է հանքարդյունաբերության (շուրջ 75%) և գյուղատնտեսության վրա: Առավելապես տարածված է մերձարևադարձային պտուղների՝ նռան, թզի, արքայանարնջի, իսկ վերջին տարիներին նաև՝ կիվիի և ձիթապտղի մշակությունը: Բարենպաստ բնակլիմայական պայմանների շնորհիվ զարգացած է նաև մեղվաբուծությանը: Մեղրին գտնվում է մայրաքաղաքից շուրջ 380 կմ հեռավորության վրա և հեռու է հիմնական տնտեսական կենտրոններից ու շուկաներից:

Մինչև 2019թ. Մեղրին չուներ գյուղարտադրանքի իրացման մանրա-մեծածախ գյուղատնտեսական շուկա, իսկ գյուղմթերք արտադրողների՝ արտադրանքի իրացման հնարավորությունները խիստ սահմանափակ էին: Թեև IFAD-ի կողմից ոռոգման ցանցի բարելավման և շուրջ 300 հա տարածքի ոռոգման արդյունքում 2019-2022թթ. գյուղատնտեսական մթերքների արտադրական ծավալները մեծացան, իրացման հնարավորությունները մնում էին սահմանափակ: Մեղրիում արտադրվում էր տարեկան միջինում 1,200 տոննա նուռ, 2,800 տոննա արքայանարինջ, 930 տոննա թուզ այլ տեսակներ, 600 տոննա չիր, որից իրացվում էր շուրջ 60%-ը: Համայնքում գյուղատնտեսության զարգացման զգալի ներուժը գյուղատնտեսական շուկան դարձնում էր առաջնահերթություն:

Մեղրիում արտադրվող գյուղատնտեսական մթերքի իրացմանը նպաստելու, ֆերմերական տնտեսություններին աջակցելու, գյուղարտադրանքի մրցունակություն ու սպասարկման որակը բարձրացնելու նպատակով, «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր - Հայաստան» ծրագրի շրջանակներում և ֆինանսավորմամբ, համայնքի 2019թ. բյուջեից շուրջ 25 մլն ՀՀ դրամ հատկացվեց Մ2 միջպետական ավտոմոբիլային ճանապարհի հարևանությամբ՝ մաքսակետից 9 կմ հեռավորության վրա գյուղատնտեսական շուկայի ստեղծմանը: 2020թ. տարեսկզբին արդեն գործում էր գուղատնտեսական մթերքի վաճառքի շուրջ 15 շուկա-տաղավար: Շուկայի կառավարումը պատվիրակվեց մասնավոր կազմակերպության՝ համայնք-մասնավոր ներդրող-ֆերմերներ համագործակցության սխեմայով: Սա հնարավորություն ընձեռեց ներգրավել մասնավոր հատվածի փորձառությունն ու ֆինանսական միջոցները, բարելավել մատուցվող ծառայությունների որակը, արդյունավետությունը, իսկ որոշ դեպքերում նաև՝ ապահովել մատուցվող ծառայությունների ֆինանսավորումը: Համայնքը մնաց գերազանցապես որպես կարգավորող կողմ և սեփականատեր: Քննարկվում է հետագայում շուկայի ընդլայնման նպատակահարմարությունը:

Շուկայի ստեղծման արդյունքում շուրջ 15 ֆերմերական տնտեսություն, հիմնականում՝ փոքր արտադրողներ, հնարավորություն ստացավ առանց Երևան կամ այլ խոշոր քաղաք հասնելու՝ տեղում վաճառել իր արտադրանքը: Շուկայում առաջարկվող մթերքի հիմնական գնորդներ դարձան համայնքի բնակիչները, համայնքի այցելուները, զբոսաշրջիկները: Շուկան հնարավորություն տվեց նաև փոխանակել գյուղարտադրանքը Հայաստանի այլ մարզերից պարբերաբար Մեղրի եկող ապրանքափոխադրողների հետ: Մաքսակետի հարևանությունը հնարավորություն տվեց վաճառել արտադրանքը նաև իրանցի զբոսաշրջիկներին (տարեկան շուրջ 130 հազար այցելու): 2020 թվականից համայնքի բյուջեի եկամուտներն ավելացան տարեկան միջինում շուրջ 2 մլն ՀՀ դրամով (վաճառքի մեկ կետից օրական շուրջ 500 դրամ և տարեկան 10 ամիս ծանրաբեռնվածության հաշվարկով):

Մեղրի, Սցենար 3. Վառելափայտի և լուսամուտների տրամադրում խոցելի խմբերին

Մեղրի համայնքի տարածքի ընդհանուր մակերեսը շուրջ 660 կմ2, որի կեսից ավելին Արևիկ ազգային պարկի տարածքն է: Սահմանամերձ համայնքի 15 բնակավայրերը, այդ թվում՝ քաղաքային Մեղրին ու և Ագարակը (9,350 բնակիչ) և գյուղական՝ Լիճք, Տաշտուն (բարձրլեռնային), Թխկուտ, Այգեձոր, Վարդանիձոր, Լեհվազ, Կուրիս, Գուդեմնիս, Վահրավար, Կարճևան, Շվանիձոր, Ալվանք, Նռնաձոր բնակավայրերը (շուրջ 2,260 բնակիչ) գազամատակարարում չունեն և ձմեռային ջեռուցումը գերազանցապես ապահովվում է վառելափայտի, մասամբ՝ էլեկտրական վառարանների միջոցով: Աղքատության բարձր մակարդակի, խոցելի տնային տնտեսությունների ցածր եկամուտների, վառելափայտի մեծ պահանջարկի հետևանքով ծառահատումները, այդ թվում՝ ապօրինի, 2018թ. դրությամբ զանգվածային բնույթ ունեին: Ի լրումն, խոցելի խմբերին պատկանող բնակիչների բնակարանների գերակշիռ մասը կահավորված էր խորհրդային տարիներին տեղադրված լուսամուտներով, որոնք պատշաճ ջերմամեկուսացում չէին ապահովում, ուստի ջեռուցումը տնային տնտեսություններից պահանջում էր մեծ ծախսեր և ներգրավում ծառահատումների շղթայում: Արևիկ ազգային պարկի բնական ռեսուրսներն անխնա, հաճախ նաև՝ անվերահսկելիորեն օգտագործվում էին, ահագնացնելով համայնքի առաջ ծառացած բնապահպանական, տնտեսական և սոցիալական մարտահրավերները, այդ թվում՝ անապատացումը, հողերի դեգրադացիան, կենսաբազմազանության կրճատումը և այլն:

Մեղրիի սոցիալ-տնեսական զարգացմանը նպաստելու, սոցիալապես խոցելի խմբերի կենսապայմանների բարելավելու, էներգառեսուրսների ռացիոնալ օգտագործումը խթանելու և էներգախնայողության մակարդակը բարձրացնելու նպատակով, «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր - Հայաստան» ծրագրի շրջանակներում և ֆինանսավորմամբ, համայնքի 2019թ. բյուջեից շուրջ 50 մլն ՀՀ դրամ հատկացվեց համայնքի խոցելի խմբերին՝ բազմազավակ ընտանիքներին, միայնակ ծերերին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, հաշմանդամներին վառելափայտի և լուսամուտների տրամադրմանը:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ համագործակցությամբ վերը նշված խմբերին 2019թ. ուշ աշնան և ձմռան ամիսներին հատկացվեց օրինական հատումներից՝ սանիտարական էտից և թափուկից գոյացած փայտանյութ: Թիրախ տնային տնտեսությունների փայտով ջեռուցվող շենքերում տեղադրվեցին նոր՝ հերմետիկ, ջերմության արտահոսքը նվազեցնող պատուհաններ:

Ծրագրի իրականացման արդյունքում Մեղրիում նվազեց վառելափայտի պահանջարկը: Համայնքի սոցիալապես խոցելի խմբերին պատկանող տնային տնտեսությունների՝ բազմազավակ ընտանիքների, միայնակ ծերերի, զոհված ազատամարտիկների և ծնողազուրկ երեխաների ընտանիքների կենսապայմանները բարելավեցին, կրճատվեցին ջեռուցման ծախսերը: Համայնքում բարձրացավ էներգախնայողության մակարդակը, նվազեցին ապօրինի ծառահատումները:

Մեղրի, Սցենար 4. Շվանիձորում և Վարդանիձորում մանկապարտեզի կառուցում

2018թ. Մեղրի համայնքի գյուղական մի շարք բնակավայրերում սահմանափակ էր մնում 2-6 տարեկան երեխաների խնամքի ու նախադպրոցական կրթության հասանելիությունը: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ընդգրկվածության մակարդակ ցածր էր: Վարդանիձոր և Շվանիձոր բնակավայրերում նախադպրոցական կրթության և խնամքի ծառայություններ չկային: Մանկահասակ երեխաներ ունեցող կանայք բախվում էին «կա՛մ աշխատանք, կա՛մ երեխայի խնամք» ընտրության խնդրին: Ավելի ճիշտ՝ ընտրության բացակայության խնդրին: Արդյունքում, կանանց զբաղվածության մակարդակը շատ ցածր էր, անգամ աշխատանքի առկայության և հնարավորությունների պայմաններում: Բնակավայրերը գրավիչ չէին ձեռներեցների, ներդրողների և երիտասարդ ընտանիքների համար, քանի որ վաստակելու հնարավորությունները, պայմանավորված այս հանգամանքով, շատ սահմանափակ էին:

Շվանիձորում և Վարդանիձորում նախադպրոցական կրթությունը հասանելի դարձնելու, նախադպրոցական տարիքի երեխաներ ունեցող կանանց զբաղվածությանը նպաստելու, Մեղրի համայնքում երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական կրթության ոլորտում բարձրացնելու, համայնքի բնակիչների կենսամակարդակը և կյանքի գրավչությունը բարձրացնելու նպատակով, նախատեսվում էր համայնքի 2019թ. բյուջեից շուրջ 52 մլն ՀՀ դրամ հատկացնել Շվանիձորում (35 մլն ՀՀ դրամ) և Վարդանիձորում (շուրջ 17 մլն ՀՀ դրամ) մանկապարտեզների կառուցմանը:

Վարդանիձորում մանկապարտեզի կառուցման ֆինանսավորման բեռն ամբողջությամբ ստանձնեց «Լիճքվազ» ՓԲԸ-ն, ինչի արդյունքում մինչև 2019թ. ավարտին հասցվեց դեռ 2017թ-ին սկսված շինարարությունը:

Շվանիձորի պարագայում հաջողվեց համաձայնություն ձեռք բերել բնակավայրի բժշկական ամբուլատորիայի շենքը համայնքին տրամադրելու և մանկապարտեզի վերակառուցելու վերաբերյալ: Համայնքի բյուջեն ապահովեց վերակառուցման ծախսերի 60%-ը (շուրջ 21 մլն ՀՀ դրամ), իսկ 40%-ի ֆինանսավորումը տրամադրեց ՀՀ կառավարությունը՝ որպես սուբվենցիա ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

Բուժամբուլատորիան շահագործման էր հանձնվել 2005թ.՝ բուժքրոջ մեկ հաստիքով, իսկ 2016թ. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նորակառույց շենքի շահագործումից հետո համայնքի բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների կառուցվածքային և որակական փոփոխությունների պայմաններում նպատակային օգտագործվում էր ամբուլատորիայի շենքային հնարավորությունների միայն 10%-ը: Համայնքի երկու բնակավայրերում իրականացվեցին նախագծանախահաշվային աշխատանքներ, կազմակերպեց գնման գործընթացը, իրականացվեցին շինարարական ծավալուն աշխատանքներ, վերակառուցվեցին և կահավորվեցին համայնքային սեփականություն հանդիսացող շենքերն ու շինությունները: Վերապատրաստվեցին մանկապարտեզների նոր ձևավորված աշխատակազմի աշխատակիցները և 2019թ. հոկտեմբերին երկու մանկապարտեզները գործարկվեցին որպես Մեղրի քաղաքում գործող մանկապարտեզի մասնաճյուղեր:

Մեղրի համայնքում երկու նոր մանկապարտեզի գործարկման արդյունքում Շվանիձորի և Վարդանիձորի, ինչպես նաև Շվանիձորին հարևան Ալվանքի բնակիչներին հասանելի դարձավ 2-6 տարեկան երեխաների խնամքն ու նախադպրոցական կրթությունը՝ օրական մինչև 8 ժամ տևողությամբ: 2020թ. մանկապարտեզ էր հաճախում ավելի քան 70 երեխա: Մեղրի համայնքում նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակն ավելացավ շուրջ 10%-ով: Մինչև վեց տարեկան երեխա խնամող ընտանիքներում մայրերի համար ձևավորվեց երեխայի խնամքն ու աշխատանքը համատեղելու հնարավորություն, ինչի արդյունքում 2021թ. հունվարի 1-ի դրությամբ լրիվ և ոչ լրիվ դրույքով աշխատանքի վերադարձավ և ձեռնարկատիրական գործունեություն ծավալեց ավելի քան 50 կին, համայնքում կանանց զբաղվածության մակարդակը բարձրացավ շուրջ 2%-ով: Համայնքի շուրջ 50 տնային տնտեսություններում միջին ամսական եկամուտը բարձրացավ ավելի քան 60,000 դրամով: Նպաստավոր պայմաններ ձևավորվեցին կանանց վերարտադրողական իրավունքներն իրականացնելու և ծնելիության մակարդակի բարձրացման համար: Կրթության ծառայությունների ոլորտում համայնքում ստեղծվեց ութ հիմնական հաստիք՝ 2 դայակ, 2 դաստիարակ, 2 խոհարար, 2 հավաքարար: Բնակավայրերը ավելի գրավիչ դարձան երիտասարդների կյանքի և ներդրումներ կատարելու համար:

Մեղրի, Սցենար 5. Մեղրիի Երկրագիտական թանգարանի կառուցում

ՀՀ հարավային դարպասը՝ Մեղրին, գտնվում է արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների խաչմերուկում և ունի պատմամշակութային տուրիզմի զարգացման մեծ ներուժ: Այսպես, Իզմիրլյան հիմնադրամը և «Մեղրի 1» բարեգործական ՀԿ-ի նախաձեռնած «Հայաստանի ամենահարավային շրջանի տնտեսության զարգացում և համայնքի ամրապնդում» ծրագիրը միտված է մշակութային ժառանգությունը ծառայեցնելու համայնքի զարգացմանը: Ծրագրով նախատեսվում էր 18-րդ դարի և 20-րդ դարասկզբի էթնիկ-քաղաքային միջավայրի կիրառությամբ՝ Մեղրի քաղաքի Փոքր Թաղում խթանել մշակութային, ազգագարական, ագրո- և էկո-տուրիզմը: «Երկիր և մշակույթ» ՀԿ-ն Մեղրի քաղաքի Մեծ Թաղում վերականգնվում էր 17-րդ դարի Անապաստանաց վանքը:

Վերականգնման աշխատանքների ընթացքում իրականացված պեղումների ընթացքում գտնվել էին բազմաթիվ հնագիտական նյութեր: Ի լրումն, Գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրիի մասնաճյուղի շենքում պահվում էին պատմամշակութային արժեք ունեցող հնագիտական նյութեր, որոնց թանգարանային ցուցադրությունը հնարավոր չէր, ինչը սահմանափակում էր քաղաքի հյուրերին Մեղրիի հարուստ պատմական անցյալն ու մշակույթը, Մեղրիի պատմամշակութային դիմագիծը ներկայացնելու և զբոսաշրջային մի շարք ծառայությունների մատուցման հնարավորությունները: Միաժամանակ, Մեղրիում գտնվող և թանգարանային արժեք ունեցող նյութերի պահպանման համար բավարար պայմաններ չկային:

Մեղրի համայնքի կայուն զարգացմանը նպաստելու, տուրիզմի ոլորտում նոր ենթակառուցվածքի ստեղծման և պատմամշակութային ժառանգության պահպանման նպատակով, համայնքի 2019թ. բյուջեից շուրջ 80 մլն ՀՀ դրամ հատկացվեց Մեղրի քաղաքի Մեծ Թաղում, Անապաստանաց վանքի (Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի) հարևանությամբ Երկրագիտական թանգարանի կառուցմանը:

2019թ. իրականացվեցին նախագծանախահաշվային աշխատանքներն ու կազմակերպվեց գնման գործընթացը, ավարտվեցին թանգարանի շինարարական և կահավորման աշխատանքներն ու անհրաժեշտ գույքով և պեղածո նյութերով համալրելուց հետո այն հանձնվեց շահագործման որպես համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպություն: Թանգարանի այցելության վճարներից ու մի շարք հարակից ծառայություններից, այդ թվում՝ թանգարանային առավել հայտնի նմուշների, Մեղրիի խորհրդանիշների թեմայով հուշանվերների վաճառքից ստացված եկամուտները ապահովեցին թանգարանի անխափան գործունեության ֆինանսավորումը:

Երկրագիտական թանգարանի գործարկման արդյունքում հնարավոր դարձավ Մեղրիի հնագիտական նյութերի թանգարանային ցուցադրությունը, մեղրեցիներին և Մեղրիի հյուրերին Մեղրիի պատմական անցյալն ու մշակույթը ընդգրկուն կերպով ներկայացումը: Տեղական տուրօպերատորները հնարավորություն ստացան հարստացնել համայնքի հյուրերին ներկայացվող զբոսաշրջային փաթեթները՝ ընդգրկելով Մեղրու երկրագիտական թանգարանը: Ավելացան ձեռնարկատերերի եկամուտներն ու Մեղրի քաղաքի զբոսաշրջային գրավչությունը:

Մեղրի, Սցենար 6. Հանգստի գոտիների ստեղծում Մեղրի համայնքում

600-ից մինչև 2,000մ բարձրությամբ կլիմայական գոտիներում փռված համայնքի անկրկնելի գեղատեսիլ վայրերը, խիստ գրավիչ ու բազմազան լանդշաֆտը, բնապատկերներն ու կենդանական աշխարհը էկոտուրիզմի զարգացման գրավական են: Համայնքն ունի զբոսաշրջային ծառայություններ մատուցելու և այդ ծառայություններից հավելյալ եկամուտներ ստեղծելու մեծ ներուժ. Մեղրին Հայաստանի հարավային դարպասն է, որով 2018թ. երկիր մտնում էր տարեկան շուրջ 130 հազար իրանցի, իսկ համայնքից ընդամենը 50 կմ հեռավորությամբ Իրանում բնակվում է շուրջ 200 հազար պոտենցիալ զբոսաշրջիկ: Տարածաշրջանում, մաքսակետի հարևանությամբ, գործարկվել է զբոսաշրջային գործակալություն, որը տուրիստական սպասարկման առայժմ միակ կառույցն է, որը կոչված է համակարգելու Իրանից ժամանող զբոսաշրջիկների հոսքը, տրամադրելու մի շարք ծառայություններ, այդ թվում՝ փոխադրում, տեղեկությունների տրամադրում, տուրերի կազմակերպում:

Միաժամանակ, զբոսաշրջային ենթակառուցվածքները համայնքում թերզարգացած էին և Մեղրին գերազանցապես տարանցիկ գոտի էր մնում: Այսպես, համայնքում հյուրանոցային տեղերը խիստ սահմանափակ էին. 2018թ. Մեղրիում գործում էր 10 հյուրանոց և հյուրատուն՝ ընդամենը 66 համարով: Համայնքի գեղատեսիլ վայրերը գտնվում էին անբարեկարգ, անխնամ վիճակում, մեղրեցիները դրանք օգտագործում էին բացօթյա հանգստի, պիկնիկների համար: Գործող սոցիալական նորմերը չէին երաշխավորում դրանց մաքրությունն ու գրավչության պահպանումը, բնակիչները հանգստի վայրերը հաճախ աղտոտում էին կենցաղային աղբով: Համայնքի կողմից դրանց օգտագործման իրավական կարգավորման նորմերը՝ կանոնակարգ, պայմաններ, մեծ հաշվով, չկային:

Մեղրիում գիշերակաց չպահանջող մեկօրյա տուրերի կազմակերպումը խթանելու, դրա համար անհրաժեշտ ենթակառուցվածքները զարգացնելու ստեղծման, գեղատեսիլ վայրերում հյուրասիրության և հանգստի պայմաններ ստեղծելու, դրանց օգտագործումը կանոնակարգելու նպատակով, համայնքի 2019թ. բյուջեից շուրջ 50 մլն ՀՀ դրամ հատկացվեց հանգստյան գոտիների ստեղծմանը: Համայնքի հինգ գեղատեսիլ վայրերի համար իրականացվեցին նախագծանախահաշվային աշխատանքներ, կազմակերպեց գնման գործընթաց, տեղադրվեցին և կահավորվեցին տաղավարներ, զուգարաններ, պատշաճ հանգստի և հյուրասիրության ծառայությունների համար անհրաժեշտ այլ ենթակառուցվածքներ:

2020թ. գարնանը հանգստյան գոտիները գործարկվեցին: Դրանց կառավարումը և ծառայությունների մատուցումը համայնքը պատվիրակեց մասնավոր կազմակերպությունների՝ համայնք-մասնավոր հատված համագործակցության միջոցով, ինչը հնարավորություն տվեց ներգրավելու մասնավոր հատվածի փորձառությունն ու ֆինանսական միջոցները, բարելավել ծառայությունների որակն ու արդյունավետությունը: Հանգստի գոտիներում լուծվեց աղբահանություն և սանմաքրման խնդիրը: Միաժամանակ, համայնքը մնում էր ենթակառուցվածքների սեփականատեր և ծառայությունների կարգավորիչ՝ սահմանելով և վերահսկելով ծառայությունների չափորոշիչները, հանգստի գոտիների օգտագործման պայմաններն ու վարձավճարները:

2020 թվականից Մեղրիում գործող բարեկարգ մաքուր և գրավիչ հանգստի հինգ գոտիները, կահավորված անհրաժեշտ հարմարություններով և ենթակառուցվածքներով՝ տաղավար, խաղատեղ, սանհանգույց, ջրամատակարարում, աղբաման, հայաստանյան և տեղական օպերատորներին հնարավորություն ընձեռեցին հայաստանցիներին, իրանցի և օտարերկրյա այլ զբոսաշրջիկներին առաջարկել հանգստի գոտիներ այցելության ու ժամանցի մեկօրյա տուր փաթեթներ: Հարյուրավոր մեղրեցիներ և զբոսաշրջիկներ օգտվում էին հանգստի գոտիներում տրամադրվող վճարովի ծառայություններից՝ հնարավորություն ընձեռելով մի շարք մեղրեցի ձեռնարկատերերի և կազմակերպությունների վաստակել, և համայնքի բյուջեն նոր եկամուտներով ապահովելով:

Գորիս, Հակիրճ տեղեկանք

Գորիսը սահմանամերձ համայնք է. համայնքով է անցնում Երևան-Գորիս-Իրանի սահման միջպետական մայրուղին: Համայնքի տարածքը շուրջ 32 հազար հեկտար է, բնակչությունը՝ շուրջ 30 հազար:

Միջին բարձրությունը ծովի մակարդակից՝ գրեթե 1,400մ, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 240կմ, մարզկենտրոն Կապանից՝ շուրջ 70կմ:

Համայնքի 2018թ. բյուջեի վարչական մասը կազմել է շուրջ 774 մլն ՀՀ դրամ, բյուջեի ֆոնդային մասը՝ շուրջ 145 մլն ՀՀ դրամ: Ֆոնդային մասի եկամուտները ձևավորվել են.

(ա) համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից.

(բ) պաշտոնական և ոչ պաշտոնական կապիտալ դրամաշնորհներից.

(գ) ոչ ֆինանսական ակտիվների իրացումից (շուրջ 11 մլն):

Պաշտոնական կապիտալ դրամաշնորհները պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ են եղել (սուբվենցիաներ), մինչդեռ ոչ պաշտոնական կապիտալ դրամաշնորհները ներգրավվել են այլ ներդրողների կողմից՝ որպես համայնքի զարգացման կապիտալ ծրագրերում համաֆինանսավորում:

Համայնքում կապիտալ ծրագրերի համար կատարվող ծախսերի իրականացման համար բյուջետային գումարները գոյանում են մասնավորապես ոչ ֆինանսական ակտիվների օտարումից, որոնք սահմանափակ են: Այս մուտքերը տարեց-տարի նվազում են:

Գորիս, Սցենար 1. Ֆիզիկական ակտիվությունը՝ բնակչության առողջության գրավական

2018թ. Գորիս համայնքում բնակչության ֆիզիկական ակտիվությունը խիստ ցածր էր. Գորիս քաղաքի խաղահրապարակներն ու մարզակառույցները չէին գործում՝ քարուքանդ էին: Բնակչության ֆիզիկական անբավարար ակտիվությունն, այսպես կոչված, «մեծ մարդասպանների»՝ զարգացած երկրներում մահացության հիմնական պատճառ հանդիսացող չորս հիվանդությունների չորս ռիսկի գործոններից է: Գորիսը սրտի ստենտավորման ցուցանիշով 2018թ. երկրում առաջին մտահոգիչ տեղում էր, ինչը նաև ցածր ակտիվության հետևանք է: Հատկապես մտահոգիչ էր Գորիսում դեռահասների ֆիզիկական ակտիվության ցածր մակարդակը. տղաների շուրջ 70%-ը և աղջիկների շուրջ 80%-ը որևէ մարզաձևով չի զբաղվում: Ֆիզկուլտուրայի դասերից դուրս՝ տղաների և աղջիկների շուրջ 70%-ը, որևէ մարզաձևով չէր զբաղվում: Երեխաների շուրջ 70%-ը որևէ խմբակ չէր հաճախում: Գորիսի հանրակրթական 6 դպրոցում իրականացված հետազոտությունը պարզել էր, որ դպրոցների մարզադահլիճների 95%-ը կապիտալ վերանորոգման կարիք ունի, ապահովված չէ մարզական սարքավորումներով: Համայնքի 7 նախադպրոցական հաստատություն մասնագիտացված մարզագույքով մարզադահլիճ չուներ: Ֆիզիկական ակտիվությունը լրջագույն մարտահրավեր էր բնակիչների համար:

Ֆիզիկական ակտիվության բարձրացումը ավելորդ քաշի և ճարպակալման դեմ պայքարի, սրտանոթային հիվանդությունների, չարորակ նորագոյացությունների, շաքարային դիաբետի հիվանդացության և մահացության կրճատման հիմնական նախադրյալներից է: Գորիսում բակային սպորտի քաղաքականության ներդրմամբ առողջ սերնդի դաստիարակությանը, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվողների քանակի աճին, առողջ կենսակերպի արմատավորմանը և բարձր կենսամակարդակի ապահովմանը նպաստելու նպատակով համայնքի 2019թ. բյուջեից շուրջ 45 մլն ՀՀ դրամ հատկացվեց Գորիս քաղաքի ամենախիտ բնակեցված՝ 4,000-6,000 բնակիչ ունեցող թաղամասերում սպորտային բազմաֆունկցիոնալ 3 մարզահրապարակի կառուցմանը, բարեկարգմանը, մարզասարքերով և մարզագույքով կահավորմանը:

Ժամանակակից տեխնիկայով հագեցած մարզահրապարակները ապահովվեցին անվտանգ խաղահրապարակներով՝ հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Խաղահրապարակներում տեղադրվեցին պտտաձողեր, ճոճանակներ, զուգափայտեր, սահելու, մագլցման և ձգումների հարմարանքներ ու սարքեր, շախմատի, շաշկու ու նարդու մարզագույքով հանգստի տաղավարներ, սեղանի թենիսի պարագաներ, բասկետբոլի վահանակներ և վոլեյբոլի կանգնակներ՝ կահավորված ցանցերով, փոքր մարզադաշտեր, այդ թվում՝ արհեստական խոտածածկով:

2020թ. գործարկումից հետո մարզաբակերի կառավարումը պատվիրակվեց Գորիսի մարզադպրոցին: Շահագործման և պահպանման, երեք մարզիչների աշխատավարձի ծախսերը հոգում էր համայնքի բյուջեն: Համայնքային ենթակայության մարզադպրոցն ամեն ամիս կազմակերպում էր շուրջ հինգ մարզական միջոցառում, միջբակային մրցաշարեր՝ տարբեր տարիքային խմբերի համար: 2021թ. բնակիչների և համայնքի հյուրերի համար մշակվեց և հրապարակվեց Գորիսի «Ակտիվ ապրելակերպի քարտեզը», որի վրա նշված են խաղահրապարակներն ու դրանց ֆունկցիոնալ հնարավորությունները, համայնքի զբոսայգիները, հեծանվուղիները, ակտիվ հանգստի և ֆիզկուլտուրայով ու սպորտով զբաղվելու համար նախատեսված վայրերը:

Բազմաֆունկցիոնալ խաղահրապարակները համայնքի բնակիչներին հնարավորություն տվեցին նվազագույն ծախսերով զբաղվել սպորտով, հոգ տանել սեփական առողջության մասին: Գորիսեցի մինչև 18 տարեկան շուրջ 3,000 երեխա ազատ ժամանակի զգալի մասն անցկացնում էր մաքուր օդում: Մարզական խաղահրապարակներն ու ծրագրերին մասնակցությունը նպաստեցին երեխաների և դեռահասների ֆիզիկական ակտիվության մակարդակի բարձրացմանը: Նրանց շրջանում էականորեն ավելացավ սպորտի հանդեպ հետաքրքրությունը: Շատերի համար նոր ուղի բացվեց դեպի մարզական ու նվաճումներ ու վաստակ:

Թեև տարեց գորիսեցիները նախկինի պես ազատ ժամանակը գերազանցապես անց կացնում էին տանը, սակայն կահավորված հանգստի տաղավարները նրանց համատեղ շփումների, ֆիզիկական ակտիվության կարևոր վայր դարձան: 2025թ. յուրաքանչյուր 4-րդ տարեց գորիսեցի օգտվում էր մարզահրապարակներից: Հաշմանդամություն ունեցող անձինք ևս օգտվում էին հրապարակներից. շրջակա միջավայրին հարմարեցված պայմանները և օժանդակ սարքավորումները նրանց հնարավորություն տվեցին զբաղվելու ֆիզկուլտուրայով և սպորտով, լիարժեք մասնակցելու հասարակության կյանքին և լինելու ֆիզիկապես ավելի ակտիվ:

Մինչև 2022թ. միջին և բարձր տարիքի բնակիչների ներգրավվածությունը ֆիզկուլտուրայի կանոնավոր պարապմունքներին նշանակալիորեն բարձրացավ, կարճ ժամանակում ձևավորվեց առողջ ապրելակերպի նոր մշակույթ: Համայնքային կյանքում սպորտի աշխուժացումը, ակտիվ հանգիստը նպաստեցին նոր հանդիպումներին ու ծանոթություններին, բնակիչների սոցիալական կապերի ամրապնդմանը, վատ սովորություններից ու զբաղմունքներից երիտասարդությանը զերծ պահելուն, կյանքի տևողության և որակի բարելավմանը, ապա նաև՝ հանցագործությունների և հակահասարակական վարքագծի մակարդակի իջեցմանը: Համայնքում ձևավորվեց սպորտային տուրզմի մշակույթ և պրակտիկա:

Գորիս, Սցենար 2. Դիտակետի և հարակից ճանապարհի վերակառուցում

Գորիսը ձեռնարկատիրական գործունեության և ներդրումների համար կայուն, ապահով, զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային ռեսուրսներով հարուստ համայնք է, և մրցունակ զբոսաշրջային ծառայությունների զարգացման մեծ ներուժ ունի: Առավել հայտնի վայրեր են Տաթևի վանական համալիրը, Սատանայի կամուրջը, Խնձորեսկի Ճոճվող կամուրջը, աշխարհում ամենաերկար թռիչքով Տաթևի ճոպանուղին: Հին Գորիսի Քարե անտառը մեծ ժողովրդականություն ունի: 2013թ. ի վեր զգալիորեն զարգացել էր ներգնա զբոսաշրջությունը: Միայն 2017թ. 6,000-ով ավելի զբոսաշրջիկ էր օգտվել համայնքի հյուրանոցային ծառայություններից, 2016թ. համեմատ, իսկ Խնձորեսկի Ճոճվող կամուրջ այցելողների թվաքանակն ավելացել էր 30,000-ով: Զբոսաշրջությունը համայնքի համար աշխատատեղերի ու զբաղվածության կարևոր ոլորտ է: Հյուրանոցներում, ռեստորաններում, ժամանցի վայրերում, տրանսպորտային համակարգում և հուշանվերների վաճառքի կետերում, զբոսաշրջության հետ առնչվող ձեռնարկություններում (սննդի և այլ ծառայություններ, առևտուր) 2017թ. ընթացքում շուրջ 220 աշխատատեղ էր ստեղծվել: Եվս շուրջ 40 աշխատատեղ ստեղծվել էր հարակից՝ ձեռագործության, հուշանվերների արտադրության և վաճառքի ճյուղերում: Հյուրանոցային և սպասարկման ոլորտում աշխատանք էր ստացել ավելի քան 50, սննդի սպասարկման ոլորտում՝ 25, զբոսաշրջությանն առընչվող շինարարության ոլորտում՝ շուրջ 100 գորիսեցի:

Թեև զբոսաշրջությունը համայնքում կայուն եկամտի, իրական զարգացման ու կենսամակարդակի ապահովման հուսալի ու հեռանկարային աղբյուր է, այդուհանդերձ, մի շարք մարտահրավերներ խոչընդոտում են ոլորտի զարգացմանը: Խնդրահարույց է նաև Գորիսում զբոսաշրջային ենթակառուցվածքների քանակը, ծածկույթն ու վիճակը: Այսպես, 2017թ. Գորիսում շուրջ 17.000 զբոսաշրջիկ էր գիշերել. զբոսաշրջիկները հաճախ խուսափում էին գիշերել մրցունակ ենթակառուցվածքների և ծառայություններ անբավարարության պատճառով: Արդյունքում զբոսաշրջիկները չէին օգտվում առաջարկվող մի շարք ծառայություններից, իսկ համայնքը կորցնում էր լրացուցիչ եկամտի աղբյուր: Դեռ խորհրդային ժամանակներից գործող դիտակետը զբոսաշրջիկներին գրավող վայրերից է: Այստեղից տեսարան է բացվում դեպի Հին Գորիս գեղատեսիլ արգելոց-թանգարանը, Լաստի Խութը, որը դեպի քարանձավներ խոյացող ժառերի լուսավորման արդյունքում հատկապես տեսարժան է երեկոյան և գիշերային ժամերին: Դիտակետին հարակից տարածքում գործում են սրճարաններ, հյուրատներ: Սակայն, դիտակետ անբարեկարգ և անհրապույր տեսք ուներ և վերականգնման ու վերազինման կարիք, ինչը սահմանափակում էր զբոսաշրջիկների հոսքը և հարակից տարածքներում գործող սրճարանների, հյուրանոցների և հյուրատների ծառայություններից օգտվող հյուրերի թվաքանակը:

Համայնքում ենթակառուցվածքների և զբոսաշրջության զարգացման, ժամանցի և հանգստի գոտիներն ընդլայնելու, քաղաքաբնակների և այցելուների համար ժամանցի կազմակերպման նոր հնարավորություններ ստեղծելու, մանրածախ առևտրի զարգացման նպատակով, համայնքի 2019թ. բյուջեից շուրջ 150 մլն ՀՀ դրամ հատկացվեց Գորիսի Դիտակետի վերակառուցմանն ու վերազինմանը: 2019թ. ընթացքում ավարտվեցին նախագծանախահաշվային աշխատանքներն ու կազմակերպվեց գնումների գործընթացը: 4,400մ2 մակերեսով տարածքում իրականացվեցին շինարարական աշխատանքներ. կառուցվեց երկու մեծ դիտահրապարակ, քարե հենապատ, ճեմուղիներ, հեծանվային անցուղիներ, ավտոճանապարհ, ջրահեռացման համակարգ, տեղադրվեց փայտե ու քարե 12 նստարան, տնկվեց 60 ծառ, տարածքը կանաչապատվեց, անցկացվեց արտաքին լուսավորություն և դիտակետը հանձնվեց շահագործման: Համայնքի 2020թ. և հետագա տարիների բյուջեներում առանձնացվեցին ֆինանսական միջոցներ՝ դիտակետի պահպանման և շահագործման համար:

Դիտակետի վերակառուցման և բարեկարգման արդյունքում համայնքը ձեռք բերեց զբոսաշրջության զարգացմանը նպաստող կարևոր ու գրավիչ ենթակառուցվածք: Զգալիորեն բարելավեց զբոսաշրջության զարգացման և ծառայությունների որակն ու մրցունակությունը: 2020թ. Դիտակետի այցելուների թիվը նախորդ տարվա համեմատ կրկնապատկվեց՝ հասնելով շուրջ 25,000-ի: Հարակից տարածքում 2020-21թթ. ստեղծվեց սպասարկման 10 նոր ձեռնարկություն: Գործող հյուրանոցների և սրճարանների եկամուտը երեք տարվա ընթացքում ավելացավ շուրջ 20%-ով: Գորիսի զբոսաշրջային գրավչության բարձրացմանը զուգընթաց ավելացավ քաղաքում գիշերակաց նախընտրող զբոսաշրջիկների թվաքանակը: Քաղաքում 2018թ. գործող 23 հյուրանոցների և հյուրատների թիվը 2022թ. հասավ 40-ի: Էականորեն ավելացան ոչ միայն Դիտակետի հարակից տարածքում մանրածախ առևտրով զբաղվող տնտեսվարողների, այլև զբոսաշրջության ոլորտի հետ նույն շղթայում գործող՝ արհեստագործական, ձեռագործական, տնայնագործական, գյուղմթերքի մշակման ոլորտներում զբաղված գորիսեցիների եկամուտները: Զբոսաշրջության հետ այս կամ այն կերպ կապակցված ոլորտներում մինչև 2023թ. բացվեց ավելի քան 250 նոր աշխատատեղ: Նկատելիորեն բարձրացավ զբոսաշրջության ոլորտում մատուցվող ծառայությունների որակն ու մրցունակությունը, ակտիվացան զբոսաշրջիկների շփումները Գորիսի բնակիչների, հատկապես՝ երիտասարդների հետ: Նոր աշխատատեղերն ու տնային տնտեսությունների եկամուտների ավելացումը շոշափելիորեն կրճատեցին արտագաղթի տեմպերը, դրա արդյունքում ընտանիքների բաժանման դեպքերը և «ուղեղների ու եռանդի արտահոսքը»:

Գորիս, Սցենար 3. Մշակույթի տան հարակից ճեմուղու բարեկարգում

Գորիս քաղաքի Մշակույթի կենտրոնին հարող փողոցը կարևոր նշանակություն ունի ոչ միայն որպես քաղաքի կենտրոնական փողոց, այլև համայնքի հիմնական մշակութային հաստատությունները կապող զարկերակ և զբոսաշրջային երթուղի. Այստեղ են Գուսան Աշոտի անվան մշակույթի տունը, Պետական դրամատիկական թատրոնը, Երկրագիտական թանգարանը, Քաղաքի կենտրոնական զբոսայգին, սպասարկման ոլորտի բազմաթիվ օբյեկտներ: Հարակից տարածքներում են գտնվում Գորիսի Հին պասաժի անկրկնելի շենքը, որը գործող առևտրի կենտրոն է: 2018թ. Պասաժի հիմնական տարածքներն ազատ էին և այն քաղաքի հեռանկարային գործարար կենտրոններից էր: Չնայած կարևոր գործառույթին, ճանապարհահատվածն անբարեկարգ ու քարուքանդ վիճակում էր: Արդյունքում զբոսաշրջիկները չէին օգտվում զբոսաշրջության ոլորտում համայնքի տնտեսվարողների առաջարկած բազմաթիվ ծառայություններից, համայնքը կորցնում էր եկամտի աղբյուրների հնարավորություն: Ճանապարհի անհրապույր ու վանող վիճակն էականորեն սահմանափակում էր զբոսաշրջիկների հոսքը և հարակից տարածքներում գործող սրճարանների, հյուրանոցների և հյուրատների ծառայություններից օգտվող հյուրերի թվաքանակն ու դրանց եկամուտները:

Համայնքում զբոսաշրջության ենթակառուցվածքների բարելավման և զբոսաշրջության զարգացման, ժամանցի և հանգստի գոտիներն ընդլայնելու, քաղաքաբնակների և այցելուների համար ժամանցի կազմակերպման նոր հնարավորություններ ստեղծելու, զբոսայգու հարակից տարածքում մանրածախ առևտրի զարգացմանը նպաստելու նպատակով, համայնքի 2019թ. բյուջեից շուրջ 53 մլն ՀՀ դրամ (21 մլն – 40%) հատկացվեց Գորիսի մշակույթի տան հարակից ճեմուղու բարեկարգմանը: 2019թ. ընթացքում ավարտվեցին նախագծանախահաշվային աշխատանքներն ու կազմակերպվեց գնումների գործընթացը: 2,000 մ2 մակերեսով տարածքում իրականացվեցին շինարարական աշխատանքներ. կառուցվեցին ճեմուղիների՝ բազալտե և բետոնե կանոնավոր սալիկներով, դեկորատիվ շատրվան, ջրահեռացման և ոռոգման համակարգ, ծաղկանոցներ, տեղադրվեց դեկորատիվ 12 նստարան, տարածքը կանաչապատվեց, անցկացվեց արտաքին լուսավորություն և ճեմուղին հանձնվեց շահագործման: Համայնքի 2020թ. և հետագա տարիների բյուջեում առանձնացվեցին ֆինանսական միջոցներ՝ ճեմուղու պահպանման և շահագործման համար:

Ճեմուղու վերակառուցման և բարեկարգման արդյունքում համայնքը ձեռք բերեց զբոսաշրջության զարգացմանը նպաստող կարևոր ու գրավիչ ենթակառուցվածք: Զգալիորեն բարելավեց զբոսաշրջության զարգացման և ծառայությունների որակն ու մրցունակությունը, ինչի արդյունքում զգալիորեն ավելացավ Գորիսը որպես տուր-հանգրվան նախընտրող զբոսաշրջիկների հոսքը: Այսպես, ճեմուղու և զբոսայգու հարակից տարածքում 2020-21թթ. աշխուժացան սպասարկման ոլորտի ձեռնարկությունները. ստեղծվեց 15 նոր խանութ և սպասարկման օբյեկտ, զգալիորեն ավելացան մանրածախ առևտրով զբաղվող և սննդի ու սպասարկման ծառայություններ մատուցող տնտեսվարողների եկամուտները՝ միջինում ամսական շուրջ 100,000 դրամի չափով: Մշակույթի տան հարակից տարածքում, այդ թվում՝ Պասաժում տարբեր բնույթի բիզնես գործունեություն ծավալող ձեռնարկությունների թիվըտ 40-ից հասավ 60-ի: ճանապարհահատվածի բարեկարգումը խթանեց նաև մշակութային օջախների գործունեությունը, ակտիվացավ համայնքի մշակութային կյանքը: Գործող հյուրանոցների և սրճարանների եկամուտը երեք տարվա ընթացքում ավելացավ շուրջ 20%-ով: Զգալիորեն ավելացան ոչ միայն Մշակույթի տան հարակից տարածքում մանրածախ առևտրով զբաղվող տնտեսվարողների, այլև զբոսաշրջության ոլորտի հետ նույն շղթայում գործող՝ արհեստագործական, ձեռագործական, տնայնագործական, գյուղմթերքի մշակման ոլորտներում զբաղված գորիսեցիների եկամուտները: Զբոսաշրջության հետ այս կամ այն կերպ կապակցված ոլորտներում մինչև 2023թ. բացվեց ավելի քան 250 նոր աշխատատեղ: Նկատելիորեն բարձրացավ զբոսաշրջության ոլորտում մատուցվող ծառայությունների որակն ու մրցունակությունը, ակտիվացան զբոսաշրջիկների շփումները Գորիսի բնակիչների, երիտասարդների հետ: Նկատելիորեն նվազեց արտագաղթը:

Գորիս, Սցենար 4. Քարանձավային քաղաքի վերկանգնում

2015-2018թթ. տարեկան շուրջ 17,000 զբոսաշրջիկ էր այցելում համայնք՝ Հին Գորիսը տեսնելու նպատակով, որն ազգային նշանակության պատմամշակութային կոթող է, բնական և մարդակերտ ճարտարապետական հուշարձան, Գորիսի միջազգային անձնագիրը, Հայաստանի հարավի Անին: Հին Գորիսի պատմական և մշակութային հուշարձանների պաշտոնական ցանկը ներառվում է Սուրբ Հռիփսիմե եկեղեցին, Մելիքի եկեղեցին, բնակավայրային 52 քարանձավները, ամֆիթատրոնը, քարվանսարան, բնակելի ժայռապատ բլուրը, Զագեձորի բերդը, Վարարակն գետի վրա անցնող կամրջի վրա նավթամղիչ կայանը, հին գերեզմանատունը և բազմաթիվ տապանաքարեր և խաչքարեր:

Թեև բնությունը բացառիկ ռեսուրս է տվել հուշարձանին, այդուհանդերձ տարիների ընթացքում անուշադրության մատնված հուշարձանը անմխիթար վիճակում էր և շարունակվում էր քայքայվել: Հին Գորիսից մնացած պատմա-ճարտարապետական տեսակետից արժեքավոր հուշարձանները, բնական ու արհեստական կացարանները՝ քարանձավներն գրեթե լքված էին, մինչդեռ կարող էին դառնալ Հայաստանի ամենատարված զբոսաշրջային վայրերից մեկը: Ավանդույթներով, լեգենդներով, տեխնոլոգիաներով և պատմաճարտարապետական հուշարձաններով հարուստ Հին Գորիսը, զբոսաշրջային ահռելի ներուժ ունեցող տարածաշրջանային մարգարիտը հրատապ կերպով չվերականգնելու, չպահպանելու և չօգտագործելու հետևանքով համայնքը ու հանրապետությունը կարող էր անվերադարձ կորցնել անկրկնելի մշակութային ժառանգությունն ու տնտեսական ռեսուրսը՝ ապագայի զբոսաշրջային ամենագրավիչ հանգրվանը՝ քարանձավային քաղաքը-արգելոց թանգարանը:

Հին Գորիսի պահպանման ու շահագործման, արգելավայրի տարածքի, այդ թվում՝ հին քարանձավների ու հարակից ենթակառուցվածքի վերականգնման, համայնքում նոր աշխատատեղեր և ձեռնարկատիրական հնարավորություններ ստեղծելու, գորիսեցիների կյանքի որակը բարձրացնելու նպատակով, համայնքի 2019թ. բյուջեից շուրջ 83 մլն ՀՀ դրամ հատկացվեց հին քաղաքաշինական նախագծման կառուցվածքի հիման վրա Հին Գորիսի պատմա-ճարտարապետական արժեքավոր հուշարձանները, բնական ու արհեստական կացարանները՝ քարանձավները վերականգնելուն, վերակառուցելուն և զբոսաշրջային կենտրոն դարձնելուն:

2019-21թթ. ընթացքում ավարտվեցին նախագծանախահաշվային աշխատանքներն ու կազմակերպվեց գնումների գործընթացը: Վերականգնվեցին զբոսաշրջային ճանապարհները, հետիոտնային երթուղիները ճարտարագիտական ենթակառուցվածքը, քարանձավային բնակատեղիների հարակից տարածքները: Բարեկարգվեցին և կահավորվեցին ամֆիթատրոնի հարակից տարածքները, անցկացվեց լուսավորության ժամանակակից համակարգ: Վերականգնվեցին հին հետիոտնային կամուրջները, որով վերականգնվեց Գորիս քաղաքի և Հին Գորիսի արգելավայրի միջև հաղորդակցությունը: Վերականգնվեցին և ավանդական կահույքով ու սարքավորումներով համալրվեցին երկու «Քրատակեր»: Կացարանները բաղկացած էին ընդհանուր ննջասենյակներից, սանհանգույցից ու խոհանոցից: Տուրոպերատորների հետ համագործակցությամբ մշակվեցին, պատրաստվեցին և տեղադրվեցին տեղեկատվական պաստառներ, գովազդային նյութեր ու տեսահոլովակներ: Համայնքի տարեկան բյուջեում առանձնացվեցին ֆինանսական միջոցներ՝ Հին Գորիսի պահպանման և շահագործման համար:

Հին Գորիսի վերականգնման և վերակառուցման աշխատանքների արդյունքում պահպանվեց անձեռակերտ հուշարձանը, համայնքն ու երկիրը ստացան զբոսաշրջության զարգացման անկրկնելի համալիր: Ստեղծվեց 300 նոր աշխատատեղ՝ անմիջականորեն քարանձավային քաղաքի հետ կապված զբոսաշրջային ծառայությունների և դրանք սպասարկող հարակից ոլորտներում: 2025թ. Հին Գորիս այցելող զբոսաշրջիկների թիվը անցավ տարեկան 100,000-ի շեմը: Քաղաքում 2018թ. գործող 23 հյուրանոցների և հյուրատների թիվը 2025թ. հասավ 55-ի: Համայնքում գործող հյուրանոցների և սրճարանների եկամուտը ավելացավ շուրջ 40%-ով: Համայնքում 2022-25թթ. ստեղծվեց սպասարկման 50 փոքր ձեռնարկություն, այդ թվում՝ ռեստորաններ, հուշանվերների խանութներ, արհեստանոց-խանութներ, կրպակներ և այլն: Գործող հյուրանոցների և սրճարանների եկամուտը 2025թ. ավելացավ շուրջ 50%-ով: Ավելացավ քաղաքում գիշերակաց նախընտրող զբոսաշրջիկների թվաքանակը: Ավելացան նաև քաղաքում մանրածախ առևտրով զբաղվող տնտեսվարողների, զբոսաշրջության ոլորտի հետ նույն շղթայում գործող՝ արհեստագործական, ձեռագործական, տնայնագործական, գյուղմթերքի մշակման ոլորտներում զբաղված գորիսեցիների եկամուտները: Նկատելիորեն բարձրացավ զբոսաշրջության ոլորտում մատուցվող ծառայությունների որակն ու մրցունակությունը, ակտիվացան զբոսաշրջիկների շփումները Գորիսի բնակիչների հետ: Գորիսի երիտասարդների համար ոչ միայն նոր աշխատատեղեր, այլև նորարարական գաղափարների, սթարթափերի, ներդրումների և ֆինանսական աղբյուրների աննախադեպ տարածություն բացվեց: Նոր աշխատատեղերն ու տնային տնտեսությունների եկամուտների ավելացումը զգալիորեն կրճատեցին արտագաղթը, քաղաքի միգրացիոն հաշվեկշիռը դարձավ դրական: Հին Գորիսը դարձավ 21-րդ դարի երրորդ տասնամյակի Հայաստանի և տարածաշրջանի առավել հայտնի ու աշխույժ, գրավիչ ու հիասքանչ զբոսաշրջային, մշակութային, սոցիալական և գործարար կենտրոններից մեկը:

Հավելված 3. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը



Հավելված 4. Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքների վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով



Հավելված 5. Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում 2019թ. բյուջեների և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքային տարբերակներում ներառված հիմնախնդիրները, հիմնական առանցքները

- Խոշորացում
- Արդյունավետ կառավարում
- Վստահություն
- Համայնքի տնտեսություն, եկամուտներ, ձեռնարկատիրություն, աղքատություն
- Ծախսերի գերակայություններ, սուբսիդավորում, համաֆինանսավորում
- Սոցիալական զարգացում, մշակույթ, տուրիզմ, սպորտ
- Համայնքային ենթակառուցվածքներ
- Գենդերային խնդիրներ
- Երեխաների, դեռահասների և երիտասարդների խնդիրներ
- Տարեցների խնդիրներ
- Բնապահպանություն, էներգախնայողություն, այլընտրանքային էներգետիկա
- Ժողովրդագրական խնդիրներ

Հավելված 6. Համահամայնքային քննարկումների արդյունքների համադրություն-հակադրություն սանդղակը